



1110



4000

N377

280 203 ՎԵՐ
F-15
F16-F4 ԱՐԱՐՈՒՄ

16-F4 ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

6

7/31 192



ՄԵԿՆԱԽՐԱԿԱ

ԽՈՐՀԵՐԴԱՅ ՍՐԲՈՅ ՊԵՏՎՐԱԳԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

'H Q I S U

ՃՈՂՈՎՐԴՈՅ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՅ ՀԱՅՈՅ:

ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅԻՆ

ԱՐՄԵՆ ԳԱՀԱՆԱՅԻ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՈՅ



የኢትዮጵያ

ՅՈՒ ՀԱՆՐԵՎ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ

ՕՐԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5

1884

ԱՌ ՀԱՄԵՍՏԱՓԱՅԼ ՏԻԿԻՆ ՎԱՐԴՈՒՀԻՆ ՑՈՎՆԱՆԵԱՆ.

Մեծապատիւ Տիկին.

Հոգեկան լիապարար խնդութեամբ յեշում եմ այն օրը եթք հաճեցաք յայտնել ինձ Ձեր բաղձանքը՝ թէ բարւոք կլինէր ուսումնաբանում ուսուցանել առանձնապէս և Ս. Պատարագի արարողութիւնը, որպէս զի հասկանալով Ս. Խորհրդութիւն ներկայ գտանուիլ Ս. Պատարագին, քան ինչպէս այժմ։

Մեծ հաճութեամբ լսեցի Ձեզանից, իրու մի կրթուած և զարգացած Հայ Տիկնօջից, այդ համակրելի և ամենայն յարգանաց արժանի առաջարկութիւնը, որն արձագանք գտաւ և մի խումբ հասկացողների մէջ. ուստի և ես այն օրից ինձ պարտք համարեցի Ձեր բաղձանաց կենդանի արձան մի կանգնել, որի վերայ անջինջ պիտի գրոշմուի Ձեր սուրբ փափագը և օգտակար առաջարկութիւնը։

Ձեր բաղձանաց կենդանի արձանը պիտի լինի այս երկասիրութիւնը, որ կրում է իւր Ճակատին «Արարողութիւն և մեկնութիւն Խորհրդոյ Սրբոյ Պատարագի Հայաստանեաց Եկեղեցւոյ» վերնագիրը։

Եւ որպէսէտե այս իմ համեստ աշխատութիւնը պտուզ է և արդիւնք Ձեր պատուական փափագանաց և առաջարկութեան և տպագրուում է Ձեր յատուկ օժանդակութեամբ, վասն որոյ թոյլ տուէք ինձ, խոհեմագարդ Տիկին, առ միշտ երախտապարտ գուզով առ Ձեզ, նուկրել այս իմ համեստ աշխատութիւնը Ձեր ՑՈՎՀԱՆՆԵՍ վաղամեռիկ սերելի որդւոյ յիշատակին, որը տակաւն իւր կիսաբաց սիրուն կոկոնի մէջ զոհ գնալով մահուան դաժան խորշակին, ցաւ և կսկիծ թոյեց որդէսէր ծնողիդ սրտի և հոգւոյ մէջ և

Մնալ զՁեզ միշտ մեծարական յարգանօք յիշող և Աստուածապահ գերգաստանդ համար առ Առաջած աղօթարար։

Արակե պահանայ Բագրատունի։

Հրամանաւ Ա- Սինօդի Սրբոյ էջմիածնի ՚ի 16 Սեպտեմբերեցի,
1882 ամի. № 3004.

29748-Կ. հ.
13411-58
Дозволено цензурою. Тифлисъ, 8 Октября 1883 г.
Типографія И. Мартirosianca, Орбеліан. ул., д. № 5

այս պատճենաթի Ա ս կրթութ Ե առ սպասում է զա ովելայրաց
աշխարհ բառեմ ըստելի մասն ի արդ
արքաօ Խոհ ըստը մասն արքական է այս և չպատահ
խոյն մաքրիթարժ բողոքիմ մօմ գումարեան մի պ ս կրյու
սպասում միարժ ՊԱՏՇԱՄ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԵԱՆՆ է ծառաշ միաբն
մայ զանց մայ զանց մայ Ե առ բառեմ արքական պատահ

Այս ապատիւ Տիկին Վարդուհի Յովնանեանի առաջարկութիւնը, ժողովրդի սառն յարաբերութիւնը դէպի Սուրբ Պատարագի արարողութիւնը և միւնչոյն ժամանակ այսպիսի մի աշխատութիւն ՚ի լոյս հանելու մի խումբ հասկացողների պահանջն ու յանկութիւնը պատճառ դարձան ինձ այս իմ երկասիրական գործիս:

Եւ լիրաւի, ինչպէս նկատեց Մեծապատիւ Տիկինը, ժողովուրդը մեծ մասամբ անտեղեակ լինելով Ա. Պատարագի խորհրդին, չփիտէ թէ ինչ է Ա. Պատարագի մեկնութիւնն: Եւ այդ իսկ է հետևանքը, որ նա պատրաստ է Ա. Պատարագի էական խորհրդի կատարման միջոցին թողնել կիսատ Ա. Պատարագը և դուրս գնալ, ինչպէս և անում է, որովհետեւ չէ հասկանում: Կա մեղաւոր չէ, որովհետեւ չէ սովորէ և չփիտէ իսկ չփիտաղից զիտաւթիւն և կանոնաւորութիւն պահանջելը իմ կարծիքավ, իսկեմութիւնից դուրս է:

Այս է եղած ահաւասիկ երկասիրութեանս դիմաւոր պատճառը. որպէս զի այս զիրքը ժողովրդի ձեռքին լինելով՝ օգուտ քաղէ սորանից և տեղեկանայ Ա. Պատարագի խորհրդին, գոնէ որքան ձեռնհաս կլինի:

Սորա մէջ հանուած են Ա. Պատարագի մէջ ասւող և
երգւող քահանակի բոլոր աղօթքները, սարկաւագի քարոզները
և դպիրների երգերը. գրուած են նոքա գրաբառ լեզով. նոցա
տակը աշխարհաբառ թարգմանութիւնը և ապա իմաստի բա-

ցատրութիւնը։ Գասաւորուած է նոյնպէս Ա. Պատարագի արարողութեան միմեանց հետևող կարգը։

❖ Հանացել եմ ըստ հնարաւորութեան պարզ ոճով խօսելու, որպէս զի դիւրահասկանալի լինի ընթերցող ժողովրդին, որով միայն հասած կհամարեմ ինձ իմ նպատակիս. սակայն իմաստ-ների բացատրութեանց մէջ մի քանի կէտեր կան, որոնք թե-րևս մութ համարուեն ընթերցողներից ոմանց, որի մասին նոցա քաղցր ներողամտութեան կուսան արժանանալ:

Այս երկասիլուլժեան մէջ իմ առաջն ունեցած եմ Ներսէս Լամբրոնացւոյ «Մեկնուլժիւն խորհրդուց Ս. Պատրիարքի» ձեռագիրն. ևս և Յակոբ Կալեան Պատրիարքի «Եօթն խորհուրդը Եկեղեցւոյ» մականուանեալ ձեռագիրն և այլք:

Չեմ կասկածում իմ յուսերիս մէջ, որ սա յօդուտ միայն կարող է ծառայել ժողովրդին: Եւ եթէ արժան կհամարուէր՝ գուցէ կարողանար պէտք զայ և կըօնուսոցներին:

Վստահանում եմ Աստուծով յաջողութիւն յուսալ իմ գործիս. և այս յուսոյ իրազործումը միայն պէտք է լինի վաստակոցս անուշահամ պլուղը և կրօնասէր Ծիկնօջ կատարեալ միսիթարութիւնը:

Ա այսու ըստ ու մարդկան յաց ժայռի և
այսու ըստ մարդկան յաց ժայռի Աստեղ պահանջա բագրատանկ.

այս պատճենի պատ և գովածի մասն ըստ պատճենի պատ

Ա. ԲԱԺԻՆ

ՀԱՍՏԵՏՈՒԹՔԻՆ, ՆՊԱՏԱԿ ԵՒ ԽՈՇՀՈՒՐԴ Ա. ՊԱՏՄԱԳԻ,
ԲԸՔԱՆՄՈՒՆՔ ԵՒ ՅՈՐՁՈՐՁՄՈՒՆՔ ՆՈՐԻՆ

Ս. Պատարագի խորհուրդը հաստատեց Յիսուս Քրիստոս
իւր մատնութեան երեկոյին կամ որ նոյն է Աւագ Հինգշաբթի
օրը, իւր չարչարանաց և խաչք վերայ մահուան լիշտակի
համար. ձեռքն առնելով հացը՝ օրհնեց և տուաւ աշակերտ-
ներին ասելով.

«Առէք կերէք այս է մարմին իմ, որ վասն ձեզ և բազմաց բաշխի ՚ի քատութիւն և ՚ի թողութիւն մեղաց»:

Նոյնպէս և գինին օրհնեց, գոհացաւ և տուաւ աշակերտ-ներին ասելով.

«Արքէք ի դժանէ ամենեքէն։ այդ է արկւն իմ նորոյ ուխտի,
որ յաղագս ձեր և բազմաց հեղանի Եքառութիւն և ի Ծողու-
թիւն մեղաց»։

Եւ լետոյ իրրկ կնիք հաստատութեան աւելացրեց այս
խօսքերը.

«Զայս արարէք առ իմոյ լեշտակե»:

Ս. Պատրիարքի հաստատութեամ սպանակս է Կողական
Միաւորութիւն հաւատացելոց ընդ Ատուծոյ, որ է Միակ վախ-
ճանը Քրիստոնէական Կրօնի. և թէպէտ մարգր ՚ի հօգուոյ և ՚լ
մարմնոյ բաղադրուած մի գոյացութիւն լինելով, պէտք էր ու-
նենալ և մարմնաւոր միաւորութիւն, սակայն ըստ օրում Աս-
տուած Հոգի է, անհնար էր այդ՝ մարգոյն ունենալ, ուստի այդ

Ցագր տիղաւը եղեց օր
նաևորնեւ Հռոմեակա Պատկան.
Հայուսն Գրութիւննեւու ուզ
օգործ ու ուշի ալքանուց.

միաւորութիւնը կատարելու համար, Պարմնացաւ անմարմին բանն չօր, որպէս զի մեզանից մերը ստանալով միաւորի իւր Աստուածութեան հետ և նրանով ինքը միաւորուի մեղ հետ. և այդ մարմնաւոր միաւորութիւնը արդիւնաւորելու մտօք Յիսուս սահմանեց Պատարագի խորհուրդը զգալի հացով և գինով, որպէս զի ճաշակելով զայն հոգևորապէս միացած լինեմք իւր հետ: Մարդուս հոգեոր միութիւնը Աստուծոյ հետ նոր չէր, ոլովկետև ստեղծագործութիւնից յետոյ առաջին անգամ Դրախտի մէջ հաստատեց զայն իւր և նախաձնողաց մէջ, որ արդիւնք էր իւր առ Պարգն ունեցած անչափ սիրոյն: Այդ միաւորութիւնը կար և հին ուխտի եկեղեցոյ մէջ, բայց ոչ այնքան զգալի ու շօշափելի, զի թէպէտ վկայութեան խորանում, իսրաէլեան ժողովարաններում և կամ Երուսաղէմայ Տաճարում լինում էին ընթերցմունք և երգեցմունք, պաշտամունք և երկրպագութիւն, սակայն այն ամենայն էին ազգարարք Քրիստոսի Պատառական և շնորհաց. և այդ պատճառով հին ուխտի Եկեղեցին անկարող էր տեսանել և շօշափել զԱստուած կամ կատարելապէս միաւորուել Աստուծոյ հետ: Բայց երբ Բանն Աստուած մարմին առաւ, այն ժամանակ զգալի եղև, մօտեցաւ մեղ, տեսանք Նորան մարմնով, լսեցինք Նորա քարոզութիւնը և ստացանք Նորա ջնորհքը: Սորանով ևս չբաւականացաւ Աստուած. կամեցաւ առաւել ևս մօտենալ մեղ և շօշափուել մեզանից և կատարելապէս հաստատել իւր միաւորութիւնը. վասնորոյ կարգեց և հաստատեց Ս. Պատարագի խորհուրդը, որ է խորհուրդ Սիրոյ: Այս խորհուրդն է մարդկանցը Աստուծոյ հետ կատարելապէս միաւորող կապը կամ հանգույցը, որովկետև այս խորհրդով չալին Աստուած սրբագործեալ հացը և գինին փոխում է Ս. Հոգեով՝ Ս. Պարմին և Արքիւն Միաձնին Իւրոյ, որպէս զի մենք ճաշակելով զայն, միաւորուենք Աստուծոյ հետ լստ այնմ.

«Որ ուտէ զօթարմին իմ և ըմաէ զարիւն իմ—նա յիս բնակեսցի և ես ՚ի նմա»:

Ուրեմն Ս. Պատարագն է նախ՝ խորհուրդ Զարչարանաց և Մահուան Քրիստոսի և երկրորդ՝ խորհուրդ սիրոյ և միաւորութեան մեր ընդ Աստուծոյ:

Ս. Պատարագը բաժանում է երկու մասի, Պատարագ համայն հաւատացելոց և Պատարագ արժանաւորաց՝ ի հաղորդութիւն խորհրդոյն: Պատարագ երախալից կամ ամենայն հաւատացելոց այն մասն է որ սկսում է. «Օրհնեալ Թագաւորութիւնն չօր և Որդու և Ս. Հոգեոյն». քահանալի օրհնութիւնից և տեսում է մինչև վերաբերումը, որ ժամանակ ՚ի հնումն կարող էին ներկայ լինել երեխալիքը, այսինքն չմկրտուածները, ապաշխարողները և թերահաւատները, և ապա դուրս պէտք է զնալին և ապաշխարէին. իսկ Պատարագ արժանաւորաց այն մասն է, որ վերաբերումից սկսեալ տեսում է մինչև վերջը, որ ժամանակ կարող էին ներկայ լինել միայն արժանաւորները և մկրտեալները, որոնք կարող էին Ս. Խորհուրդը տեսնել և ճաշակել:

Ս. Պատարագի մէջ լսում են Աստուծոյ խօսքը, չընշտակաց օրհնութիւնը և մարդկան բարբառը: Աստուծոյ խօսքն է. «Այս է մարմին իմ և այս է արիւն իմ».

Չընշտակաց օրհնութիւնն է.

«Սուբ, Սուբ, Սուբ Տէր զօրութեանց».

Եւ մարդկան բարբառն է՝ քահանալի աղօթքը, սարկաւողի քարոզը և դպրաց երգը:

Ս. Պատարագը զանազան անուններով է յորջորջում կամ անուանում, ասում է չաղբաւաւիւն՝ որովկետև այս սուբը խորհրդով Քրիստոսի Մւրմնոյ և Արքանն ենք հաղորդում և հետևապէս կցորդում ենք, միաւորում ենք Քրիստոսի՝ իբրև մեր Գլխոյ հետ և միմեանց՝ իբրև նորա անդամների հետ մի

մարմին բարոյապէս ըստ առաքելոց. «Զի մի հայ՝ մի մարմին եմք բազումքս. զի ամենեքին ՚ի միոջէ հայէ անտի վայելեմք»։ Մի հայ է և մենք ամենքս մի մարմին ենք, որովհետեւ ամենքս էլ այն մի հայիցն ենք վայելում։ Ասւում է Պատութակ՝ որովհետեւ Քրիստոսի խաչի վերայ պատարագուելու խորհուրդն է, որպէս և այժմ խորհրդապէս պատարագուում է սուրբ Սեղանի վերայ։ Ասւում է Տերուական ընթիւն կամ Հեղծն ընթիւաց Խորհրդարար՝ որովհետեւ Տիրոջ ընթրիքն է այդ և Յիսուս հաստատեց այդ խորհրդը իւր մատոնութեան երեկոյին։ Ասւում է Խորհրդարար՝ որովհետեւ Յիսուսի Մարմնոյ և Արեան, նորա Զարչարանաց և Մահուան և նորա բոլոր փրկարգործութեան խորհրդարդն իւր մէջն է բովանդակում։

Ասւում է նա և Հոյ բեկեալ, օյհուութիւն կամ Գոհութիւն ըստ որում բեկանելով զայն գոհանում և օրհնում ենք զԱստուած։

Թէ և կան և ուրիշ շատ անուններ խորհրդին յարմար, բայց աւելի ընդունուածը և գործածականն է Պատարագ և Հաղորդութիւն յորջորջմունքները։

Բ. ԲԱԺԻՆ

ԱԻՌԻՔ, ԺԱՄ ԵՒ ՏԵՂԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Ս. Պատարագը կարելի է ամենայն օր մատուցանել Առաքելոց նախնի սովորութեան վերայ հիմնուելով. բայց աւելի ընդհանրացած սովորութիւնն է այժմ շաբաթ և կիւրակէ օրերը մատուցանել Ս. Պատարագը. շաբաթը՝ իրրեւ եօթներորդ օր

Հանգստեան Աստուծոյ յարաբաղործութենէ. իսկ կիւրակէն՝ իրրեւ օր Յարութեան Յիսուսի Քրիստոսի; Ս. Պատարագը մատուցում է և տէրունական ու սրբոց տօներին ՚ի պատիւ տօնին և սրբոց։

Ս. Պատարագը, ըստ սահմանագրութեան Հայաստանեաց եկեղեցւոյ, չէ մատուցում աղուհացից օրերին այսինքն մեծ պատին, բայց շաբաթ և կիւրակէ օրերը, չէ մատուցում նոյնպէս և առաջաւորաց պահոց եօթնեկի հինգ օրը և հինգ տաղաւորի պահոց շաբաթուն, որովհետեւ այս լիշեալ օրերը սգոյ և ապաշխարութեան օրեր են, այն ինչ Ս. Պատարագը հոգևոր ուրախութեան հանդէս է և կոչում է մինչեւ անգամ Հարունի։ Այս հոգեւոր ուրախութեան համար այսպէս է գըրում Պետրոս առաքեալը «Ալ իրրեւ հաղորդեալք Քրիստոսի չարչարանացն, ուրախ լինիջիք. զի և ՚ի յախնութեանն նորացնացեալ ըերկրիջիք»։ Քրիստոսի չարչարանքներին հաղորդուելով ուրախացէք. որպէս զի նորա յախնութեան ժամանակ ցնծալով ըերկրիք։ Ուրեմն սգոյ և ապաշխարութեան օրերին ըստ սովորութեան մերս Հայաստանեաց եկեղեցւոյ՝ պատարագ չէ մատուցում։

Ս. Պատարագի մատուցանելու ժամանակը սովորաբար առաւօտեանն է. այն է երրորդ ժամուն ըստ Եբրայեցւոց օր ըստ Եւրոպացւոց անում է ինն ժամից մինչեւ տասն և մէկը, սորա պատճառն այն է օր առաքելոց ժամանակներում սովորութիւն կար ծոմ կամ անսուազ մերձենալ ի Հաղորդութիւն Ս. Խորհրդին. և որովհետեւ ծոմ լինելը ժողովրդի համար աւելի հնարաւոր էր և դիւրին մինչեւ կէս օրը, վասնորոյ սահմանեցին օր Ս. Պատարագը մատուցուի առաւօտեաները, որպէս մնացել է և մինչեւ այսօր։ Բայց Ծննդեան և Զատկի ճարգալուցներին սահմանեցին Սուրբ Հարք եկեղեցւոյ որ Ս. Պատարագը մատուցուի երեկոյին, որովհետեւ Քրիստոս ծնաւ ՚ի մէջ զիշերին և յարեաւ

գիշերը մերձ առաւծուն։ և որովհետև երեկոն ևս ընթանում է դէպի գիշերը և առաւծու, վասնորոյ վերոցիշեալ ճրագալոցներին ՚ի նախատօնակին Ս. Պատարագը մատուցւում է երեկոին ՚ի լիշտառակ ՚ֆննդեան և Յարութեան Փրկչին։ իսկ Աւագ Հինգշաբթի օրը Ս. Պատարագը մատուցւում է զինի ճաշուն, որ մօտ է երեկոին, որովհետև խորհրդառոր ընթրիքը մերձ առ երեկոն կատարուեցաւ, Զատկական գառը ուտելուց ցետոյ։

Ս. Պատարագի մատուցանելու տեղը ըստ առաքելական վայելուչ սահմանադրութեան ընդունուած է եկեղեցիքը և օրհնուած մատուռները օծուած վէմ ունեցող սեղանի վերայ, իսկ ՚ի կարեւոր և յանհրաժեշտ դէպս պատերազմի՝ հնար է տաղաւարների տակ ևս մատուցանել Ս. Պատարագը, միայն ոչ առանց օծուած վէմ քարի. թէպէտ վերջին զուրկ կլինի նոյն մեծ և Փրկարար խորհրդին յարմար վայելքութիւնից։

Գ. ԲԱԺԻՆ

ՄՐԱՋԱՆ ԱՆԹՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՄ ԺԱՄԱՐԱՐԻ

Ս. Պատարագի սրբազան անօթն է Սկիչն և Մաղղմայն. Սկիչն գինոյ համար է և Մաղղմայն նշխարի՝ այսինքն հացի համար է։

Թէպէտ ՚ի հնումն Սկիչն և Մաղղմայն շինուած էին լինում փայտից, ապակուց, պղնձից, կաւից և այլն. սակայն վերջերը նոցա անյարմարութիւնները տեսնելով սահմանեցին որ Սկիչը և Մաղղմայն լինեն ոսկուց կամ արծաթից ոսկեզօծեալ. որովհետև փայտը անյարմար է, ապակին կոտրուելու վտանգն ունի, պղինձը ժանգ է բռնում, իսկ կաւը իրան է ծծում։

զուկ մարմինը. այն ինչ արծաթն ու ոսկին աղաստ են այդ անյարմարութիւններից և վտանգներից։

Պատարագիը կամ ժամարարը մեծ պատրաստութիւն պէտք է ունենայ Ս. Պատարագը մատուցանելու։ Նորա մարմնաւոր պատրաստութիւնները պէտք է լինին մարմնաւոր մաքրութիւն, ծոմապահութիւն, անխօս լուակացութիւն նախրնթաց երեկոյի ժամերգութիւնից սկսեալ մինչեւ Ս. Պատարագի աւարտումից, որովհետև զանազան ախորժ և անախորժ խօսքերը կամ զուրերը կարող են վրդովել նորա հոգեւկան խաղաղութիւնը ուրբահաժեշտ է պատարագչին. որպան կից և ծնրադրութիւն, սաղմոսապացութիւն և աղօթակատարութիւն իւրիտան մէջ։ հոգեւորպակէս ևս պէտք է պատրամագուի պատարագիէր խիղճը և հոգին մաքրելով, որ աւելի գլխաւոր և հարկաւորն իրը և հաշուէպահանջ իրանից իւրանցեալ կենաց մարկաւոր է զղջումն և խոստումն, ուկատ և դաշն ընդ Աստուծոյ թողնելու իւր ապականացու գործքերը, եթէ ոչ միանուագի գոնէ հետզհետէ, սակաւ առ սակաւ. ներել իւր գէմ յանցաւըներին, հատուցանել պատճառած վնասները, սրբել և մաքրել սիրող, միտքը և խորհուրդները ամենատեսակ գարշութիւններից, որովհետև ընդունելու է իւր մէջ իւր Տէրը և Փրկիչը և միաւորւելու է նորա հետ ուստի սուրբ պատարագից գոնէ երեք օր յառաջ ժամարարը պարտաւոր է խոստովանել իւր մեղքերը իւր կարգակից մի այլ քահանայի առաջ և ապա մօտենայ սուրբ և Փրկարար պատարագին։ Պատարագիչ քահանայի պատրաստութեան համարօտութիւնը այս է ընդարձակը իւրաքանչիւրը ինքը թող իմաստասիրէ և գործադրէ, առանց որոյ յանդնութիւնէ ահեղ խորհրդին սպասաւորելը և է ՚ի գատաստան անձին։

Դ. ԲԱԺԻՆ

ԶԳԵՍՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄԱԿԴՀԻ

Ճաշու երեք ողորմիալից յետոյ պատարագիչ կամ ժամարալ քահանան համբուրելով թէմը և երկրագութիւն անելով սուրբ սեղանին, թէմին՝ հայում է Աստուծոյ օգնութիւնը իւր առաջիկայ սպասաւորութեան մեծ դորձին. յետոյ աջակողմեան և ձախակողմեան դասերում կանդնող հոգևոր ուխտին խոնարհեցուցանելով զլուխն՝ թողութիւն է խնդրում իւր մարդկորդն սխալանաց և մտնելով աւանդատուն՝ նախ լիշելով իւր մեղքերը և ապա ասում է նշանակեալ սաղմոսը և աղօթքը, որից յետոյ զգեստաւորում է. նոյն միջոցին զպիրք երգում են զգեստաւորութեան շարականը «Խորհուրդ խորին» ար զբել է արեւելցի Խաչատուր վարդապետը, որպէս և տների մկրնատառերը Խաչատուր անունն են կապում։
Խորհուրդ խորին շարականի առաջին տունը հրեշտակաց ստեղծագործութիւնն է պատմում։ Երկրորդ տունը՝ Աղամայ ստեղծելը և դրախտի մէջ դնելը։ Երրորդ տունը՝ Քրիստոփ չարչարանքով մարդկան ազգի փրկութիւնը։ Չորրորդ տունը՝ Սուրբ Հոգւոյ իջումը առաքելոց վերայ։ Հինգերորդ, վերցերորդ, եօթներորդ և ութերորդ տուները վերաբերում են զգեստաւորութեան, իսկ իններորդ տունը «Թագաւոր երկնաւոր» չէ պատկանում «Խորհուրդ խորին» շարականին, այլ ծաղկազարդի կանոնից առնուած է։

Զպիրները քաղցրաձայն երգում են զգեստաւորութեան շարականը, մինչդեռ Պատարագիչը զգեստաւորում է. շարականն է այս.

«Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն, որ գարդարեցէր զվերին պետութիւնդ ՚ի յառագաստ անմատուց լուսուն, գերսպանծ փառօք զգասսս հրեղինաց»։

Ո՞րքան խոր, անհասանելի և անսկիզբն է այն խորհուրդը, որով երկնալին թաղաւորութիւնդ գարդարեցիր և անմատուց լուսուն առաջաստ պատրաստեցիր և նոյն թաղաւորութեանդ՝ գերապանծ վառքով հրեշտակներին կարգեցիր իբրև բնակիչ։

«Անձառահօրաշ զօրութեամբ սաեղծեր զադամ պատկեր տերական, և նազելի վառօք զգեստաւորեցէր, ի դրախտն Աղենի տեղի բերկրանաց»։

Անպատմելի հրաշագործ զօրութեամբ ստեղծեցիր Ավտոմին և Քո Տիրական պատկերով և սքանչելի վառքով զարդարելով նորան՝ դրեցիր Աղենայ դրախտի մէջ որ բերկրանաց և ուրախութեան տեղ էր։

«Զարչարանօք քո Սուրբ Միաձնիւ նորոգեցան արարածք ածենայն և վերատին մարդն անժահացաւ՝ զարդարետ ՚ի զգեստ անկողոպտելի»։

Քո սուրբ Միաձնի չարչարանքովը նորոգուեցան բոլոր արարածները, որով մարդը իւր նախկին անմահութիւնը կրկին ձեռք բերեց և զարդարուեցաւ անկողոպտելի զգեստով։

«Անձրւածին բաժակ հրահոսան, որ հեղար յառագեալսն ՚ի սուրբ վերնատանն, հեղ և ՚ի մեղ Հոգիդ Սուրբ Աստուած՝ ընդ պատմուձանին զքո զիմաստութիւն»։

Գու, ալ Սուրբ Հոգիդ Աստուած, որ իբրև շնորհաց անձրւել կրակի նման թափուղ բաժակ՝ թափուեցար սուրբ վերնատան մէջ առաքելոց վերայ. մեղ վերայ ևս թափիր քո իմաստութիւնը այն պատմումի հետ։

«Ճան քու՞ն վայելէ սրբութիւն, որ զգեցար զվայելչութիւն. սրբութիւն վառաց ընդ մէջ քո ածեալ, պատեա զմէջս մեր Ճըշմարտութեամբ»։

Սրբութիւն է վայել քո տանը. դու որ վայելչութիւն նես

Հաղած և փառքն ու, սրբութիւնը մէջքովդ ես անցրած, մեր մէջերն ևս ճշմարտութեամբ ամրապնդէ:

«Որ զարարչագործ բազուկս քո տարածեցէր ընդդէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր լարողութեամբ, համբարձմամբ ձեռաց առ քեզ միջնորդել»:

Թու՝ որ արարչագործ բազուկներդ ընդդէմ աստեղաց տարածեցիր, կարողութեամբ ամրացրու մեր բազուկները, որպէս զի կարող լինեմք արժանապէս միջնորդ լինել առ քեզ, մեր ձեռքերը առ քեզ համբառնալով:

«Խւսմամբ թագ՝ ՚ի գլուխ պատեսցես զմիտս և զգայարաննա խաչանիշ ուրարձման ըստ Ահարովնի, ծաղկեալ յոոկեթել՝ ՚ի գարդ խորանին»:

Հիւսելով մեր գլուխը թագով, պատիր և մեր միտքն ու զգայարանքները խաչած ուրարով, ինչպէս վկայութեան խորանի զարդ համարուած ուրարով Ահարոնն էր պատում իրան:

«Բաժից բուրթից տիբապէս Աստուած պետական, նախօրտապատ սերով զմեզ զգեստաւորեցեր՝ քում սուրբ Խորհրդոյդ լինել սպասաւո՞»:

Բոլոր արարածոց Տէր և Աստուած և պետ. զգեստաւորեցիր մեզ Քո սիրով իբրև շուրջառով, որպէս զի արժանապէս ծառալիմք Քո սուրբ խորհրդին:

«Թագաւոր Երկնաւոր, զեկեղեցի քո անշարժ պահեա, և զերկուագուս Անուանդ Քում պահեա ՚ի խաղաղութեան»:

Երկնաւոր թագաւոր, անշարժ և հաստատուն պահիր Քո սուրբ Եկեղեցին, իսկ Քո անուան Երկրագուներին խաղաղութեամբ պահպանէ:

Մինչդեռ դպիրները այս շարականն են երգում, զոյդ ընդ նոսին պատարագիչը ասում է Պաւթի հետևեալ սաղմոսը՝

«Քահանայք Քո զգեցցին գարդարութիւն և սուրբք Քո ցընծալով ցնծասցեն»:

Քո քահանաներդ թող արդարութիւն զգենուն և Քո սուրբերը ցնծալով թող բերկին:



«Յիշեալ Տէր զԴաւելթ և զամենայն վեցութիւն առաջարկութիւնը Յակով Տէր, լիշիր Պատիթը և նորա խոնարհութիւնը Յակով Տէր, Որպէս Երդուաւ Տեառն և ուստու Եղ Աստուծոյ Յակով Տէր, Թէ ինչպէս Երդում արեց Քեզ Տեառնդ և ուխտ դրեց իբրև Յակովայ Աստուծոյ հետ:

«Թէ ոչ մտեց ՚ի յարկս տան իմոց, թէ Ելեց յանկողինս մահաց իմոց»,

Թէ չեմ մտնի իմ տան յարկի տակը, չեմ բարձրանայ իմ հանգստութեանս անկողինը:

«Թէ տաց քուն աչաց իմոց, կամ նինջ արտեանաց իմոց, կամ հանգիստ լրանաց իմոց, մինչեւ գտեց զտեղի յարկի Տեառն Աստուծոյ Յակովայ»:

Քուն չեմ տայ աչքերիս, չեմ վակի արտեանունքս, ոչ ևս հանգստութիւն կտամ մարմնոյս անդամներին, մինչեւ չգտնեմ թէ ուր է Յակովայ Տիրոջ և Աստուծոյ բնակութեան տեղը:

«Ահա լուաք զննանէ յնվրաթայ և գտաք զնա ՚ի դաշտամայսեաց»:

Ահա լուցինք որ Եվկրաթայ ասուած տեղն է և գտանք նորան մալրիկերի դաշտումը»:

«Մացուք ՚ի յարկս նորա, Երկերագութիւնը ՚ի տեղւոջ ուր կաց են ուր նորա»:

Մտնենք նորա բնակութեան յարկը, Երկրագունք նորա ուրքի տեղը»:

«Արի տէր ՚ի հանգիստ քո, ուր և ատապանակ կտակի սրբութեան քո»:

Եկ Տէր Քո հանգիստի, թող զայ այստեղ քեզ հետ և սուրբ ուխտիդ տապանակը»:

«Երկցունք Քո զգեցցին գարդարութիւն և սուրբք Քո ցընծալով ցնծասցեն»:

Քո քահանաներդ թող արդարութիւն զգենուն և Քո սուրբերը ցնծան և բերկին»:

«Վասն Դաւթի սիրելոյ Քո, մի դարձուցաներ զերեսս Քո յօծելոյ քումմէ».

Քո Դաւթի ծառալի սէրը լիշելով՝ երեսդ քո օծեալից մի պարձնիլ:

«Երդուաւ Տէր Դաւթի Հշմարտութեամբ և ոչ ստեաց նմա, ի պարզոյ որովայնի նորա նստուցանել յաթոռ նորա»:

Շշմարտապէս երդուած է Աստուած Դաւթին առանց ստելու, որ նորա զաւակը կնտացնի նորա աթոռի վերայ:

«Թէ պահեսցեն որդիք Քո զօրէնս իմ, և զվեաւութիւնս իմ զոր ուսուցեց նոցա»:

Եթէ քո որդիքով կպահեն իմ օրէնքները և վկայութիւնները որ պէտք է սորվեցնեմ նոցա:

«Որդեք նոցա նստցին յաւիտեանս յաւիտենից յաթոռ քո»:

Նացա որդիքն ևս անվախնան ժամանակաւ կնտեն Քո աթոռի:

«Հաճեցաւ Տէր ընդ Սլոն, և ընտրեաց բնակիւ ՚ի նմա, ասէ այս է հանգիստ իմ յաւիտեանս յաւիտենից, ՚ի սմա բնակեցաց, զի հաճեցաւ ընդ սա»:

Հաւանեց Աստուած Սլոնին և այնտեղ ընտրեց իւր բնակութիւնը, ասելով այս է իմ յաւիտենական հանգիստս, արտեղ կընակուիմ, որսկետեւ հաւան կացայ այս տեղին:

«Զայրիս ոորա օրհնելով օրհնեցից և զագքատս սորա լցուցից հացեւ»:

Միշտ պէտք է օրհնեմ սորա ալիքները և հացով պէտք է կշատայնեմ սորա ազքատները:

«Երիցանց սորա զգեցուցեց զփեկութիւն և սուրբք սորա ցնձալով ցնձացեն»:

Սորա քահանաներին վիլութիւն պիտի հազցնեմ և սորա սուրբերը ցնձալով պիտի ուրախնան:

«Ոնդ ծագեցից եղջեւը ՚ի Դաւթի, պատրաստ արարեց զՃռագ օծելու իմոյ»:

Պատթի ցեղից զօրաւոր եղջեւը այնտեղ պիտի յարուցա-

նեմ և պիտի պատրաստեմ իմ օծեալի ճրագը որ վառուի:
«Թշնամիաց նորա զգեցուցեց զամօթ և ՚ի վերաց նորա ծազկեսցի սրբութիւն իմ»:

Սորա թշնամիները ամօթով պիտի թողում, խկ նորա վերայ իմ սրբութիւնս պիտի ծաղկիր:

Քահանան այս սաղմոսով դիմում է առ Աստուած խրնլրելով նորան՝ որ լիշէ գՔրիստոս, որ ըստ մարմնոյ Դաւթիթէր. լիշէ ոչ թէ իւր բարեգործութիւնները, այլ Յիսուսի անշափի հեգութիւնը, որ խոնարհուեցաւ մարդ դառնալ մեր փրկութեան համար. և երդուեց, ուխտ զրեց, իրրե Որդի իւր Հօրը, գրկութեան դորձը կատարելու. ինչպէս ասում է ինքը «Զգործսն զոր ՚տ ինձ չայր զի կատարեցից»: Յետոյ լիշում է քահանան Յիսուսի տունը, յարկը, մահճռը որ պէտք է հաւկանալ Հօր Աստուծոյ ծոյը և քունն ու նինջը՝ Աստուծոյ ներողամտութիւնն առ մարդիկ. խկ հանգիստն է Աստուածութեան վառքը, ուզելով ասել թէ՝ Յիսուսը երկնքից, արտինքն հայրական ծոյից, իջնելով աշխարհ, իւր անդադար վարդապետութեամբ, թժկութեամբ, խաչով և չարչարանքով այնքան աշխատելից յետոյ մտաւ իւր տեղը և յարկը, ուր հանգչում է Աստուած, արդ տեղն է խոնարհ և հեղ սրբերը: Սորանից յետոյ ցոյց է տալի Յիսուսի ծննդեան տեղը Եփրամայ որ էր Բեթղեհեմը. և աւելացնում է ապա ասելով մտնենք Յիսուսի յարկը. այսինքն հայրական ծոյը, որովհետեւ նա մտաւ և մեզ ճանապարհ ցոյց տուեց, որ մենք ևս նորան հետևելով մըտնենք այն յարկը՝ ուր է ինքը մեր առաջնորդը Քրիստոս. բաց ինչպէս. նախ մեր իմացական աղօթքով մօտենանք իմանալի Աստուծան և ապա արժանաւորապէս բարձրանանք վերին յարկը՝ ուր բարձրացու Քրիստոս իւր գրկագործութիւնից յետոյ: Քահանան այժմ իւր սաղմոսի դիմում է առ Քրիստոս որ իրան աղօթակից լինելու. համար վերկենալ իւր տեղից և բարեխօսի

Հօր առաջեւ, ինչպէս որ խոստացաւ առնել Հօրից Սուրբ Հոգին և տալ առաքելոց, սպազմիս մի քարեխօսութիւն և խընդրում Քրիստոսից. ինչու, որպէս զի, ասում է, մենք որ քահանակը ենք կարգութձ ժողովրդին, արդարութիւնը, որբութիւնը և Սուրբ Հոգւու շնորհաք հագնենք մեզ վերայ իրքեպատման, և համարձակութեամբ մտնելով ժողովրդեան մէջ, ցնծութեամբ լցնենք նոցա տրտմեալ սրտերը, հասկացնելով՝ որ Գոտ մեռար մեզ ամենիս մեղքից վրկելու համար: Այս բարեխօսութիւնը Քրիստոսից թափանձելուց յետոյ, գարձեալ գիշեամ է առ Հայրն Աստուած, որ իւր սիրելի Յծելոյ արդարութեան լիշառակաւ ։ Կի զաւը Հհանէ իւր խնդրաւածքները, այլ ողորմի և ներէ ինչպէս կրան՝ նոյնպէս և բոլոր մեղքուցեալներին. որովհետեւ ինքը Յիսուս իրաւունք տուաւ իւր անունով խնդրել Հօրից «Զօր ինչ ինչպիցէք յանուն իմ և Հօրէ իմմէ՛ առնուցուք»: Եւ որովհետեւ Աստուած երդուեց Թաւթի որովայնի պտուղը նառեցնելու նորաւ աթոռախ վերայ, և սակայն Գաւիթ ասելով Յիսուսն ենք հասկանում, ուստի Յիսուսի որովայնի պտուղները, որոնք ըստ երդանն պէտք է նատէին Յիսուսի աթոռի վերայ քրիստոնեակը են, որոնք հաւատով ծընուած են նորա վարդապետութիւնից. Ուրեմն եթէ քահանան լիշում է այս մեծ շնորհը Աստուծոյ առաջ՝ պէտք է լիշէր և նոյն շնորհի պայմանը: Արդարեւ երդուեց Աստուած մարդկանցը նստեցնել իւր Միաձնի աթոռի վերայ, բայց երբ երբ որ մարդիկ Յիսուսի արդարութեան ճանապարհով կընթանան և կը պահեն օրէնքներն և վկայութիւնները և Քրիստոսի պէս մահու չափ և մահու խաչի, հակառակ կարեաց և ցանկութեանց աշխարհի կաշխատեն հնագանդիլ Հօր Աստուծոյ: Այս ժամանակաւութեամբ իսկականութիւնը մեր մէջ կման նոր Սիրինի մէջ որ է Սուրբ եկեղեցին Քրիստոսի, այն ժամանակ և կհաճի հոգւով ալիքացեալներին օրհնել և իմաստութեան

և արդարութեան հային կարօտ աղքատներին սուրբ Հոգւոյ շնորհը բագեցնել. այն ժամանակ քահանաներին՝ մատուցուած սուրբ պատարագաւոր կիրկէ. և ժողովրդին՝ արդարութիւնավ կուրախացնէ. Հետևապէս և նոր Սիրինը, որ իւր բնակութիւնն է հաստատել, կօրհնէ և կղնէ այնտեղ իւր Վիածին Որգւոյ մահուան լիշառակի ներգործութիւնը, որ եղջիւր է և զօրութիւն, որն կարաղ ենք միայն հոգւոր թշնամին խոցաւել և միերաւորել և պատ տեսնել յօնը և զիսութիւնը, որ Հայրն Աստուած Յիսուսի է պատրաստել մեզ համար, ահա այս ամեն զօրութիւնները տալով, իմաստ եկեղեցւոյ թշնամուն, որ է խաւարի լիշանը, կամաչեցնէ Աստուած, որովհետեւ մեզ իւր արդարութիւնն ու փրկութիւնն է հազցնում և իւր սրբութեամբն է ծագիեցնում. իսկ թշնամին՝ տեսնելով մեր այս օրինակ գերահրաշ վափուտումը՝ բնականարար ամառում է, յաղթւում է և պարտում, վիրաւորում է և թողնելով մեզ՝ զիսակոր հետանում է մեզանից ամօթահարուած:

Արքաւազգը՝ որ այս միջոցին քահանաի մօտ կանգնած, յառամ է նարա ասած սաղմուր, տեղեկանալով Աստուծոյ սիրոյ առաստութիւնը և խոստմունքը՝ որ Քրիստոսի ձեռքով մարդկանցը պարզւում է, առում է հիացած.

«Խնդրեսցուք հաւատով և միաբանութեամբ և Տեառնէ, զի զողորմութեան շնորհան արասցէ և վերայ մեր. Ամենակալ Տէր Աստուած մեր կեցուցէ և ողորմեսցէ»:

Հաւատով և միաբանութեամբ խնդրենք Տիրոջից որ իւր ողորմութեան շնորհը մեզ պարզեցէ, մեզ աղորմէ և կեցուցանէ:

Սոլանից յետոյ քահանան դիմում է առ Քրիստոս աղօթելով նորան ընտանեար և ասելով հետևեալ զեղեցիկ և վըսեմ աղօթքը այսպէս:

«Որ զգեցեալ ես զլուս որպէս հանգեսձ Տէր մեր Ցիսուս Քրիստոս: Անձառելի խոնարհութեամբ յերկրի երևեցար և ընդ մարդկան շըջեցար. Որ եղեր քահանապահետ յաւետենից ըստ կար-

գին Մելքիսեդեկի և զարդարեցեր զեկեղեցի Քո սուրբ։ Տէր ամենակալ, որ պարգևեցեր մեզ զնոյն զերկնային հանդերձ զգենուլ։ Արժանի արա և զիս ՚ի ժամուս յայսմիկ զանպիտան ծառայս քո։ Որ համարձակիմ և մերձանամ ՚ի նոյն հոգեւոր պաշտօն վիտառց քոց։ Որպէս զի զամենայն ամբարշտութիւնս մերկացաց, որ է հանդերձ պղծութեան և զարդարեցայց լուսով քով։ Ծնիեւն լինէն գշաքիս իմ և թօթափեա զանցանս իմ։ Որպէս զի արժանի եղչց հանդերձեալ լուսոյդ առ ՚ի քէն։ Ծնորհեան ինձ քահանայական փառօք մտանել ՚ի պաշտօն սրբութեանց քոց՝ ընդ այնուիկ որք անմեղութեամբ պահեցին զպատութանս քո։ Զի և ես պատրաստ գտաց երկնաւոր առագաստիդ ընդ իմաստուն կուսանսն, փառաւորել գքեդ Քրիստոս՝ որ բարձեր զմեզս ամենեցուն։ Զի զու ես սրբութիւն անձանց մերոց և քեզ բարերարիդ Աստուծոյ վայել է փառօք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւետեանս յակտենից։ ամեն»։

Տէր մեր Յիսուս. Քրիստոս, զու՝ որ լոյր իբրև հանդերձ ես հազած, քո անպատմելի խոնարհութեամբդ. երկեցար աշխարհքի մէջ և մարդկանց հետ շրջեցար, զու՝ որ Մելքիսեդեկի կարգովը միմիայն յափտենական քահանայապետ եղար և քո սուրբ եկեղեցին զարդարեցիր, զու՝ Տէր ամենակալ, որ մեզ ես պարզեցիր նոյն երկնային հանդերձը հագնել։ Այժմ Տէր, արժանի արա այս ժամուս և. ինձ քո անպիտան ծառայիս, որ համարձակւում եմ մօտենալ քո փառաց նոյն հոգեւոր պաշտօնին։ Որպէս զի իմ բոլոր ամբարշտութիւնները, որ պղծութեան հանդերձ են, մերկանամ և քո լուսովդ զարդարուեմ։ Զղիր ինձանից իմ բոլոր շարիքները և քաց թող իմ յանցանքները, որպէս զի քեզանով և քո պատրանտած լուսոյդ արժանի լինեմ։ Շնորհք արա ինձ քահանայական փառքով մտնել քո սրբութեան պաշտօնի մէջ նոյան հետ միասին՝ որոնք անմեղութեամբ պահեցին քո պատուիրանները։ Որպէս զի և ես իմաստուն կուսանց հետ միասին պատրաստ գտնուիմ երկնաւոր առադաստիդ և փառաւորեմ քեզ Քրիստոս՝ որ բոլորի մեղքը ջնջեցիր։

Որովհետև դու ես մեր անձի սրբութիւնը և քեզ բարերար Աստուծուդ է վայել փառքը, իշխանութիւնը և պատիւր յափտեան ժամանակաւ։

Քահանան այս աղօթքով լիշում է առ Քրիստոս Նորա անշափ խոնարհութիւնը՝ որով մարդ դառնալ հաճեցաւ մարդկան աղջի վրկութեան գործը կատարելու համար. ուրեմն եթէ առանց մարդկան խնդրանաց և թախանձանաց հաճեցաւ անել այդ մեծ բարերարութիւնը։ լոյսը անկատկած է ուրեմն և հաւատը հաստատուն՝ որ և իւր այժմեան խնդրուածքը կընդունէ սիրով և կկատարէ առանց մերժելու. իսկ Մելքիսեդեկ՝ որ լիշում է աղօթքի մէջ, էր Յիսուսի մշտնջենաւոր քահանայապետութեան ստուերական ապացոյցը, որ ճշմարտուցաւ ՚ի Քրիստոս, ստուերն ՚ի լոյս փոխարկուելով. որովհետև Յիսուս իւր բոլոր վրկազործութեամբ իբրև ճղմարիտ և յաւիտենական Քահանայապետ և Քաւիչ մտաւ երկինք. և քաւելով նկեղեցին իւր պատարագաւը՝ զարդարեց ապա Սուրբ Հոգւոյ շնորհքովը, որ առնելով Հօրից տուաւ Եկեղեցւոյն այն ժամանակ՝ երբ իւր խացիւ և մահուամբ հաշտեցրեց դԱստուած ընդ մարդիկ։ Երկնային հանդերձը, որ լիշում է քահանան է սուրբ Հոգւոյ շնորհքը, որ նախ ինքը Յիսուս իւր մէջ ստացաւ և ապա բաշխեց եկեղեցւոյն։ Երբ աւարտում է Քահանան Յիսուսի բարերարութեանց այս բոլոր լիշապակութիւնները, այն ժամանակ խնդրում է Նորանից որ իրան արժանացնէ հոգեւոր պաշտօնին, որովհետև՝ մարմնաւոր պաշտօնը ՚ի հնումն էր՝ զոհագործութիւնները, որոնք ստուերք էին միայն Յիսուսի ճշմարիտ և Վրրկագործ Պատարագին։ իսկ այժմ իւր լիշածը հոգեւոր պաշտօն է Աստուծոյ, որովհետև մարմնաւոր տեսակի տակ հոդեւոր վերացումն է լինում մտաց առ Աստուած. և այսպիսի հոդեւոր պաշտօնի համար հարկաւոր է հոգեւոր պատրաստութիւն՝ այն է մերկանալ մեղաց և ամբարշտութեան հանդերձը և զար-

դպրութիւն լուսավ. ուստի նոյնը խնդրում է Յիսուսից՝ որ սրբէ խր հային ամենայն ազտեղութիւններից և լուսաւորէ սրբութեամբ և իմաստութեամբ. և երբ այս ամենայն հոգեոր պատրաստութիւն կունենայ՝ այն ժամանակ քահանայական վաստօք կը մտանէ՝ ՚ի սպասաւորութիւն սուրբ գործին կամ հոգեոր պաշտօնին. իսկ ինչ է քահանայական վառքը. Քահանայական պաշտօնը յիրաւի մեծ է և փառաւոր, որովհետեւ Քահանան է Յրինակ Քրիստոսի, Միջնորդ ընդ Աստուած և ընդմարդիկ. Նա է ժողովրդի խնդրուածքն ու փառատրութիւնը առ Աստուած մատուցանողը և նա է Աստուծոյ Ճնորհքը, Բարիքը, Աղորմութիւնը ընդունողը և ժողովրդին բաշխողը: Այս է պատճառը, որ քահանան հոգեոր սրբութիւն և մաքրութիւն է խնդրում Յիսուսից, որպէս զի արժանապէս սպասաւորէ Տէրունի Ա. Սեղանոյն, և որպէս զի ինքն ևս իմաստուն կուսանաց հետ պատրաստ գտնուի երկնաւոր առագաստին: Արովհետեւ եթէ քահանան խր քահանայական պարտքն ու իրաւունքը՝ որոնք օրինակ են ձիթոյ և լապտերաց իմաստուն կուսանաց, չի կատարի՝ կնշանակէ նա զուրկ է ձէթից և լապտերը անօգուտ է առանց ձիթոյ, որպէս հաւատը առանց զորքի: Աւստի խնդրում է, որ ինքը ոչ թէ յիմար կուսանաց նման լապտերն միայն ունենայ ձեռքին առանց ձիթոյ, այլ և ձէթը ունենայ ՚ի պատրաստի, որպէս զի ի գալ փեսային վառէ և ընդառաջէ նորան, մտնելու նորա հետ երկնային հարանեաց առագաստը. իսկ ձէթն է հաւատք և բարեգործութիւն որ պարտակատարութեամբ գարդարուած պիտի լին:

Այս է քահանայական աղօթքի համառօտ բացատրութիւնը:

Այս աղօթքից յետոյ սարկաւագը լառաջ է գալիս և սկըսամ է զգեստաւորացնել քահանային: Խրաքանչիւր զգեստը տալու ժամանակ սարկաւագը ասում է:

«Եւ ևս խաղաղութեան զծէր աղաչեսցուք»:

Իսկ քահանան պատասխանելով «Որհնութիւն և փառք չօր և Որդւոյ և Առքը Հոգւոյն» ասում է Խրաքանչիւր զգեստի պատշաճաւոր աղօթքը:

Նախ քան քահանայի զգեստաւորութիւր, իմաստասիրենք քահանայի աւանդատուն մտնելու և զգեստավորութիւր խորհուրդը, որ այս է՝ Քահանայիք և Քահանայապետք Խշիանք են առաջի Աստուծոյ և սակայն ինչպէս իշխանք ոչ թագաւորի արքունիքում, ոչ իսկ թագաւորի ներկայութեանն են փոփոխում իրանց հանդերձները, այլ ըստ օրինի պահանջուած իշխանական հանդերձներով զարդարուած են ներկայանում թագաւորին. Պայնպէս և քահանայիք որ հոգեոր իշխանք են Երկնաւոր թագաւորին, մտնում են Աւանդատուն ըստ օրինի պահանջուած իշխանական զգեստները հագնելու և այնպէս ներկայանալու երկնաւոր թագաւորին, Նորա արքայական գահի այն է Ա. Սեղանի առաջ: Այս է աւանդատուն մտնելու խորհուրդը: Իսկ թէ ինչու են եկեղեցական նշանակուած զգեստները հագնում. սա ևս բացատրում է այսպէս. նախ՝ որ ինչպէս արտաքուստ պայծառ զգեստով է զարդարուում Պատարագիչը Ա. Խորհրդին սպասաւորելու, հարկ է որ ըստ նմանութեան արտաքին պայծառութեան և ՚ի ներքուստ չարչարուի սուրբ և պայծառ խորհուրդներով. վասնորոյ հանելով իւր աշխարհային հանդերձ՝ կնշանակէ մերկանում է իրանից բոլոր իւր յանցանքներն ու աշխարհային խորհուրդները և հագնելով իշխանական պայծառ զգեստները՝ կնշանակէ պատրաստում է արտաքին և ներքին սրբութեամբ սպասաւորելու Յափտենական Տիրոջ Սուրբ Սեղանին և ոչ թէ իւր անձին. Աստուծոյ գործը կատարելու և ոչ թէ իւր գործը:

Երկրորդ՝ որ ինչպէս Ա. Պատարագը փրկագործ սրբութիւն է և չանդէս է Յիսուսի Յաղթանակին՝ նոյնպէս և Ա. Պատարագի խորհրդի սպասաւոր քահանան Սրբութեան և

Յաղթութեան զգեստներով զարդարուած պիտի ներկայանալ Յիսուսի փրկարգործ Յաղթանակի լիշտակութեան խորհուրդը կատարելու:

Երորդ՝ Քահանայի լւրաքանչիւր մի զգեստը լւր առանձին աղօթքն ու նշանակութիւնն ունի, որից հետևում է, որ ոչ մի զգեստ աւելորդ չէ, բոլորն ևս հարկաւոր են, իրանց ունեցած նշանակութեան և խորհրդոց համար:

Այս էք իմ երկտող բացատրութիւնը աւանդատուն մըս-նելու և զգեստաւորուելու վերաբերութեամբ:

Քահանալի աղօթքից յետոյ, ինչպէս տեսանք, հետեւում է Զգեստաւորովթիւնն. և նախ սարկաւագը տալիս է Քահանալին Սաղաւարտը, որը առնելով քահանան սարկաւագի ձեռքից դնում է զլուխը՝ ասելով Սաղաւարտի յարմարաւոր աղօթքը այսպէս.

«Դիւ Տէր սազաւարտ փրկութեան Նի գլուխ իմ՝ պատերազմել ընդ գօլութիւնս թշնամոցն շնորհօք Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք, Եղանակութիւն և պատիւ այժմ և մեջտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Ո՞վ Տէր՝ զիր իմ զլուխը փրկութեան սաղաւարտը, որով կարողանամ պատերազմել թշնամոյ (սատանայի) զօրութեանց դէմ, մեր Տէր և Փրկիչ Յիսուսի Քրիստոսի շնորհքովը, որին վայել է փառքը, իշխանութիւնը և պատիւը այժմ և յաւիտեան ժամանակաւ:

Սաղաւարտը նշանակում է Յիսուսի յաղթութիւնը չարին և մարգիարին ազգը նորա իշխանութեան տակից ազատելր:

Ճապիկը հաղնելով ասում է.

«Զգեցն ինձ Տէր Հանդերձ փրկութեան և պատմուման ու-
րախութեան և շուրջ պատեամ զգեստովս փրկութեան շնորհօք
Տեառն և այլն:

Ով Տէր՝ Հագցրու ինձ փրփութեան Հանդերձը և ուրա-

իսութեան սլատմուճանը և պատէ ու պահպանէ ինձ փրկութեան զգեստով:

Սպիտակ շապիկը նշան է արդարութեան և նշանակում է Քրիստոսի ամեղ ու մաքուլ վարքը:

Փորուրարր պարանոցի վերայ առնելու ժամանակ ասում է.

«Զգեցն՝ Տէր պարանոցի իմոյ զարդարութիւն և սրբեան զսիրտ
իմ յամենայն աղտեղութենէ մեղաց շնորհօք Տէառն և այլն»:

Ով Տէր՝ Հազգըսու իմ պարանոցիս վերայ արդարութիւնը և
իմ սիրտս մաքրիք մեղքի ամենատեսակ աղտեղութիւններից:

Փորսւարը նշանակում է՝ Ցիսուսի քարոզած քաղցր լուծք; Զեռաց սրբիչն ձախ կողմից գօտիկից կախելով ասում է.

«Սլրեա Տէր զգեռու իմ յամենայի աղտոնդութեան սեղաց շը-
նորհոք Տեառն և ալին»:

թիւններից:

Գոտին կապելու ժամանակ ասում է

«Ծուրչ պատեսցէ կամար հաւատոյ զմէջս սըսի լսոյ և ըդ-
մտացս և շիջուսցէ ՚ի սոցանէ զիսորհուրդս աղտեղիս և գօրութիւն
շնորհաց քոց լամենայն ժամ բնակեսցէ լսոսա. շնորհօք ծեառն
և ալին»

Հաւատով կամարը իբրև գօտի թող պատէ՛ իմ սրտի և
մտացս շուրջը, անհետացնելով սոցանից աղտեղի խորհուրդ-
ները, որպէս զի քո շնորհաց զօրութիւնը միշտ բնակուի սո-
զա մէջ:

Գօտին նշանակում է Յիսուսի ողջախոհութիւնը:

Բազմանի վերայ ասում է՝

«Տօւր Տէլ զօրութիւն (աջոյ կամ ձախոյ) ճեռվս լսոյ, և յուս զամենայն աղտեղութիւնս իմ, որպէս զի կարող լինեցիմ սպասաւորել քեզ անախտութեամբ Հոգւոյ և ծարքնոյ. շնորհօք Տէառն և այլն»:

Ով Տէր տուր իմ ձեռքին ոյժ և զօրութիւն և լուա իմ
մեղաց աղտեղաթիւնները, որպէս զի կարողանամ հոգւոյ և
մարմնոյ սրբութեամբ սպասաւորել քեզ:

Բազպանը նշանակում է որ Քրիստոս յօժարութեամբ լանձն առաւ կատարելու չօր Աստուծոյ կամքը:

Վակասը ուսոց վերայ դնելու ժամանակ քահանան նոյնն է խնդրում Աստուծոց, որ ինչ փարուրաբի հազնելու ժամանակ:

Ճուրջառը կամ նավարդը ճաձկելու ժամանակ առում է.

«Տէր, ողորմութեամբ քով զգեցն ինձ զգեստ պայծառ և պարսպեա ընդգէմ ներգործութեանց շարեն, զի արժանի եղէց փառաւորել զքո փառաւորեալ անոնդ. շնորհօք Տեառն և այլն:

Ո՞վ Տէր՝ քո ողորմութեամբ հազցրու ինձ պայծառ զգեստ և պարսպի նման հաստատիր ինձ չարի ներգործութեանց դէմ, որպէս զի արժանի լինիմ քո փառաւորեալ անոնդ փառաւորելու:

Այստեղ աւաբուռում է քահանակի զգեստաւորութիւնը, որից յետոյ ասում է.

«Յնձացէ անձն իմ չի Տէր, զի զգեցուց ինձ հանդերձ փըրկութեան և պատմուձան ուրախութեան. իբրև փեսայի եղ ինձ պսակ և իբրև զհարսն զարդու զարդարեաց զիս շնորհօք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. որում վայել է փառք. Եշանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յափտեանս յափտենից ամէն»:

Թող ցնձայ իմ անձս Աստուծով, որ հազցրեց ինձ վրկութեան հանդերձը և ուրախութեան պատմուձանը. իբրև փեսայ՝ պսակ զբեց իմ զլուխս և իբրև հարսն՝ զարդարանքով զարդարեց ինձ:

Ե. ԲԱԺԻՆ

ՀՈՒՅՑՈՒՄՆ ԶԵՐԱՅ ԵՒ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳՁԻ

Զգեստաւորութիւնը աւաբուռուց յետոյ Պատարագիչը դուրս է զալի աւանդատունից բուրվառակիր սարկաւագով և զալիս է

բէմի առաջ կանգնում ուր սարկաւագը տալիս է նորա ձեւաց լուացման ջուրը և պատարագիչը լուանում է ձեռքերը սանելով սարկաւագի հետ հետևեալ սաղմարը տուն առ տուն:

Ք ա հ ա ն ա ն «Լուացից սրբութեամբ զձեռս իմ և շուրջ եղէց զսեղանով քով Տէր»:

Կլուանամ սրբութեամբ իմ ձեռքերը և կպատեմ քո սուրբ ուղանը ով Տէր:

Ս ա բ ա ն ա ն «Դատ արա ինձ Տէր զի ես յանքութեան իմում գնացի, նի Տէր յուսացաւ զի մի եղէց հիւանդ»:

Դատիր ինձ Տէր, որ ես անմեղ և անարատ ճանապարհութիւն գնացի, Տիլոջ վերայ զիի լուս, որպէս զի չկիւանդանամ:

Ք հ. «Փորձեան զիս Տէր և քննեա զիս, փորձեան գերբիկամունս իմ և զսիրս իմ»:

Փորձիր ինձ Տէր և քննիր ինձ. փորձիր իմ սրտի զաղունիքը և իմ սիրտը:

Ս ր է. Ողորմութիւն քո Տէր առաջի աշաց իմոց, և հաճոյ եղէց ձշմարտութեան քում».

Քո ողորմութիւնը Տէր իմ աչքի առաջն է և ես հաճոյ կլինեմ քո ձշմարտութեանը:

Ք հ. «Ո՛չ նստաց ես յաթոռս նանբաց և ընդ անօրէնս ես ոչ մտից»:

Չեմ նստի ես անցաւորների աթոռի վերայ և անօրէնների հետ ես չեմ մասնակցի:

Ս ր է. «Ատեցի ես զժողովս չարաց և ընդ ամբարիշտս ես ոչ նստաց»:

Ատեցի ես չար մարդկանց ժողովը և ամբարիշտների հետ ես չեմ նստի:

Ք հ. «Լուացից սրբութեամբ զձեռս իմ և շուրջ եղէց զսեղանով քով Տէր»:

Կլուանամ սրբութեամբ իմ ձեռքերը և կպատեմ քո սուրբ ուղանը ով Տէր:

Ս չ ։ «Լսել ինձ զձայն օրհնութեան քո, և պատմել զամենայն սքահչելիս քո»։

Որպէս զի լսեմ քո օրհնութեան ձայնը և պատմեմ քո բոլոր սքահչելիքները։

Ք հ. «Տէր սիրեցի զվարելութիւն տան քո և գտեղի յարկի փառաց քոց»։

Տէր, սիրեցի քո տան վայելչութիւնը և քո փառաց յարկի տեղը։

Ս ր ։ «Մի կորուսաներ ընդ ամբարիշտս զանձն իմ և մի ընդ արև արևնահեղս գկեանս իմ»։

Իմ անձը՝ ամբարիշտների և իմ կեանքը՝ արլինահեղ մարդկանց հետ մի կորցներ։

Ք հ. «Որոց ձեռք իւրեանց յանօրէնութեան են և աջ նոցաւ և է կաշառօք»։

Որոնց ձեռքերը անօրէնութեամբ են շաղախուած և աջը՝ կաշառքով է լցուած։

Ս ր ։ «Ես յանբժութեան իմում գնացի, մրկեան զիս Տէր և ոզորմեա ինձ»։

Ես անմեղ և անարատ ճանապարհով զնացի, մրկիր ինձ Տէր և ոզորմիր ինձ։

Ք հ. «Ոտն իմ կացցէ յուղղութեան»

Իմ ոտքերս ուղղութեան մէջ կլինեն։

Ս ր ։ «Յեկեղեցիս մեծս օրհնեցից զքեզ»։

Մեծ օրհնութեամբ կ'օրհնեմ քեզ եկեղեցւոյ մէջ։

Ք հ. Փառք Հօր և Որդուոյ և Հոգուն Սրբոյ։

Ս ր ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն։

Պատարագիչ քահանայի ձեռաց լրտացումը ժողովրդի ներկայութեան նշանակում է ող նախ քան սրբութեան մեծ դորձը սկսելը, հարկաւոր է սրբուիլ ամենատեսակ ծանր մեղքերից և ապա բարձրանալ բէմը և ներկայանալ Աստուծոյ՝ սպասառը Առելով Ս. Եղանին, իսկ ժողովրդը տեսնելով իւր կողմից ուղարկուած Պատղամաւորի այսպիսի նախազգուշաթիւնը և

մաքրութիւնը՝ ինքն եւս հետեւելով նորա օլինակին՝ պէտք է սրբուի մեղքից, որպէս զի արժանի լինի հազորդ լինելու սուրբ խորհրդին։

Այս սանդուխց լետոյ քահանան Սուրբ Աստուծածնայ բարեխօսութիւնը յատաջ դնելով՝ ինդրում է Աստուծուց, որ ընդունէ իւր ինդրուածքը, թողնէ իւր յանցանքը և արժանացնէ գոհաւթեամբ փառաւորելու զինքն Արդւոյ և Սուրբ Հոգուած հետ և ասում է.

«Եւ վասն Սրբուհւոյ Աստուծածնին բարեխօսութեանն, Տէր ընկալ զազաշանս մեր և կեցն զմեզ»։

Սուրբ Աստուծածնի բարեխօսութեան շնորհիւ ընդունիր Տէր մեր աղաշանքը և պահպանէ մեզ։

Սարկաւագն ևս յորդսրական քարտզավ պատուիրում է ժողովրդին բարեխօս բռնելու Սուրբ Աստուծածինը և բոլոր սուրբերը, որպէս զի ողորմի և գթայ Աստուծ իրենց վերայ, ուստի և ասում է.

«Սուրբ զԱստուծածինն և զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայք ՚ի յերկինս. զի կամեցեալ ողորմեսցի և գթացեալ կեցուացէ զարգարածս իւր. Ամենակալ Տէր Աստուծ մեր կեցն և ոզորմեա»։

Սուրբ Աստուծածինը և բոլոր սուրբերը բարեխօս բռնենք առ Աստուծ, որ կամենայ մեղ ողորմել և գթայ մեղ վերայ ու պահպանէ։

Սորանից լետոյ քահանան դիմում է առ Հայքն Աստուծ Սուրբ Աստուծածնի և սրբոց բարեխօսութեամբն այսպէս.

«Ընկալ Տէր զազաշանս մեր բարեխօսութեամբ Սուրբ Աստուծածնի՝ անարատ ծնօղի միածնի Որդւոյ քո և աղաշանօք ամենայն սրբոց քոց և որոց այսօր է յիշատակ (կամ առուրս շընողհիւ) լուր մեզ Տէր և ողորմեա. ներեա, քաւեա և թաղ զմեշս մեր. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զՔեզ ընդ Որդւոյ և ընդ Սրբոյ Հոգույղ. այժմ և միշտ և»։

Տէր ընդունիր մեր աղաշանքը Սուրբ Աստուծածնի՝ Քո

Միածին Որդւոյ անարատ ծնօղի՝ և բոլոր սրբոց բարեխօսութեամբը. նա և նոցա աղօթիւքը՝ որոց տօնի յիշատակն է այսօր. լինի մեղ Տէր, ողորմի՞ր և ների՞ր մեղ, քաւիր և թողմեր մեղքերը, արժանացրու մեղ գոհութեամբ փառաւորել Քեղ ով չայր՝ Որդւոյ և սուրբ Հոդւոյդ հետ միասին:

Այս բարեխօսութեան աղօթքին հետեւում է ժամարաքի հրապարակական խոստովանութիւնը, որ երեսը ժողովրդին դարձնելով ասում է: Սակայն ինչ է պատճառը ժամարաքի հրապարակական խոստովանութեամն: Էլն ժամանակը Մովսէս Աստուծոյ հրամանաւ Խորայէլացւոյ մէջ ապաշխարութեան և խոստովանութեան ատեան օրինադրեց. որ քահանալի մօտ գալով յանցաւորը, բերում էր իւր հետ զոհի կամ պատարագի համար ընդունուած մի և որ և իցէ կենդանի և ծանարի զըրանը կանգնած ձեռքը դնում էր նոյն կենդանւու գլխի վերայ և խոստովանում էր իւր մեղքը: Այս ձեւը կար և Քրիստոնէութեան առաջին երեք դարերում. որ ծանր մեղուցեալք հրապարակաւ կիսուտովանուէին իրանց մեքերը և հրապարակաւ ապաշխարութեան կ'ենթարկուէին; իզդուշութիւն և ՚ի իրատ միւս բոլոր ներկայ ժողովրդի. և այդ ապաշխարողք կարող էին ներկայ լինել Սուրբ Պատարագին մինչև վերայերումը: Իսկ վերաբերման սկսուելու ժամանակ պէտք է դուրս գնալին եկեղեցու և ապաշխարէին դրանը: Այդ հրապարակական խոստովանութիւնը և ապաշխարութիւնը ինչ ինչ բարոյական պատճառներով փոխուեցան առանձնական խոստովանութեան մի քահանալի մօտ. Սակայն հետքը մնաց, ինչպէս և այժմ կատարում է մեր չայասունեաց եկեղեցւոյ մէջ. այսպէս՝ Պատարագիչ քահանան դառնալով դէպ ՚ի ժողովուրդը խոստովանում է բարձրաձայն իւր մեղքը ասելով.

«Խոստովանիմ առաջի Աստուծոյ. և Սրբուհւոյ Աստուածածնին և առաջի ամենալին սրբոց և առաջի ձեր հարք և եղբարք,

զամենայն մեղս զոր գործեալ եմ, քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով և աստուածն մեջօք գոր գործեն մարդեկի, Մեղայ, մեղայ, աղաւեծ զձեզ, խնդրեցէք վասն իմ յԱստուծոյ զթողութիւն»:

Խոստովանում եմ Աստուծոյ. Սուրբ Աստուածածնի և բոլոր սրբոց առաջին. նա և ձեր ներկայութեանը, ով հայրեր և եղբարներ, խոստովանում եմ իմ գործած մեղքերս, որովհետև մեղանչել եմ խորհրդովս, խոսքովս և գործքովս, գործել եմ բոլոր մեղքերը, որ գործում են մարդեկ. մեղայ եմ գալիս և աղաւում եմ ձեզ՝ Աստուծուց իմ մեղքերիս ժողութիւն խնդրեցէք:

Ժողովներդը տեսնելով, որ վիրապատգամաւոր հրեշտակը, որին ՚իրանց կողմից ուղարկում են առ Աստուած, զիմում է իրանց աղօթքին՝ նոքա ևս ցանկարվոր պատարագիչը արժանաւորապէս կատարէ պատճամաւորութեան գործը, մի այլքահանդաւի բերանով մաղթում են Աստուծուց ժողովաթիւն նորա գործած մեղքերին ու սխալանքներին այսպէս:

«Ողորմենցի քեզ Աստուած Հզօրն և ժողութիւն շնորհեսցէ ամենայն յանցանեաց քոյ անցելուն և այժմուս, և յառաջակայէն մերկեսցէ և հաստատեսցէ յամենաւու գործս բարիս և հանգուսցէ գքեզ ՚ի հանդերձեալ կեանսն»:

Թող ողորմի քեզ հզօր Աստուածը և ժողովաթիւն շնորհի քո բոլոր անցեալ և ներկայ յանցանքներին. թող փրկէ քեզ յառաջիկայ յանցանքներից, թող հաստատէ քեզ բոլոր բարի գործքերի մէջ և հանգուտութիւն պարզեէ քեզ հանդերձեալ կեանքի մէջ:

Ժողովրդի մաղթանքին քահանան պատասխանում է այսպէս:

«Ազատեսցէ և զձեզ մարդասէրն Աստուած, և ժողոցէ զամենայն յանցանս ձեր, տացէ ժամանակ ապաշխարելոյ և գործելոյ զբարիս. ուզզեսցէ և պառաջիկայ կեանս ձեր շնորհօք սուրբ Հոգւոյն հզօրն և ողորմածն և նմա փառք յաւետեանս. ամեն»:

Պարզասէք Աստուածը թող ազատէ և ձեզ, թողնէ ձեր
բոլոր լանցանքը, տայ ժամանակ ձեր մեղքերը ապաշխարելու
և բարեգործութիւններ անելու, թող հզօր և ողորմած Աս-
տուածը ձեր առաջիկայ կեանքը ուղիղ ճանապարհով տանէ Ս.
Հոգւոյ շնորհքով:

Ժաղովուրդը վերջացնում է իւր մաղթանքը, ինդրելով
պատարագիչ քահանայից որ լիշէ իրանց սուրբ պատարագի
մէջ անմահ գառի առաջ այսպէս.

«Յեշեզիք զմեզ առաջն անմահ գառինն Աստուծոյ»:

Եւ քահանան պատասխանում է.

«Յեշեալ լիջիք առաջն անմահ գառինն Աստուծոյ»:

Սորան հետևում է «Ազադակեցէք առ Տէր» մաղմոսը,
որով ժաղովուրդը յուղարկում է զքահանայն առ Աստուած ՚ի
զործ պատգամաւորութեան. Ապամոն է այս.

«Ազադակեցէք առ Տէր ամենայն երկեր. ծառայեցէք Տեառն
ուրախութեամբ»:

Բարձրացրէք ձեր աղօթական ձախը առ Տէր բոլոր բնա-
կիչք երկրի և ուրախութեամբ ծառայեցէք Տիրօջը:

«Մտէք առաջն նորա ցնծութեամբ. Ծաներուք զի նա է Տէր
Աստուած մէր»:

Յնձութեամբ մտէք նորա առաջը ճանաչեցէք որ նա է

մեր Տէրը և Աստուածը:

«Նա արար զմեզ և ոչ մեք էաք, մեք ժողովուրդք և խաչ
արտի նորա»:

Նա ստեղծեց մեզ և ոչ թէ մենք ինքներս գոյացանք.

մենք՝ որ նորա ժողովուրդն ենք և նորա արդարութեան արօտի
խաշները:

«Մտէք ընդ դրունս նորա խոստովանութեամբ և օրհնու-
թեամբ ի յարկս նորա»:

Խոստովանութեամբ մտէք նորա դռնից և օրհնութեամբ՝
նորա բննկարաթլ:

«Խոստովան եղերուք Տեառն և օրհնեցէք լիանցրն նորապահ
Խոստովանեցէք Տիրօջ առաջը և օրհնեցէք նորա պահնը:
Քաղցը է Տէր. յաւիտեան է ողորմութիւննիրա յազգէ
մինչև յազգէ չշմարտութիւն նորա»:

«Եւ ինանց չմաս պայ

Քաղցը է մեր Տէր Աստուածը. նորա որդիմութիւնը յաւի-

տենական է. իսկ նորա ճշմարտութիւնը յազգից մարդու պիտի
յարփուելէ:

«Փառք Հօր և».

«Եւ ինանց չմաս պայ

Սորանից յետոյ սարկաւագը իւր քարագափ նցրգրում է

Պուրք եկեղեցին միջնորդ բունելով բաժանուելանորմը լիովին

բարձրանալ բէմը այսպէս.

«Սուրբ եկեղեցեաւս աղացեսցուք զՏէր, զի սովածն իբիւնչէ
զմեզ և մեղաց և կեցուսցէ նորհնեւ ողորմութեանը իւփայը Ամենա-
կալ Տէր աստուած մեր կեցն և ողորմեան»:

Սուրբ եկեղեցին բունենք միջնորդ առավետամած և աղա-

ցնք՝ որ սորանով փրկէ մեզ մեղքից և պահպանէաիքը ողոր-
մութեան շնորհքով:

Քահանան ևս սոյն յորդորական քայրով և իմաստով դի-
մում է առ Քրիստոս միջնորդ բունելով Ս. Տաճարը և Ս. Աշտա-
ները և Ս. Եղիանը և երկրպագանելով նոյն առաջնորդ է.

«Ո մէջ տաճարին և առաջն Աստուածընկալ և պահանա-
ցեալ սուրբ նշանացու և սուրբ սեղանու լորեարհեալ երկեղեւ
երկրպագանեմք, զուրբ զհրաշալի և զիաղթն ովանք Տէրութիւնից քո
վառաւորեմք և քեզ մատուցանեմք զօնինութիւնի մակար ընդ-
Հօր և ընդ Հոգւուդ Սրբու. այժմ և»:

Այս տաճարի մէջ և Աստուծոյ ընկանելի և անպահառա-
ցած սուրբ նշանների և սուրբ սեղանու աբաջը յունաթէուելի յու-
երկրպագութիւն ենք տալի ահիւ և ողորմութեամբ փմուաւո-
րելով Քո սուրբ, հրաշալի և յաղթող Տէրութիւնը՝ մատուցա-
նեմք Քեզ՝ Հօր և սուրբ Հոգւուդ Հնու միասին իշառը և օրհ-
նութիւն:

Սորանից յետոյ Քահանան Սարկաւագի հետ տամն ըստ

«Եւ առասմ առ մարտու սիր

տուն ասելով. «Մտից առաջի սեղանոյ» սաղմոսը՝ բարձրանում է բէմը այսպէս:

Քէ. «Մտից առաջի Սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ»:

Կմտնեմ Աստուծոյ սեղանի առաջը և կներկայանամ իմ Աստուծուն՝ որ ուրախացնում է իմ մանկութիւնը:

Սրէ. Դատ արա ինձ Աստուած, և իրաւ արա ինձ ի գատաստանի իմում:

Տես իմ գատաստանս ով Աստուած և արդար հանիր ինձ իմ գատաստանիցս:

Քէ. Յազգէ՞ որ ոչ է սուրբ. ՚ի մարդու մեղաւորէ նենդաւորէ մերկեա զիս»:

Ազատիր ինձ անսուրբ ազգից և փրկիր ինձ մեղաւոր ու նենդ մարդկանցից:

«Սրէ. Դու Աստուած՝ հզօրիչ իմ ես, ընդէ՞ր մոռացաք զիս. ընդէ՞ր տրտում գնամ ես ՚ի նեղել թշնամւոյ իմոյք»:

Դու Աստուած՝ որ իմ զօրացնողն ես՝ ինչո՞ւ մոռացաք ինձ, որ ես այսպէս տիսուր եմ գնում իմ թշնամւոյ ինձ նեղացնելու համար:

Քէ. «Առաքենա Տէր զլոյս քո և գծմարտութիւն քո զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեաւն սուրբ և ՚ի յարիս Քո»:

Աւզարկիր Տէր քո լոյսն ու ճշմարտութիւնը, որոնք առաջնորդելով ինձ՝ հանեն սուրբ լեաւը և քո քնակարանը:

Սրէ. «Մտից առաջի Սեղանոյ Աստուծոյ առ Աստուած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ»:

Կմտնեմ Աստուծոյ սեղանի առաջը և կներկայանամ իմ Աստուծուս՝ որ ուրախացնում է իմ մանկութիւնը.

Քէ. Խոստովան եղէց Քեզ օրհնութեամբ. Աստուած Աստուած իմ»:

Կիսոստովանեմ քեզ օրհնութիւնով ով Աստուած Աստուած իմ:

Սրէ. «Աքդ ընդէ՞ր տրտում ես անձն իմ, կած ընդէ՞ր խոռվես զիս. յուսաւ առ Աստուած, խոստովանեաւ նմա. փրկիչ երեսաց իմոց Աստուած է»:

Ուրեմն այժմ ինչո՞ւ ես տրտում, ով անձն իմ և կամ ինչո՞ւ ես ինձ շփոթում. դիր յոյադ Աստուծոյ վերաչ. խոստու վանիր, ճանաչիր և հաւատա նորա մեծութիւնը. Այդ Աստուածն է իմ անձիս փրկիչը:

«Փառք Հօր և».

Այս սաղմոսը ասել է Գաւիթ այն ժամանակ երբ հալածական էր Սաւուղի՝ երեսից և կ'յուսար սակայն, որ կյաջողուի իրան մի օր դառնալ Երուսաղէմ և մատուցանել իւր զոհերը Աստուծոյ սեղանի առաջ. Եւ մենք՝ որ արտաքսուած ենք մեր բնիկ չաղթենիքից՝ որ է երկինքը, մեր նախածնօղաց մեղօք. նոյն երկինքը յոյս ունենք բարձրանալու Ցիսուսի խաչից և մահուամբ. որոյ լիշատակը և խորհրդածութիւնը ահա պիտի կատարէ քահանան Բէմի վերաչ. Ա. Սեղանի առաջ որ օրինակ է երկինք. և այս՝ ամենայն Աստուած յուսալով և նորա Ամենակարսորդութիւնը խոստովանելով և ճանաչելով:

Երբ որ քահանան այսպէս սաղմոսելով սարկաւագի հետ, բարձրանում է բէմք և կանգնում է սեղանի առաջը, այն ժամանակ՝ սարկաւագը իւր յորդորական քարոզն է ասում այսպէս.

«Օքննեսցուք գԱմենակալի Աստուած զհայը Տեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի, որ արժանի արար զմեգ կալ իտեղուջ փառարանութեան և երգել զերգս հոգեորս. Ամենակալ Տէր Աստուած մեր դիեցն և ողորմեան»:

Օրհնենք ամենակալ Աստուծուն մեր Տէր Ցիսուս Քրիստոսի Հայրը, որ արժանացրեց մեզ բարձրանալու և կանգնելու այս փառարանութեան տեղը և հոգեոր երգերով իրան օրհնելու. Ո՛վ Ամենակալ Տէր Աստուած մեր պահպանէ մեզ և ողորմիր:

Սարկաւագի յորդորական քարոզից յետոյ Քահանան ասում է բարձրաձայն այս աղօթքը.

«՚Ի յարկի սրբութեան և ՚ի տեղուջ փառարանութեան, հըթշտակաց բնակարանիս և մարդկան քառարանիս՝ առաջի Աստուածընկալ և պայծառացեալ սուրբ նշանացս և սուրբ սեղանոյս խոնարհեալ երկիւղիւ երկիրապանեմք. զնուրբ, զհրաշալի և ըզ

յառաջող կցէրութիւնք քո օրհնեմք և փառաւորեմք. և քեզ ընդ-
ելինալին գործն մատուցանեմք զօրհնութիւն և զփառս ընդ Զօր
և ընդ Հոգութ սրբոյ. այժմ և»:

Սրբութեան յարկում և փառաբանութեան տեղում՝ որ
հրեշտակաց բնակարան է և մարդկանց մեղաց և յանցանաց
քառութեան տեղ, Աստուծոյ ընդունելի և պայծառացած սուրբ
Կայսերին մատուցած սուրբ սեղանուս առջև խոնարհուելով՝ երկիրդած
սրբանի երկրպագութիւն ենք անում. և քո սուրբ, հրաշալի և
յաղթող Տէլաւթիւնը օրհնում ենք և փառաւորում և երկնային
գոյաւթեանց զուգակցութեամբ օրհնութիւն և փառք ենք մա-
տուցանում, մենք՝ Հօր և Սուրբ Հոգուդդ հետ միասին այժմ և միշտ:
- իսկ Սովորնից յետոյ քարշում են վարագուցը և դպիրները
մեղեդի, և երգում ըստ աւուրն պատշաճի:

Ա արարքի ամենայնիւ: 'Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երբեակ անձ-նաւորութիւն միասնական Աստուածութեանդ, յօրոց մի՞ և գու ծանաշես անհաս: 'Քև՛ և ՚ի ձեռն քո առաջինքն նահապէտական տոհմին շառաւիդք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալօն և զգալոցն, զեղեալսն և գոչ գոյացեալսն, անստուերաբար բար-բառով բանի վերապատմեցին: Հոգի Աստուծոյ քարոզեալ զեղզ Մոլսիսի, որ ՚ի գնալն քո ՚ի վերայ ջրոցն՝ անվարագիր զօրութիւն, ահեղ լըջարկութեամբ տածողականաւ՝ թեապարփակ սպաշտպա-նողօրէն գթասիրեալ ՚ի ծնունդս նորոգս՝ զաւագանին խորհուրդ ծանուցեր: Յոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկառու-ցանել զլոյթ մածուած վերջնուում վարագութիւն՝ յօրինեցեր կարող տիրապէս զբովանգակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից ուոյից ամենայն էլից յանէից: Քև՛ ստեղծանին ՚ի նորոգութիւն յարու-թեան ամենայն եղեալքս առ ՚ի քէն՝ լայնմ ժամանակի, որ է օր վերջին ալսմ կենցազի, և օր առաջին երկրին կենդանեաց: Քեզ հնագանդեցաւ միութեամբ կամացն որպէս Հօրն լրում, աղքա-կիցն քո՝ էակիցն Հօր՝ անդպանեկն Որդի, մերովս կերպիւ զեղեալսն աւենապանեաց Համարիտ Աստուած՝ հաւասար և համագոյն Հօր կըր հզօրի, և զառ ի քեզ հայշոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զԱստուածամարտիցն զքո հեստելոցն՝ չարաբանական բե-րանս կարիեաց, և զիւնին շնորհեաց՝ արդարն և անարատն գտիչն ամենայնի. որ վասն մեղաց մերոց մատնեցաւ և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ: Նմա վառք ՚ի ձեռն քո, և քեզ բարե-բանութիւն ընդ Հօր ամենակալի յաւիտեանս յաւիտենից, ամեն.

Դարձնեալ կը կնեցից ՚ի նոյն կարգ բանի մինչեւ
վստահութիւն վերհայեցողութեան լուսոյ՝ հրաշափա-
ռապէս յայտնեցի ազգեալ՝ աւետարանիւ վերստին
զկրկին խաղաղութիւն:

*) Երբ եպիսկոպոս է լինում Պատարագիչը՝ մերկանում է թագը և ծնկացք և վարագոյքը բայց՝ ասում է այս աղօթքը. վերջին կտորը, այն է «Զի քո է զթութիւն և այլն», ասում է բարձրաձայն, յետոյ կըկին ծած-կում է թագը վեր է կենում, քաջում են վարագոյքը, յետոյ դնում է սպառը:

Նայն անձնէ՝ զփառաւորեալ արարչութիւնդ՝ անեղծ և անստեղծ անժամանակ Հոգուոյդ գթածի, որ բարեխօսող ես լասն մեր յանձըունչ հեծութիւնս՝ առ ողորմածդդ Հայր որ զսուքըն պաշէն և զմեղուցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ Հօր: Արդ ազատեալ զմեզ յամենայն անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի վեճին առ ՚ի մէնջ լուսոյդ շնորհաց փայլմունք ՚ի տեսականաց աշաց իմաստից վասն զի գքեզ ոսաք միսանալ ՚ի մեզ ՚ի ձեռն աղօթեց և ընտիր վարուց վնկեցոց: Եւ քանզի մէնդ յերրուդութենէդ պատարագի. և միւսդ ընդունի. հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանիկ լւորյ, իսկ դու ընկալցես զմեզ պազատանս և յարդարեսցես զմեզ օթեանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝ ՚ի վայելումն ճաշակման նրկնաւոր գառնինդ, առանց պատժոց դատապարտութեան ընդունիւ զայս անժաշուցիչ մանաւս կենաց նորոյ վրկութեան. Եւ հալեսցի ՚ի հոյս յայսմանէ գայթակութիւնս մեր, որպէս մարդարէին կենդանախարոյի կայծ ծակամբն՝ ՚ի ձեռն ունելեացն մատուցման, զի յամենայնի քոյդ քարոզեսցի գթութիւն, որպէս Որդուվլ Աստուծոյն Հօր քաղցրութիւն, որ զանառակ որդին մերձեցոյց ՚ի հայրենի ժառանգութիւնն, և զպունկիսն յառաջեցոյց յերկնային արքայութիւնն արդարոցն երանութեան: Ոչի, այո՛ և ես մի եմ ՚ի նոցանէ, և զիս ընկալ ընդ նոսին իրը մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք գո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալք: Զի յայսմ ամենայի յամենայնի ծանիցի քո Աստուծութիւնդ՝ ընդ Հօր փառարեալ համապատուաբար ՚ի մի կամս և եմ մի իշխանութիւն գովութեան:

Զի քո՞ է գթութիւն, և կապողութիւն, և մարդասիրութիւն զօրութիւն և փառք յաւետեանս յաւետենից ամեն».

Ով Հօր հզօր Հոգի՝ որ ամենակարող, քարերար և մարդամէր Աստուծ ես բոլորից. որ յօրինել ես երևելի և աներևոյթէակները, որ վրկող ես և հաստատող, խնամող ես և խաղաղարար՝ յանդիման լինելով քեզ ահաւորիդ, քաղկատարած մաղթանքի հեծութեան ձայնով հայցում ենք քեզանից: Մօտենում ենք քեզ դողալով և մեծ երկիւղով, մատուցանելու այս

բանական պատարագը քո անքնելի զօրութեանդ, դաւանելով քեզ հայրենի անկողոպտելի պատուին՝ աթոռակից, փառակից և արարչակից ես և քննող ես էմմանուէլի Հօրդ ամենակատար կամքի խորին խորհուրդների դադտնիքին, որ քո առաքիչն է և բոլոր էութեանց փրկիչն է, կենդանատուն է և Արարիչը: Քո ձեռքով յայտնուեցաւ մեզ միասնական Աստուծութեան երեք անձնաւորութիւնները, որոնցից և դու մինը ճանաչեցար, ով անհա: Քեզանով և քո ձեռքով նահապետական տոկմի առաջին շառաւկինները՝ տեսանողներ ատուեցան, որովհետեւ անցեալը և գալիքը, եղածները և չգոյացածները պարզ խոսքերով հուշակեցին: Մովկէսը քարոզում էր որ Գու եւ Հոգի Աստուծոյ, որ գնալով ջրերի վերայ, ով անպարագիր զօրութիւն, ինամոցդ հզօր պաշտպանողութեամբ նոր ձննդոց վերայ գթալով առաջանի խորհուրդը նախանկարեցիր:

Որոյ օրինակաւ վերջին վարագուրիդ ջրային հաստատութիւնը կառուցանելուցդ առաջ, տիրական կարգութեամբ յօրինեցիր ոչնչից եղած բոլոր էութեանց և գոյութեանց բովանդակ բնութիւնը: Դարձեալ Քեզանով կնտեղծուին յարութեան նորոգութեան համար քնզանից ստեղծաւածներն այն ժամանակ՝ որ այս կեանքի վերջին օրն է, և կենդանեաց երկրի առաջին օրը. Քո ազգակիցը, Հօր էակիցը և Անդրանիկ որդին միութեամբ կամքի հնազանդուեցաւ Քեզ ինչպէս և իւր Հօրն էր հնազանդ: Նա մեր կերպարանաց տակ քարոզեց Քեզ մեզ, որ դու ես ճշմարիտ Աստուծ և չամագոյցկից և հաւասար իւր հզօր Հօրը և Քո դէմ եղած անհաւատութեան հայեցութիւնը ասաց որ անքաւելի մեղք է. և քեզ հակառականների՝ իբրև Աստուծամարտների չարախոս բերանը լուեցրեց. իսկ իւր դէմ հայկոյութիւնը՝ ներեց արդարը, անարդատը և ամենքին գրտնողը, որ մեր մեղաց համար մատնաւեցաւ և մեզ արդարացնելու համար՝ յարութիւն առաւ: Քո ձեռքով նորան փառք-

իսկ Քեզ ամենակարող չօր հետ միասին տալիս ենք բարեբանութիւն յափտեան ժամանակաւ:

Դարձեալ նոյն կարդով կիրկնեմ իմ խօսքերս, մինչեւ որ լուսոյ վերհայեցողութեան վստահութիւնը՝ հրաշափառ կերպով յայտնուի աղղուած, կրկին խաղաղութիւնը նորից նոր աւետարանելու:

Արտասուալից հառաջմամբ և բոլոր անձնով աղաջում ենք և աղերսում քո վառաւորեալ Արարջութիւնը՝ ով անեղծ և անստեղծ, անժամանակ գթած չոգի, որ անմոռունչ հեծութեամբ միշտ բարեխօս ես մեզ համար առ ողորմած Հայրդ, որ սուրբերին պահպանում ես, մեղաւորներին մաքրում ես և բարձրեալ չօր կենդանի և կեցուցիչ կամքի տաճարներ ես կազմում: Ուրեմն ազատիր մեզ ամենատեսակ անմաքուր գործքերից որ Քո բնակութեանը հաճելի չէ. և թող չշիշանին քո շնորհաց լուսոյ փալմունքը մեր իմաստից կամ խորհրդոց և մտաց տեսական աչքերից, որովհետև մենք գիտնք, որ դու միամումես մեզ մեր ընտիր և խնկելի վարքի և աղօթքի միջոցաւ: Եւ որովհետև երրորդութիւնիցդ մինք պատարագում է և միւսը՝ իւր անդրանիկ հաշտարար արեամբը հաճելով մեզ՝ ընդունում է նոյն պատարագը. Գու ևս ով սուրբ Հոգի, ընդունիր մեր պաղատանքը և մեզ ամենայն արժանաւորութեամբ պատուական օթևաններ պատրաստիր, որպէս դի առանց դատապարտութեան պատժի երկնաւոր գառի ճաշակումը վայելնք և նոր փրկութեան կենաց այս անմահացնող մանանայն ընդունենք: Եւ այս հրով թող հալուի մեր գայթակղութիւնը, ինչպէս առ մարգարէն կենդանի հրոյ կայծերի ունելիքով մատուցումը. որովհետև ամենայն բանի մէջ քո գթութիւնն է քարոզում, ինչպէս և չօր քաղցրութիւնը՝ Աստուածորդու ձեռքով կամ շնորհիւ, որ անառակ որդուն կրկին վերադարձեց դէպի հայրական ժամանակութիւնը և պոռնիկներին առաջնորդեց դէպի

երկնալին արքայութիւնը՝ որ է արդարոց երանութիւնը: Այս, Տէր, այս, ես ևս այնպիսիներից մէկն եմ. ինձ ևս ընդունիր նոցա հետ, համարելով կարօտ Քո մեծ մարդասիրութեանը: ինձ այս՝ որ ապրել եմ Քո շնորհքով, և ստացուել եմ Քրիստոսի արիւնուվը: Պրապէս զի այս ամեն պարագաների մէջ Քո Աստուածութիւնը ճանաչուի չօր հետ՝ վառաւորուած մի համապատիւ կամքով և մի գովութեան իշխանութեամբ: Որովհետև յափտեան ժամանակաւ, ունեն դու գթութիւն, կարողութիւն, մարդասիրութիւն, զօրութիւն և վառք:

Այս աղօթքով Քահանան դիմում է առ Հոգին սուրբ և լիշում է նորա երկնաւորաց և երկրաւորաց վերայ ունեցած իշխանութիւնը, բարերարութիւնը՝ որով ամենքի բարիքն է տնօրինում և մատակարարում և մարդասիրութիւնը՝ որ վայելում են ամենքը, որովհետև չօր և Որդաց հետ միասին ստեղծել է և յօրինել տիեզերքը երևելի և աներեւոյթ արարածներով և յետ ստեղծանելովն փրկում է նոցա և փրկեալներին խնամում է հաստատուն պահելով նոցա իրենց էռութեան մէջ և խաղաղութեան միջնորդ է արարածների առ միմեանս և առ Աստուած յարաբերութեանց մէջ: Սա ոչ սոսկ Հոգի է, ինչպէս հընդուակները կամ մարդկան Հոգիքը, այլ սա է Հոգի Աստուծոյ, որպէս Քրիստոսն է Միածին որդի Աստուծոյ: Ասրանից յետոյ ասում է քահանան մտքիս ընթացքով գալիս եմ առ Քեզ և հոգույ աչքով նկատում եմ Քեզ՝ որ Տէր ես ահաւոր և սքանչելի, ուստի և բաղկատարած հայցում եմ Քո, օգնականութիւնը. որ վարիչը ես բոլոր արարածների, և Քեզ՝ իբրև իմ գործակցի և զօրացուցչի՝ չօր Աստուծոյ աթոռակցի, վառակցի և արարչակցի՝ մատուցանում եմ բանական պատարագը՝ որ է շնորհակալեաց գոհութիւն և վառաբանութիւն: Եւ արդ Գու որ միայն կարող ես քննել Աստուծոյ խորին խորին խորին որդի և կամքը, որովհետև նորան անձնաւոր ես և նորա հայրական ժամանակութիւնը և պոռնիկներին առաջնորդեց դէպի

բական գրկիցն առաւ գՔեզ Արդին Աստուած և ուղարկեց՝ լի-
նել մեզ վերակացու. Դու ահաւասիկ յայտնեցիր առաքելոց և
նոցանով մեզ սուրբ երրորդութեան զիտութիւնը և Գրիսոսով
ուսմունքը կրկին լիշողութեամբ արմատացրիր առաքելոց և մեր
մէջ. Քեզանով էր միայն, ով սուրբ Հոգի, որ Աբրահամից սե-
րուած մարդարէք՝ եղածները և լինելիքները առաջուց տեսան,
ինչպէս Մովսէս՝ որ աշխարհի արարչութիւնը՝ Քեզանով իմա-
ցաւ և ճանաչեց. Եսայի՝ որ սստանավի կարծանումը ծուրայ
իշխանից՝ Քեզանով նախազուշակեց և Գանիէլ՝ որ նեռի դալուս-
տը՝ Քեզանով նախատեսաւ. Եւ որպէս ըստ Մովսէսի՝ նախ քան
արարչութիւնը, շրջելով ջրերի վերայ յառաջ բերեր բոլոր էու-
թիւնք և գոյութիւնք, նոյնպէս և շրջելով եկեղեցւոյ ար-
գանդի, այն է սուրբ Աւաղանի մէջ, զմարդիկ յորդիս Աստու-
ծոյ ես ծնանում. Դու ես՝ որ սուրբ աւազանի խորհուրդը նախ
քան Արարչութիւնը նկարեցիր, որովհետև քանի որ ջուրը դեռ
ևս չէր բաժանուած և հաստատութիւն չէր ասուած, որ եղաւ
վարագոլը երկնից և երկրի մէջ՝ այն ժամանակից իսկ ինա-
մում էիր տարերքը, շնորհելով նոցա գորութիւն՝ նիւթ լինելու
բոլոր էութեանց; Եւ որովհետև Դու էիր՝ որ ինամեցիր, ստեղ-
ծեցիր և պահպանեցիր, նոյն և Դու՝ մեր ապականացու կեանքի
վախճանին և անապական կեանքի սկզբին պէտք է նորոգես
մեզ, որպէս զի յարատեիմք մշտնջենաւորութեան մէջ: Միա-
ծինն Հօր Յիսուս՝ Քեզ ևս որպէս և Հօրն՝ հնագանդուեցաւ
կամքի միութեամբ, որովհետև Քո կամքը, միեւնոյն Հօր և Որ-
դու կամքն է, այդ կամքը ահաւասիկ կատարելով մեր փըր-
կութեան զործը աւարտեց և Քեզ ճշմարիտ Աստուած քարո-
գեց. իսկ Քո Անուան և Ճնորհաց չհաւատացողների դորձքը
կամ անհաւատութիւնը հայկոյութիւն համարելով անթողի
մեղք գրեց, իսկ իւր հայկոյողներին ներողաբար թողութիւն
շնորհեց, որովհետև մեր մեղաց համար մատնուեցաւ. և յարու-

թիւն առաւ՝ մեզ իւր հետ նորոգելով. Ուրեմն Քեզանով վառք
կտանք նորան, որպէս ուսուցանում է մեզ առաքեալը «Ոչ ոք
կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով» և Քեզ
բարեբանութիւն Հօր հետ միասին, որպէս հաւասար նմին Աս-
տուած:

Մինչև այժմ Քահանայի խօսքերը էին Հոգւոյն սրբոյ
սքանչելեաց և բարեաց լիշատակութիւնք և բարեբանական
վառատրութիւնք, որ աւարտելով այժմ դիմում է առ Հոգին
Սուրբ այսպէս՝ գարձեալ կարօտում եմ նոյն ձեռվ խօսել Քեզ
հետ, որ կարողանամ իմ շատ թախանձական խօսքերովս Քո
գորութեանք լոյսը՝ որ տակաւին խմացականավէս եմ նայում և
բացակայ եմ տեսնում ինձանից, խոնարհեցնել և հրաշալի
ազգմանք գէպի ինձ ձգել. իսկ այդ յախոնութիւնն իմ մէջ
նորանով կնկատեմ, որ շփոթուած խորհուրդներս Քեզանավ
խաղաղութիւն և հանդարտութիւն կտանանան:

Սորանից յետոյ սկսում է իւր պէս պէս հայուածքները
արտաստօք և հաւաչմամբ, լիշելով Սուրբ Հոգւով անմռունչ
հեծութեամբ բարեխօսութիւնը, ըստ առաքելոյն. «Զոր կամքն
յազօթս, որպէս արժանն իցէ՝ ոչ զիսեմք, այլ ինքն Հոգին
բարեխօս լինի ՚ի հեծութիւնս անմռունչս». Որովհետև մեր հե-
ծութիւնը և մեր հոգւոյ իղձը տեսանում է մեր մէջ եղած
սուրբ Հոգւոյ շնորհքը, և զայն ճանաչելով բարեխօսում է առ
Հայր և այսպէս կառավարում է նախ հրեշտակների էութիւնը
և ապա նոցանով մարդկանցը, այն է սուրբերին հաստատուն
պահելով և օր ըստ օրէ զօրացնելով, մեղաւորներին՝ ուղղելով
խճմտանաց յանդիմանութեան ազգմանք և զղջմանք մաքրելով,
որպէս զի երկնաւորաց և երկրաւորաց հոգիները Աստուծոյ տա-
ճար կազմէ, ըստ Առաքելոյն «Դուք տաճար Աստուծոյ էք, և
Հոգի Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ»:

Նախ քան զամենայն քահանան զգալով իւր արատաւոր

բնութիւնը խնդրում է սուրբ Հոգուց սրբութիւն իւր անմաքուր զործքերի, որոնք կարող են արգելք լինել իրեն իւր մէջ կրելու զՍուրբ Հոգին, որ Աւագանից ծնուելով՝ ընդունեց իւր մէջ. սակայն մեր մեղօք շիջուցանում ենք այդ Սուրբ Հոգին, ինչպէս զգուշացնում է առաքեալլ «ԶՀոգին մի շիջուցանէք». շիջուցանելն է ամենատեսակ մեղք. մինչեւ անգամ և դատարկաբանութիւն, որոնք հակառակ են Սուրբ Հոգուցն. ուստի խընդրում է որ իրեւ ողորմած Աստուած՝ ծագէ իւր մէջ լուսոյ ճառագայթը, այսինքն սրբէ իւր մեղքերը և ուրեմն միանալ իւր հետ, որովհետեւ եթէ ազատ կլինի մեղքից և հաճոյական կլինի իւր աղօթքը, այն ժամանակ և Հոգին սուրբ կրնակուի իւր մէջ կամ կմիանալ իւր հետ ըստ աւետարանական ճշմարտութեան «Բնդ ձեզ բնակեցէ և ընդ ձեզ եղեցի ՚ի յաւիտեան». Ուստի ասում է քահանան, Քո այդ միութեամբ ըստ ամենայնի արժանի արա մեզ, որպէս զի այս կենաց գեղը իմ անպատրաստութեան պատճառաւ պատժոյ առիթ չլինի, և ինչպէս ես մարդ գոլով մարդկացին տկար և մեղսալի բնութեանն եմ կցորդ, և դու Աստուած գոլով Քո բնութենակցի ողորմածութիւնից չես հեռի. և ինչպէս ես նոցա հաւասար յանցաւոր եմ, և դու նորա նման արդարացնող ես, որ արդարացրեց անառակին և պոռնիկներին. նոցա նման ահա և ես աղերսում եմ, որ ընդունես զիս՝ սիրոյդ կարօտիս, զիս՝ որ իւր արխւնովք գնեց Քո Համազոյակիցը և բնութենակիցը, բայց ես դարձեալ մեղօք հիւանդացայ և այսուհետեւ Քո օդնական զնորհացդ եմ ապաստանում:

Այսուղ վերջանում է Քահանայի աղօթքը առ Հոգին սուրբ, որից յետոյ ծածկելով սաղաւարտը՝ գնում է դէպի խորհրդանոցը կամ ընծայաբանը Ապաս գնելու, և նախ առնելով վերաբերիչ Ապրկաւագի ձեռքից նուիրական հացը կամ նշարը՝ դնում է մաղղմայի վերայ և ասում.

«Յեշատակ Տեառն մերոյ Յեսուսի Քրիստոսի»:

Սորանով մենք կատարում ենք վրկչի պատուէրը որ ասաց «Զայս արարէք առ իմոյ լիշտակի» Այս կամէք իմ լիշտակիս համար: Այս խօսքին աւելացրած է և շարականի տունը «Որ բազմեալ հանդչի յանարտեստ աթոռ, զմահ խաչի յանձն էառ վասն ազգի մարդկան, օրհնեցէք, գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան». Որ անարտեստ աթոռի վերայ բազմած հանդչում է, յանձն առաւ խաչի վերայ մահ՝ մարդկան ազգի համար:

Յետոյ առնում է սարկաւագի ձեռքից գինին՝ խաչաձև ածում է Սկհւոյ մէջ և ասում է.

«Յաղագու լիշտակի վրկագործ տնօրէնութեան Տեառն Աստուծոյ և վրկչին մերոյ Յեսուսի Քրիստոսի»:

Մեր վրկիչ Յիսուս Քրիստոսի և Տէր Աստուծոյ վրկագործ տնօրէնութեան լիշտակի համար է: Այս խօսքերին ևս աւելացրած է շարականի յետագայ տունը: «Որի կողահոս արեան աղբերէն նորոգեցան արարածք և անմահացան. օրհնեցէք, գովեցէք և բարձր արարէք զնա յաւիտեան». Որի կողից թափուած արեան աղբերլից արարածները նորոգուեցան և անմահացան:

Յետոյ Ռոկերեանի աղօթքով Քահանան գիմում է առ Հայրն Աստուած այսպէս:

«Տէր Աստուած մեր, որ զերկնաւոր հացէ՝ զջէւն մեր Յեսուս Քրիստոս զկերակիուրդ ամենայն աշխարհի՝ առաքեցեր վրկիչ և կեցուցել և բարերար, օրհնել և սրբել զմեզ. ինքնին զու Տէր, օրհնեա և այժմ զառաջագրութիւնս զայս: Ընկալ զսա յերկնային Քո Սեղանդ: Յիշեալ որպէս բարերար և մարդասէր զմատուցող և վասն որոց մատուցանի: Եւ զմեզ անդատապարտ պահեա ՚ի քահանայագործութիւն Աստուածային խորհրդոց քոց: Զի սուրբ և մատուաւորէ ամենապատիւ մեծ վայելւութիւն վառացդ Հօր և Որդւոյ և Հոգույդ սրբոյ: այժմ և միշտ յաւիտեանս յաւիտենից ամեն»:

Ով Տէր Աստուած մեր, դու՝ որ մեր Տէր Յիսուս Քրիս-

տոսին՝ որ երկնաւոր հաց է և բոլոր աշխարհի կերակուրը. ուղարկեցիր իբրև փրկիչ, կեանք տուղ և բարիք պարզեող, ոչ մեղ օրհնէ և սրբէ մեղքից՝ դու լնքդ Տէր, օրհնիր և այժմ մեր առաջադրած այս ընծայն, ընդունիր քո երկնալին սեղանդ։ Յիշէ իբրև մարդասէր և բարերար այս պատարազի մատուցանողներին և նրանց՝ ում համար որ մատուցւում է։ Իսկ մեղ պահիր առանց գատապարտութեան քո Աստուածային խորհրդաց քահանայագործութեան պաշտօնի մէջ։ Վասն զի սուրբ և փառաւոր և ամենայն պատւոյ արժանի է Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյդ փառաց մեծ վայելութիւնը, այժմ և միշտ։

Նախ քան Ասկերեանի ազօթքի բացատրելը, տեսնենք թէ առաջադրեալ նույներն կամ ընծայք լնչուն լիշտակ Քրիստոսի են կոչւում։

Նախ և առաջ որ լնքն ասաց և հրամայեց թէ «Զայտ արարէք առ իմոյ լիշտակի»։ Սակայն լնչ պէտք է հասկանանք լիշտակ խօսքից և ում առաջին պէտք. է լինի այդ լիշտակութիւնը։

Յիշտակն է այն՝ որ մենք լիշելով Հօր Աստուծոյ առաջ Յիսուսի անարդաբար մահը խաչի վերայ, նոյն մահը՝ որ մեր ընդ Հօր հաշտութեան և մեր փրկութեան համար էր, իբրև միջնորդ ենք դնում Հօր առաջ, որ Որդւոյ Զարչարանօք մեղ ողորմի, որովհետեւ ինքը Տէրը սորվեցրեց մեղ այդպէս վստահաբար դիմել մեղ առ իւր Հայրն, երբ ասաց «Զայտ արարէք առ իմոյ լիշտակի» այսինքն իմ Զարչարանաց և Մահուան մասին պատմեցէք իմ Հօրը, որ խղճալով իմ ձեր փրկութեան համար կրած Զարչարանաց և Մահուան վերայ, իմ սիրոյս համար, իւր գթութիւնից շարժուած ձեղ կողորմէ և կպարգևէ ամենայն շնորհէ և բարիք. և այս ընական է, որովհետեւ որ հայրը իւր որդւոյ ինդիրքը և այս խնդրանաց համար կրած վիշտերը ու նեղութիւնները կմերժէ, բոլորովին զանցառու-

թեան տալով և զկատարելով նոցա խնդիրքը՝ որինց համար իւր հարազատ՝ որդին՝ չարչարուել է, աշխատել է, աշատ վշտեր է կրել և յետոյ բարեխօսում է Հօր առաջ. ոչ մի հայրայնքան անգութ՝ և սառնասիրտ չի լինի դեպի իւր որդին և եթէ մարդկանց մէջ կարող էսալատակել այսպիսի միապիշողովթիւն և գութ, որ իրաւամբ չակտքէ ենթադրեմք որ և Աստուած որ տմենակատար և դերագոյն բարութիւն է իւր և Միածնի կրած Զարչարանաց և Մահուան լիշտակից ընդունի իբրև բարեխօսութիւն մեղ համար. Այս է՛ պատճառք որ մենք ընծայքը այսինքն հացն և գինին անուսում ենք լիշտակ Քրիստոսի կատարով որ ինչպէս այդ կինին շուտով սեղանի վերայ վոխուելու են որ Մարմին և Արին վրկչին այնպէս և Միածնի Որդին ճշմարիտ կերպով Հօր առաջ մեր փոխանակ մեռաւ. Ուստի և գիմումբ ննքառ Հայր, իբր թէ ասեթք նայիր Տէր քո Միածնի աշխատանայ պթուդը և նորա Մահուան համար մեղ ներիր։

Այս խորհրդով ահա ընծայքը իբրև լիշտակ Քրիստոսի Հօր Աստուծոյ առաջադրելով յետոյ, քահանան դիմում է Պակերեանի ազօթքով առ Հայր, ուներով իւրան գործակից Սուրբ Հոգին և գիրիստոս իբրև եղբայր և Գատարագ և Սուրբ Հոգին նուիրող Գատարագին. սոքա իբրև կցորդներ են իւր առ Հայր խնդրանաց, Մորանցեռով ահա խնդրում է զշայր ասելով Գու Տէր, որ քո Միածնի խօսքին համաձայն որ ասաց «Ես եմ հացն լիքինից իջեալ» տալիս ես մեղ այդ երկնաւոր հացը և կերակուրը, այսինքն քո կամքի քաղցրութիւնը և գթուցի առատութիւնը, որ մենք լիշելով նորա երախտիքը որովք փրկուցանք Աղամային անէծքից և սրբուեցանք մեղքից, դօրանայ մեր հոգին, ինչպէս զգալի հացով զօրանում է մարմինը, ուրեմն օրհնիր և այս նկութերը որ պէտք է Քեզ նուիրենք և ընդունիր սուրբ սեղանի վերայ, ուր պէտք է դարձնես այս նիւթերը

Դի ճշմարիտ Մարմին և Արիւն Միաձնիդ: Մենք սկսեցինք ահա
փո Ոլուց մահուան լիշտակը, իսկ Դու՛ որ մարդասէր ես և
բարերար, լիշիր մեղ քո ողորմութեամբ և գթութեամբ, մեղ՝
որ համարձակուում ենք մեղ և մեր հաւասարակից մարդկանց
համար հաշտութեան նուէր մատուցանելու Քեզ այս ընծայքը.
բայց որովհետև մարդկալին տկար բնութեանն եմ ենթար-
կուած և եմ մեղանչական, վասն որոյ աղաջում եմ առանց
դատապարտութեան սպահիր ինձ՝ որ համարձակուում եմ անհա-
սանելի բնութեանդ ծածուկ խորհրդով խօսակից լինելու: Եւ
որովհետև սուրբ ես բնութեամբ և կամենում ես որ մենք ևս
որուելով Քեզ հետ միանանք, ուստի փառք Քեզ այդ մեծ
շնորհի համար:

Այս աղօթքը աւարտելով ծածկում է Ակիհը քօղով և ա-
սում է Գաւթի սաղմոսը.

«Տէր թագաւորեաց, զվայելութիւն զգեցաւ, զգեցաւ Տէր
զօրութիւն ընդ մէջ եւր ածաւ»:

Տէրը թագաւորեց, վայելութիւնը հագաւ, հագաւ Տէրը
զօրութիւնը և իւր մէջքն անցրեց:

«Հաստատեաց զաշխարհս զի մի սասանեսցի, պատրաստ է
ամոռ քո, իսկզբանէ յաւտեանս դու ես»:

Հաստատեց աշխարհը որ չսասանուի, պատրաստ է Քո
ալժոռը, դու սկիզբ չունես և յաւտենական ես:

«Ամբարձան գէտք Տէր, և ամբարձին գէտք զձայնս իւրեանց,
յարեցեն գետք՝ ի գնացու իւրեանց»:

Քետերը բարձրացան Տէր և իրանց ձայները բարձրացրին.
կլերկենան գետերը իրանց գնացքի մէջ:

«Ի ձայնէ ջուրց բազմաց սքանչելի եղեն զբօսանք ծովու»:

Ճատ ջրերի ձայնից ծովի զբօսանքները հրաշցան կամ
սքանչելի եղան:

«Աքանչելի ես դու Տէր նի բարձունս, վկայութեանց քոց մէք
յոյժ հաւասարացաք»:

Երկնքումը դու սքանչելի ես, Քո վկայութիւններին մենք
խիստ հաւասարացինք:

«Տան քում վայելէ սրբութիւն Տէր, ընդ երկար աւուրս»:

Տէր, Քո տանը սրբութիւն է վայել շատ օրեր կամ միշտ:
Սաղմոսիս մէջ լիշուած «թագաւորեաց» բառով ըստ Ա. Թրոց
հասկանում ենք Յիսուսի մշտնջինաւոր թագաւորութիւնն
ընդ Զօր միաւորեալ մարդկալին մարմնով, որով և վայելու-
թիւն զգեցաւ, այսինքն ամենասուրը մարմինը որ միաւորեց
Աստուածութեան հետ եղաւ Աստուած և Մարդ և մարմնով
տկարութեամբը և չարչարանքով յաղթեց թշնամուն: Այն
տկարութեամբ յաղթանակի դրօշը բարձրացրեց. ինքը անէծք
եղաւ և Աստուածագիր անէծքը լուծեց. ինքը չարչարուեցաւ
և չարչարանքը խափանեց. ինքը դատապարտուեցաւ և մեր
հոգույ թշնամուն դատապարտեց. ինքը մեռաւ՝ և մեր
մահը չնջեց. ինքը յարութիւն առաւ և մեղ մեր նախկին
անմահ կեանքը պարզեց. Սորանով աշխարհը՝ այսինքն մար-
դիկը՝ անսասան հաստատեց յուսոյ և ակնկալութեան մէջ.
որովհետև ամենքն ևս տարակուած էին իրենց վիճակի մէջ.
թէ լինչ վերջ պէտք է ունենան իրենք մեռնելէն զկնի. իսկ
Յիսուս եղաւ առաջնորդ և ցոյց տուեց մարդկանց նախնի
հայրենիքի ճանապարհը և այսուեղ մտնելու միջոցներն ու
պատրաստութիւնները: Այդ միջոցներն ու պատրաստութիւն-
ները մարդկան պէտք է սորվեցնէր Սուրբ Հոգին, որոյ շնորհքը
նմանեցնում է Սուրբ Գիւրքը գետերին, ջրերին, գնացքին, ձայ-
նին և այն ըստ այնս «Որ հաւատալ լիս, գետք յորովայնէ
նորա ըլիսեցեն ջրոց կենդանութեան» և այս շատ վայելուց
կերպով, ըստ որում ինչպէս ջուրը մշտաբուղին է և պաս-
քեալների ծարաւն է յաղեցնում, նոյնպէս և սուրբ Հոգին
միշտ ուստուցանում է մարդկանց այն միջոցներն ու պատրաս-
տութիւնները՝ որովհ մարդիկ պիտի ժառանգեն երկնային ար-
քայութիւնը ըստ այնմ «Յորժամ եկեսցէ նա՝ Հոգին մշմարտու-

թեան, ուստուցէ ձեղ ամենախն ճշմարտութեամբ և լիշեցուցէ ձեղ զամենախն որ ինչ ասացի ձեղ»։ Արդ իշնելով սուրբ Հոգւոյն եկեղեցին հաստատուեցաւ և կաղմակիպուեցաւ և Հոգւոյն որբոյ շնորհօք դարդարուեցաւ և սքանչելի եղաւ մարդարէներով, առաքեալներով, հալրապետներով և նոյա Սուրբ Հոգւոյ աղդմամբ սահմանադրած կանաներով, խորհրդներով, հաւատոյ դաւանութեամբ, սուրբ ծիսակատարութիւններով և արարողութիւններով, ինչպէս սաղմոնի խօսքերը նախազոշակել են «ի ձայնէ ջուրց բազմաց ոքանչելի եղեն դրօսանք ծովու»։

Եկեղեցին, որ փոքր ինչ վնրը անուանեց ծով, այժմ անուանում է տուն Աստուծոյ։ Այս Քո տանը վայելուչ է սրբութիւնը, ասում է, որով և ակնարկում է թէ դու այս տան զլուխ զոլով՝ սուրբ ես, սուրբ են նաև սորա հիմունքը, որոց վերայ է շինուած, այն է մարդարէք և առաքեալք վիալք և վարդապետք։ ուրեմն և մենք՝ որ որմունք ենք այս սուրբ շինուածոյն, տուր մեզի որ մենք ևս սուրբ լինենք, որպէս զի Քո տունը իւր վայելչութիւնը ունենալ երկան օրերով։ բայց մեր սրբութիւնը ինչով կարող է լինել, եթէ ոչ Քո սուրբ Պարմոյ և Արեան ճաշակմամբ, որին պէտք է արժանանանք միշտ և յափտեան սրտի մաքրութեամբ։

Այս սաղմոնը աւարտելուց յետոյ երեք անդամ խաչակիքում է ընծայքը ասելով երեք անդամ։

«Հոգին սուրբ եկեցէ ՚ի քեզ և զօսութիւն բարձրելոյն հովանել լիցի ՚ի վերայ քո»։

Սուրբ Հոգին գալ դէպի քեզ և բարձրելոյ զօրութիւնը հովանի թող լինի քո վերայ։ *)

Փամարարի պաշտօնն է բանալ և ծածկել սկիզբ և սար-

*) Այս խօսքը ասելիս խաչակները ընծայեց վերայ, ոչ մի տեղ չդատանք, բացի պատարագամատուցի մէջ. տպ. 1860 ՚ի Տիվիս.

կաւագն միայն պէտք է վերաբերէ ՚ի Սուրբ Սեղանը և պատարագից յետոյ տանէ խորհրդանոցը։

Սարկաւագ նշանակում է պաշտօնեալ, բայց ոչ մարդոյ, այս սուրբ Սեղանոյն և Աստուծոյ խօսքին և ունէ Սուրբ Ստեփանոսի աստիճանը, որ սարկաւագ ընտրուեցաւ Սուրբ Սեղանին սպասաւորելու համար։

Սորանից յետոյ առնում է քահանան Սարկաւագի ձեռքից բարփառը և խնկարկելով սուրբ սպասին առնում է։

«Խունկի մատուցանեմ առաջի քո Քիխտոս բուրումն հոգեռական։ Ընկալ ՚ի սուրբ. յերկանին և ինքանալի քո մատուցարանը ՚ի հուս անուշից։ Առաքեալ առ մեզ վոխարէն զշնորհս և զպարգես Հոգւոյն սրբոյ և քեզ մատուցանեմք զիփառս ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ այժմ և միշտ»։

Մատուցանում եմ Քո առաջ այս խունկը, Քիխտոս Աստուծ, իբրև հոգեռոր բուրումն կամ անուշահոտութիւն, իբրև հանողական և անուշ բուրումն, ընդունիր սորան Քո սուրբ, երկնալին և խաչական կամ աննխիթ սեղանի, և սորա վոխանակ ուզարկիր մեզ Սուրբ Հոգւոյն շնորհքներն և պարզեները, իսկ մենք կմատուցանենք Քեզ Հօր և Հոգւոյ հետ փառք այժմ և միշտ։

Խունկը իւր զգալի անուշահոտութեամբ իմանալի հաճոյական աղօթքի վոխանակ է, ըստ այսմ «Ել ծուխ խնկոց աղօթք սրբոց ՚ի ձեռաց հրեշտակաց և առաջի Աստուծոյ»։

(Այսպէս ահա ինկարկելով ընծայլոյ զալիս է Սուրբ Սեղանի առաջ և վարագուրը բացւում է, ապա խնկարկելով սուրբ Սեղանին, իջնում է բէմից իւր սարկաւագներով և թափօրապէս շրջազայելալ ժողովրդեան մէջ, խնկարկում է նոցա և կրկին բարձրանում է բէմը։

Մինչդեռ քահանան խնկարկութեամբ շրջադալում է ժողովրդեան մէջ, զալիրները երգում են խնկարկութեան իմաստնալից ու գեղեցիկ երգը այսպէս.

«Յայս յարկ նուիրանաց ուխտի Տեառն տաճարի, ժողովեալքս աստանօթ ՚ի խորհուրդ պաշտաման պազատանաց յառաջիկայ սուրբ պատարագիս խնկօք անուշիւք խումբ առեալ պարեմք ՚ի վերնայրկ սրահս խորանիս: Ուզգութեամբ ընկալ գաղօթս մեր՝ որսէս բուրումն անուշահոտ խնկօց, սուաշխից և կինամոնաց և զժատուցողս պահեամ սրբութեամբ միշտ և հանապազ քեզ սպասաւորել: Բարեխօսութեամբ մօր քո և կուսի ընկալ զաղաշանս քոց պաշտօնէից:

Որ գերագոյն քան գերկինս պայծառացուցեր սուրբ գերեշիցի արեամբ քով Քրիստոս, և ըստ Երկնայնոցն կարգեցեր ՚ի սմազդասս առաքելոց և մարգարէից՝ սուրբ վարդապետաց՝ այսօր ժողովեալ գասք քահանաից, սարկաւագաց, գպաց, և կղերեկոսաց. խունկ մատուցանեմք առաջի քո Տէր, յօրինակ ըստ Հնումն Զաքարիայ: Ընկալ առ ի մէնչ զիսնկանուէր մազթանս որպէս զպատարադն Աբէլի, գնուի և զիսքրահամու: Բարեխօսութեամբ վերին քո զօրաց միշտ անշարժ պահեամ զաթոռ. Հայկազնեայց:

Խնդա յուժ դուստր լուսոյ՝ մայր սուրբ կաթուղիկէ. մանկամբք քո Սիօն. զարդարեալ պէճնեամ, հարսն պանձալի, Երկնանման լուսաճեմ խորան. զի օծեայն Աստուած՝ էնն ՚ի յէէն, անձախապէս ՚ի քեզ միշտ պատարագի. Հօր ՚ի հաշտութիւն. մեզ ՚ի քաւութիւն բաշխէ զմարմին և գարեւն իւր սուրբ. վասն իւր կատարման սուրբ տնօրէնութեան շնորհէլ զթողութիւն կանգնողի տաճարիս *»)

«Զանապական Կոյսն Մարիամ՝ Աստուածածին խոստովանի սուրբ Եկեղեցի, ուստի տուաւ հացն անմահութեան և բաժակ մեզ ուրախարագ՝ տուք օրհնութիւն նմա հոգեռոր Երգով»:

Այս ուխտ և աղօթք նուիրելու տեղը՝ որ Աստուծոյ տաճարն է, ժողովուած ենք առաջիկայ սուրբ Պատարագիս խորհուրդը պազատանքներով կատարելու. անուշահոտ խունկերով խումբ կազմած պարում ենք այս խորանի վերնայրկի սրահներում: Սիրով ընդունէ Տէր մեր աղօթքը իրեւ անուշահոտ

*) Երբ Ժամաղարը ուշանում է ժողովուի մէջ դպիթները Երգում են «Խնդա յոյժ»:

խունկերի, ստաշխների և կինամոնների բուրումը. Կ մեզ՝ որ մատուցանում ենք Քեզ այս աղօթքները, պահիր և պահպանիր միշտ և ամեն ժամանակ Քեզ սրբութեամբ սպասաւորելու համար: Ընդունէ պաշտօնէիցդ աղաչանքը Քո մօր և սուրբ կուսի բարեխօսութեամբը:

Դու, ով Քրիստոս Աստուած, որ Քո սուրբ Արեամբը սուրբ Եկեղեցին աւելի պայծառացը քան երկինքը և ինչպէս Երկնալին հրեշտակաց դասակարգութիւնը, նոյնպէս կարդ կարդ դասաւորեցիր սորա մէջ առաքեալները, մարդարէները, սուրբ վարդապետները. այսօր ահա զան զաս ժողովուած ենք քահանալք, սարկաւագունք, դպիրք և Եկեղեցական այլ պաշտօնեալք, որպէս զի հին օրինաց մէջ Զաքարիա! քահանալի նման խունկ մատուցանենք Քո առաջդ ով Տէր: Ընդունէ մեղանից այս խունկերի հետ միացրած մեր աղօթքը, ինչպէս ընդունեցիր Աբէլի, Նոյի և Աբրահամի պատարագները: Քո վերին դորաց հրեշտակաց բարեխօսութեամբը առ միշտ հաստատուն և անշարժ պահպանէ մեր Հայկապանց աթոռը:

Ուրախացիր և զուարճացիր լուսոյ զուստը, մայր սուրբ Կաթուղիկէ Եկեղեցի Սիօն քո զաւակներովգ, զարդարուիր ու պէճնուիր ով պանձալի հարսն և ով Երկինքի նման լուսապայծառ խորան, որովհետեւ օծեալ փրկիչն մեր Քրիստոս, որ Աստուծոյ Որդի է, միշտ պատարագուած է քո մէջ, բայց և բնաւ չէ սպառում, չէ հատնում. իւր սուրբ Պարմինն ու Արիւնն բաշխում է մեզ, որպէս զի Հօրը հետ մեզ հաշտեցնէ և մեր մեղքերը քամէ, իսկ իւր տնօրէնութեան և մարդեղութեան խորհուրդը կատարելով թողութիւն է պարզեւում այս տաճարը կանգնողին:

Սուրբ Եկեղեցին Աստուածածին է դաւանում անապական Պարիամ սուրբ կուսին, որից տրուեցաւ մեզ անմահական հացը

և ուրախարար. բաժակը՝ տուեցան օրհնութիւն, ձեր հսկուոր երգով:

Աշխարհ գալոցի կամ պատարազչի ժողովրդեան մէջ շըրշագայելու նշանակութիւնն է նախ՝ որ Աստուածալին լուսափայութեան անուշահոտութիւնը նախապէս իջանում է առաջի դասը Աթոռոց, յետոյ միջին դասը Տէրութեանց և ապա վերջին դասը Հրեշտակաց՝ և թէպէտ միաւորում է նոցա իւր հետ, սակայն անխառն նոցանից մնում է իւր մի էութեան մէջ. Երկրորդ՝ որ նոյն Աստուածալին նախախնամութիւնը իջանում է նախ Հրեշտակաց իմանալի դասը. յետոյ բանական մարդկանց, կենդանիների և միւս գոյացութեանց մէջ, խնամում է նոցա և պահպանում և սակայն անխառն նոցանից մնում է իւր նոյնութեան մէջ. Երրորդ՝ որ Բանն Աստուած մարմին առաւ, մարդ դարձաւ և մեր բնութիւնն ստացաւ և բուրեց մեր մէջ Աւետարանական անուշահոտութիւնը և դարձեալ բարձրացաւ երկինք և նստաւ չօր Աստուծոյ աջ կողմը: Ուստի քահանան իջնելով բէմից և շրջագայելով ժողովրդի մէջ, ուստացանում է մեզ որ ինչպէս Աստուած իւր լուսափայութիւնը տալիս է Հրեշտակներին և սակայն իւր նոյնութեան մէջ է մնում, նոյնպէս և Տէրը տալով մարդկան իւր սուրբ Պարմինն ու Արլւնը միաւորում է նոցա իւր հետ, բայց դարձեալ իւր նոյնութեան մէջ է մնում, նոյնպէս և Քահանան շրջագայելով ժողովրդի մէջ, դարձեալ բէմն է բարձրացաւ:

Է. ԲԱԺԻՆ

ԺԱՄԱՄՈՒՏ ԿԱՄ ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Պինչև այժմ կարող է համարուել պատրաստութիւն մա-

տացման սուրբ Պատարագի. իսկ երբ քահանան բարձրանում է բէմը, սարկաւագը իբրև ուսուցիչ և դաստիարակ ժողովրդեան, բերան դասնալով նոցա և ամբողջ եկեղեցւոյ կողմից՝ ձայնում է առ քահանան, իբրև երկրից առ Քրիստոս, ասելով «Օքնեա Տէր»:

Այսինքն դու ես մեր Տէրը վոխանակ Քրիստոսի և նորանից յետոյ, ուրեմն օրհնմի՛ և մեր խնդրուածքն ու աղաքանքը դի՞ր Աստուծոյ առաջ. Պարկաւագի միջնորդական խոսքին քահանան պատասխանում է.

«Օքնեալ թագաւորութիւնն Զօր և Ուրգոյ և Հոգոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւետեանս յաւետենից ամեն»:

Սա նշանակում է որ, որովհետեւ քահանան պատրաստուած է մեծ բարիքներ խնդրել Աստուծոց, ուստի նախ քան իւր խնդրուածքների սկզբնաւորաթիւնը, գեռ պարտաւոր է համարում իրեան օրհնութիւն և բարեբանութիւն վեր առաքել առ Ամենասուրբ երրորդութիւնը, նորա մարդկան ազգին արած բարիքների համար, իսկ յետոյ կմկսէ իւր խնդրուածքները: Պորան հետեւում է ժամամուտը ըստ աւուրն պատշաճի, որով և սկսում է Սուրբ Պատարագի:

Ժամամուտից յետոյ սարկաւագը բարձրաձայն հրամայում է ժողովրդին խնդրել Աստումածալին խաղաղութիւնը ասելով.

«Եւ ես խաղաղութեան զՏէր աղաշեցուք, ընկալ, կեցն և ոզորմեա»:

Այսինքն աղաշենք և հայցենք Աստուածալին այն խաղաղութիւնը՝ որ Յիսուս տուեց իւր աշակերտներին ասելով «Խաղաղութիւն թողում ձեզ, զխաղաղութիւն զիմ տամ ձեզ, ոչ որպէս աշխարհս տաք, տամ ես ձեզ.» այսինքն աշխարհի տուած խաղաղութիւնը չեմ տալիս ձեզ, այլ այն խաղաղութիւնը որ բարձր է նորանից. Աշխարհի տուած խաղաղութիւնն է առ ժամանակեալ, անհիմն, տարակուսելի և զանազան

մարմնաւոր շահուց համար. Այս խաղաղութիւնն է յավտենական, հիմնաւոր, ճշմարիտ և հոգևոր շահուց համար. Այս խաղաղութիւնն է հաշտութիւն Աստուծոյ ընդ մարդկան; Իսկ թէ ինչու այս խաղաղութիւնն է պատուիրում Սարկաւազը որ հայցէ ժողովուրդը ամենից առաջ. Որովհետեւ մեղքը և յանցանքը իբրև խտրոց թշնամութեան ենք դրել մեր և Աստուծոյ մէջ. մեր մեղքերի բարդութիւնն ու թանձրութիւնը չեն թողնում որ մեր խնդրուածքն ու աղօթքը առ Աստուծ բարձրանան. ուստի և սարկաւազը, որ դաստիարակ և ուսուցիչ է ժողովրդեան, պատուիրում է որ նախ քան զամենայն այդ խաղաղութիւնը հայցէ ժողովուրդը և ապա միայն իւր խնդրուածքն ու աղօթքը առաջարիէ Աստուծոյ։ Այս պատուէրը տալուց յետոյ, ժողովրդի կողմից խնդրում է քահանային որ օրհնէ նոցա և տայ այն խաղաղութիւնը որ նոքա իւր բերնով խնդրեցին իրանից և ասում է.

«Օքնեան Տէ՛ր»։

Քահանան սարկաւազի խօսքերը իրաւացի համարելով դառնում է և խաչակնքում ժողովրդին ասելով.

«Օքնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. այժմ և միշտ. Խաղաղութիւն ամենեցում».

Այսինքն նախ և առաջ օրհնութիւն և փառք տուէք Ամենասուրբ Երրորդութեանը և ապա կորուի ձեզ այն խաղաղութիւնը՝ որ խնդրեցիք սարկաւազի բերանով. սորանից երեւում է որ սարկաւազը լինելով ժողովրդի տառացիքը և դատիարակը, ուսուցանում է ժողովրդին թէ ինչ պէտք է խնդրէ և ինչպէս. լինելով միւնոյն ժամանակ և օրինակ քերովքից՝ ծանօթանում է քահանայի կամքին, ինչպէս հրեշտակները՝ Յիսուսի կամքին. և այդ կամքը սարկաւազը յայտնում է իւր դաստիարակութեան յանձնուած ժողովրդին. ուսուցանելով նոցա որ զգաստ լինեն և արթուն. հաւատով խնդրեն, երկիւզածու-

թեամբ լին և ահաւոր յարգանօք նայեն սուրբ սեղանը՝ ուր պատարազում է Յիսուս. որպէս զի նոցա խնդրուածքն ևս քահանայի աղօթքի հետ միասին բարձրանան առ Աստուծ և նորանից իջանեն առ մեղ Ճնորհը և Ողորմութիւն։

Ժողովուրդը իւր կատարակ սարկաւազի բերանով խաղաղութիւնը քահանայից խնդրելոց և քահանայի խօսքով ստանալուց յետոյ. ինքն ևս դպիրների հետ միասին նոյնպիսի խաղաղութիւն ցանկանում է քահանային ասելով.

«Եւ ընդ հոգւոյդ քում»։

Այսինքն այն խաղաղութիւնը՝ որ տուիր մեղ, լինի և քեզ, որպէս զի սրբութեամբ կատարես Աստուծոյ գործը։ Իսկ սարկաւազը պատուիրում է բէմից որ ժողովուրդը երկրպագութիւն տայ Աստուծուն Կորա պարգևած խաղաղութեան համար այսպէս.

«Աստուծու երկրստագեսցուք»։

Սարկաւազը հրամանին համաձայն ժողովուրդը երկրպագանելով Աստուծոյ՝ ասում է դպիրների հետ միասին.

«Առաջե քո Տէ՛ր»։

Այսինքն թէ Տէ՛ր, մենք եկելենք Քո առաջեղ որ երկրպագութեամբ և աղօթքով փառք տանք Քեզ։ Այս խօսքը անիս ժողովուրդը պէտք է երկրպագութիւն տայ Աստուծուն, կամ ծունդ դնելով և կամ զլուխը ծուելով և երեսը խաչակնելով։

Սորանից յետոյ քահանան ասում է բարձրաձայն Ոսկեբերանի հետևեալ աղօթքը.

«Տէ՛ր Աստուծած մեր, որոյ կարողութիւնդ անքննին է, և փառք անհասանելի, որոյ ողորմութիւնդ անշափ է. և գթութիւնդ տնբաւ, զու ըստ առատ մարդասիրութեանդ քում նայեաց Յիսուսի կամքին. և այդ կամքը սարկաւազը յայտնում է իւր դաստիարակութեան յանձնուած ժողովրդին. ուսուցանելով նոցա որ զգաստ լինեն և արթուն. հաւատով խնդրեն, երկիւզածու-

թեւն: զի քեզ վայելէ միառք, Եշխանութիւն և պատիւ. այժմ և
միշտ և յաւետեանս յաւետենից, ամեն»:

Տէր Աստուած մեր, որ Քո կարողութիւնը և գորութիւնը
անքննելի է, իսկ վառքդ՝ մեր խելքին անհասանելի է. Քո
ողորմութիւնը չափ չունի, իսկ գթութիւնդ՝ սահման չունի:
Քո այդ առատ մարդասիրութիւնովդ նայիր քո ժողովրդին և
այս սուրբ տաճարը, և առատապէս տուր Քո ողորմութիւնը և
գթութիւնը մեզ և մեր աղօթակիցներին, որովհետեւ Քեզ է
վայել վառքը, Եշխանութիւնը և պատիւը այժմ և միշտ:

Այս աղօթքով քահանան խոստովանում է Աստուածոյ ան-
քննին կարողութիւնը և անհասանելի վառքը, որ իւր Միա-
ծինը տուաւ ՚ի մահ խաչին մեր վրկութեան համար և խնդ-
րում է որ այդ իրան յատուկ առատ մարդասիրութիւնովն
նայէ իրեն և իւր աղօթակիցներին և արժանացնէ իւր առատ
ողորմութեան և գթութեան. աղօթակից է կոչում ժողովրդին,
որովհետեւ թէ ժողովրդի և թէ իւր խնդրուածքները մի նպա-
տակ ունին, այդ իսկ է պատճառներից մինը, որ քահանան
քանի մի աղօթքներ ՚ի ծածալ և խորհրդաբար է անում:

Այս աղօթքից յետոյ դպիրները երգում են սաղմոսը և
շարականը ըստ աւուրն պատշաճի: Ճարականը նշանակում է
Առաքելոց ելուր, որ սկզբնաւորուած էր մարդարէներով, իսկ
սաղմոսը միշտ պէտք է երգել թէ առաւոտեան, թէ ճաշու և
թէ երեկոյեան ժամերդութիւններին, նոյնպէս և եկեղեցւոյ
բոլոր որբարար խորհրդակատարութեանց ժամանակ, և այս
երեք պատճառաւ, նախ որ Սաղմոսը երգ է և ՚ի հնումն միշտ
երգում էր Տաճարի մէջ. այն ինչ մարդարէութիւնները միախն
շաբաթ օրերն էին կարգում. Երկրորդ՝ որ Սաղմոսը բոլոր գը-
րուածքների զօրութիւնը իւր մէջ է պարունակում: Սուրբ գիրքը
կամ անցեալի վերայ է խօսում, ինչպէս Մովսիսի գրուածքը,
կամ ասղադայ լինելիքն է կանխաճառում և կամ ներկայումը

խրատներ ու աղօթքներ է ճառում, ինչպէս Սողոմոնի գրուածք-ք-
ները. իսկ Սաղմոսը ըսուրն ևս պարունակում է իւր մէջ թէ
անցեալը, թէ ներկայն և թէ ապագայն. Այդ պատճառով
Սաղմոսը որբութեամբ երգողը սուրբ չողութիւնը շնորհքով կցուի.
Սաղմոսը որբութեամբ երգողը սուրբ չողութիւնը շնորհքով կցուի.
Կամ աղօթակիցն ու կարողութիւնն է, որը ծախտում է այսինքն
գաւթի ինչքն ու կարողութիւնն է, որը ծախտում է այսինքն
երգում է նորա որդւոյ այն է Յիսուսի տան մէջ, որ է Ս.
Եկեղեցին: Այս պատճառների հիման վերայ եկեղեցական որբա-
Եկեղեցին: Այս պատճառների հիման վերայ եկեղեցական որբա-
ր իսորհրդոց և սրբազն ծխսից և արարողութեանց մէջ ա-
մենից շատ և յաճախ երգում է Սաղմոսը:

Մինչդեռ դպիրները սաղմոսն ու շարականն են երգում,
քահանան խորհրդաբար աղօթում է այսպէս:
«Տէր Աստուած մեր կեցն գժողովուրդս քո, և օքհնեն գժա-
ռանգութիւնս քո, զլսումն եկեղեցւոյ քո պահեամ, սրբեան զսոսա. որք
ողջոնեցին սերու զվայելութիւն տան քո: Դու զժեզ վառաւորեա-
ւաստակին զօրութեամբ քով և մի թողուր զյուսացեալս ի քեզ:
Աստուածային զօրութեամբ քով և մի թողուր զյուսացեալս ի քեզ:
Դու է կարողութիւն և զօրութիւն և պատիւը յաւե-
տենից, ամեն».

Խաղաղութիւն ամենեցուն:

«Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ամենեցուն ուսուցեը
աղօթել, և զերկուց և զերեց միաձայնելոց յանուն քո զինդըուածս
պարզել խոստացուր: Դու և այժմ զժառայից քոց զինդըուածս
ու ՚ի օգուտն կատարեամ: Շնորհելով միեզ յաւսմ յաւետենիս զգե-
առ ՚ի օգուտն կատարեամ: Եւ ՚ի հանդեզձեալն զինանսն
տութիւն քումք Ճշմարտութեան: Եւ ՚ի հանդեզձեալն զինանսն
տութիւն քումք Ճշմարտութեան: Զի բարեկար և մարդասէր ես Սո-
յաւետենականս պարզելով: Զի բարեկար և մարդասէր ես Սո-
յաւետենականս պատիւը յաւետեն և պատիւ. այժմ և
տուած և քեզ վայելէ վառք Եշխանութիւն և պատիւ:

Տէր Աստուած մեր պահպանէ քո ժողովուրդը և օքհնէ
քո ժառանգութիւնը. պահէ քո եկեղեցւոյ լրութիւնը. սուրբ
արա սոցա՝ որոնք սիրով ողջունեցին քո տան վայելչութիւնը:
Դու ինքդ վառաւորեամբ մեզ քո Աստուածային ամենակարող զօ-
դիութեամբ. և ունախնաձեռն մի թողիր Քեզ վերայ յուսացող-

Ներիս: Որովհետև Քոնն է յաւիտենական կարողութիւնը, զօրութիւնը և փառքը:

Այստեղ ծածուկ խաղաղութիւն է տալիս ժողովովին և ասլա գարձեալ շարունակում է եւրազօթքը:

Թի՛ւ Տէր՝ որ սորվեցրիր մեզ միաձայն և հրապարակաւ աղօթք անել և Քո Անուամբ երկու կամ երեք հոգու միասին հաւաքուածների խնդրուածքը խոստացար կատարել: Դու ուրեմն Տէր, այժմ Քո ծառաներիդ խնդրուածքը յօդուտ իրանց կատարիր պարզելով մեզ այս կեսնքիս մէջ Քո ճշմարտութեան գիտութիւնը, իսկ հանդերձեալի մէջ՝ յաւիտենական կեանք: Որովհետև Դու բարերար և մարդասէր Աստուած ես և Քեզ է վայել փառքը, իշխանութիւնը և պատիւը միշտ և յաւիտեան:

Այս աղօթքներով քահանան խնդրում է Յիսուսից որ իւր ժողովուրդը և ժառանգութիւնը պահպանէ: Ժառանգութիւն՝ քրիստոնեալքն են, որոց խոստացաւ երկնից արքայութեան ժառանգութիւնը. ուստի խնդրում է որ եկեղեցւոյ ամբողջութիւնը, լրութիւնը հաստատուն պահպանէ, որպէս զի հաւատացեալներից և ոչ մէկը յափշտակուի չարից և բաժանուի այս սուրբ ժողովից. խնդրում է սուրբ անել իւր ժողովուրդը, որոնք հաւաքուած են սրբելու զիրենք իրանց հանոյական և սուրբ աղօթքով: Յեասոյ գարձեալ դիմում է Նորան, իշելով Նորա խօսքերը թէ՝ «Ուր իցեն երկու կամ երեք ժողովեալք յանուն իմ, անդ եմ և ես ՚ի մէջ նոյա»: Այս խօսքով կամի ասել թէ մենք որ հաւաքուած միասին աղօթում ենք Քեզ Տէր, ոչ թէ մէր անձնական յանդգնութիւն պէտք համարել, այլ Քո հրամանով և խօսքով է, որ վատահանում ենք տկար մարդիկս Աստուծոյդ հետ իրուել և խնդրել՝ որ ինչպէս և խոստացել ես, կատարես Քո ծառաներիդ խնդրուածքը այնպէս, ինչպէս կլա-

միս, որովհետև Քո կամքդ է մեր օգուտը և մեր գլխաւոր ցանկութիւնն այն է որ գիտենանք Քո կամքը և կատարենք, քանի որ այս կեանքի մէջն ենք: Որովհետև Քո կամքն ու պատուիրաններն են՝ որոնք մեզ պէտք է առաջնորդեն և հասցընեն յաւիտենական հանգիստը:

Այժմ բացատրենք թէ ինչու քահանան երբեմն ՚ի ծածուկ է աղօթում և երբեմն զոյտ ընդ դպրաց: Որովհետև ժողովուրդը առ Աստուած վերաբերութեամբ՝ պատկանում են ծառայական կարգին. իսկ քահանան՝ ստանալով իշխանութիւն կապելու և արձակելու նոյն ժողովուրդը՝ է խորհրդակից բարեաց Աստուծոյ և զործակից նորա, Մովկէսի պէտ որ խնդրեց Աստուծոյ ողորմութիւնը ժողովրդեան ապստամբութիւնը ներելու համար, խորհրդակից և խօսակից եղաւ Աստուծոյ Սինէական լերան վեցայ. Աւստի քահանան հազարապետ գոլով Աստուածավին խորհրդոց և միեւնոյն ժամանակ գործակից և իշխանակից՝ խորհրդաբար և ծածուկ առանձին է խօսում Աստուծոյ հետ, նորա Գահի կամ Սուրբ սեղանի առաջ: Այս քահանայի ծածուկ կամ խորհրդաբար աղօթելու համար: Այժմ տեսնենք զոյտ ընդ դպրոց աղօթելու պատճառը: Մինչդեռ դպիրները երգում են, կամ սարկաւագը քարոզում է՝ քահանան ևս ծածուկ աղօթում է առ Աստուած, և սորա պատճառն է այն որ ամբողջ եկեղեցին մի դիտմանը և մի նպատակաւ է հաւաքուած՝ այն է ՚ի Յիշխատակ Մահուան և թագման Յիսուսի և ՚ի Հաղորդութիւն կենարար Մարմնոյ և Արեան Նորա. ուստի աղօթքներն ու խնդրուածքներն որ մի խորհրդով և նպատակաւ են, ՚ի միասին են լինում և ինչ որ քահանան ՚ի ծածուկ է աղօթում նոյնը սարկաւագը հրամայում է ժողովրդին որ խնդրեն. Այս ձեւը շատ յարգելի է և հաւատարիմ. նախ՝ որ հաւատացելոց սրտերի միութեանն է ապացոյց, և կնշանակէ որ սուրբ պատարագին ներկայ եղող ժողովուրդը մի սրտով, մի հոգուով,

մի հաւատով և մի խորհրդով՝ միացած պատրաստում են իրանց միաձայն աղօթքով միանալ իրանց Փրկչի կետ։ Խոկ երկրոգ՝ սորանով ժողովուրբը յայտնում է Աստուծուն իւր դաստիարակ Սարկաւազի բերանով թէ մեր իղձքը համաձայն են Քահանայիդ կամացը, որ մեր փոխանակ մտել է վասուրք խորանդ և Քո առաջդ կանգնած հարազատարար է ինդիքում մեղ համար Քո քարիքը այս ինչ մենք այն հարազատութիւնը չունելով, կը աւականանանք Տէր ողորմեա ասելով վնդրել քեզ, որ Դու Քո ողորմած կամ քով կատարես այն խնդրուածքները, որ Քահանայդ խորհրդաբար ինդրում է Քեղանից մեղ համար։ Այս է Քահանայի զոյդ ընդ դպրաց աղօթելու պատճառը։

ԸՆԴՀԱՅԻ ՔԱՐԴԱՐԱՎՈՐ ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵԲՍԻՐԵԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Երբ դպիրները շարականի «վառք չօրն» են երգում, քահանան երկրագում է սուրբ անդամին և աղօթում է առ Աստուած ասելով։

«Տէր Աստուած մեր՝ որ կարգեցեք յերկինս զռասս և զանութիւնս հրեշտակաց և հրեշտականետաց ՚ի սպասաւոցութիւն փառաց քոց Արա այժմ ընդ մուտու մեր մտանել և սրբոց հրեշտակաց և լինել պաշտօնակից մեզ և փառաբանակից քում բարերարութեանդ»։

Տէր Աստուած մեր, որ հրեշտակաց և հրեշտակապետաց դասը և զինուրութիւնը կարգեցիր երկնքումը Քո փառքին սպասաւորելու համար, կամեցիր Տէր, որ նոքա պաշտօնակից և փառաբանակից լինեն մեզ Քո բարերարութեանդ։

Այս աղօթքով քահանան հայցում է Աստուծուց հրեշտակաց և հրեշտակապետաց սպասաւորելութիւնը, որպէս զի ինքը

աւելի արժանաւորապէս կատարէ Աստուածային խորհրդոյ սպասութեան մեծ գործը։

Յետոյ առնելով ձեռքը սուրբ Աւետարանը ասում է բարձրաձայն վերովիշեալ աղօթքի վերջաբանը։

«Զի քո է կարողութիւն և գօրութիւն և փառք յափտեանս ամեն»։

Բարձրացնում է ՚ի տես ժողովրդեան և տալիս է վերաբերիչ սարկաւակին որ շրջաբերէ աջակողմեան դասից դէպի ձախակողմը։ Սարկաւագը սուրբ Աւետարանը քահանայի ձեռքից առնելուց առաջ վերևից հրամայում է ժողովրդին բարձրացնելու իրանց աչքերը զէպի սուրբ աւետարանը ասելով «Պատօնութեան» և ապա շրջաբերում է։

Մինչդեռ Սարկաւագը շրջաբերում է սուրբ աւետարանը դպիրները երգում են ։ Երեքսրբենին օրուաց խորհրդին համաձայն այսպէս։
«Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»։*)

Երեքսրբենը երգուում է ինսը թւով, որովհետեւ հրեշտակաց երգ է ։ և հրեշտակաց դասակարգութիւնքը ինն են. խոկ սարկաւագները որ Սէրովբէից և Քէրովբէից օրինակն են ներկայացնում, շարժում են քշոցները Սէրովբէից և Քէրովբէից և ամենայն հրեշտակաց և Զօրութեանց ներկայութիւնը ցոյց տալու համար ՚ի ժամ սուրբ Պատարագին. որովհետեւ ինչպէս մեսանք քիչ առաջ Քահանան իւր աղօթքով խնդրեց Աստուծուց նոցա ներկայութիւնը և պաշտօնակցութիւնը և այժմ ներկայ են հրեշտակները այս սուրբ Պաշտօնին։ Սարկաւագը հանդիսաւոր կերպով սուրբ Աւետարանը շրջաբերով համբու-

*) Հայելով օրուայ խորհութեը ասում են որ ծնար և յայտնեցար, որ յաբեաը, որ համբարձար, որ եկեր և հանգեար յառաքեալն և այլն։

բել է՝ տալիս հողեղբական դասից պատռւառը մէկին. իսկ շըր-
չաբերելը այն խորհուրդն ունի, որ որովհետև փոքր ինչ լետով
պիտի կարդացուի սուրբ Աւետարանը, ուստի այս հանդիսով
պիտի զրաւուի ժողովրդի ուշադրութիւնը դէպի սուրբ Աւետա-
րանը, և գարժնի նոցա հաւատը, որ պատրաստուին հաւատով
լոելու սուրբ Աւետարանի ճշմարտութիւնները:

Մինչդեռ Սարկաւագը շըջարերում է սուրբ Աւետարանը
և Գալիքները երգում են Երեքսրբեանը՝ Քահանայն ասում է ՚ի
ծածուկ Սուրբ Բարսղի աղօժքը.

«Սասուած սուրբ՝ որ ՚ի սուրբս հանգուցեալ ես, և երեքսրբ-
րեան ձայնիւ սերովեէք գովեն զքեզ և քեսովեէք փառաբանեն և
ամենայն երկնալին զօրութիւնք քեզ երկրպագանեն։ Որ ՚ի չքոյէ
՚ի գոյ ածեր զամենայն արարածու, որ արարեր զմարդն ըստ պատ-
կերի քում և նմանութեան, և ամենայն շնորհեւ քով զնա զար-
դարեցեր, և ուսուցեր խնդրել զիմաստութիւն և զգօնութիւն։ Եւ
ոչ անտես արարես զմեղուցեալն, այլ եղեր ՚ի վերայ նորա ապաշ-
խարութիւն փրկութեան։ Որ արժանի արարեր զմեզ զնուաստու-
ցեալ և զանարժան ծառայսս քո ՚ի ժամուս լայսմիկ կաւ առաջի
փառաց սրբութեան սեղանու քո և զօրինաւոր երկրպագութիւն և
զփառաբանութիւն մատուցանել քեզ։ Դու Տէր, ընկալ ՚ի բերանոյ
մեղաւորացս զերեքսրբեան օսհնութիւնս, և պահեան զմեզ քոյին
քաղցրութեամբդ, լոգ մեզ զամենայն յանցանս մեր զկամայ և
զակամայ։ Սրբեամ զհոգի զմիտս և զմարմինս մեր և շնորհեան ՚ի
սրբութեան սրաշտել զքեզ զամենայն աւուրս կենաց մերոց, բա-
րեխօսութեամբ Սրբուհւոյ Աստուածածնին և ամենայն սրբոց քոց՝
որք յաւետենից քեզ բարեհաճոյացան։ Զի սուրբ ես Տէր Աստուած
մեր. և քեզ վայելէ փառք ելանութիւն և պատիւ այժմ և միշտ
և յաւետեանս յաւետենից ամեն»։

Ո՛վ սուրբ Աստուած, որ սուրբերի մէջն ես բնակուած և
երեքսրբեան սուրբ, սուրբ, սուրբ սրբասացութեամբ Սրբովեէքը
Քեզ օրհնում են և զովում, Քերովեէքը փառարանում են Քեզ,
իսկ երկնալին բոլոր զօրութիւնքը Քեզ երկրպագութիւն են

տալի։ Դու Տէր, որ ոչնչից ստեղծեցիր Քո բոլոր արարածները,
իսկ մարդուն Քո պատկերի և նմանութեան կերպին ստեղծե-
ցիր և Քո բոլոր շնորհքովը նորան զարդարեցիր և սորվեցըիր
նորան խմասութիւն և գգօնութիւն խնդրել Քեզանից։ Մինչև
անգամ մեղաւորին իսկ անտես չարիր, այլ զթայար նորա վե-
րայ, ապաշխարութեան միջոցաւ նորան փրկութիւն խոստա-
նալով։ Իսկ մեղ՝ որ Քո խոնարհ և անարժան ծառաներդ ինք,
արժանացըիր այս ժամին կանգնել Քո սուրբ սեղանի և փառ-
քի առաջ և օրինաւոր երկրպագութիւն և փառք տալ Քեզ։
Ուրեմն Տէր, ընդունիր մեր մեղաւորացս բերնից երեքսրբեան
օրհնութիւնը և մեզ Քո քաղցրութեամբդ պահիր. թող մեզ և
ներիր մեր բոլոր կամովին և ակամայ զործած յանցանքները,
սուրբ արա մեր հոգին, մեր միտքը և մեր մարմինը. և շը-
նորհք տուր մեզ, որ սրբութեամբ պաշտենք Քեզ մեր բոլոր
կենաց մէջ։ Եւ այս ամէնը խնդրում ենք Քեզանից Սուրբ Աս-
տուածածնի և այն ամենայն սրբոց բարեխօսութեամբը՝ որոնք
յաւիտեան Քեզ հաճելի եղան. Որովհետեւ Գու սուրբ ես. և
Քեզ ՚ի վայել և արժանի փառքը, իշխանութիւնը և պատիւը
միշտ և յաւիտեան։

Այս աղօժքով Քահանան վկայում է մարդարէից նախա-
սացութիւնը, որոնք տեսան Աստուածուն, որ փառարանում էր
՚ի Սերովեէից և ՚ի Քերովեէից. Սոքա էին Եսայի և Եգէկիէլ,
ուստի և մենք սովորեցինք, ասում է, Քեզ երգել Քերովեէ-
կան այս երգը։ Յիշում է նոյնալիս սորանով որ հրեշտակներից
յետոյ ստեղծուեցան զգալի արարածները և ապա մարդը՝ իբրև
իշխան և տէր բոլոր երեկի դոյացութեանց. յիշում է նոյն-
պէս այն մեծ շնորհը, որ Ազամայ յանցանքի համար ապաշ-
խարութիւն սահմանեց իբրև միջոց փրկութեան. և յետոյ ա-
ւելացնում է տաել թէ Գու տուիր մեզ, Տէր, աղօժքի զգաս-
տութիւնը և Քեզ հետ խօսելու իրաւոնքը, ապա թէ ոչ մենք

մեր մարմնոյ թանձրութեան մէջ, ի՞նչպէս կարող էինք երկրից յերկինս խօսել Քեզ հետ խմացական կերպով. Պու՛ որ մեզ կցորդեցիր հրեշտակներին և նոցա երգակից արիր, ուրեմն ընդունիր մեր բերնից հրեշտակական երգը. և յետու խնդրում է շնորհք, մեղքին թողութիւն. մտքին սրբութիւն, որպէս զի կարողանաց սրբութեամբ պաշտել նորան:

Թ. ԲԱԺԻՆ

ՔԱՐՈԶ ՍԱՐԿԱԽԵԳԻ, ԸՆԹԵՐՅՈՒԱԾԻՔ, ԱԽԵՏԱՐԱՆ ԵՒ ՀԱԽԱՏԱՄՔ

Երեքսրբեան երգը և Քահանալի աղօլքը վերջանալուց յետով, Սարկաւագը քարոզում է ժողովրդին այսպէս,

«Եւ ևս խաղաղութեան գՏէր աղածեսցուք».

Այսինքն Յիսուսի խոստացած խաղաղութիւնը, աղաչենք Տիրօջը, որ աղարդւէ մեղ. որպէս զի մեր՝ խնդրուածքը, որ հայցում ենք նորանից, քաղցր կամքով լսէ. և այս ոչ թէ ձանձրանալով խնդրենք, այլ ևս առաւելապէս, այսինքն ամենալին գօրութեամբ և կամօք քաղլսնք՝ որ քացուի մեր առաջն Աստուծոյ ողորմութեան դուռը. եւ ժողովուրդը իւր դաստիարակի հետ համաձայնելով, յօժար կամքով դպիրների միջնորդութեամբ աղաղակում է.

«Տէր ողորմեա».

Այս համառօտ երկու խօսքով ժողովուրդը դպիրների միջնորդութեամբ դիմում է առ Աստուծած իրը ասելով՝ Տէ՛ր, թէպէտ հեռու ես մեզանից մեր մեղքի համար և ըստ բնութեան օտար ես մեր աղցաւոր կիրքերին. սակայն անձառաբար տեսնում ես և միշտ քննում ես մեղ տկար և վշտացած ողորմենիներիս և Քո ողորմութեանդ կարօտներիս. Ուրեմն աղաչում

ենք Տէ՛ր, Քո առատագութ կամքը խառնիր մեր նեղութեանցը, տես Քո ողորմութեամբ մեր իւրաքանչիւր հայցուածը և որպէս ամենալարով՝ մեծ այցելութիւն արա մեզ. մեր բազմապատիկ խնդրուածները կատարելով, որ մենք ամենքս համաձանութեամբ կցորդելով մեր առաջնորդին և դաստիարակին՝ աղաչում ենք Քեզանից:

Երբ ժողովուրդը «Տէ՛ր ողորմեա» ասելով իւր խնդրուածքները առաջադրեց Աստուծոյ, յետով Սարկաւագը քարոզի երկրորդ տունն է ասում.

«Վասն Հի վերուստ խաղաղութեան և փրկութեան անձանց մերոց գՏէր աղաչեսցուք».

Սարկաւագը պատուիրում է ժողովրդին որ նախքան զամենալին Յիսուսի խոստացած խաղաղութեան համաձայն, երկնալին խաղաղութիւնը հայցին և ոչ երկրային, այլ պատճռով է որ Սարկաւագը չէ ասում «վասն խաղաղութեան» այլ «վասն ՚ի վերուստ խաղաղութեան». Որովհետեւ Հայր է Աստուծած և հայրական զութ ունի առ եկեղեցին. Եւ տակայն շատ անդամ չենք ոտանում Աստուծոյ զութը և կամ ուշանում է այն դէպի մեղ. և սորտ պատճառն է մեր անհնագանդութիւնը Աստուծալին օրինաց. ուստի Սարկաւագի հրամանով արլարև նախապէս պէտք է վերին խաղաղութիւնը խնդրել որ նա հաշտուի մեղ հետ, ապա թէ մեր խնդրուած կատարէ. Այս մտքով ասում է Սարկաւագը՝ եղբարք, մենք զղջացանք մեր անհնագանդութեան համար և եկանք միասին այստեղ, խնդրելու մեր Հօր երեսը և նորանից փրկութիւնը Հայցելու. ուրեմն աղաչեցիք որ նա հաշտուի մեղ հետ և ապա ուղարկելով մեղ ՚ի վերուստ իւր նախախնամական զօրութիւնը՝ խաղաղացնէ մեղ մեր հոգւոյ թշնամուոյ խուզվարար ներգործութիւններից. աղաչեցիք որ տալ մեղ Աստուծած վերին խաղաղութիւնը, այն որ հրեշտակաց և իւր մէջ է. որ մենք ես

նոցա նման համարձակութիւն ունենանք նորա առաջ: Ժողովուրդը համոզուելով իւր դաստիարակի խօսքերին՝ խնդրում է երկնալին խաղաղութիւնը և Աստուածային ողորմութիւնը ասելով.

«Տէ՛ր ողորմեամ»:

Սարկաւագի քարողի երրորդ տունն է.

«Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի և հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ զծէր աղաւեսցուք».

Երկնալին հոգեւոր խաղաղութիւնը խնդրելուց յետոյ, այժմ պատուիրում է ժողովրդին, երկրալին մարմնաւոր խաղաղութիւնը խնդրել աշխարհի համար, թէ հաւատացեալների և թէ անհաւատների, որպէս զի ոչ միայն հոգւոյ թշնամւոյ, այլ և մարմնաւոր թշնամիներից այսինքն մարդկան խռովութիւններից աղատէ զիրենք Ասուուած. որպէս զի մարդկի զիրար չըսպանեն զազանաբար և ոպանութիւն, զերութիւն, զրկութիւն, յափշտակութիւն, զինուց պատրաստութիւն չունենան և չմտածեն անգամ. որովհետեւ դռքա են, որովք պարտում է մէրը և բացակայում է. խկ ատելութիւնը իբրև յաղթող է ներկայանում: Այս կարեւոր խնդրը աշխարհի համար հայցելուց յետոյ, հետեւում է ապա եկեղեցւոյ հաստատութեան խնդրուածքը. որովհետեւ Եկեղեցւոյ հաստատութեան արմատը աշխարհի խաղաղութիւնն է և փոխադարձ. Զինի աշխարհի այդ խաղաղութիւնը՝ վտանգի մէջ կարող է լինել և Եկեղեցւոյ հաստատութիւնը. Խմկ երբ դադարում են թշնամեաց յարձակունքները, խափանուում են պատերազմները, սուրբ և զերութիւնքը, տիրում է աշխարհում ցանկալի խաղաղութիւնը՝ այն ժամանակ և Եկեղեցիք դարձեալ հաստատուում են իրանց պայծառութեան մէջ: Ժողովուրդը Սարկաւագի պատուէրին համաձայն հայցում է Աստուծուց աշխարհի համար խաղաղութիւն ասելով.

«Տէ՛ր ողորմեամ»:

Սարկաւագի քարողի չորրորդ տունն է.

«Վասն հայրապետին մերու Տեառն (այս անոն) նըբազնագոյն Կաթողիկոսի կենաց և փրկութեան հոգւոյ նորին զծէր աղաւեցուք»:

Պարզ երեսում է որ Սարկաւագի հրամայական աղօթքը կորպով և զասաւորութեամբ է հետևում. առաջ հայցեց երկնալին հոգեւոր խաղաղութիւնը որ նախալաս է և նախապատիւ. յետոյ աշխարհալին մարմնաւոր խաղաղութիւնը զորք սորան և եկեղեցւոյ հաստատութիւնը, որովհետեւ վոխագարձ կապ ունի ինչպէս տեսանք. այժմ Եկեղեցւոյ զլխաւորի և առաջնորդի համար է պատուիրում խնդրել. որովհետեւ նա է փոխանակ Քրիստոսի և առաջնորդ հոգւոց. Եւ որովհետեւ նորա փրկութեան և ուղղութեան շնորհը ամենին աղում է. վասնորոյ մաղթենք, ասում է Սարկաւագը, որ չինի թէ նա սալթաքուի՝ իւր հետ զահալիթելով և իւր հօտը: Փողովուրդը աղաւեկում է.

«Տէ՛ր ողորմեա»:

Սորան հետեւում է Եպիսկոպոսաց, Քահանալից, Սարկաւագաց, Թաղրաց և ուխտի մանկանց մատին Սարկաւագի հրամայական քարոզը՝ այսպէս:

«Վասն տմենամեն սուքը և ուղղակիառ եպիսկոպոսաց զծէր աղաւեսցուք»: «Վասն քահանալից, սարկաւագաց, գողաց և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ զծէր աղաւեսցուք»:

Համայն ուղղակիառ Եպիսկոպոները լիշելուց յետոյ, որ առաջին տեղն եկեղեցւոյ մէջ, լիշում է ապա քահանալից և Սարկաւագաց, որոնք երկրորդ և երրորդ տեղն ունեն ըստ պատուոյ կոչման Եպիսկոպոսից յետոյ:

Ինչպէս վերը տեսանք, եկեղեցականք՝ պաշտօնեալք են Քրիստոսի և տեսուչ հոգւոց, որոց փրկութիւնը ոչ միայն իրենց է օղուտ՝ այլ և ժողովրդոց, որ իրանց հալութեան են

յանձնուած. այս պատճառուաւ նոցա համար աղօթում է եկեղեցին առ Աստուած. սակայն սորանով եկեղեցական աստիճանաւորք չպէտք է հպարտանան իրենց բարձր կոչման մասին, դոր ունին եկեղեցւոյ մէջ. այլ պէտք է լաւ միտք առնեն թէ ինչ նպատակաւ և պաշտօնիւ որոշուած են ժողովուրդէն, և ինչ պարտաւորութիւն ունին առ ժողովուրդէն երկնչելով այն սպառնալից խօսքէն՝ զոր Յովհաննէս փարվանեցիներին “ասաց տապարը ծառի արմատի մօտ է զրուած անպտուզ ծառը կրտրելու համար: Յլառւ պարզաբար ցոյց է տալիս իրենց պարտաւորութիւնը նմանեցնելով նոցա վառած ճրագի՛ որ աշտանակի վերայ կղբուի որ լոյս տայ ամենքին. լուսով, որ աշխարհը կղուսաւորէ. աղի, որ ամեն անհամութեանց համ կրերէ: Յիսուսի այս խօսքիրը լաւ ըմբռնող եկեղեցականք կղգան և կիսորհրդածեն որ յԱստուծոյ իրանց տրուած պատիւը և պաշտօնը, ոչ թէ իրանց արտաքին փառքի և կամ մարմնական զանազան շահուց համար մի միջոց է համարուելու, այլ ժողովրդի հոգեւոր օգտի համար, ըստ որում և կուտում են հարը, հովիւ և առաջնորդ: Որովհետև նոցա պաշտօնն է, որ ժողովուրդը առաջնորդէն Աստուածային պատուիրանաց և կամքի գիտութեան մէջ, ոչ անօգուտ քարտզներով միայն, այլ որ գլխաւորն է օրինակերի կեանքով, իրանց բարի վարուք և կրօնավայել կենցաղավարութեամբ. միտք առնելով, որ հակառակ դէպքում չար և վաս ծառալի պատաշխանաւութեան տակն են: Սարկաւագի այս հրամանը սիրավ ընդունելով ժողովուրդը՝ խնդրում է Աստուծոյ ողորմութիւնը իւր հոգեւոր առաջնորդների համար առելով.

«Տէր ոզորմեա»:

Եկեղեցւոյ ժառանգաւորաց և հոգեւոր առաջնորդաց համար խնդրելոց յետով Սարկաւագը հրամայում է ժողովրդին խնդրելու թագաւորի, նորա պալատականաց, զօրաց և զօրավաց համար այսպէս.

«Վասն բարեպաշտ թագաւորին մերոյ (այս անուն). և պալատան և ամենայն զօրապետաց և զօրաց նորին զջէր աղաւեցուք». Ինչպէս Եպիսկոպոսները մարդկան հոգւոյ վրկութեան համար են տքնում, նոյնպէս և թագաւորք նոցա մարմնական խաղաղութեան համար են ջանք անում: Եւ ինչպէս քահանայք և սարկաւագունք եպիսկոպոսին են զործակիցք, նոյնպէս և պալատական իշխանք բոլոր իրանց զօրօք թաղաւորի հրամանի տակ պահպանում են մեզ և խնամում. ուստի պարտք է նոցա համար աղօթող լինել առ Աստուած: Սակայն եկեղեցականաց աղօթքն ու խնդրուածքը չպիտի լինի րոկ այս մտքով որ թագաւորները միշտ յաղթող լինեն և լառաջաղէմ պատերազմական գործերի մէջ, տիրող աշխարհներին, շատայնող իրանց մարտիկ զօրաբանակը. այլ երկնաւոր թագաւորի՝ Յլառւսի պատկերն իրանց մէջ ունելով ափուեն ամենուրէք հաշտութիւն, խսողաղութիւն, բարօրութիւն և Աէր: Յիսուս քարոզութեամբ և հրաշագործութեամբ էր զրաւում ժողովրդի սիրուը, թաղաւարը պարտական է օգտակար օրէնքներով և մարդասէր կանոններով սպահովութեան և խաղաղութեան մէջ պահէ իւր ժողովուրդը. Որովհետև ինչպէս Եպիսկոպոսունք և Քահանայք պարտական են իրենց ժողովրդի հոգեւոր կեանքի պատասխանաւութեանը: Ուստի երբ ժողովուրդը լըսում է Սարկաւագի այս իրաւացի հրամանը, խնդրում է թագաւորաց համար Աստուծոյ ողորմութիւնը, առելով.

«Տէր ոզորմեա»:

Սորան հետևում է ննջեցելոց հոգւոց համար խնդրուածքը որ Սարկաւագը հրամայում է ժողովրդին այսպէս.

«Վասն հոգւոցն հանգուցելոց որք Ճշմարիտ և ուղեղ հաւատով՝ ՚ի Քրիստոս ննջեցին զջէր աղաւեցուք»:

Եղած են ննջեցեալներ, որ իրենց կեանքի մէջ զանազան մեղաց ենթարկուելով առանց կատարեալ դղման և ապաշ- խարութեան հեռացած են աշխարհից. մենք կենդանիքս նոցա այն դրութիւնը խորհրդածելով, պէտք է զդուշանանք և ը- սպատենք ժամանակին, այլ շուտ սկսենք մեր ապաշխարու- թիւնը քանի որ ժամանակը ձեռքերիս է, որպէս զի մեր մե- ղաց պարտամուրհակը պատուենք և այնպէս մեկնենք աշխար- հից. ապաշխարել առելով պիտի իմանանք պարտուց կատա- րումն և իրաւանց արդար զործագրութիւնը: Եթէ մարդկային վիճակի վերայ մտածենք, արդարեւ մեր ննջեցեալ եղբարնե- րից քանիսը կդժնենք որ անպատրաստութեամբ բաժանուած են աշխարհից, կամ յանկարձամահ լինելով, կամ աւազակնե- րից սպանուելով, կամ ծովագնացութեան ժամանակ ջրասո- զուելով, կամ միամիա անփորձութեամբ դեռ շատ երկարու ձիգ տարիներ սպասելով իրեանց կեանքին սակայն ժամանակից վաղ հիւանդանալով և մեռնելով ևայլն:

Այսպիսիների համար արդարեւ պէտք է աղօթենք, որով- հետեւ նոքա ժամանակի տէր ըլինելով, իրանց սիսալ հաշւով սպասում էին վերջը լրտցնել իրանց պարտականութեանց պա- կառութիւնը, բայց սխալուեցան. Սոցա մեղքը թեթեւ լինելով աղօթում է եկեղեցին նոյն մեղաց թողութեան համար; Սա- կայն կան և այնպիսիք, որոնք պատրաստ են և մահուան անկողնում մինչեւ անդամ զրկել և մնասել ընկերին, որոնք զլանում են մի ուղիղ խոստովանութիւն անդամ արտայալու կեանքի և մահու Տիրոջ խնամոց և դժութեան մատին, որոնք կեանքի մէջ աւետարանական ճշմարտութիւնները չեն յարգել որովհետեւ չեն հաւատացել և այժմ մահուան բոպէին ևս ար- համարհում են զայնո. Այդպիսիների համար մեր աղօթքը շատ թոյլ է և անզօր, որովհետեւ իրանց չարիքը, պատճառած վնասները, զրկանքները, անհաւատութիւնն ևայլն. եղած են

շատ և աւելի զօրաւոր, որոց առաջև մեր աղօթքը տկարա- նում է, ուրեմն մեր կարծիքով աղօթելը աւելորդ է. և այս- պիսիների համար չէ Սարկաւագի հրամայական քարոզը, այլ անփորձ և միամիտ անպատրաստութեամբ վախճանուածների համար է: Սարկաւագի հրամանին համաձայն՝ ժողովուրդը խնդրում է Աստուծուն ասելով.

«Յէշեա Տէր և ողոքմեա»:

Այսինքն լիշիր Տէր նոցա անփորձութիւնից յառաջացած անպատրաստութիւնը և ուրեմն հայրական գթովկ երկայնա- միտ եղիք նայա թեթեւ մեղքերին, ներիք և մի զրկեր Քո ե- րանական տեսութիւնից, որովհետեւ սխալական զոլով անփորձ գտնուեցան իրանց հողեոր հաշիւների վաղօրօք պատրաստու- թեան մէջ»:

Հետեւում է ապա հաւատով մասին Սարկաւագի հրամայա- կան քարոզը:

«Եւ ևս Ֆիաբան վասն Ճշմարիտ և սուբբ հաւատոյս մերոյ գծէր աղաջեսցուք».

Ճշմարիտ և սուբբ հաւատոր ոչ թէ միայն սուբբ Երրոր- դութիւնը գտանելու ու խոստովանելու մէջն է պարունակ- ում, այլ և եկեղեցական օրինաց, կարգաց և կանոնական սահմանադրութեանց, ծիսից և որբազան արարտութեանց և խոր- հրրդոց հնագանդութեան մէջ, ուստի այժմ զԱստուած աչքի առաջ ունելով սուբբ պատարագին ներկայ ենք, եթէ նոյն հաւատքը չունենք, ՚ի զուր է, անօդուտ է մեր ինդրուածքները, մա- նաւանդ անհաւատ ներկայ եղողին պատճառ է գալթակու- թեան և մեղաց: Երկրորդ՝ խնդրում ենք, որ այն սուբբ և ճշմարիտ հաւատոր՝ որ սարվեցրեց մեզ հաւատոյ մեծ հեղինակն Յիսուս, հաստատուն սկահենք և նորանից չշեղուենք, որով- հետեւ հաւատու ունեցողը միայն կարող է փրկուիլ: Հաւատոյ բոլոր մասունքները պարունակուում են հաւատամքի մէջ: Այս

Հաւատի մասին Սարկաւագի հրամանին բոլորովին համաձայն ժողովուրդը դիմում է առ Աստուած ասելով.

«Տէր ողորմեա»:

Այսինքն թէ Տէր, հաստատուն պահեր մեր հաւատի մէջ:

Յետոյ Սարկաւագը հրամայում է որ ժողովուրդը լրան Աստուծոյ գթութեանն ու մարդութիրութեանը յանձնէ և ասում է:

«Յանձնինս մեր և գծիցնեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արացուք»:

Այսինքն մինչեւ այժմ ձեր եղբարց համար էիք աղօթում, նոցա ձեզանից նախապատիւ համարելով, այժմ ձեր անձի և միմեանց համար աղօթեցէք խնդրելով որ խնամէ ձեզ իւր գթութեամբ և պահպանէ մարդութիրութեամբ, ժողովուրդը Սարկաւագի հրամանին համաձայն դիմում է առ Աստուած ասելով:

«Քեզ Տեառնդ յանձն եղեցուք».

Այսինքն թէ յանձնում ենք մեզ Քո հայրական խնամատարութեանը ով Տէր:

Աւարտում է Սարկաւագը իւր քարտը, հրամայելով որ ժողովուրդը իւր հետ միասին իրեւ վերջաբան խնդրէ Աստուծոյ ողորմութիւնը.

«Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասացաւք ամենեքեան միաբանութեամբ»:

Արդարեւ մեծ է Աստուծոյ ողորմութիւնը և գութը, որով հետև նրանց էլ է ողորմում, որոնք իրան չեն դիմում և խնդրում ըստ աւետարանական ճշմարտութեան. «Թագէ զարեցակն ՚ի վերայ արդարց և մեղաւորաց և ածէ անձրեւ ՚ի վերայ չարաց և բարեաց»:

Սոյն առթիւ զրում է և Առաքեալը. «Մինչդեռ մեռեալն էաք ՚ի մեղս մեր, կենդանիս արար զմեզ Քրիստոս».

Է և Դաւիթ իւր սաղմուների մէջ. «Որպէս ոլի բազում արարեր զողորմութիւն քո Աստուած»: Իսկ եթէ Աստուծոյ ողորմութիւնը և զութը այսքան շատ է և ամենի համար՝ ուրեմն Յիսուսի պատուէրին համաձայն խնդրենք՝ որ առնենք, բաղիւենք՝ որ բացուի, և հայցնեք՝ որ գտնենք. ժողովուրդը բոլորովին համաձայն իւր դաստիարակի պատուէրին, երեք անգամ է կրկնում իւր առ Աստուած խնդրուածքն ասելով.

«Տէր ողորմեա, տէր ողորմեա, տէր ողորմեա»:

Մինչդեռ Սարկաւագը քարոզում է ժողովրդին և ժողովուրդն էլ իւր դաստիարակի հրամանին համաձայն խնդրում է Աստուծոյ ողորմութիւնը, Փահանան այն ժամանակ պարապ չէ, այլ զոյտ ընդ նոսին ինքն ևս դրեթէ նոյն խնդրուածքներն է դնում առաջի Աստուծոյ, բայց ՚ի ծածուկ կամ խորհրդաբար, ասելով.

«Տէր Աստուած մեր զբագլատարած զաղացանս ծառայից քոց վերընկալցիս և ողորմեացիս ըստ մեծի ողորմութեան քում. Զգթութիւն քո առաքեա ՚ի վերայ մեր և ամենայն ժողովրդեանս՝ որք ակն ունին առ ՚ի քէն առատ ողորմութեանդ»:

Տէր Աստուած մեր, ընդունիր Քո ծառաներիդ բազկատարած աղաչանքը և Քո մեծ ողորմութեամբ ողորմիլ նոցա: Ռւբարկիր Քո գթութիւնը մեզ՝ և այս բոլոր ժողովրդիս վերայ որոնք յուսով սպասում են ստանալու Քո ողորմութիւնդ:

Սարկաւագը իւր քարոզը աւարտելուց յետոյ, դիմում է առ Փահանան ասելով.

«Օրհնեա Տէր»:

Եւ Փահանան բարձրաձայն ասում է իւր վերոյիշեալ աղօթքի վերջաբանը:

«Զի ողորմած և մարդասէր ես Աստուած գոլով և քեզ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւետեանս յաւետեանից. ամեն»:

Որովհետեւ քիչ առաջ առանձնաբար խնդրեց Աստուծոյ

գթութիւնը, այժմ բարձրածայն է ասում, որ ժողովուրդը իմանալ թէ Քահանան ևս իւր հետ միասին միւնոյն խնդրուածքն է մատուցանում Աստուծոյ, որովհետև ասում է՝ այս ամենը նրա համար ենք խնդրում Քեզանից, որ Գու ողորմած և մարդասէր Աստուած լինելով գիտենք որ առատապէս կրպարդես մեղ ամենայն բարիք:

Քահանալի այս խօսքից յետոյ կարդում են դպիրները Մարդարէական և Առաքելական թղթերը, որից յետոյ Սարկաւագը կարդում է բէմից սուրբ Աւետարանը և ասում է Հաւատոյ դաւանութիւնը:

Ընթերցուածների կարգն է այս. Քահանալի լիշեալ վերջին խօսքից յետոյ դպիրներից մէկը գլուխ ծռելով կամ համընթերելով դասում կանգնող պատուաւոր եկեղեցականներից մէկի ձեռքը՝ դալիս է տուեան, ուր զրած է զրակալը և նորա վերայ ճաշոց զերքը և սկսում է կարդալ օրուայ խորհրդոյն կամ տօնին յարմար հին և նոր կտակարաններից՝ այսինքն Մարդարէական գրուածքներից և Առաքելական թղթերից մի հատուած, բայց նախ քան կարդալը, ասում է.

«Աւէլուեա, աւէլուեա»:

Ասինքն օրհնեցէք Աստուծուն և փառք տուեք նորան որ իւր սուրբ կամքը և բոլոր ճշմարտութիւնները յալտնել է, մեզ այս հին և նոր կտակարաններով, որ կարդալու եմ ձեր առաջեւ. յետոյ ասելով սաղմուից մէկ կամ երկու տուն կարդում է բարձրածայն ՚ի լուր ժողովրդի:

Երբ վերջանում է Մարդարէական և Առաքելական գրուածքների ընթերցումը՝ այն ժամանակ դպիրները դարձեալ ասում են.

«Աւէլուեա, աւէլուեա»:

Բայց այժմ ոչ թէ թիւ այլ երգելով և սորան կցում են մի տուն սաղմոս ըստ աւուրն պատշաճի. Սորանից յետոյ սար-

կաւագը վերևից հրամայում է ուղիղ լինել հոգուով և մարմնով, որովհետև սուրբ աւետարանը պէտք է կարդացուի, ուստի նոյն մտքով ասում է.

«Աւէլուեա օրթի»:

Իսկ Քահանան դատնալով դէպի ժողովուրդը, խաչակնքում է նորա վերաց ասելով.

«Խաղաղութիւն ածենեցուն»:

Ասինքն Աստուածային խաղաղութեամբ խաղաղացրէք ձեր հոգիքը, սրտերը, մտքերն ու խորհուրդները և ուշագրութեամբ լսեցէք այս խաղաղութեան աւետիքը՝ որ Յիսուս տուեց աշխարհին և Սարկաւազը ՚ի լուր ձեր պիտի կարդայ այժմ: Քահանալի տուած խաղաղութեանը, ժողովուրդը իւր սովորական ձևով պատասխանում է.

«Եւ ընդ հոգուոյդ քում»:

Ասինքն նոյն խաղաղութիւնը լինի և քո հոգուոդ, որ պատղամատութեանդ գործը խաղաղութեամբ և սրբութեամբ աւարտես: Այս լինելով Սարկաւազը հրամայում է ժողովրդին երկիրով լսել սուրբ Աւետարանի խօսքերը ասելով:

«Երկիւղածութեամբ լուսարուք»:

Սորանից յետոյ վերաբերիչ Սարկաւազը սուրբ Աւետարանը ձեռքին՝ զառնալով դէպի ժողովուրդը կարդում է.

«Սրբոյ աւետարանին՝ որ ըստ Մատթէոսի (կամ Մարկոսի Ղուկասու կամ Յովհաննու)»:

Ասինքն իմ կարդալու սուրբ Աւետարանը Մատթէոսի գրածն է: Դպիրները Սարկաւազի այս խօսքին պատասխանում են Աստուծուն փառք տալով.

«Փառք քեզ Տէր Աստուած մեր»:

Ասինքն փառք քեզ ով Տէր Աստուած մեր, որ քո Միածինը մեզ վրկեց մեղքից և հանդերձեալ անմահ կեանքի աւետիքը տուեց. այն աւետիքը մենք երկիւղիւ և սիրով պատ-

րաստ ենք այժմ լսելու: Սարկաւագը հրամայում է թէ՝ եթէ
այդպէս, ուրեմն ուշ դրէք և ասում է.
«Պռսխումէ»:

Փողովուրդը դպիրների միջոցաւ յալտնում է իւր հաւատը,
իբր թէ հաւատում ենք որ Աւետարանը Աստուծոյ խօսքն է
ուստի և ասում է.

«Ասէ Աստուած»:

Որից յետոյ վերաբերիչ Սարկաւագը իւր կարգալու Աւե-
տարանի բովանդակութեան համաձայն վերնադիրն է ասում,
այսինքն.

«Տէրն մեր Յիսուս Քրիստոս ասէ»,

Կամ.

«Տէրն մեր Յիսուս Քրիստոս».

Կամ.

«Տէրամբ մերով Յիսուսի Քրիստոսի»:

Կամ.

«Դիմանակի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և այլն»:

Եւ սկսում է կարգալ:

Երբ աւարտում է Սարկաւագը սուրբ Աւետարանի ընթեր-
ցումը, այն ժամանակ դպիրները ժողովրդեան կողմից դարձեալ
փառք են տալիս Աստուծուն ասելով.

«Փառք քեզ Տէր Աստուած մեր»:

Այսինքն փառք քեզ տէր Աստուած մեր, որ մեր դաս-
տիւրակից լսեցինք աւետարանական ճշմարտութիւնը և պատ-
րաստ ենք կատարելու ամենայն յօժարութեամբ այն բոլոր
պարտքերը՝ որ դնում է մեր վերայ սուրբ Աւետարանը:

Սորանից յետոյ Սարկաւագը դառնում է դէպի սուրբ սե-
ղանը և Աւետարանը բարձրացրած՝ ասում է ձայնով Նիկիա-
կան հանդանակը որ է Հաւտարամքը, իսկ ժողովուրդը ձեռնա-
մած հետեւում է նորան ցածր ձախով. ձեռնամած նշանա-
կում է երկու ձեռքը իրար կպցրած, այն իսորհրդով թէ ինչ-

պէս ձեռքերը իրարու կպած չեն կարող ուրիշ գործք գործել,
նոյնպէս և միտքը պէտք է աղատ լինի ուրիշ բաներ մտա-
ծելուց. Զեռնամած դրութեան արտաքին նշանը ապացուց է
ներքին ջերմեռանդութեան և ուշադրութեան:

Այժմ տեսնենք թէ ինչ իսորհրդու ունի ընեցուածների
միմեանց հետեւող կարգը, այն է՝ ինչու նախ Մարգարէական
գրքերն են կարգում, իսուոյ Առաքելոց թղթերը և յետ ամե-
նից ուրիշ Աւետարանը:

Սորա բացատրութիւնն է այս՝ Մարգարէական ընթեր-
ցուածների նախադաս լինելու պատճառն է նախ՝ որ Մարգա-
րէքը նախադուշակեցին Բանին Աստուծոյ մարդանալը և
մարդկան աղջի փրկութիւնը. իսկ Առաքեալք ականատես ե-
ղան մարգարէից գուշակութեանց իրադրծմանը և վկայեցին.
առաջ լինում է ասելը և նորան հետեւում է վկայելը:

Երկրորդ՝ Մարգարէք ՚ի հեռատանէ տեսան Բանն Աս-
տուած, իսկ Առաքեալք ՚ի մօտոյ և շօշափեցին մինչև ան-
գամ, ըստ այնմ «շօշափեցէք զլու և տեսէք»:

«Զեռք մեր շօշափեցին ՚ի վերատ բանին կենաց»:

Երրորդ՝ Մարգարէք սերմանեցին և Առաքեալք հնձեցին
և այլն. այս պատճառներն են՝ որոց հիման վերայ նախ Մար-
գարէական գրքերն են կարդացում, յետոյ Առաքելական թրդ-
թերը, որովհետեւ Առաքեալք աւելի մօտ են ժամանակաւ Յի-
սուսին, քան թէ Մարգարէք. ուստի Առաքելական թղթերը
կարդացում են Աւետարանի մօտ. ամենից վերջը կարդացում
է սուրբ Աւետարանը իբր լրումն օրինաց և Մարգարէից և
աւետաւոր փրկութեան մարդկան և ժառանգութեան երկնալին
կենաց. իսկ «Ալէլուեա» որ ասուում է սուրբ Աւետարանից առ-
ուաջ՝ է հրեշտակաց երգը, որոնք աւետաւորք եղան Բանին
Աստուծոյ գալատեանը և նշանակում է «Օրհնեցէք զՏէր», ո-
րոնք յիրաւի սաղմոս ասելով օրհնում են զՏէր: Այս պատճա-

ուաւ ամեն տեղ ալէլուեալի հետ սաղմոս տուն կայ, որ նշանակում է հրեշտակաց և մարդկան երգի զուգաւորութիւնը կամ միաւորութիւնը.

Սուրբ Աւետարանից յետոյ, ինչպէս տեսանք, Սարկաւագը ասում է. «Հաւատամքը», *) որից յետոյ համբուրել է տափս պատարագչին և բազմայներով սուրբ սեղանի վերայ, քարոզում է ժողովրդին այսպէս:

«Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»:

Հրամաքերով ժողովրդին հայցելու Աստուածալին խաղաղութիւնը, որին համաձայնելով ժողովուրդը աղաղակում է.

«Տէր ողորմեա»:

Ճարունակում է Սարկաւագը.

«Եւ ևս հաւատով աղաչեսցուք և խնդրեսցուք ՚ի Տեառնէ Աստուածոյ և ՚ի փրկչէն մերթէ Յիսուսէ Քրիստոսէ ՚ի ժամուս պաշտաման և աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի գիննդուածս սրտից մերոց, ժողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ՚ի վերայ մեր. Ազօթք մեր և խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի Տէրութեան նորա. և նա տացէ մեզ միաբան միով հաւատով և արդարութեամբ վաստակել ՚ի գործս բարեաց. Զի զողորմութեան զշնորհս իւր արասցէ ՚ի վերայ մեր Տէրն ամենակալ. կեցուցէ և ողորմեսցի»:

Հաւատով խնդրենք և աղաչենք մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսից, այս պաշտաման և աղօթի ժամին, որ ար-

*) Թէպէտ իմ յատուկ ցանկութիւնս էր զնել այստեղ ամբողջ Հաւատամքը աշխարհաբառ թարգմանութեամբ և իմաստի բացատրութեամբ կամ խորհրդածութեամբ, սակայն երկնչելով զբքի ստուարութիւնից, բարուք տեսայ Հաւատամքը մի փոքրիկ զբռուկով առանձին երկասիրել, եթէ Տէր կ'յաջողէ, որպէս զի ժողովուրդը միջոց ունենայ գիւրութեամբ ծանօթանաւու Քրիստոնէական եկեղեցւոյ հաւատալեաց կամ դաւանութեանց ամբողջութեանը,

ժան համարէ մեր աղօթքը ընդունելու. լոէ մեր աղաչանաց ձախնը, ընդունէ մեր սրտից բղխած խնդրուածքը, թողնէ մեր յանցանքը և ողորմէ մեզ: Որպէս զի մեր աղօթքն ու խընդրուածքը միշտ բարձրանան Նորա մեծ Տէրութեան առաջը և Նա տայ մեղ մի հոգւով, մի հաւատով և արդարութեամբ աշխատելով՝ բարի գործել և բարութեամբ անցկացնել մեր կեանքը, որպէս զի իւր ողորմութեան շնորհքը ծաւալէ մեզ վերայ ամենակարող Տէրը, պահպանէ մեզ և ողորմէ:

Ժողովուրդը այս հրամանին համաձայն խնդրում է Աստուծուց ասելով. «Կեցո Տէր» այսինքն պահպանէ մեզ Տէր:

Սարկաւագը շարունակում է իւր քարոզը տուն առ տուն այսպէս.

«Զժամն սուրբ պատարագիս և զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ՚ի Տեառնէ խնդրեսցուք»:

Այս սուրբ պատարագի ժամը և մեր առաջ եղած օրը խաղաղութեամբ անցկացնելու համար. խնդրենք Աստուծուց հաւատով:

«Զհւեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ՚ի Տեառնէ խնդրեսցուք»:

Խաղաղութեան հրեշտակը մեր անձին պահպան խընդրենք Աստուծուց:

«Զքաւութիւն և զմողութիւն յանցանաց մերոց ՚ի Տեառնէ խնդրեսցուք»:

Մեր յանցանքների քաւութեան և թողութեան համար խնդրենք Աստուծուց:

«Զսբբոյ խաչին մեծ և կարող զօրութիւն յօքնութիւն անձանց մերոց ՚ի Տեառնէ խնդրեսցուք»:

Սուրբ խաչի մեծ և կարող զօրութիւնը իբրև մեր անձի օգնութիւն խնդրենք Աստուծուց:

Քարոզի մնացած տուները մեզ արդէն յայտնի են. այն է

«Եւ ևս միաբան.» «Զանձինս մեր.» և «Աղորմեաց մեղ»:

Սարկաւողի այս հրամայական քարողների համաձայն ժողովուրդը խոնարհաբար ապավինում է առ Աստուած ասելով.

«Շնորհեա Տէր»:

Այսինքն՝ ինչ որ մեր դաստիարակը հրամայեց մեղ Գեղանից խնդրելու, խնդրում ենք Տէր որ շնորհես մեղ:

Մինչդեռ սարկաւագը քարողում է և ժողովուրդը դպիրների առաջնորդութեամբ իւր դաստիարակի հրամանին համաձայն խնդրում է Աստուծոյ բարիքը և ողորմութիւնը, Քահանան աղօթում է խորհրդաբար առ Յիսուս ասելով.

«Տէր մեր և Փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծութեամբ և առատ պարզեց բարերարութեան Քո: Որ դու քոյին կամաւու ՚ի ժամուս յայսմիկ Համբերեցեր չարչարանաց, խաչի և մահու յաղագս մեղաց մերոց: Եւ պարզեցեր առատապէս զպարգևս Հոգւոյդ սրբոյ երանելի առաքելոցն, Հաղորդս արա և զմեզ Տէր, աղաշեմք զքեզ, Աստուածային պարգևացդ, Ժողութեան մեղաց և ընդունելութեան Հոգւոյդ սրբոյ»:

Ով Տէր և փրկիչ մեր Յիսուս Քրիստոս, մեծ է Քո ողորմութիւնը և առատ են բարերարութեանդ պարզեները. և որովհետև Դու Քո կամքով այս ժամուն Համբերութեամբ տարար և դիմացար չարչարանքներիդ, խաչիդ և մահուանդ մեր մեղքի համար և ոչ Քո՝ որովհետև Դու անմեղ ես. և առատաբար պարզեցիր սուրբ Հոգւոյդ շնորհիքը Քո երանելի առաքեալներին՝ ուրեմն Տէր, և մեզ Հաղորդ և մասնակից արա Քո Աստուածային պարգևներիդ, որ մեր մեղքերը ներուին մեզ և մենք ևս ընդունենք ՚ի մեզ Քո Սուրբ Հոգիդ:

Այս աղօթքի վերջին մասը Քահանան բարձրաձայն է ասում այսպէս:

«Ո՞ւզէս զի արժանաւորք եղիցուք գոհութեամբ իառաւորել զքեզ ընդ Հօր և ընդ սուրբ Հոգւոյդ այժմ և».

Որպէս զի արժանաւորութիւն ունենանք զոհութեամբ և շնորհակալութեամբ փառք տալու Քեզ Հօր և սուրբ Հոգւոյ հետ միասին:

Աւարտելով աղօթքի այս վերջին մասը, դառնում է դէպի ժողովուրդը և խաղաղութիւն է տալի ասելով.

«Խաղաղութիւն ամենեցուն»:

Որուն դպիրները պատասխանում են սովորական ձեռով.

«Եւ ընդ Հոգւոյդ քում»:

Սարկաւագը հրամայում է երկրպագանել Աստուծուն.

«Աստուծոյ, երկրպագեսցուք»:

Ժողովուրդը պատասխանում է.

«Առաջի քո Տէր»:

Սորանից լետոյ քահանան զիմում է առ Քրիստոս իւր բարձրաձայն աղօթքով և խնդրում է նորա խաղաղութիւնը բոլորի համար այսպէս.

«Խաղաղութեամբ քով Քրիստոս մեկ որ ՚ի վեր է քան զամենայն Շիտու և զբանս. ամքաց զմեզ և աներկիւդ պահանական չարէ. Հաւասարեան զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո՞ ո՞ք Հոգւով և ճշմարտութեամբ քեզ երկերպագանեն. վասն զի ամենասուրբ երբորդութեանդ վայել է փառք Եշվանու. Թիւն և պատիւ; այժմ է մեշտ և յակիտեանս յաւիտենից. ամեն»:

Ով Քրիստոս փրկիչ մեր, մեր մնջից ու խօսքից բարձրագոյն խաղաղութեամբ ամրացրու մեզ և աներկիւդ պահիր ամենայն չարից, Հաւասարիր մեզ Քո ճշմարիտ երկրպագուներին զքեզ Հոգւով և ճշմարիտ սրտով են պաշտում Քեզ և բիւդ՝ որոնք Հոգւով և ճշմարիտ սրտով են պաշտում Քեզ և երկրպագանում. Որովհետև ամենասուրբ Երբորդութեանդ է արժան և վայել փառքը, Եշվանութիւնը և պատիւր այժմ և միշտ: Յետոյ զուգակցում է սորան, «Որհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս»:

Սարկաւագը խնդրում է որ օրհնէ ժողովրդին ասելով.

«Օրհնեալ Տէր»:

Եւ քահանան դառնալով գէպի ժողովուրդը խաչակնքում
է նոցա վերայ ասելով.

«Տէր Աստուած օրհնեսցէ զածենեսեանդ».

Այսինքն Տէր Աստուածը թող օրհնէ ձեզ բոլորիդ, որ
արժանաւոր պատրաստութեամբ ներկայ և մասնակից լինէք
սուրբ խորհրդին:

Փողովուրդը պատասխանում է.

«Ամեն».

Վերոյիշեալ աղօթքներով քահանան դիմում է առ Քրիս-
տոս. լիշում է նորա ողորմութիւնը և բարերարութեան առաւտ
պարզեները, որ նորա՝ առ մեզ ունեցած սիրուցն ենք ճանա-
չում. որովհետև ինքն ասաց թէ. «Այսպիսի սէր ոչ ոք չունի
որ գնէ իւր անձը բարեկամների վերայ. դուք իմ բարեկամ-
ներս էք.» բարեկամ բառը աշխարհային մտքով չէ ասուած
սուրբ Աւետարանի մէջ, ոչ արենակցական կամ ինամական
բարեկամութիւն, ոչ զործքի կամ ընկերութեան բարեկամու-
թիւն, այլ սուրբ Աւետարանի մէջ լիշուած բարեկամ բառը
ցոյց է տալիս մեզ. որ մենք Յիսուսին բարեկամ լինելու հա-
մար՝ պէտք է ուրանանք մեր անձը նորա սիրոյ համար. ինչ-
պէս նա ուրացաւ իւր անձը մեր փրկութեան և սիրոյ համար.
մինչև չզոհենք մենք մեր հանգստութիւնը, փառքը, շահերը,
մեր մերձաւորները և գլխովին մեր կեանքը նոյն մեր փրկիչ
Յիսուսի համար՝ չենք լինի մենք նորա բարեկամութեանը ար-
ժանի, ինչպէս պարզ երևում է նորա խօսքերից. «Որ սիրէ
զհայր իւր կամ զմայր առաւել քան զիս ոչ է ինձ արժանի».
մեր հոգին փրկելու համար ինչքան չարչարանաց խաչեր պա-
տահեն մեզ կեանքի մէջ, մենք Յիսուսի բարեկամութեան
տենչանօք լցուած՝ ուրախութեամբ պիտի առնենք ուսերս ու
բարձրանանք մտաւոր գողգոթան պատարագուելու, որպէս զի
այստեղից վերասլանանք Յիսուսի բարեկամութեան խորհրդա-
րանը, որ է երկնային Արքայութիւնը: Այս է Յիսուսի ասած

բարեկամ բառի ամենահամառօտ և սուղ բացատրութիւնը:
Այսպիսի սէր և ողորմութիւն է լիշում քահանան սիրոյ աղ-
բիւր Յիսուսից ասելով Քո անչափ սէրդ և առատ ողորմու-
թիւնդ նորանով ենք ճանաչում, որ Դու տկար մարմնովդ չար-
չարուեցար և խաչուեցար ու մեռար մեր փոխանակ, և մեր
մեղաց քաւութեան համար նուէր հաշտութեան կամ պատա-
րագ ընծալուեցար Հօր քում Աստուծոյ և այս ամենայն յօժար
հոգւով, ինչպէս առացիր «Հոգիս յօժար է»: Եւ թէպէտ ըստ
մարմնոյ՝ տկարութիւն զգացիր մեր փրկութեան համար կրելի
չարչարանացդ ու խաչիլ ինչպէս ասացիր «բայց մարմինս տը-
կար» սակայն ով մեծ ողորմութեանդ, յօժար հոգւովդ մար-
մնոյդ տկարութիւնը ՚ի բաց մերժեցիր խսպառ և մարդկան
ազգի փրկութեան ծարաւ հոգւով ու կամքով՝ հզօնեղապէս ա-
սացիր «բայց ոչ իմ կամք՝ այլ քոյդ լիցին». չնայելով
մարմնոյս տկարութեանը՝ Քո կամքդ չայր, պէտք է կատա-
րուի և մարդկան ազգի փրկութիւնը պէտք է գնեմ. և ապա
սուրբ Հոգւոյդ շնորհքը առատաբար պարզեցիր Քո սուրբ ա-
ռաքեալներին: Եւ արդ Տէր՝ մեր մաղթանքը թող հաւատով
լինի, իսկ մեզ կցորդ արա Քո չարչարանացդ և սրբիր մեղքից՝
ինչպէս որ Դու կամեցար. սուրբ Հոգիւթ տուր մեզ զործակից
լինելու այս առաջիկայ զործոյս՝ ինչպէս տուիր սուրբ առաքե-
լոց: Յետոյ խաղաղութիւն է տալիս ժողովրդին, որին ՚ի պա-
տասխան սարկաւագը հրամայում է որ ժողովուրդը Աստուծոյ
երկրպագէ, որովհետև խաղաղութեան համար էր հրամայում
ժողովրդին աղաշելու և այժմ, ասում է, այն խաղաղութիւնը
Աստուած տռւսու քահանային և նա ձեզ է բաշխում. երկր-
պագեցէք Աստուծոյ շնորհակալ սրտով նորա ձեզ տռւած շնոր-
հաց մասին. Սարկաւագի հրամանին համաձայն ժողովրդի եր-
կրպագութիւնից յետոյ, քահանան դարձեալ շարունակում է
առ Քրիստոս իւր աղօթքը այսպէս՝ Փրկիչը մեր Քրիստոս, ար-

դարեւ մեծ է և անհասանելի՝ մարզկային մտքի համար Քո խաղաղութեան նախախնամութիւնը, որով կառավարում ես աշխարհը և արարածներից իւրաքանչիւրին ուղղում ես իւր ընթացից համեմատ, այսինքն իւր գործքերի ու բնութեան համեմատ. որին այսուեղ ես պատժում և այսուեղ ես պակում: մի ուրիշի փոքր և թեթև լաւութեան կամ բարեաց հատուցումը, այսուեղ իսկ շնորհում ես. զօրաւորին՝ փորձութեամբ երեւելի ես անում, իսկ անզօրին ու տկարին Քո ինամքով ես պաշտպանում. և սակայն ոչ ոք չէ կարող, եթէ և թեթև թեւերի վերայ սլանալով ձգտէր առ Քեզ հասնել՝ հասկանալ Քո անքննին խմաստութիւնը, որովհետեւ նա դադանիք է մեզ մեր բարօրութեան և երջանկութեան համար. Ուրեմն Քո ինամք, Տէր, միշտ մեզ վերայ ունեցիր, որին մենք միշտ կարուտում ենք, որովհետեւ շատ մօտիկ է մեզ չարը և միշտ պատրաստ դարանակալի նման սպասում է չարչարել մեզ և վիրաւորել. և որովհետեւ այս ժողովուրդը սարկաւագի հրամանով Քեզ երկրպագեցին. ուստի սոցա երկրպագութիւնը հաւասարիր այն երկրպագու հաւատացեալների երկրպագութեանը, որոնք հոգիով և ճշմարտութիւնը. որովհետեւ ոչ միայն մարմնով ենք խոնսարհում քո առաջ, այլ և մեր հոգին և կամքը ճշմարիտ մտքով մեր պարանոցի հետ միասին քո առաջեւ կորացրինք. և այս ամենայն նրա համար, որ Դու ինքդ պատուիրեցիր մեզ ասելով. «Հողի է Աստուած և երկրպագուաց նորա հոգեւով և ճշմարտութեամբ պարտ է երկրպագանել». մենք ևս այսպիսի երկրպագութեամբ փառաւորում ենք սուրբ Երրորդութիւնը:

Սակայն բաւական չէ քահանակի(այս) խորհրդական աղօթքը, պէտք է որ ժողովուրդն ևս իւր կողմից ջանք անէ իւր ջերմեռանդ Աստուածպաշտութեամբ որ քահանակի այս և այսպիսի խօսքերը դին ունենան Աստուծոյ առաջ, այսինքն

ճշմարիտ լինեն և այս ճշմարտութիւնը ժողովուրդը պէտք է հաստատէ. ինչպէս. ֆողավուրդը իմանալով որ իւր կողմից ուղարկուած պատգամաւորը, այն է քահանան, այս օրինակ հաստատուն մտօք է աղօթում, ինքն ևս իւր կողմից պարտական է վկայիլու. քահանակի խօսքերի ճշմարտութեանը, այն է՝ պէտք է հոգւով երկրպագանէ, չերմեռանդ հաւատով աղօթէ և իւր միտքը խաղաղ պահէ աշխարհականի հոգսերից և միայն քահանակի տուած խաղաղութեամբ խաղաղացած՝ զբաղեցնէ իւր միտքը սուրբ պատարագի խորհրդով, այն ժամուն մոռանալով աշխարհը և որ ինչ աշխարհինն է և միայն հոգւով հիանալ և հոգւով և մտօք առ խորհուրդ սուրբ պատարագին սլանալ, որ իւր ներկայութիւնը՝ օգուտ բերէ իրան ըստ հոգւով և ըստ մարմնոյ:

Ժ. ԲԱԺԻՆ

ՎԵՐՍԵՐՈՒՄԸ

Երբ քահանան սարկաւագի խնդրանօք դարձաւ և օրհնեց ժողովրդին ասելով.

«Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ»:

Եւ ժողովուրդը պատախանեց ասելով.

«Ոմեն»:

Այս ժամանակ քահանան մերկանում է զիսից սաղաւոր, իսկ եթէ Եպիսկոպոս է պատարագիչը՝ մերկանում է եմիփորոնը և թագը. ինչո՞ւ համար. Որովհետեւ մինչեւ այժմ պատարագիչը իշխանական կերպ ունէր և իշխանական փառքով էր պատուած, Յիսուսի օրինակը իւր մէջ կըելով, իսկ այժմ և այսուհետեւ Յիսուսի վկարար պատարագի խորհրդին պէտք է սպասաւորէ, վասնորոյ մերկանում է սաղաւարտը,

իշխանական կերպը թողով տուանում է ծառայական կերպ և սուրբ Սեղանի առաջ կանգնում է իբրև սպասաւոր Սուրբ խորհրդին: Այսպէս էր կատարուում և Խորայէլեան վկայութեան խորանում, այն է՝ Աստուած պատուիրել էր Ահարոնին որ պճղնաւոր պատմուճանը կամ եմիփորոնը փառքի համար միայն հագնէ սուրբ խորանում ժողովրդեան առաջ. իսկ երբ խորանի Սրբութիւն Սրբոց ասուած մասն էր մտնում. այն է ներքին կողմն վարագուրին յանդիման լինելու Տեառն՝ այն ժամանակ մերկանում էր եմիփորոնը որ էր պճղնաւոր պատմուճան և միայն կտաւէ պատմուճանովն էր մտնում աղօթելու: Եւ որովհետև նա ստուէր էր, իսկ սա ճշմարտութիւն և ճշմարտութիւնը պէտք է նմանուի իւր նախագաղափարին կամ ստուէրին, ուստի և նոր ուխտի ճշմարիտ պատարագը մասամբ պէտք է նմանուի հին ուխտի ստուերական պատարագներին: Այս է պատճառը, որ ինչպէս հին ուխտի քահանայապետը Սրբութիւն սրբոց ասուած ներքին մասը մտնելու ժամանակ մերկանում էր իւր պճղնաւոր և զանազան ակունքներնիզ զարդարած եմիփորոնը. որով Աստուծոյ նմանութիւնն էր ներկայացնում իւր մէջ և յետոյ Աստուծոյ նմանութիւնը մերկանալով ծառալի կերպ էր զգենում. նոյնպէս և նոր ուխտի քահանայապետը, որ մինչեւ վերաբերումը գՔիլատոս էր պատկերացնում իւր մէջ, վերաբերման ժամանակ և նորանից յետոյ չօր Աստուծոյ յանդիման լինելու համար՝ սպասաւորի կերպ է առնում: Մինչեւ վերաբերումը քահանալի բոլոր աղօթքները ուղղուած էին առ Քրիստոս, իսկ վերաբերումից յետոյ քահանան իւր աղօթքներով դիմում է առ չալրն Աստուած և իրեն գործակից է խնդրում Սուրբ Հոգին Աստուած, որովհետև Որդին Աստուած՝ Քրիստոս, պատարագւում է սուրբ Սեղանի վերայ և այդ ճշմարիտ պատարագն՝ այսինքն գՔիլատոս չօր Աստուծոյ է նուիրում քահանան ՚ի կողմանէ ժողովրդեան և ՚ի

փրկութիւն ժողովրդեան: Քահանալի իւր իշխանական սաղաւարտը մերկանալու պատճառներն սոքա էին, որից յետոյ ՚ի խոնարհ ունելով զգլուխն՝ աղօթում է վերջին անգամ առ Քրիստոս, որովհետև ընծայքը տակաւին չեն վերաբերուած. իսկ Սարկաւագը հրամայում է որ երեխաները՝ այսինքն չմկրտուածները, թերահաւատները, ապաշխարողները՝ այսինքն ապաշխարութեան տակ եղողները և անմաքուրները՝ այսինքն մեղաւորները չմերձենան Աստուածալին խորհրդին, այս խօսքերով.

«Մի ոք յերախայէց, մի ոք ՚ի թերահաւատից, և մի ոք յապաշխարողաց և յանմաքրէց մերձեսցի յԱստուածալին խորհրդու»:

Բայց թէ ինչու այս սովորութիւնը այժմ մեր եկեղեցւոյ մէջ չէ իրագուծուում. լուծենք ՚ի մասնաւորի. ներկայումս քրիստոնէից մէջ երեխայ կամ չմկրտուած չկայ, որպիսիք շատ էին լինում քրիստոնէութեան աւաջին գարերում, նա մանաւանդ առաքելական ժամանակներում որ յետոյ այս սովորութիւնը վերջացրին բարսեղ և Գրիգոր Աստուածաբանները, իսկ մեր ժամանակներում Քրիստոնեալ ծնօղաց հասակաւոր չմկրտուած զաւակները շատ քիչ և գրէթէ չկան, որովհետև ըոլորն ևս անխտիր մկրտուած են կամ ութնօրեալ և կամ փոքր հասակում. այս երախաների մասին, իսկ որ ինչ վերաբերում է ապաշխարողներին, թերահաւատներին և անմաքուրներին կամ մեղաւորներին՝ որոց սուրբ Թիոնէսիոս հրամայում է արտաքսել պատարագ հաւատացելոց ասուած մասի ժամանակ, այժմ չէ կատարուում, որովհետև ՚ի սկզբան դուրս գնացողները ամացում էին, արտասուք և զղմամբ ապաշխարում էին իրանց յանցանքը և տրտմում էին որ անարժան են սուրբ խորհրդին ներկայ լինելու, ուստի և խորհրդաւոր և հոգեորապէս օգտակար էր նոցա դուրս գնալը ըստ հրամանի Սարկաւագին. սակայն յետ ժամանակաց՝ նա մանաւանդ այժմ մեր ժամանակ-

ներսւմ (ի մեծ ցաւ սրտի և հոգւոյ պէտք է ասած, որ) նոյն-
պիսի ապաշխարողներին, թերահաւատներին և մեզաւորներին
արտաքսելը օգտակար չէ հոգեորապէս. վասն զի մի առիթ է
պակաս նոցա միայն եկեղեցւոյ շէմքը յաւիտեանս ոտք ըր-
գնելու, ուր մնաց թէ Սարկաւագի հրամանով արտաքսուե-
լոց յնտոյ.) Որովհետեւ կեանքի հոսանքը յեղաշընել է շատ
բաներ, որոց հետ յեղաշընել է և ժողովրդի հաւատը, պա-
կասել է ջերմեռանդութիւնը և ոէրը առ Աստուած և առ
Աստուածալին բոլոր ճշմարտութիւնները. ներկայումս՝ որպէս և
մեզանից շատ առաջ ես, մեզաւորներին և ապաշխարողներին
ոչ թէ արտաքսել է հարկաւոր, այլ խնդրելով և աղաչելով
պէտք է հրաւիրել ՚ի Սուրբ Տաճարն և ՚ի ներկայութիւն ոուրբ
խորհրդոյ պատարապին, որպէտեւ նոքա ոչ ներկայութեամբն
են ուրախանում և միխիթարւում և ոչ արտաքս գնալով են
տիրում ու վշտանում. աւելի եւս ուրախ են դուրս գնալոյ,
որպէս և լինում է, որպէս զի շտապեն հասնելու իրանց աշ-
խարհային բաւականութիւններին, այս ցաւը և հիւանդու-
թիւնը՝ այն է ժողովրդի ջերմեռանդութեան նուազումը, հաւա-
տոյ թուլութիւնը և առ Աստուած սիրոյ բացակայութիւնը՝
բատ որում ժամանակի տժդին հոսանքը կամ որ նոյն է բատ
մեզ՝ մարդկային իմաստուն հանճարի անուղղայ գործադրու-
թիւնը փարակել է զժողովրդին և գրէթէ ամբողջ մարդկու-
թիւն. վասնորոյ հեռաւտենելով խոհական, իմաստուն և շըր-
ջանկատ տուրբ հարք եկեղեցւոյ, ասհմանել են «Ո՞ի կալ հա-
կառակ չարին». բայտ Յիսուսի! Ուստի որպէս արժանաւորք՝
նոյնպէս և անարժանք հաւասարապէս ներկայ են լինում ոուրբ
խորհրդին, առանց որոշուելու միմեանցից՝ որպէս հրամայում
է Սարկաւագը, թողով այդ որոշելը սրտերի և հոգիների քն-
նող Աստուածուն ՚ի ժամանակին:

Սարկաւագի հրամանին դպիրները ժողովրդեան կողմից
պատասխանաւմ են.

«Մարմին Տէրունական և Արքեն վրկչական կայ առաջե-
երկնային զօրութիւնքն յաներեւութո երգեն և ասեն ամհանգիստ
բարբառով սուրբ, սուրբ, սուրբ Տէր զօրութեանց».

Հաւատում ենք, ասում են, որ Տէրունական Մարմինը և
վրկչական Արքնը Սեղանի առաջին է և երկնային զօրու-
թիւնքը, այսինքն Հրեշտակները, աներկելով կերպով և ան-
դադար ձայնավ երգում են և ասում տուրբ, տուրբ, սուրբ Տէր
զօրութեանց:

Հրամայում է ապա Սարկաւագը.

«Սազմոս ասացէք Տեառն Աստուածոյ մերում, ուկեթ'ք, ձայնեւ
քաղցրութեամբ զերգա հոգեռոր»

Քաղցր ձայնով և ներդաշնակ եղանակաւ, ով դպիրներ
հոգւոր երգերով սազմոս առէք Աստուածոյ:

Այս հրամանը տալուց յնտոյ, վերաբերիչ Սարկաւագը բուր-
վառը ձեռքին խունկ է ծխում Սուրբ Սեղանին և զիմում է
դէպի խորհրդանոցը կամ ընծայարանը, քշշացակիր սարկաւա-
գունք քամակց քշշացներն են ճօնում, իսկ դպիրք ծունկի
ընքած քաղցր ձայնիւ սրբասացութիւնն են երգում ըստ ա-
ւուրն պատշաճի. Սոյն միջոցին քահանան Սուրբ Սեղանի ա-
ռաջ խոնարհած ասում է խորհրդաբար առ Քրիստոս հետե-
եալ աղօթքը.

«Ոչ ոք արժանի է յըմբանելոց մարմնաւոր ախտիւք և ցան-
կութեամբ մատչել ՚ի սեղան քո, կամ սպասաւորել արքունական
վաւաց քոյ, Քանզի սպաշտել գքեզ՝ մեծ և ահաւոր՝ երկնաւոր
զօրութեանցը եսկ է. սակայն վասն անշափ բարեբարութեան քո՝
անպարագըելք բանդ Զօր եղեր մարդ, և քահանայալետ մեր ե-
րեւեցար և երբ Տէր ամենեցուն՝ այսմ սպասաւորութեան և ան-
արթն գենման գքահանայութիւն աւանդեցեր մեզ. Վասն զի գու-
ես Տէր Աստուած մեր, որ տերես երկնաւորաց և երկրաւորաց. որ
՚ի վերայ քերովբէական աթոռոյ բազմիս, սերովբէեց Տէր և թա-

գաւոր Խորայէլի: Որ միայն սուրբ ես և ՚ի սուրբս հանգուցեալ, աղաշեմ գքեզ, միայն բարերար և հեշտալուր, նայեա յիս և մեղուցեալ և յանպիտան ծառայս Քո, և սրբեա զհոգի և զմիտո իմ յամենայն պղծութենէ չարին. և բաւականաց զիս զօրութեամբ սուրբ Հոգույց որ զգեցեալ եմ զքահանայականս շնորհ, կալ առաջի սրբոյ սեղանոյս, և քահանայագործել զքո անարատ մարմինդ և զպատուական արիւնդ: Քեզ խոնքհցուցեալ զպարանոց իմ՝ մաղթեմ, մի դարձուցանել զերեսս քո յինէն, և մի մերժեր զիս ՚ի ծառայց քոց, այլ արժանի արա մատուցանել քեզ գընծայս զայս յինէն՝ ՚ի մեղուցեալ և յանարժան ծառայէս քումմէ: Վասն զի դու ես՝ որ մատուցանես և մատչիս և ընդունիս և տաս, Քըստոս Աստուած մեր: Եւ քեզ փառս մատուցանեմք հանդերձ անսկիզբն քո Հարբդ և ամենասուրբ և բարերար Հոգովզ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամեն»:

Մեղանից ոչ ոք, Տէր, արժանի չէ իւր մարմնական ախտերի և մեղաց պատճառաւ մօտենալ Քո սուրբ Անդանին և սպասաւորել արքունական մեծ փառքիդ. Արովկետև քեզ պաշտելը, ով մեծ և ահաւոր Տէր, երկնային հրեշտակացն է յատուկ և խոկական. բայց և այնպէս, Դու որ Հօր Աստուծոյ անքովանդակելի բանդ ես, Քո անսահման բարերարութեամբդ մարդ եղար և մեզ քահանայապետ յայտնուեցար. և իրեւ Տէր ամենքի՝ այս պաշտօնը և անարիւն զոհիդ քահանայութիւնը մեզ աւանդեցիր: Արովկետև Դու ես մեր Տէրը և Աստուածը՝ որ տիրում ես երկնաւոր և երկրաւոր արարածներին և քերովիկական աթոռոյ վերայ ես բազմած, ով Տէր Անրովկէից և Խարայէլի թագաւոր. Դու որ միայն ես սուրբ և սրբոց մէջն է Քո հանդիստը, աղաչում եմ Քեզ՝ ով միակ բարերար և քաղցրութեամբ ամենքի աղօթքը լսող Տէր, նային ինձ՝ որ Քո մեղաւոր և անպիտան ծառայց եմ և սրբիր ու մաքրիր իմ սիրտս ու հոգիս չարի ամենատեսակ պիղծ խորհուրդներից. զօրացրաւ ինձ սուրբ Հոգույց շնորհօքը, որ ստացել եմ այս քահանայական շնորհքը, որպէս զի այս Սուրբ Անդանոյ առաջ

քահանայագործեմ Քո անարատ Մարմինդ և պատուական Արիւնդ: Խոնարհեցնելով Քո առաջ իմ պարանոցս, աղերսում եմ Քեզ Տէր՝ մի դարձնիր ինձանից Քո երեսը և մի մերժիր ինձ Քո ծառաների կարգից. այլ արժանացրու ինձ՝ որ Քո մեղաւոր և անպիտան ծառայց եմ, այս Ինձայն Քեզ մատուցանել. վասն զի Դու ես թէ մատուցանողը և թէ մատուցողը, թէ ընդունողը և թէ մեզ շնորհք և ողորմութիւն տւողը, ով Աստուած մեր. Եւ Քեզ՝ Քո Անսկիզբն Հօր և Քո ամենասուրբը և բարերար Հոգույց հետ միասին փառք կմատուցանեմք այժմ և միշտ:

Այս աղօթքը քահանան ոչ թէ ժողովրդի վրկութեան համար է մատուցանում, ինչպէս միւս աղօթքները, այլ այս աղօթքով իւր մասին է խօսում Քրիստոսի հետ՝ վերջին անգամ ապաւինելով Նորան, որ զօրացնէ իրան խօսակից լինելու Հօր Աստուծոյ հետ. Եւ մանաւանդ լսելով դպիրների քաղցրաձայն եղանակը, սարկաւագայ պարկեշտ հպատակութիւնը և բոլոր ժողովրդի ահով և դողութեամբ պատրաստութիւնը սուրբ Խորհրդի տեսութեան համար՝ զմայելով սքանչանում է քահանան. ուստի և ամփոփում է իւր միտքը և խոնարհեցնելով պարանոցը, ՚ի վեր է բարձրացնում իւր միտքը առ Քահանայապետն յաւիտենից Յիսուս Քրիստոս, որ միշտ կենդանի է և ընդ աջմէ Հօր՝ բարեխօս մեզ համար: Խօսում է Կորա հետ, իւր անձի տկարութիւնը համարձակութեամբ խօստավանելով, ինչպէս խօստավանում էր Աբրահամ հայրն հաւատոյ «Ակիզբն կալայ խօսել ընդ Տեառն, այս ես հող եմ և մոխիր». նոյնպէս և արդարն Յովլ «Եւ Ժիք ոք մաքուր ՚ի յաղտոյ մարդ՝ թէ և միօրեայ իցէ կեանք նորա ՚ի վերայ երկրի». այսպէս և քահանան ոչ թէ իւր անձի արժանաւորութեանն է ապատանում, քանի որ նա իրեւ մարդ՝ հող և մոխիր ըստ Աբրահամու, բաւական չէ հանդէս գալու գերազոյն լուսոյ առջև, որի

Հզօր ճառագայթներից իւր մտաց տկար աչքերը կվտանգուին, այլ զՅիսուս է խնդրում որ իրան գորացնէ՝ լինելով իւր գորացուցիչը և համարձակութիւն տայ իրան որ անվտանգ կերպով կանգնէ Հօր Աստուծոյ աշաւոր կերպարանաց առաջը, խօսակցէ նորա հետ և սպասաւորէ սուլիք խորհրդին առանց հոգեկան վնասի: Որովհետեւ սասում է առ Յիսուս թէ Տէ՛ր, չլամեցար որ հրեշտակները միայն պաշտեն Քեղ ամենայն որբութեամբ, այլ մեղ նմանուեցար և մեր բնութիւնը ստացար, որպէս զի մենք ևս ճանաչենք քեզ իրրեւ ողորմած և մարդասէր և քեզ վերայ յուսացողների մեղքը երմեւ սրբող ու մաքրող: Այդ մարդասիրութեամբ՝ այն է զՔեղ մեղ նուիրելովդ չքաւականացար, այլ սովորեցրիք մեղ մինչև անգամ Քեղ սպասաւորութիւն անել և Քո շնորհիւտ՝ Հօր Աստուծոյ խօսակից լինել: Այս իրաւունքն ու յուսն է, որ համարձակութիւնն է տալիս մեղ կանգնել Քո առաջնել և ոչ թէ մեր արժանաւորութիւնը, որից զրկուած ենք մենք դարձեալ գերուելով զանազան ախտերից ու մեղքերից:

Գահանան աւարտելով իւր այս աղօթքը մի քայլ հեռանում է սուրբ Սեղանից և բաղկատարած սպասում է ընդունել ընծայքը վերաբերիչ Սարկաւագի ձեռքից: Սարկաւագը Սուրբ Սեղանին խնկարկելուց յետոյ գնում է դէպի ընծայքանը և խնկարկում է ընծայիցն, յետոյ բուրփառը տալով բուրփառակին, ինքը համբուրում է քօղով ծածկած Սկիհը, առնում է ձեռքը և ՚ի վեր բարձրացրած ծանրաքայլ յառաջ է դալիս, առաջից գնում է բուրփառակինը խնկարկելով, իսկ սարկաւագունքը քշոցներն են շարժում: այսպէս ահա. Սեղանի ետեր պտտելով վերաբերիչը դուրս է դալիս ժամարարի դէմը կանգնում. ուր քահանան խնկարկելով ընծայից ընդունում է Սարկաւագի ձեռքից և դառնում է դէպի ժողովուրդը և նորանով ժողովրդին օրհնում և ապա գնում է Սեղանի վերայ:

Մեր չայաստանեաց եկեղեցին վերաբերումը կատարում է այսպէս, ինչպէս տեսանք, միան այս ձեր հասարակ տօներին էր կատարում առաջ, իսկ այժմ միշտ այս ձեւն է. այլ էր հանդիսաւոր տօներին կատարուած ձեր և կասուէր վերաբերմամբ պատարագ, որ կատարի այժմ ի Սուրբ Էջմիածին միւռոնօրհնութեան օրը շքեղ հանդիսիւ և երբեմն ՚ի Սուրբ Երուսաղէմ: *)

Աւելորդ չէր լինի մեղ ծանօթանալ շքեղ հանդիսիւ կատարուած վերաբերման ձեւի հետ որ այս է երբ Եպիսկոպոսը ասում է «Տէր Աստուծած օրհնեսցէ զամենեսեանդ». Սարկաւագը երգում է «Սաղմոս ասացէք». իսկ դպիրք երգում են Սրբաստութիւնը, միայն ոչ թէ չոքած այլ կանգնած, այնուհետև Սարկաւագը հրամայում է. «Մի ոք յերախալից և». որին դըպիրները պատասխանում են. «Մարմին Տէրունական և». Սորանից յետոյ վերաբերիչը սկիհը քօղով ծածկած բարձրացնում է և ասում է բարձրաձայն:

«Յարեւու եհար զիսորան իւր. և ինքն որպէս լիեսայ՝ զի ելանէ յառագաստէ իւրծէ».

Արեւի մէջ հաստատեց իւր վրանը և ինքը առաղաստից դուրս է դալի փեսալին նման:

Սորան պատասխանում են դպիրները երգով.

«Եւ ցնծայ նա որպէս հսկայ յընթանալ զՃանապարհն իւր»:
Հսկայի նման ուրախանում է իւր ճանապարհը դնացած ժամանակ:

Սարկաւագի ժամանակում է որք զքերովրէիցն խորհրդաբար կերպարանիմք».

Մենք քերովրէից կերպարանքը խորհրդաբար կրում ենք մեր մէջ:

*) Տես ի մաշտոցն միւռոնօրհնութեան ձայնագրեալ տպեալ ՚ի Սուրբ Էջմիածին երես 6—10-ն:

Վերաբերիչ Սարկաւագը ընծայքը ձեռքին ծանրաքալլ ընթացիւք եղիք համում է դէպի արևելք՝ ասում է բարձրածայն.

«Ճանապարհ արաբէք ամսմիկ որ նստի յերկինս երկնից ընդ արևելս».

Բացէք ճանապարհ նորա առաջ, որ նստում է ամենաբարձր երկինքը՝ դէպի արևելք:

Դուքն եւ ք. «Եւ կենդանանար Երրորդութեանը սուրբ, սուրբ, սուրբ՝ Երեքրենան օրնութիւնն ենք մատուցանում».

Վերաբերիչ Սարկաւագը գոլով դէպի հարաւ ասում է.

«Աստուած ՚ի հարաւոյ եկեսցէ և սուրբն ՚ի փառան լեռնէ».

Աստուած հարաւից պիտի դայ և սուրբը փառան սարիցը: Սուրբը փրկչի համար է ասած:

Դուքն եւ ք. «Զամենայն զիենցաղականս ՚ի բաց դնելով գգործս».

Մոռանանք մեր աշխարհային գործքերի զբաղմունքները: Վերաբերիչ Սարկաւագը հասնելով լորանի կամ բէմի աստիճանի մօտ՝ ասում է.

«Համբարձէք իշխանք զդրունս ձեր ՚ի վեր. Համբարձին դրունք յականից և մտցէ թագաւոր փառաց».

Ով իշխանութիւնք երկնից, բարձրացրէք ձեր դռները. Թող բարձրանան յաւտենից գուները, որ փառաց թագաւորը երկինք մտնէ:

Կաթուղիկոս, Պատրիարք կամ արքեպիսկոպոս պատարագնը խնկարկելով հարցնում է.

«Ո՞վ է սա թագաւոր փառաց՝ Տէ՛ հզօռ գօրութեամբ. Տէ՛ կարող ՚ի պատերազմի».

Ով է այս փառաց թագաւորը, այս հզօռ և գօրաւոր Տէ՛ ըր, այս յաղթական Տէ՛ ըր պատերազմի մէջ:

Դուքն եւ ք. «Որպէս զի զթագաւորն ամենեցուն ընդունիցիմք».

Որպէս զի թագաւորաց թագաւորը ընդունենք:

Վերաբերիչ Սարկաւագը դարձեալ կրկնում է իւր առաջին խօսքը «Համբարձէք իշխանք»:

Դուքն եւ ք. «Ո՞վ է սա թագաւոր փառաց և Տէ՛ զօրութեանց».

Ով է այս փառաց թագաւորը և զօրութեանց Տէ՛ ըր:

Դուքն եւ ք. «Եւ գհեշտակացն հանդիսավէս ընծայեալ բերեմք գլարգ».

Հանդիսաւոր կերպով կատարենք հրեշտակաց կարգաւորութիւնը:

Վահագից յետոյ Եպիսկոպոսն համբուրելով Ակհւոյ քողը, առնում է ընծայքը Սարկաւագի ձեռքից, խաչակնքում է նորանով ժողովրդի վերայ ասելով.

«Օքնեալ եկեալ անուածք Տեառն».

Օքնուած է Տիրօջ անունով եկողը:

Դուքն եւ ք. «Ալէլուեայ».

Օքնեցէք զԱստուած:

Իմաստասիրենք կարևանցի կերպով վերաբերման խոր-

հուրդը: Ինչպէս տեսանք Սարկաւագը ժողովրդեան դայեակն է, դաստիարակը, ուսուցիչը և վերակացուն. Սա քանի որ տես-

նում էր քահանային փառաւոր զգեստի մէջ և Քրիստոսի օ-

րինակաւ, յարդուում էր ժողովրդին առ Քրիստոս աղօթել. և

տեղեկացնելով ժողովրդին թէ քահանայի աղօթքն ու խընդ-

րուածքը ևս միեւնոյն բովանդակութիւնն ունին, ինչ որ ի-

շանցը, ուստի ստիպում էր նոցա կցորդ և Համաձայն լինել

քահանային: Բայց երբ տեսաւ Սարկաւագը որ Քահանան մեր- կացաւ իրանից Քրիստոսի կերպը կամ օքնակը և սպասաւորի

կամ պաշտօնէի կերպարանքը զգեցաւ Սուրբ: Սեղանի առաջ կամ հրեշտակի և պատգամաւորի պաշտօնն առաւ, իմացաւ որ խորհրդոյ կատարման ժամանակը հասաւ, ուստի երեխաներին,

թերահաւատներին, ապաշխարողներին, որոց մինչև այժմ ինքը գաստիարակում էր թէ ինչ և ինչպէս պէտք է աղօթել և խնդրել, որ իրանց մեղքից աղատուեն և Աստուծոյ ողորմութեսնը արժանանան. այժմ որ պէտք է կատարուի խորհուրդը. նոցա հրամայում է դուրս դնալ և ներկայ չիննել խորհրդին, այլ դուրսը ապաշխարել իրանց մեղքերը. որից լիտոյ ինքն իւր պաշտօնակիցների հետ միասին դղուշովթեամբ և պատով դնում է առ ընծայն և առնելով զայնո՛ նոյնպիսի զգուշութեամբ և պատուվ բերում է և յանձնում Քահանային ժողովրդի կողմից. իբր թէ առելով նորան դու եկար այս Սեղանոյ առաջ Աստուծոյ հետ խօսելու և խորհրդաբար աղօթելու այս ժողովրդեան վրկութեան համար. Ուրեմն հարկաւոր է որ այս ընծայից նուէրը կամ պատարագիքը Աստուծոյ առաջը դնես մեր կողմից. և որովհետև մենք քան զայն նախապատիւ և պատուական բան չունենք որ նշանակ լինի Յիսուսի Քրիստոսի և լինի յուշարար մեղ՝ նորա սուրբ լիշտակին, ուստի այս ենք բերում և յանձնում քեզ, քեզ՝ ո՞ր մեր կողմից առ Աստուած պատգամատոր նո և հրեշտակ. իսկ մենք՝ որ Սորա մարմինն ենք ու ոսկերքը, քեզ հետ միասին՝ որ մեր միջնորդն ես, հնագանդ ենք Նորան, ուստի ինչպէս որ այս ընծայքը տալիս ենք քո ձեռքի որ Աստուծոյ Սեղանի առաջն ես, նոյնպէս և ժողովրդեան կամքն ու խոստովանութիւնը յանձնում ենք քեզ. որ Աստուծոյ առաջ մեր վերակացուներն էք:

Այսպիսի խորհրդով Սարկաւագները ստանալով ժողովրդից պատարագի նուէրը, շքեզ հպատակութեամբ, խնկարկութեամբ և օրհնութիւններով առնում են ընծայարանից կամ խորհրդանոցից պատարագիքը, իբրև թէ ժողովրդի միջից և բերելով սուրբ խորանը. յանդիման Աստուծոյ, մատուցանում են պատգամաւոր Քահանային՝ որ ժողովրդի նուէրը ժողովրդի փոխա-

նակ նուիրէ Աստուծոյ. այսպէս ենք տեսնում և Քրիստոսից տնօրէնութիւնը, որովհետև աշխարհի միջից՝ որպէս թէ մեղանից խաչի վերայ պատարագ նուիրուեցաւ չօր Աստուծոյ ամենքի վորհանակ, որ սրբելով տիեզերքը մեղքից հաշտութիւն ձգէ չօր Աստուծոյ և մարդկան ազգի մէջ: Վերաբերումն ունի և այս խորհուրդը, որ բանն Աստուած, այն է Յիսուս Քրիստոս ո՞ր էր ՚ի ծոց չօր Աստուծոյ, հրեշտակաց ձեռքով կամ պատղամաւորութեամբ մարդկանց ընծայուեցաւ. այս նշանակութեամբ են քշշոցների ձայները, ամբողջ Եկեղեցւոյ քաղցր օրհներզութիւնները և զանդակի հնչիւնը. և որովհետև երևալուց լիտոյ Քրիստոս պէտք է պատարագուէր մարդկալին ազգի վրկութեան համար, ուստի և նոյն նմանութեամբ ընծայքը Սարկաւագներով է վերաբերումն, որ հրեշտակաց պաշտօնն են կրում, նոցա ձեռքով է երեւեմ ժողովրդին և ապա մատուցւում է Քահանային, որ սուրբ Սեղանի վերայ պատարագուի իբրև Մարմին և Արիւն Յիսուսի:

Երբ ընծայքը Քահանան դնում է սեղանի վերայ, անմիջապէս լուանում է մատների ծալրերը: Քահանայի ձեռաց լուացումը երկու անգամ է լինում հետեւալ խորհրդով. առաջին անգամը Եկեղեցւոյ բէմի առաջ ՚ի տես ժողովրդի լուանում է ձևոքերը, որով ոչ թէ լիրակի ձեռքի աղտն է լուանում, ոչ. այլ ձեռքերի լուացման օրինակաւ ցոյց է տալի ժողովրդին, թէ ինքը լուացում ու սրբւում է նոյնպէս մահացու և ծանր մեղքերից. իսկ այժմ որ մատների ծալրեն է լուանում Աստուծոյ առաջ, նշանակում է որ Աստուածային օգնութեամբ, Աստուծոյ տեսութեան լանդիման սրբւում է և ամենափոքր այսինքն թեթև և ներելի մեղքերիցն անգամ, որ արժանաւորապէս սպասաւորէ սուրբ խորհրդին. երկրորդ՝ Յիսուս խորհրդաւոր ընթերեաց ժամանակ նախ լուաց Աշակերտաց սուրբերը միայն ՚ի նշան մաքրութեան ներելի մեղքերից, որու-

պէս և ասաց, «Լուացելոյն չէ ինչ պիտոյ, բայց միայն ծայրիցն, զի գուք սուրբ էք»: Իսկ ծայրը նշանակում է՝ ամենա-
չնչին կիրքերը, որովհետև Քահանան արդէն սրբուած է բո-
լորովին իւր մեղքերից, իսկ այժմ՝ սրբում է և ամենաթեթև
մեղքերից. լուանալուց ինտոյ հաստատեց Յիսուս հաղորդութեան
սուրբ խորհուրդը, տալով նոցաքաղաք կամ անխօմոր հացը
իբրև իւր Մարմին՝ ասելով «Առէք կիրէք այս է Մարմին իմ»:
և անապակ կամ անջրախառն դինին՝ իբրև իւր Արլւն, ասելով
«Արբէք ՚ի դմանէ այդ է արլւն իմ նորոյ ուխտի»: Այսպէս և
Քահանան սրբուելով փոշատեսակ մեղքից կամ որ նոյն է սպի-
ներից կամ նշաններիցն, շուտով կսպասաւորէ: Էական խորհր-
դին. երրորդ՝ այսպիսի լուացմունք տեսնում ենք և հին ուխ-
տի Եկեղեցւոյ մէջ: այն է՝ Քահանայապետը Տաճարի գալթում
ուր էր լուացարանը՝ նախապէս լուացւում էր և ապա սրբուե-
լով ու մաքրուելով իւր մարմնական ախտից: մտնում էր Ար-
քութիւն սրբոց մասը, յանդիման լինել Տեառն: Զանազանու-
թիւնն այն է միայն, որ նոցա լուացմունքը լոկ մարմնաւոր
խորհուրդ դւնէր, իսկ մեր լուացմունքը՝ մարմնաւոր տեսակի
տակ հոգեւոր: Խորհուրդ է՝ պարունակում: նոցա լուացմունքը
էին ստուելք Քրիստոնէական Եկեղեցւոյ մէջը ընդունուած
այս ճշմարիտ լուացման:

ԺԱ. ԲԱԺԻՆ

ՈՂՋՈՅՆ

Յառաջ քան Ողջունի արարողութիւնը՝ Սարկաւագը՝ նա-
խապէս քարոզում է՝ ժողովրդին այսպէս:

«Եւ ևս հաւատով և սրբութեամբ կացցուք յաղօթս առաջի
սրբոյ Սեղանոյս Աստուծոյ, ահեւ, մի լսդիւ և գայթակութեամբ,

մի նենգութեամբ, խորածանկութեամբ, մի պատրանօք և խա-
քէութեամբ: Մի երկմտութեամբ, և ՚ի թերահաւատութեամբ.
այլ ուղիղ վարուք, պարզ ծտօք, միամիտ սրտիւ, կատարեալ
հաւատով, լցիալ սիրով, լի և առաւելեալ ամենայն գործովք
բարութեան, կացցուք յաղօթս առաջի սրբոյ Սեղանոյս Աստուծոյ,
և գոյցուք զողորմութեան զշնորհս յաւուք յատնութեան և ՚ի միւս
անգամ գալստեան: Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի,
կեցուացէ և ողորմեսցի:

Դարձեալ աղօթենք Աստուծուն Սուրբ Սեղանիս առաջ հաւա-
տով և սուրբ սրտով. երկիւղով աղօթենք. խղճմտանքը ար-
թուն, սուրբ և մաքրուր ունենանք և ոչ թէ անհանգիստ,
չգայթակղեցնենք մենք ուրիշներին և ուրիշներից ևս մենք
չգայթակղուենք. աղօթելու ժամանակ մեր սրտումը նենգու-
թիւն և խորածանկութիւն չունենանք և զգուշանանք որ ար-
տաքուստ աղօթասէր և Աստուծապաշտ ձևանալով՝ ուրիշնե-
րին չխաբենք, այլ ինչպէս արտաքուստ նոյնապէս և ներքուստ,
այսինքն սրտով, հոգւով և մտքով առ Աստուծած վերանանք
և հաւատով աղօթենք: Չտարակուսենք, չկամկածենք և ըր-
թերահաւատինք մեր աղօթքի մէջ, այլ աղօթենք ուղիղ ու
մուրբ վարքով, պարզ և յանակ մտքով, միամիտ և անխար-
դախ սրտով, կատարեալ և հաստատուն հաւատով, ջերմե-
ռանք և լի սիրով և ամենայն բարի գործքերով լցուած ու
առաքինութիւններով զարդարուած աղօթքի կենանք: Աստու-
ծոյ սուրբ Սեղանի առջև, որպէս զի Յիսուսի Քրիստոսի՝ մեր
Տէր և փրկչի միւսանգամ գալստեան օրը մենք ամենքս ար-
ժանի լինենք նորաողորմութեանը և շնորհին: Աղօթենք՝ որ
նա մեզ վիճէ և ողորմէ:

Այս Քարոզով Սարկաւագը կրամացում է ժողովրդին վա-
խով և սարսափով նայել սուրբ խորհրդին: ոչ հասարակ գոր-
ծողութիւն կամ լոկ արարողութիւն կարծելով՝ այլ հաստատա-
պէս հաւատալով որ Յիսուսն է պատարագւում սուրբ Սեղանի

վերայ. Ուստի և պատուիրում է որ ժողովուրդը հաւատայ և ոչ թէ կասկածէ. և ամենատեսակ մեղքերը իրանից հեռացնէ, ոչ մի բանի վերայ չմտածէ և ոչ մի բան զիշէ. այլ պարզ և միամիտ տղային աչքով նայէ և նորա սրտով հաւատայ, առանց կառկածանքի մի որ և իցէ նշան ցոյց տալու իւր սրտի մէջ. Որպէս աչքերը անթարթ դէպի Սուրբ Անդանը՝ նոյնպէս և միտքը սիրտն ու հոգին անզբաղ դէպի Աստուած վերուղիլու հրամանն է տալի Սարկաւագը:

Աւրեմն եթէ մտքի, սրտի և հոգւոյ մասին, որ անտեսանելի են, Սարկաւազի հրամանը այսքան խիստ է, որքան սպառնալիք և պատլիժ կլինի ուրեմն նոցա՝ որոնք Սուրբ Խորհրդի կատարման ժամին հակառակ Սարկաւազի զգուշացուցիչ հրամանին՝ որ ասում է. «Մի խղճիւ և գայթակղութեամբ»։ Կամ խօսում են և ծիծաղում միմեանց հետ թէ իրենք գայթակղութեալ և թէ ուրիշներին գայթակղեցնելով և կամ ձեռքերը մէջքին են դարսած և կամ նստած են ծունկ ծնկան վերայ ծալած։ Հարցանում ենք, այսպիսիները իրենց ներկայութեամբ ինչ յարգանք են մատուցանում Սուրբ խորհրդին և կամ ինչ օգուտ են սպասում իրենց այս օրինակ անգոյն և անկերպարան ներկայութիւնից։ Եթէ մեզանից իւրաքանչիւր մի խելացի անհատ կամելով յարգել իւր բարեկամը, կամ ծանօթը, կամ սիրելին՝ շատ անգամ գուցէ և միշտ և ամեն դէպքում զիջանում է իւր բարեկամի շահերին, պաշտպանելով իրենց բարեկամութեան յօդակապը այն է փոխադարձ սէրը, ինչու ուրեմն այդպիսի խելացիները չեն յարգում ամենայն յարգանաց արժանի այն մեծ և մարդասէր Աշխարհաքրիչը, որ սրսերի և հոգիների անզուգական Դաստիարակն է և վերջապէս աշխարհի ստեղծողը, կեանքի և մահու Տէրը՝ որոյ մեծ վրկագործութեան Յաւլտենական Յիշատակի խորհուրդն է կա-

տարւում սուրբ Սեղանի վերայ: Չեմ կամենում ասել, բայց և
պարտաւոր եմ համարում ինձ դատաստանին՝ եթէ բռեմ. այդ-
պիսի արհամարդուները նման են Տիրանենդ, գալաճան և մատ-
նիչ Յուղալին և դատաստանի տակ են. և թէ այդպիսիները
պատրապի ներկայութիւնից փոխանակ օգտի՝ տանում են ի-
րենց հետ իրանց՝ և իրանց սիրելիների ու բարեկամների հա-
մար վնաս, պատիժ, պատուհաս, հիւանդութիւն և մահ. լը-
սողը թող լսէ:

Սինէդեռ. Սարկաւազը այսպիսի զգուշութիւն և նախապատրաստութիւն է քարոզում ժողովրդին՝ Քահանան խորհրդաբար աղօթում է առ Հայրն Աստուած այսպէս.

«Տէ՛ր Աստուած զօրութեանց և արաբիչ ամենալին լինելու-
թեանց, որ յանձութենէ զբնաւս ՚ի ցուցականութիւն ածեալ գոյա-
ցուցեթ. որ և զմեր գհողեղին բնութիւնն պատուեալ ՞արդասիրա-
պէս՝ այսպիսի ահաւոք և անպատում խորհրդոյ կարգեցեր սպա-
սաւորս. գու Տէ՛ր՝ որում պատարագեմք զալատարագիս, ընկալ առ
՚ի մէնջ զառաջադրութիւնն զայս, և աւարտեան զաս ՚ի խորհրդա-
կանութիւն մարմնոյ և արեան Միաձնի քոյ, դեղ թողութեան
ժեղաց պարգևեա Ճաշակողացս զհացս զայս և զբաժակոյ»:

Գոյւ Տէր՝ որ երկնալին զօրութեանց Աստուածն եւ և բոլոր ալբարածոց Ստեղծողը. որ ամենայն ինչ ոչնչից դուքս բերելավ ստեղծեցիր. իսկ մեր հոգեղին բնութիւնը Քո մարդասիրութեամբը այնքան պատուեցիր՝ որ այսպիսի ահաւոր և անպատճելի խորհրդին սպասաւոր կարգեցիր. իսկ այժմ Տէր՝ Քեզ եմք մատուցանում այս պատարագիքը. ընդունիր մեր ձեռքով Քո առաջը դրած այս ընծայքը և Քո Միածին Արդւոյ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մարմնոյ և Արեան խորհուրդը սորա վերայ կատարէ. և կամեցիր, որ այս Հացը և Բաժակը մեղքի թողութեան դեղ լինի մեզ ճաշակողներիս:

Քահանալի այս աղօթքի լիմասոն է հետևեալը. Հարկաւոր է զիտենալ որ մարդկանց և ամենայն արարածոց վերայ

եղած Աստուածային նախախնամութիւնը, մեր հողեղէններիս բերանով չի պատմուի. կան դէպքեր՝ որոց մէջ նկատում ենք գոզես Աստուծոյ խորհուրդը և սակայն շատ և անթիւ դէպքերում ևս Աստուծոյ խորհուրդը մնում է մեզ համար յաւիտենական անլուծանելի գաղտնիք. Սակայն այն խորհուրդները՝ որ մենք ճանաչեցինք և այն բարիքը՝ որ մենք ստացանք, պէտք չէ որ անբանի նման և անշնորհակալ կամքով ընդունենք, այլ այն ամենայն բարեաց փոխարէն, որովհետև ոչինչ չունենք տալու՝ գոնէ իբրև մեզ յատուկ հատուցում՝ պէտք է տանք մեր գոհութիւնը և օրհնութիւնը ըստ սաղմուերգուին «Զինչ տաց տրիտուր Տեառն ըստ ամենայնի դոր և ետ ինձ. Զբաժակ փրկութեան ընկալաց և զանուն Տեառն կարդացից. Զաղօթս իմ տաց առաջի ամենայն ժողովրդեան, ՚ի գաւիթս տան Տեառն և ՚ի մէջ քո՛ Երուսաղէմ». Ի՞նչ հատուցանեմ իմ Տէր Աստուծուն, փոխանակ այն ամենայն բարեաց՝ որ ինձ պարզեց: Փրկութեան բաժակը կստանամ նորանից և նորա անունը կօրհնեմ. իմ աղօթքս կտամ նորան, Նորա բոլոր ժողովրդեան առաջին, Աստուծոյ տան դաւթումը և քո մէջ՝ ով Երուսաղէմ: Այս մտքով ահա քահանան Աստուծոյ առաջն է գնում և Նորա յանդիման կանգնած՝ լիշում է Նորա սու մարդիկ ունեցած նախախնամութիւնը և ցոյց տուած բարիքը և Երախտիքը և փոխարէնը՝ գոհութիւն և շնորհակալութիւն է մատուցանում. Աստուծոյ ամենքի կողմից: գիտենալով և հաստատ հաւատալով որ Աստուած սիրով է ընդունում այդպիսի գոհութեան և շնորհակալութեան պատարագը, ըստ այնմ «Մատու Աստուծոյ պատարագ օրհնութեան». մանաւանդ որ Աստուած հոգմոր փառատրութիւն է պահանջում իւր երկրպագուներից, ուստի Քահանան յանդիման լինելով Աստուծուն: ասում է «Տէր Աստուած գորութեանց» աղօթքը, լիշելով որ Նա Տէր է երկնաւոր գորութեանց, ալմինքն Հրեշ-

տակաց, որոնք լսում են Նորա պատգամները և կատարում են Նորա Հրամանները, որոնք գիտեն Նորա խորհուրդները ըստ արժանաւորութեան իւրաքանչյւր աստիճանի, որոնք պատրաստ են Աստուածային կամքը և բարիքը՝ ի մարդիկ իշեցնել, մարդկանց աղօթքը, խնդրուածքն ու օրհնութիւնը առ Աստուած բարձրացնել և մարդկանց օգնական լինել բարիքործքերի մէջ, ըստ այնմ. «Ո՞չ ապաքէն ամեննեքին հոգիք են հարկաւո՞ք՝ որք առաքին ՚ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որ ժառանգելոց են դիրկութիւն. Բանակ Հրեշտակաց. Տեառն շուրջ է զերկիւղածովք խրովք և պահէ զնոսա». Նոյն Հրեշտակաները իրանց դասակարգութեանց աստիճանաց. համեմատ անդադար օրհնում են զԱստուած ըստ այնմ. «Օրհնեցէք ըգ-Տէր, ամենայն գորութիւնք նորա, պաշտօնեալք և արարողք կամաց նորա. Օրհնեցէք գՏէր, ամենայն Հրեշտակալք նորա Հրդորք գորութեամք, ոյք առնելք զբան նորա. ՚ի լսել ձախնի պատգամաց նորա». Հրեշտակաց մասին լիշելուց յետոյ, անցնում է լիշել և պարարածոց մասին ասելով: «և արարիչ ամենայն լինելութեանց».. որպէս թէ կամելով ասել. Տէր Աստուած՝ որ երկնային հոգեղէն է ակալաց, այն է Հրեշտակաց Տէրն ես և բոլոր արարածոց Արարիչը՝ ոչ թէ ստեղծել ես միայն՝ այլ և միշտ ինամում ես և կառավարում. թէպէտ Հրեշտականերին Տէր ես անուանում և նոցա Քեզ պաշտօնեալ կամ ծառայ ես կոչում. այլ որովհետև բարիք և իմաստուն ծառան գոնէ մասամք կարող է գիտենալ իւր տիրոջ կամքը, վասնորոյ և մեղ. Արարիչ անուանուեցար և զմեզ Քո արարած անուանեցիր՝ սակայն և այնպէս այնքան մարդասէր գտնուեցար ՚Դէպի մեզ, և այն աստիճան պատուեցիր մեզ՝ որ բոլոր գոյացութեանց մէջ մարդուն միայն համարեցիր արժանի Քո խորհրդոյդ խորհրդագած լինելու. ուրեմն մեզ ևս գրէթէ Հրեշտակաց պատուին հասցըիր փոքր ինչ պակաս նոցանից,

տալով մեզ իրաւունք որ Քո խորհուրդներդ ճանաչենք, որոնք
մեզ հասու են Քո կամքով, և երբ այս կեանքից յստոյ Յի-
սուսիւ կրկին կըսրոգուենք՝ Քո անզուգական շնորհը կվայե-
լինք և Քո անպատում խորհուրդներդ կհասկանանք: Յետոյ
խնդրում է Քահանան որ Աստուած Սուրբ Սեղանի վերայ
դրուած ընծաւքը՝ այսինքն Հացն և Գինին իւր Միածնի Մար-
մոյ և Արեան խորհրդովն աւարտի, ոչ թէ միս ու արիւն
փոխէ, որ զդալի աչքերով տեսնենք, այլ խորհրդականապէս
փոխէ, որ հաւատով և մտքով միայն կտեսնենք, այդ պատ-
ճառով էլ ասում է. «Աւարտեա զսա ՚ի խորհրդականութիւն
մարմնաց և արեան Միածնի Քո»: Որովհետև շուտով կատա-
րուելու է միտխարկութեան խորհուրդը: Որպէս զի այն Հացն
ու Գինին խորհրդականապէս ՚ի Մարմին և Արիւն Տեառն
փոխուելով լինեն մեղքերը առողջացնող գեղեր. «գեղ թողու-
թեան մեղաց պարզեեա ճաշակողաց զհաց զայս և զրաժա-
կը»: Այժմ խորհրդածենք փոքր ինչ թէ ինչու Քահանան որ
մինչեւ ցայժմ առ Յիսուսն էր զիմում, այժմ այս և սորան
էետևող աղօթքներով դիմում է առ Հայրն Աստուած:

Հարկաւոր է դիտենալ Աստուծոյ ասած խօսքը մարդկանցը օգնելու և նոցա մօտիկի լինելու պատրաստականութեան մասին որ ասում է «Աստուած մերձաւոր եմ ես և մերձեցարուք առ իս և ես մերձեցաց առ ձեզ». սակայն Աստուծոյ այս մերձաւորութիւնը ոչ թէ էութեամբ պէտք է հասկանալ, այլ դօրութեամբ. ըստ որում գԱստուած կարող չենք տեսնել և շօշափել զգալապէս, պատճառ որ անսահման դօրաւոր է, ինչպէս գօրաւոր են արեգակի ճառադացացթները, որին տկար աչքերը չեն կարող նայել. այսպէս և մենք հողեղէնքս չենք կարող մեր զգալի աչքերով գԱստուած զգալապէս տեսնել, այլ մտօք միայն կարող ենք հասկանալ նորան, իսկ իրականապէս՝ ստանալ նորա Հայրական կամքի քաղցրութիւնը, նորա բարիքը և

ողորմութիւնը: Ուրեմն Աստուծոյ մերձաւորութիւնը Աստուածալին գօրութեան շնորհօք և ողորմութեամբ պէտք է հասկանանք և ոչ էութեամբ. կամ զդալապէս: այս մտքով է ասած մարդարէի խօսքը՝ «թէ ելանեմ լերկինս՝ դու անդ ես և եթէ իջանեմ ՚ի դժոխութեամբ անդ մօտ ես և եթէ թուչեմ ցեղերս ծովու և անդ ձեռն քու տիրէ ինձ». Եթէ բարձրանամ երկինքը, ասում է մարդարէն, դու այստեղ ես. խակ եթէ իջնեմ դժոխուքը՝ այստեղ էլ մօտ ես. և եթէ ծովի ափերը թուչեմ.. այստեղ ևս քու ձեռքդ ինձ վերայ է և ես քու ձեռքի տակն եմ: Աստուծոյ այս մերձաւորութիւնը թէպէտ ոչ խոկական նմանութեամբ, սակայն և այսպէս կարելի է պարզել այս մարմնական տկար օրինակով. թագաւորները՝ բնութեամբ կամ էութեամբ նստած են իրանց զահողից վերայ պալատան մէջ և բակայն նոյն թագաւորները իրենց գօրութեամբ և օրէնքներով երևում են և հեռաւորներին և նոցա կամքը ներդործում է իրենց հպատակ ժողովուրդների վերայ: Նոյն թագաւորները միջնորդ սպասաւորների ձեռքով խօսում են իրենց ժողովուրդների հետ, սիրում են նոցա, սպասնում են նոցաք բարիք են պարզեւում նոցա և կամ դատաստանաւ պատժում են նոցա և ալլան. Այս տկար օրինակը մէջ բերելու նպատակն էր բացատրել Աստուծոյ մերձաւորութիւնը առ մարդիկ. տկար է այս օրինակը որովհետև թագաւորները անկարող են իրենց հպատակներից իւրաքանչյւրին առանձնապէս մօտենալ, գիտել, ճանաչել, տեսնել և ալլան. այն ինչ այդ ամենայն հնարաւոր է, պարզ է և հեշտ է. Աստուածապէին իմաստութեան, ամենատես գիտութեան և ամենակարողութեան առաջ: Այսպէս էր. Աստուծոյ մերձաւորութիւնը առ մարդիկ մինչեւ Ցիսուսի մարմնանալը ապա կամեցաւ Աստուած իւր ծածկեալ խորհուրդը յայտնել երկնաւորներին և երկրաւորներին, այն է կամեցաւ որ իւր Միածին Որդին ոչ թէ զօրութեամբ՝ այլ խկութեամբ ծնի Աբրահամու

զաւակներից, որպէս զի մեղքի սրբողը սրբւողներին մերձ լինի. կամեցաւ որ մարմնաւորապէս տեսանելի լինի մեզ անտեսանելին. և մեր բնութեան ամեն կրիցը հաղորդակից, որպէս զի նորան ունենանք, չօր Աստուծոյ առաջ միջնորդ և բարեխօս: Այսպէս մենք մարդիկս գՔիցստոս մեզ բնութենակից և չարչարակից ունելով նորանով ենք միայն վստահանում յանդիման լինել Աստուծոյ առաջ. ուստի և նորանով չօր Աստուծոյ հետ ենք խօսում. իսկ գՅիսուս իբրև վշտակից մեզ՝ Աստուծոյ մօտ մեզ համար բարեխօս ենք բոնում և նոյնը իբրև ընծայ նուիրում ենք չօր, որ և ընդունում է իւր սիրելի Որդւու այս հաշտութեան պատարագը և նուէրը և 'ի սէր իւր Միածին Որդւոյն 'ի գութ է շարժւում մեզ վերայ, շնորհելով մեզ բարեք, ողորմութիւն, շնորհք և թողութիւն:

Յիսուս սորվեցրեց մեզ իւր անուամբ խնդրել հօրից մեր բոլոր կարեաց համար, վստահացնելով թէ. «Զամենայն զոր ինչ խնդրիցէք յանուն Որդւոյ ՚ի չօրէ տացի ձեզ». Այժմ խօսենք թէ Որդւոյ անուամբ խնդրելը բնչպէս պէտք է հասկանանք. «ոչ թէ պէտք է բաւականանաք միայն ասել թէ Տէր Աստուած Քո Միածին Որդւոյ՝ Յիսուսի անունով մեզ ողորմիր. ոչ. այլ պէտք է լիշել Աստուծոյ սկզբնական բարիքը՝ որ վայելում էին նախաճնողք դրախտի մէջ, նոյն պատուիրանազանցութիւնը՝ որով ամբողջ մարդկալին ազգը ընկաւ մեղքի մէջ և դատապարտութեան տակ. յետոյ լիշելու է Յիսուսի մարդանալը և ամբողջ փրկագործութիւնը՝ այն է չարչարանքը, խաչը և մակը՝ որովք փրկեց մարդկալին ազգը մեղքից և դատապարտութիւնից. պէտք է լիշէ աղօթողը և իւր գործքերը, խորհուրդները և խօսքերը որոնք այս օրինաց ընդդէմ գործած է, և որոնցից չարը և վնասակարը ջնջելով իր մտքից՝ օգտակարը և բարին պատրաստուի գործադրել: Երբ աղօթողը մեր ցուց տուած ձեռվ կիշէ Յիսուսի անունը՝ պէտք է չկասկածէ ա-

զօթքի կատարմանը, որովհետև այս է լիշելու կատարեալ ձեր, և ոչ լոկ և անխորհուրդ լիշտակութիւն Յիսուսի անուան:

Այս է պատճառը, որ քահանան իւր խորհրդական աղօթքը չօր Աստուծոյ է մատուցանում Որդւոյ միջնորդութեամբ զսուրբ՝ չողին գործակից ունելով:

Այս աղօթքի վերջին մասը քահանան բարձր ձայնով է ասում այսպէս:

«Ենորհօք և մարդասիրութեամբ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի, ընդ որում Քեզ Հօր միանգամայն և Հոգուցդ սրբոյ վայել է վառք իշխանութիւն և պատիւ այժմ և միշտ և յակտեանս՝ յաւետենից. ամեն».

Այսինքն ով չալր սուրբ, իմ բոլոր աղօթքս ու խընդրուածքս որ Քեզ մատուցի, չէ թէ իմ անձնական արժանաւորութեան վերայ վստահանալով մատուցի, ոչ. որովհետև ես իբրև մարդ Հողեղէն և 'ի մեղս ծնեալ, չեմ բաւական Քո ահաւոր կերպարանացդ առաջը կանգնել և Քեզ հետ խօսել, այլ ես այս վստահութիւնը ունեցայ և այս համարձակութիւնը ստացայ միայն Քո Միածնի և մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքով. և մարդասիրութեամբը:

Որովհետև սորիանահետևում է սրբութեան ողջոյնը, ուստի Քահանան դառնալով դէպի ժողովուրիդը ասում է.

«Խաղաղութիւն ամենեցուն».

Այսինքն թէ՝ որովհետև թերահաւատաները, ապաշխարողները և անմաքուրները դուրս գնացին իբրև անպատճատներ և անարժաններ սուրբ խորհրդին ներկայանալու համար. իսկ գութք՝ սրբեալք և մաքրեալք, որ ներկայ էք սուրբ խորհրդին՝ տայիս եմ ձեզ Աստուածային ողջունի խաղաղութիւնը, որ սէր և խաղաղութիւն ունենաք առ միմեանս և եղբայրական սիրոյ ողջունիւ յօդաւորուիք կամ միանաք միմեանց հետ այնպէս, ինչպէս Քրիստոս անբաժանելի միացած է Եկեղեցւոյ հետ: Քահանայի տուած այս խաղաղութիւնը ժողովուրդը ցանկա-

նում է և Քահանալին. ասելով իւր սովորական խօսքը.
«Եւ ընդ հոգւուց քում».

Սարկաւագը հրամայում է ժողովրդին Աստուծուն երկրպագութիւն տալ. ասելով.
«Աստուծոյ երկրպագեսցուք».

Որի հրամանը ընդունելով ժողովուրդը՝ պատասխանում է.
«Առաջ քո Տէր».

Արինքն Քեզ ենք երկրպագանում Քո առջև ավ Աստուծած:
Սորանից յետոյ Սարկաւագը միմեանց ողջունելու հրամանն է
տալի այսպէս.

«Ողջոյն տուք միմեանց Դի համբոյս սըբութեան և որք ոչ
էք կարողք հազորդել Աստուծածին խորհրդոյս, առ դքունս ելքը
և աղօթեցէք»:

Միբութեան համուրիւ ողջունեցէք միմեանց և ով որ ձեզ
աղանից չէ կարող՝ այսինքն չունէ արժանաւորութիւն և պատ-
րաստութիւն մասնակից լինելու Աստուծային խորհրդին, թող
դուրս գնայ և այնտեղ աղօթէ:

Սարկաւագի այս ազդարարութեան միջոյին Քահանան
Ակնոյ քողը կէս բաց է անում և ընծայն այսինքն նշխարը
կիսով չափ երեսում է և ինքը Սեղանի աջ կողմը թէկ կանգ-
նած և ձեռնամած ասում է Սարկաւագին՝ որ համբուրում է
Սեղանը և նորա աջը».

«Ողջոյն քեզ՝ Քրիստոս ՚ի մէջ մէր յայտնեցաւ».

Սարկաւագը պատասխանում է.

«Օրհնեալ է յայտնութիւնն Քչիստոսի».

Եւ իշնելով ցած՝ Քահանալից ստացած ողջոյնը տալիս է
Եկեղեցական ուխտին և նոքա ժողովրդին: Այդ միջոցին դպիր-
ները երգում են Ողջունի երդը.

«Քրիստոս ՚ի մէջ մէր յայտնեցաւ, որ ինն Աստուծած աստ
քազմեցաւ, Խաղաղութեան ձայն հնչեցաւ, ուուրք ողջունի հրաման
տուաւ, Եկեղեցիս մի անձն եղեւ, համբոյս՝ յօդ լըման տուաւ,
թշնամութիւնն հեռացաւ, սէրն ընդհանուրս սիւեցաւ: Արդ պաշ-

տօնեայք՝ բարձեալ զձայն, տուք օրհնութիւն ՚ի մէք բերան,
միասնական Աստուծածութեանն որում սեռովբէքն են սրբաբան».

Քրիստոսը յայտնուեցաւ մեր մէջն, որ ին Աստուծը այս-
տեղ է բազմած, խաղաղութեան ձայնը լսեցինք. Սուրբ ողջունի
հրամանը առանք. Եկեղեցին մի անձն եղաւ և սիրոյ համ-
բոյը միութեան կատ ընդունեցինք. թշնամութիւնը հեռացաւ
և սէրը մեր մէջ տարածուեցաւ. Ուրեմն ով պաշտօնեաներ,
ձայներդ բարձրացրէք և միասնական Աստուծութիւնը միա-
բերան օրհնեցէք, ինչպէս երգում են սերովբէքը, սուրբ, սուրբ,
սուրբ երգով:

Ողջունի խորհուրդն այս է. որ ինչպէս Եկեղեցու ամե-
նայն բարեձեւութիւնը հոգեսոր է և մարմնաւոր, որովհետև մարմ-
նաւորը պէտք է լինի հոգեսորի ապացոյցը և արտաքին զրաւա-
կանը, սոյնպէս է և ողջունի ձեւը, որով ժողովուրդը մարմ-
նաւորապէս ընդ միմեանու միանալով ցոյց են տալիս և իրանց
հոգեւորապէս միաւորութիւնը և հաւասարութիւնը, ըստ այնմ
«Եր բազմութիւն հաւատացելոցն սիրտ և անձն մի» հաւա-
տացելոց բազմութիւնը մի անձն և մի սիրտ ունէք. Աստեղի
համար է հասկանալու Յիսուսի խօսքը թէ «Եթէ մատուցանի-
ցես զպատարագ քո առաջի Սեղանոյն, և անդ լիշեսցես եթէ
եղբայր քո ոնի ինչ խէթ դքէն. թող զպատարագն քո ա-
ռաջի Սեղանոյն, Երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում և ապա
եկեալ մատուծիր զպատարագ քո»: Յիսուսի խօսքը այսպէս է
հասկանալու, որ պատարագի ժամանակ, եթէ մէկը իշշէ որ
իւր ընկերը նեղացած է իրանից և ոխ ոնի իւր դէմ և կամ
եթէ ինքը զրկած է իւր ընկերօջը կամ բարեկամին և կամ
մինչև լիսկ թշնամուն և ունի նոցա հետ կամ դրամական և
կամ մի այլ հաշիւ և չէ վերջացրած, այնպէս որ իւր սիրտն
էլ անհամովիստ, նոցա սիրտն ևս վիրաւրուած ուստի պէտք
է լիշէ Սարկաւագի առաջուայ հրամանը որ ասաց «մի խղճիւ

և գալթակղութեամբ»։ և այդպիսի անհանգիստ խղճմտանքով և գալթակղութեով պէտք չէ կանգնէ և ներկայ լինի սուրբ խորհրդին, այլ դեռ պէտք է դնայ հաշտուի, որովհետև հաշտութիւնն է սիրոյ ապացուցը, պէտք է խղճմտանքը հանգստացնէ և ասպա ներկայանայ և մասնակից լինի սուրբ խորհրդին, որովհետև Յիսուսի նշանաբանն է Սէրը, Սէր առ Աստուած, Սէր առ ընկերն, եթէ այս սէրը չունենանք՝ ոչ մեր աղօթքը կլսէ Աստուած և ոչ մեր ողորմութիւնն ու բարեգործութիւնը կընդունէ նոյն Աստուած։ Այս սիրոյ մասին այսպէս է վկայում Պօղոս Առաքեալը. «Եթէ զիեզուս մարդկան խօսիցիմ և զէրեշտակացն, և զսէր ոչ ունիցիմ եղէ ես որպէս զպղինձ՝ որ հնչէ և իբրև զծնծզայ՝ որ զօղանջէ»։ այսինքն եթէ մարդկային զանազան լեզուներով էլ խօսելու լինիմ և մինչև անգամ հրեշտակների պէրճ լեզուվ ևս բարբառեմ և սակայն դէպի ընկերը սէր չունենամ՝ այն ժամանակ ես կնմանուեմ դատարկ պրնձին և ծնծզալին և իմ խօսքերս կնմանուին նոցա անխորհուրդ ձայնին։ Ահաւասիլ այսպիսի սիրոյ համբոր է. որով ողջունելով միմեանց՝ լինում ենք մի սիրու և մի հոգի, հանում ենք սրտերից ամենայն ոխ, նախանձ, թշնամութիւն և սպասում ենք սուրբ խորհրդի շնորհացը արժանանալ, լսկ որոնք թշնամական յարաբերութեանց մէջ են իրանց ընկերների հետ և իրանք իրանց խղճի առաջ առդարչ չեն, զգում են որ իրանք արժանի չեն, շատ խոհեմութիւն կանեն որ Սարկաւադի հրամանին համաձայն դուրս գնան Եկեղեցուց և կամ դեռ Եկեղեցի չեկած իրանց հաշիւները վերջացնեն, այն է՝ եթէ մշակի վարձը դեռ ևս իրանց մօտ է՝ հատուցանեն. եթէ ուրիշն պարտ են և ժամանակին է՝ վճարեն. եթէ մէկի հետ կոռաւած են մի որ և լոյն առութիւն հաշտուեն. եթէ մէկին անիրաւութեամբ զրկած են՝ զրկանքը յետ դարձնեն. եթէ մինչև անգամ զրկողութեան, յափշտակութեան,

թշնամութեան և այլ զանազան տեսակ անիրաւութեանց մըտքեր ու խորհուրդներ ունեն ապագայումը կամ մի քանի օրից յետ դորձ դնելու՝ մտքից ու սրտից խսպառ հանեն և մոռանան. միով բանիւ յարգեն, մեծարեն և պատուեն Յիսուսի Զարչարանաց խորհուրդը, որպէս զի ժամանակին և իրանք յարգուեն յարգանքի և մեծարանաց Տիրոջից, լսկ եթէ առ ոչինչ համարեն Սարկաւագի հրամանը և յամառութեանմբ կըյանդին դարձեալ ներկայ լինել սուրբ խորհրդին նոյն անպատրաստ պարմաններով՝ որպիսիքը մենք յիշեցինք, յայն դէպի իրանք կլինեն իրանց անպատրաստութեան պատասխանատուն. դա բնական է. Սակայն և այնպէս պարտականութիւնը ստիպում է աւելի ևս պարզել մեր խօսքերը, որ կարդացողին աւելի հասկանալի լինի. Ռւստի մէջ բերենք այստեղ Աւետարանական պատմութեան մի փոքրիկ հատուած, որ լրուելու ականց ունեցողները՝ կարգան և զգուշանան։ Երբ Յիսուս իւր մարմնաւոր կեանքի վերջին օրերին ուտում էր Գատկական դառը իւր աշակերտաց հետ Աւագ Հինդշարթի օրը, որ ժամանակ և հաստատեց սուրբ Հաղորդութեան խորհուրդը, Հացը և Փինին օրհնեց և տուեց աշակերտներին և ասաց «Առէք կերը՝ այս հացը՝ դա իմ Մարմինս է և խմեցէք այս բաժակիցը՝ դա իմ Արլիւնս է.» Յիսուս դիտէր որ իւր աշակերտներից մէկը՝ այն է Յուղան իրան մատներու էր, առկայն նորան զգրկեց իւր շնորհքից, որոշեալ ժամանակին նա իւր մատնութեան հաշիւր կտոր ՚ի հարկէ. Յիսուս՝ Յուղալին ևս, ինչպէս և միւս աշակերտներին, սիրով բաժանեց Հացը և զինին իւր Մարմնու և Արեան խորհրդով. բաց տեսնելով Ամենատեսնը, որ նորա սրտի մէջ վառ է և անշիջանելի մատնութեան փափազը, որ յառաջ էր եկած արծաթսիրութիւնից կամ ազահութիւնից՝ ուտուի իրը և Ողորմած Տէր և բարի Ռւսուցիչ կամեցաւ նորան զգաստացնել, զգուշացնել, սիրով յանդիմանել, հեռացնել նորան

մատնութեան չարագործութիւնից, որ ունէր նա իւր մտքումը նոյն զիշերը կատարելու և ասաց բալոր աշակերտներին միասին թէ «Մի ո՞մն ի ձէնց մատնելոց է վիս». Ամենքը սկսեցին մէկ մէկ հարցանել «միթէ ես իցեմ Տէր», Յուղան այնքան կարացած էր երեսուն արծաթից կամ ագահութիւնից որ իւր Տիրօջ խօսքերը փոխանակ ՚ի խրատ և ՚ի զգուշութիւն ընդունելու, փոխանակ խղճահարուելու, արթնանալու, զգաստանալու, խապաւ մերժելու իրանից իւր մատնութեան չար խորհուրդը՝ ընդ հակառակը այնքան յանդուզն էր դարձել փաղի սիրուց, որ չսարսափեց իւր Տիրօջից, որին՝ շատ լաւ զիտէր որ յայտնի են ոչ միայն իւր չար խորհուրդը, այլ և ընլոր մարդկանց սրտերը և ամենայն զադտնիք, բայց չամաչելով, ոչ իսկ մազի չափ անգամ խղճահարուելու՝ ժամանակնութեամբ ինքն ևս միւսների նման հարցընց «միթէ ես իցեմ Տէր». և Յիսուս տեսնելով որ խորհրդաբար և սիրով զգուշացնելը նորան չներգործեց, նա մնաց նոյն անզիգջը, ուստի և բաց պատասխան տուեց նորան թէ «Փու ասացեր». և ապա հրաժարեց նորան իւր աշակերտաց խմբից ասելով. «Ե՛թ, զոր ինչ առնելոց ես արա վաղվաղակի». Սորանից հետեւացնում եմ որ Յիսուսի Մարմինը և Արիւնը նոյնն էր բալոր Առաքելոց համար. Տասն և մէկի համար այն սուրբ հաղորդութիւնը եղաւ շնորհը, ողորմութիւն, մեղքը թողութիւն և ամենայն բարիք. այն ինչ Յուղալի համար՝ եղաւ դատապարտութիւն, պատուհան, յուսահատութիւն, մահ և վերջին պատասխան՝ վերջին դատաստանի համար պահուածած: Ուրեմն ինչպէս զգուշացրեց Յուղալին Յիսուս, ասելով աշակերտներին թէ. «Զեղանից մէկը ինչ պէտք է մատնէ» նոյնպէս և Սարկաւագը զգուշացնում է ժողովրդին, որպէս զի չինքն այնպիսին մարդութիւն՝ որոնք Յուղալի նման յանդունեն, իւր խօսքերը բանի գեղ չգնելով անարժանութեամբ և անպատճառ բոլորովին մասնակից լինեն Սուրբ խորհրդին. Ո-

րոց համար աւելի օգտակար և բարոք էր գուրս գնալ և ապաշխարել. հակառակ գէպքում արդէն մեզ յախնի պատասխանաւութեան տակ կմնան. այս է Սարկաւագի հրամանի խորհուրդը:

ԺԲ. ԲԱԺԻՆ

ՄՐԲԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Աղջունին հետեւում է սրբագործութեան արարողութիւնը Սարկաւագի այս քարոզով.

«Ահեւ կացցուք, երկիւզիւ կացցուք, բարոք կացցուք և նահեցարուք զգուշութեամբ».

Վախով և երկիւզով կենանք, բարոք պարկեշտութեամբ, զգաստութեամբ և ակնածութեամբ կենանք և զգուշութեամբ նաևնք:

Սարկաւագի հրամանին համաձայն ժողովուրդը գվիրների բերանով աղաղակում է.

«Առ Քեզ Ասուած».

Այսինքն մեր ուշադրութիւնը դէպի քեզ է ուղղուած Տէր Ասուած մէր:

Սարկաւագը դարձեալ քարոզում է ժողովրդին զգուշութեամբ և երկիւզով կենալով պատճառը յախնելով այսպէս.

«Պատարագ Քրիստոս մատչի գառն Ասուածոյ».

Այսինքն իմացէք, իմ աղդաբարութեան պատճառն այն է, որ այժմ Քրիստոս գառն Ասուածոյ մեր փրկութեան, մեր մեղաց թողութեան և մեր բարեաց համար, պէտք է պատարագուի սուրբ Սեղանի վերայ:

Ժողովուրդը զմայելով Յիսուսի այս անչափ և անսահման սիրով, որ իւր մեղաց համար յանձն առաւ պատարագուելու և

գոհուելու, ուստի երախտաղաց սրտով պատախանում է Սարկաւագի աղդաբարութեանը այսպէս.

«Ողոքութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան».

Այսինքն թէ այս դաստիարակի մեր և հայր, հաւատում ենք որ այս պատարագը օրհնութեան պատարագ է և մեզ ողոքութիւն և խաղաղութիւն պարզելու պատարագ է:

Քահանան մխիթարուելով ժողովրդի այսպիսի պատրաստականութեան համար օրհնում է նոյս ասելով.

«Նորհը, սէր և Աստուածային սրբարար զօրութիւնն Զօր և Ուղույ և Հոգուուն Սրբոյ, Եղեցի ընդ ձեզ ընդ ամենեսեան».

Այսինքն Հօր, Որդուոյ և Սուրբ Հոգուոյ Ճնորհքը, Սէրը և Աստուածային սրբարար զօրութիւնը լինի ձեր ամենեցուն վերայ:

Ժողովուրդը բաւական հոգւով ընդունելով Քահանայի պարզեած այս Աստուածային ողոքութիւնը՝ պատախանում է.

«Ամեն և ընդ հոգուոյդ քում»:

Այժմ Սարկաւագը դռների պահպանութեան դղուշական հրամանն է տալի ժողովրդին, որովհետու այժմ կատարուելու է խորհրդոյ էական մասը, զգուշացնում է որդուրս գնացող ապաշխարողներին ներս չժողնեն. ներսը մնացողներին ևս պատուիրում է Աստուածային երկիւղով իրենց մտքերը առ Աստուած բարձրացնեն այսպէս.

«Զղբունս, զգբունս ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ ՚ի վեր ընծայեցուցէք զմիսս ձեր Աստուածային երկիւղեւ».

Ժողովուրդը վազուց արդէն Սարկաւագի հրամական քարոզներով պատրաստուած է արժանաւոր ներկայութեամբ մասնակցելու սուրբ խորհրդին և այդ պատճառաւ նա պատախանում է.

«Ունիմք առ Քեզ, Տէր Ամենակալ».

Այսինքն մեր ուշագրութիւնը և միտքը վազուց արդէն առ Քեզ ենք բարձրացրած ամենակարող Աստուած:

Յետոյ Սարկաւագը վերջացնում է իւր աղդաբարական քարոզները այս խօսքերով. «Եւ գոհացարուք զՏեառնէ բոլորով սրտիւ».

Եւ բոլոր սրտով պատրաստ եղէք փառք տալու Աստուածուն և շնորհակալութեամբ գոհանալ նորանից այսքան բարեաց համար:

Ժողովուրդը իրաւացի համարելով իւր դաստիարակի այս վերջին պատրուէրը պատախանում է.

«Արժան և իւրաւ».

Այսինքն արդարեւ պարտական ենք մենք մեր բոլոր սըրտով փառք և գոհութիւն տալու Աստուածուն, Նորա մեզ պարզւած այսքան բարեաց և ողորմութեան համար:

Մինչդեռ Սարկաւագը քարոզում է և ժողովուրդը պատախանում է, Քահանան աղօթում է առ Հայր խորհրդաբար. բայց նախ քան Քահանայի աղօթքը իմաստասիրելու և խորհրդուրդը քննելու, քննենք Սարկաւագի քարոզների և ժողովրդի պատախանների խորհրդուրդը, որովհետև իմաստին արդէն ծանօթացանք:

Ինչպէս տեսանք Սրբազործութեան արարողութիւնը ըսկում է Սարկաւագի քարոզով թէ՝ «Ախւ կացցուք, երկիւղիւ կացցուք և ալլն». Ինչու այսպիսի զգուշութիւն է քարոզում ժողովրդին նորա դաստիարակ Սարկաւագը:

Ժողովուրդը տալով Քահանային իւր ընծայքը՝ Հայր և Փինին, հաւատաց՝ որ ինչպէս այս տարրը զգալի է և շօշափելի, նոխնպէս և Որդին Աստուածոյ զգալի և շօշափելի մարմին առաւ իւր մեղքը չնշելու և իրեն փրկելու համար. և իւր դաւանութիւնը տուեց Սարկաւագի բերանով չաւատամքի մէջ՝ այսինքն հաւատաց Յինուսի Աստուածութեանը և մարդկութեանը և Նորա բոլոր փրկագործութեանը: Քահանան ընդունելով ժողովրդի այս զգալի ընծայքը և իմանալի հաւատը, պատրաս-

տւում է պատարագ մատուցանել չօր Աստուծոյ և այս պատարագաւ խնդրել Աստուծոյ ողորմութիւնը նոյն ժողովրդի համար՝ նորա մատուցած նուէրների և հաւատի փոխարէնը, Սարկաւագին յայտնի է այս խորհրդի զօրութիւնը, որովհետև համարձակ իրաւունքով մտնում է Սուրբ խորանը և Քահանայի միջնորդութեամբ ստանում է Աստուծոյ գիտութեան լուսափայլութիւնը և սփոռում է ժողովրդի մէջ, որոնցից իւրաքանչիւրը ըստ կարողութեան և արժանաւորութեան ընդունում է աղդշնորհքը, այդ պատճառով քարոզում է ժողովրդին որ լսեն, բայց ի՞նչ ոչ թէ խորհրդի զօրութիւնը, այլ զգուշութիւն. իբր թէ կամելով ասել՝ ո՞լ եղբարք, մեծ խորհուրդ իմացայ ես, որ պէտք է կատարուի մեր մէջ. ուրեմն աղաջում եմ ձեզ ամենի՞ որ իմ զգուշական խօսքերիս լսել էք միշտ, այժմ ևս Աստուծոյ ահը և երկիւղը ձեր մէջ ունելով առաւել ուշադրութեամբ Սուրբ խորհրդոյս նայեցէք. բայց որովհետև մարմնական աչքով խորհուրդը չէք կարող տեսնել, վասն որոյ ձեր մտաւոր աչքերը զգուշութեամբ առ Աստուած բարձրացրէք և միայն Սուրբ խորհրդի վերայ մտածեցէք. ձեր մտքերը ամփոփ պահեցէք: Ժողովուրդը այս խօսքերով զգաստանում է, ամփոփում է իւր միտքը, ուրիշ բանի վերայ չէ մտածում, խոստանում է աչքերը սեղանի վերայ ձգել և միտքը առ Աստուած». և այսպէս ներկայ լինել Սուրբ խորհրդին. ուստի և իւր այս խոստումը յայտնում է հետեւեալ բառերով. «Առ քեզ Աստուած Այսինքն՝ աչքերս ՚ի Սեղանն են և մտքերս քեզ մօտ են ո՞լ Աստուած. նայում ենք աչքով և մտքով, ինչպէս հրամայեց մեր մեր դաստիարակը և հաւատում ենք լի սրտով:

Երբ Սարկաւագը իւր քարոզով երկիւղ ձգեց ժողովրդի սրտի մէջ և նոցա ուշադրութիւնը կորդելով չարի ներդործութիւնից ուղղեց առ Աստուած, այս ժամանակ միայն իրաւունք է համարում իրեն խորհրդի զօրութիւնը համառօտ խօսքերով

յայտնել ժողովրդին, որպէս զի նոքա չմնան առանց մասնակցութեան սուրբ խորհրդին՝ որ պիտի կատարուի Սուրբ խորանի ներքին կողմը այսինքն՝ Սուրբ Սեղանի վերայ. Աւտի կարծես թէ այսպէս է խօսում նա ժողովրդի հետ թէ եղբարք իմ և որդին ու սիրելի մանուկներ, որ միշտ լսում էք իմ քարոզութեան՝ չկարծէք թէ ՚ի զուր էր այն ահը և երկիւղը՝ որ ես ձեզ աղդեցի. չկարծէք թէ ՚ի զուր էր, որ ես ձեզ պատուիրեցի բարւոք պարկեշտութեամբ, ուշադրութեամբ և զգաստութեամբ կենալ և զգուշութեամբ նայել. ո՞չ. ՚ի զուր չէր. Ահա թէ ինչո՞ւ. ես Քահանայից մեծ աղդեցութիւն ստացայ, մեծ խորհուրդ իմացայ, որ մինչև այժմ ձեզ յայտնել չէր կարելի. բայց այժմ, ես տեսնելով որ դուք ամենքդ զգուշութեամբ պատրաստուած էք լսելու, ուստի փափագում եմ նոյն աղդեցութիւնը և խորհուրդը ձեզ ևս յայտնել. Գիտացէք թէ ի՞նչ մեծ շնորհ և ողորմութիւն է լինում մեզ, լսեցէք և հոգւով նախեցէք ձեզ զոհութիւն մատուցանելու, որովհետև «Պատարագ Քրիստոս մատչի դառն Աստուծոյ». Քրիստոս զառն Աստուծոյ՝ իրան պատարագ է մատուցանում չօր Աստուծոյ, ձեր մեզքը չնշելու, ձեր փրկութիւնը գնելու և զԱստուած ընդ ձեզ հաշտեցնելու համար: Նոյն Քրիստոս գթալով ձեզ վերայ, ձեր մեղաց համար ինքն է մեռանում մահուան անպարտականը: Ահաւաիկ ձեր աչքի առաջ այս խորհուրդը կատարում է. Միմիթարուեցէք ժողովուրդ՝ որ այսչափ և այսքան մեծ է նորա սէրը առ ձեզ. պատրաստուեցէք ուրեմն արժանաւորապէս ընդունելու նոյն շնորհքը:

Ժողովուրդը այս լսելով, առաջուայ ահի և երկիւղի հետ և այս միմիթարութիւնը միաւորելով, լցուած երախտագիտական զգացմամբ՝ պատասխանում է. «Պորմութիւն և խաղաղութիւն և պատարագ օրհնութեան». Այսինքն՝ ով Աստուա-

ծամին խորհրդական պաշտօնեալ Արբազան Սարկաւագ, այն աւետեաց լուրք՝ որ տուիր մեղ. որ իբր թէ Քրիստոս պատարագ գուռմ է մեղ համար. այդ մարդկային ազգի արժանաւորութեան համեմատ տուրք չէ և ոչ մեր պարտքերի հասուցումն է. այլ մեծ յոյս է և շնորհ. և բարձր է մեր բոլոր սպասած պարզեներից, այն է՝ մեր ողորմած Աստուծուց՝ մեղ ողորմութիւն, որովհետեւ քո պատուէրիդ համաձայն շատ անզամ խնդրեցինք Աստուծուց ողորմութիւնը ասելով «Ճէր ողորմեա». Եւ ահա նա էլ ինչ մեծ ողորմութիւն կարող էր շնորհել մեղ իրանից աւելի. իրան շնորհում է մեղ իբրև կերակուր և բմպելի մեր փըրկութեան համար. մենք քո պատուէրիդ համաձայն քանի անգամ խաղաղութիւն խնդրեցինք մեր բարերար Աստուծուց, իսկ նա այնքան սիրեց մեղ՝ որ իւր անձը մեղ համար պատարագ մատուց Հօր Աստուծոյ: Եւ մենք հաւատում ենք, որ այս պատարագն է, որ օրհնում է մեղ սկզբնական մեղքի անէծքից՝ որ մեղ վերայ էր: Մեր Գլուխը Քրիստոս մեր ամենիս փոխանակ պատարագում է, որպէս զի հոգեւոր օրհնութիւն տարածէ մեր մէջ՝ որ նորա անդամներն ենք. վասն որոյ երկրապատութիւն ենք տալի նորա ողորմութեանը:

Սարկաւագը ծածուկ խորհրդոյ զօրութիւնը յախտնեց ժողովրդին, այն է՝ որ Քրիստոս պատարագում է ամենքի համար և ամենքի փոխանակ և լսեց ամենքի հաւատով և միաձայն շնորհակալ գոհութիւնը. սակայն Սարկաւագի խօսքերի կատարեալ հաստատութիւնը, ժողովուրդը սպասում է լսել պատգամաւոր հրեշտակից՝ այն է Քահանակից, որ իւր ուրախութիւնը աներկայելի լինի. այս է պատճառը որ սորանից իմոյ Քահանան դառնալով դէսի ժողովուրդը ասում է իբր թէ՝ Զլինի թէ բաւականաք հարեւանցի կերպով լսելու Սարկաւագի խօսքերը, որով աւետեց ձեզ Քրիստոսի պատարագութիւնը. այլ հաւատացէք հաստատուն մտքով. Եւ ահա ես

պատրաստուած եմ զՔրիստոս պատարագ մատուցանել Հօր Աստուծոյ մեր փրկութեան համար. և ձեր բերած նուէրի՝ այսինքն չացի և Գինուոյ տեսակաւ՝ նուիրում եմ Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի մեղ համար կատարած բոլոր տնօրինութիւնք: Ուրեմն զգոյշ կացէք, ձեզ զգաստ և ամփոփ պահեցէք, ձեր զգայարանքների վերայ պահապան դրէք, որ չար խորհրդները, չար մտքերն ու չար լիշտակութիւնները չվրդովնն ձեր սիրտն ու հոգին: Այսպիսի պատրաստութեամբ ջանացէք, որ դուք ևս ինձ հետ այս առաջնկայ խորհրդին համաձայն և մասնակից լինէք: Ձեր այդպիսի պարբաստութեան համար կը բաշխեմ ձեզ զօրութիւն. «Ճնորհք, Մէր և Աստուծալին սըրբարար զօրութիւնն Հօր և Որդուոյ և Հոգուոյն Արքոյ, եղիցի ընդ ձեզ ընդ ամենեսեան»: Որովհետեւ դուք մասնակից էք այդ մեծ խորհրդին, ուրեմն Աստուծոյ սէրը և շնորհքը թողտարածուի ձեր ամենի վերայ, որպէս զի նորա զօրութեամբը պարսպուած կարողանաք հասկանալ թէ որքան մեծ և բարձր խորհրդի է այս՝ որ իմ ձեռքով և ամենի վրկութեան համար է կատարեւում. որովհետեւ զՔրիստոս՝ Որդին Աստուծոյ և Նորա ամեն մահը տալիս եմ Նորա Հօրը մեր ամենիս փոխանակ, յուսալով միեւնոյն ժամանակ որ ՚ի Հօրէն կատանամ ո՛չ միայն թողութիւն մեր մեղքի համար՝ այլ և շնորհք հոգուոյն սըրոյ. ուրեմն զօրացէք շնորհքով, առատացէք սիրով, սըրեցէք. ձեր մտքերը և խորհրդները և այսպէս Սուրբ Երրորդութեան զօրութեամբ պարսպուած՝ հազորդ եղէք խորհրդոյս, Փողովուրդը պատասխանում է Քահանակին. «Ամեն. Եւ ընդ հոգուոյդ քում». Կամելով ասել թէ՝ որովհետեւ՝ դու իբրև մեր միջնորդ առ Աստուծ, Աստուծոյ շնորհքը և զօրութիւնը մեղ պարզեցիր, մենք ևս միալերան և մի հոգուով նոյն շնորհքը և զօրութիւնը քեզ ենք մազթում Աստուծանից՝ որ լինի քեզ կնիք և պահապան ամեն ժամանակ:

Սորանից յետոյ Սարկաւագը դռների պահպանութեան և զգուշութեան հրամանն է տալի ասելով. «Զգրունս զգրունս ամենայն իմաստութեամբ ևալին». Պահպանեցէք դռները իմաստութեամբ և զգուշութեամբ և ձեր մտքերը Աստուածալին երկիւզով դէպի վեր բարձրացրէք: Սարկաւագի այս հրամանը երկու կերպ է բացատրում. նախ որ ինչպէս վերը լիշուեցաւ, որովհետև շուտով կատարուելու է խորհուրդը, ուստի զգուշութեամբ և իմաստութեամբ պահպանն դռները, որպէս զի Սարկաւագի՝ Աղջունից առաջ տուած հրամանով դուրս դնացող ապաշխարողները կրկին ներս չմտնեն ներկայ լինելու խորհրդին. սա մարմնաւոր կողմի բացատրութիւնն է: Երկրորդ բացատրութիւնը պարզ հոգեոր է. այն է՛ դռներ և պատուհաններ բառերը շատ անգամ փոխաբերական մտքով են զործածում, որպէս և այստեղ. ցոյց տալով մեր մարմնական ըզդայարանքները. որոնք շատ անպատշաճ և յանցաւոր բաներ լինով, տեսնելով, առելով ևալին խոռովում են և շփոթում ներքին մարդը՝ այսինքն հոգին, և վրդովում է ներքին խաղաղութիւնը. ուստի մարմնական այս զգայարանաց՝ այսինքն աչքերի, ականջների, բերանի կամ լեզուի զգուշութեան համար է պատուիրում Սարկաւագը, որ այդ բոլոր զգայարանքները՝ Սուրբ խօրհրդին ներկայ եղող իւրաքանչիւր հաւատացեալ իմաստութեամբ և զգուշութեամբ պահէ, որպէս զի ըլինի թէ այս զգայարանքներից մէկն անգամ արտաքին կամ կողմնակի բաներով զբաղուի. այլ աչքը՝ միշտ ողջուած լինի դէպի սուրբ Սեղանը. ականջները՝ դէպի Քահանայի աղօթքը, Սարկաւագի քարոզը և զպիրների երգը, բերանը կամ լեզուն՝ զբաղուած լինի զպիրներին երգակից լինելու, այն ժամանակ և միտքը ՚ի հարկէ բարձրացրած կլինի առ Աստուած և ներկայութիւնը կլինի իւր համար օգտակար հաստատ իրաւամբ: Այս մտքով է հասկանալու Դաւիթ մարգարէի խօսքը «Թիր Տէր կնիք դրանց

բերանոյ իմով». Տէր, իմ բերանիս դռները դու ինքդ կնքիր որպի, ո զի վնասակարը և աւելորդը չխօսեմ, և դու ինքդ բաց արա՝ որպէս զի օգտակարը և հարկաւորը խօսեմ. Այս մտքով է հասկանալու և մեր մի և ճշմարիտ ուսուցչի՝ Յիսուսի խօսքերը թէ. «Մնատ ի սենեակ քո և փակեան զգուշնս քո». Մտիր քո սրտի սենեակը, փակիր քո մարմնական բոլոր զգայութեանց դռները, այսինքն աչքերդ՝ վատ բան տեսնելուց, ականջներդ՝ վնասակարը լսելուց, բերանդ կամ լեզուդ՝ աւելորդը խօսելուց, ձեռքերդ՝ չարիք գործելուց. ոտքերդ՝ վնասելու ճանապարհը գնալուց. և այսպէս պարսպուած ու պաշտպանուած ամենայն տեսակ գայթակղեցուցիչ գէալքերից, պատահարքներից, լուրիրից, խօսքերից՝ բոլորնին անզբազ, քո զբաղմունքդ միայն Աստուածային կամքի կատարման մէջ ունեցիր և այդպէս ՚ի ծածուկ առ չայր քո աղօթիր: Այսպիսի զգուշութիւնն է ահա, որ Սարկաւագը պատուիրում է ժողովրդին ունենալ, որպէս զի օգուտ ստանան սուրբ պատարագի ներկայութիւնից և ոչ վնաս, որովհետև որքան որ արժանաւորների համար սուրբ պատարագը շնորհէ և և ողբաժութիւնն և ամենայն բարիք, նոյնքան ևս անարժանների համար մանաւանդ անզգաստների՝ հուր ծախիչ է, այսինքն արլող կրակ է. այս մտքով են Սարկաւագի շատ յաճախ կրկնած զգուշական հրամանները, որպէս զի ներկայ եղողներից ոչ ոք չինասուի, ինչպէս վնասուեցաւ Խալարիովացին Յուղալ:

Այսպէս տհան երբ ժողովուրդը իւր գաստիարակ Սարկաւագի զգուշացուցիչ հրամաններով զգաստացաւ և վերջապէս խօրհրդին ևս մասամբ տեղեկացաւ թէ Քրիստոսը պէտք է պատարագուի և ստացաւ Քահանայի օրհնութիւնը և շնորհաբաշխութիւնը՝ այժմ համաձայն Սարկաւագի պատուէրին թէ. «՚ի վեր ընծայեցուցէք զմիսու ձեր Աստուածային երկիւզիւ» Թիմում է առ Աստուած ասելով. «Ունիմք առ քեզ. Տէր Ամենա-

կալ»։ Ալսինքն թէ՝ Տէր. այս ժամին Քեզ ունիմք մեր աչքի առջեւ. Եւ ինչպէս որ մեր մարմնական աչքով Քո զգալի նշանակներն ենք ձկտում տեսնել և ցանկանում ենք ողջունել՝ նոյնպէս և մեր հոգւոյ և մտաց աչքով զբեզ խակապէս կամենում ենք տեսնել. Եւ ինչպէս որ տեսնում ենք Քեզ՝ որ սուրբ Սեղանի վերայ հաշտութեան պատարագի զոհ ես լինում, նոյնպէս տեսնեմք և Քո մարմինը Աստուածութեան սեղանի վերայ կենդանի բարեխօս մեզ համար: Սորանից յետոյ Սարկաւագը դարձեալ պատուէր է տալի ժողովրդին ասելով. «Եւ զոհացարուք զիեառնէ բոլորով սրտիւ». Ալսինքն թէ ով եղբարք, զուք որ արժանի եղաք առ Աստուած համբառնալու ձեր միտքը և տեսնել Սուրբ Խորհուրդը, պատշաճ է այժմ որ զոհանաք Տիրոջից, շնորհակալ լինէք Աստուծուց կատարեալ սրտով, որով հետև իւր անձը նուիրեց Հօրը, իբրև պատարագ հաշտութեան մեր ամենիս համար և ամենիս փոխանակ. և այս դեռ բաւական չէ, Կա չօր Աստուծոյ աջ կողմը նատած անդադար բարեխօս է մեզ համար՝ իբրև իւր Արիւնով գնուածների. ուրեմն պարտուապատշաճ է որ դուք արժանաւոր զոհութիւն և շնորհակալութիւն մատուցանէք Տիեառն այսքան և այսպիսի բարեաց փոխարէն. որին ժողովուրդը պատասխանում է. «Արժան և իրաւ». Ալսինքն՝ զոհանալու հրամանը որ ստացանք քեզանից ով հայր մեր և առաջնորդ, ամենավայելուչ կերպով կատարուելու արժանի է, և իրաւացի ու արդար է այսպիսի քաղցր Տիրոջից շնորհակալ լինել:

Սակայն պէտք է նկատել այստեղ թէ ինչու ժողովուրդը մինչև այժմ խկութեամբ էր կատարում Սարկաւագի բոլոր հրամանները և այժմ ոչ. Սարկաւագը հրամայում է զոհանալ Աստուծուց. ժողովուրդը փոխանակ Սարկաւագի հրամանին համաձայն զոհանալու՝ բաւականանում է միայն իւր համաձայնութիւնը յայտնելով, ուստի և ասում է՝ այն արժան և ի-

րաւացի է քո հրամանը ով հայր և դաստիարակ: Սորապատճառն է, որ ժողովուրդը գեռ ևս գոհանալ չէ կարող, քանի որ Քահանան չէ զոհացել. ժողովուրդը սպասում է որ Քահանան Քրիստոսի պէս պէտք տնօրէնութիւնը Հօր Աստուծոյ նուիրէ զոհութեամբ և ապա ինքը երբ այդ կտեղիկանայ իւր դաստիարակ. Սարկաւագից և ինքն ևս կղոհանալ Աստուածանից՝ Նորա մեծամեծ բարեաց և շնորհաց համար. Ուրեմն քանի որ Քահանան չէ զոհացել՝ ժողովուրդը չէ կարող զոհանալ, որովհետև դեռ զղիտէ զոհանալու պատճառը. իսկ երբ Քահանան կլորհրածէ զոհանալու պատճառը, այն ժամանակ և ժողովուրդը Սարկաւագի ազդարարական հրամանով կատարեալ սրտով կօրհնէ զիէր և կղոհանալ ամենայն բարեաց, շնորհաց և ողբամութեան համար, որ կտեղեկանայ ինքը Սարկաւագից. Այս է պատճառը որ ժողովուրդը գեռ ևս շուտ է համարում զոհանալը և սակայն իրաւացի է համարում այն ասելով. «Արժան և իրաւ»:

Մինչդեռ Սարկաւագը իւր դաստիարակող քարոզներով պատրաստում է ժողովրդին արժանաւորապէս ներկայ լինելու Սուրբ Խորհրդին և ժողովրդի պատրաստականութիւնը տեսնելով ուրախանում է՝ Քահանան բոլորովին մէկուսացած նոցանից, մուգով առ չայրն Աստուած վերամբարձուած աղօթում է խորհրդաբար այսպէս.

«Արժան է ստուգապէս և իրաւ ամենայօրդոր փութով մէշա երկերագանելով փառաւորել զքեզ՝ Հայր ամենակալ, որ քոյին անզնենելի և արարչակից բանելու գանձիցն բարձեթ զկրճիմն: Ու ժողովուրդ ինքեան առեալ զեկեզեցի սեպհականեաց զհաւատացեալս նի քեզ, և զնենելի բնութեանը բառ ի կուտէն անտեսութեան՝ հաճեցաւ բնակել նի մեզ: Եւ նորագործ Աստուածապէս հարտարապետեալ՝ զեկեզը երկին արար: Վասն զի որում ոչն հանդուրժէին առաջի կալ զուարթնոցն չոկը՝ զարհութեալ նի փայլակնացաւ և յանմատուց լուսոյ Աստուածութեանդ, եղեալ այդպիսի

մարդ, յաղագս մերոյ փրկութեան, շհոքհեաց մեզ ընդ երկնային-սբն պարել զհոգեղէն պարս»:

Արդարեւ արժան է և իրաւացի՝ որ մենք ջերմեւանդութեամբ և առանց դանդաղութեան երկրպագութիւն տանք Քեզ՝ ով ամենակարող չայր և փառաւորենք Քեզ: Որովհետև Դու Քո անտեսանելի և արարչակից բանիւդ անիծից անէծքը վերցրիլ մեր վերալից: Եւ Նա սուրբ եկեղեցին իրան սեպհական ժողովուրդ առնելով՝ որոշեց Քո Հատատացեալները: Եւ աչքին տեսանելի՝ մարդկային բնութեամբ, որ տնօրինարար սուրբ Կուսից առաւ, Հաճեցաւ մեր մէջ բնակուիլ: Եւ նորագործ Աստուածալին ճարտարապետութեամբ երկիրը երկինք շինեց. որովհետև Նա՝ որի առաջին Հրեշտակական զունդերն անգամ չէին կարողանում կանգնել, զարհարելով Աստուածութեանդ փալակունք ցալտող լոյսից՝ որին մօտենալն անգամ անհնար է, Նա՝ ահաւասիկ մարդ եղաւ մեզ փրկելու Համար և արժանացրեց մեղ երկնայնոց Հետ միասին հողեսր պարը պարելու:

Այս աղօթքի վերջին մասը բարձրաձայն է ասում Քահանան այսպէս.

«Եւ ընդ սերովբէսն և ընդ քերովբէսն միաձայն սըբասացութեամբ յօրինել նուագս և Համարձակապէս գուելով՝ աղաղակել ընդ նոսին և ասել».

Եւ սերովբէից ու քերովբէից Հետ միասին և մէկ ձայնով սուրբ, սուրբ, սուրբ եղանակել և նոցա Հետ ՚ի միասին Համարձակութեամբ աղաղակել ու ասել:

Քահանան իւր այս աղօթքով դիմում է առ Աստուած, երբ կամելով ասել՝ արժան Համարեց ժողովուրդը գոհանալ Քեզանից, ով չայր սուրբ, և ոչ միայն զոհանալ՝ այլ և լորդորել միմեանց՝ որ ջերմեւանդութեամբ աղօթեն և միասին խոնարհեցնեն իրենց պարանոցը Քեզ երկրպագութիւն տալու, որսիկետև նախածնողը չարի դրդմամբ մեղանչեցին և իրանց մե-

ղաց արժանաւոր հատուցումն ստացան՝ այն է մահուան դատապարտութեան և անիծից ենթարկուեցան. Սակայն Դու ամենագութ Տէր, նոյն մեղանչող նախածնողաց սերունդը քրկամեցար որ միշտ նոյն անիծից և մահուան դատապարտութեան տակ մնալ մնալ, այլ փրկել համեցար նոյն մարդկային սերունդը այդ Քո արդար դատավճռից. և սորա Համար ոչ թէ Քո դատառական և իշխանական զօրութիւնը գործադրեցիր. ոչ, այլ Քո անհաս և անզննին Բանդ զննելի և խոնարհ բընութեամբ մարմնացրիր և Նորան մեր փոխանակ մահուան տալով՝ դատապարտութեան անէծքի կրծիմը՝ այսինքն արգելքը Նորա մահուամբ պատառեցիր, ոչնչացրիր. Խոկ Նա՝ ըբաւականացաւ մեր վերայ եղած անէծքը վերցնելով, այլ բոլոր ազգերից իրան նոր ժողովարդ կազմեց և այդ ժողովրդից մի եկեղեցի Հատատաեց մի Հատատով դէպի Քեզ և իւր անունով պասկեց այդ եկեղեցին. Եւ երկիրը երկինք յեղաշրջելով երկրացին տարրը Աստուածացրեց մեր մէջ և երկրաւորներին երկնաւոր փոխեց, իրաւունք և Համարձակութիւն տալով խօսելու Քեզ Հետ ոչ իբրև Արարձի և դատաւորի միայն՝ այլ և իբրև Հօր Հետ: Այսպիսի իրաւունք և Համարձակութիւն տալով մեղ յիրաւի բարձրացրեց մեր մարդկային անկեալ բնութիւնը, երկնային շինեց զայն և մինչեւ անդամ Աստուածեղէն բնութեանը Հաղորդակից արաւ Քո Վիածին Որդին՝ որպիսին չունեն Հրեշտակները. երկիրը երկինք յեղաշրջեց և երկրաւորներին երկնային փոխեց և սորվեցրեց մեղ լինել կատարեալ Քեզ նման. Ահաւասիկ Քո Վիածնի մեղ շնորհած այս իրաւունքով է, ով Հայր սուրբ, որ Համարձակում ենք Քո մեծ և անպատճելի բարեաց, շնորհաց և ողորմութեան Համար զոհանալ Քեզանից. և մեր գոհաբանական օրհներդութիւնը ձայնակից առնել և զուգախառնել Սերովբէից և Քերովբէից սրբերդութեանը, որովհետև մի Աստուած ևս երկնաւորների և երկրաւորացս, ուստի

արժան է և վայել, որ մեր օրհներգութիւնն ևս միաձայնենք նոյն սրբերգութեանը և մատուցանենք Քեզ:

Վահանալի այս աղօթքից յետոյ դպիրները երգում են.

«Սուրբ սուրբ, սուրբ Տէր զօրութեանց. լի են երկինք և երկիր փառօք քո, օրհնութեւն ՚ի բարձունս. օրհնեալ որ եկեղեց գալոց ես անուամբ Տեառն. Ովսաննայ ՚ի բարձունս».

Այս երգը հրեշտակաց երգ է, որպէս տեսաւ Եսայի մարդարէն իւր տեսլեան մէջ, որ հրեշտակները փառաբանում էին Աստուծուն. սորա վերջին մասը Եբրայեցւոց ծերոց և տղայոց փառաբանութիւնն է. որ Եկեղեցին յարակցել է հրեշտակական երգին. Ովսաննայ Եբրայեցւոց բառ է և նշանակում է փրկեագմեղ կամ կեցո զմեզ:

Վահանան իւր աղօթքը ուղղում է առ Հայրն Աստուած, իսկ ժողովուրդը միշտ առ Որդին Աստուած. և այժմ որ դեռ չարչարանքի և խաչի մասին լիշտակութիւն չկայ, ժողովուրդը լիշտում է միայն Յիսուսի մարմնով երևելը երկրի վերայ և Սարկաւագի աղդարաբութեան համաձայն վկայում է և հաստատում Վահանալի խօսքերը, որովք խոստովանեց Վահանան որ երկիրը երկինք է եղած, այս հիման վերայ է որ սկըսում է Սերովբէլից երգը երգել իւր մէջ, Աստուծոյ փառքը հաւատով միայն տեսնելով և ոչ էութեամբ կամ զգալապէս, որովհետև Աստուծոյ էութիւնը ոչ միայն մենք ենք անկարող տեսնել, զգալ և շօշափել, այլ նոյն իսկ և հրեշտակներն անգամ. իսկ եթէ ժողովուրդը հրեշտակաց երգն է երգում թէ «Կ եղեւ երկինք և երկիր փառօք քո». այսպէս պէտք է հասկանալ, որ ինչպէս երկինքը Աստուծոյ փառքի առաւելութեամբ և նախախնամութեան աղդմամբ լի է, նոյնպէս և երկիրը լի եղեւ Քրիստոսով իմանալի և ոչ զգալի նախախնամութեամբն Աստուծոյ. Սորա համար ժողովուրդը օրհնութիւն է վեր առաքում առ Քրիստոս իր թէ ասելով՝ Քեզ Քրիստոսիդ՝ որ մեր

փրկութեան պատարագն ես; ոչ միայն մեզանից երկրիս վերայ այլ և երկնքում հրեշտակներիցդ օրհնութիւն է համում և օրհնեալ ես, որ եկար նախ երկիրը երկինք կերպարանավոխեցիր և մեզ փրկեցիր Հօր անունով և կամքով և դարձեալ պէտք է դաս Քո ստացած ժողովուրդդ կրկին նորոգելու: Ամելի մեծ օրհնութիւն Քեզ ՚ի բարձունս երկնից, ուր Աստուածապէս բարձրացար և մեզ Քեզ հետ այնտեղ բարձրացրիր:

Այս է Սրբասացութիւնը՝ որ ժողովուրդը Սարկաւագի ազդարարութեամբ երգում է առ Քրիստոս, որ պատարագում է իւր մէջ, իրան փրկութիւն, կեանք և նորոգութիւն պարզելու համար:

ԺԳ. ԲԱԺԻՆ

ՓՈԽԱՐԿՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԿԱՆՈՆ ՊԱՏԱՐԱԳԻ

Սրբագործութեանը հետևում է փոխարկութիւնը Վահանալի հետևեալ աղօթքով՝ որ կտեսնենք. առ այժմ տեսնենք թէ այս մասը ինչու է ասաւում փոխարկութիւն և կամ կանոն պատարագի: Մինչև այժմ Վահանալի առ Հայրն Աստուած ունեցած աղօթքներն էին Յիսուսի Զարչարանօք և Մահուամբ խաչի մարդկային ազգի փրկութեան լիշտակութիւնը այն նշանակներով՝ որ սուրբ Սեղանի վերայ են դրուած Հօր Աստուծոյ առաջ, այժմ և այսուհետև Վահանան պիտի աղաչէ զնստուած Հայրն, որ ՚ի մէր իւր Միածնի բոլոր լիշտակեալ փրկագործութեան՝ այդ առաջիկայ ընծայքը փոխարկէ Հոգով սրբով յիսկական և ՚ի ճշմարիտ Մարմին և Անրիւն Միածնին իւրից: Իսկ կանոն պատարագի ասուելու պատճառն այն է՝ որ պատարագի զիսաւոր մասը համարում է այս աղօթքը, որ

Քահանան այժմ պէտք է ասէ, որովհետև այս աղօթքի մէջն էն գտաննում Սրբագործութեան առաջին և գլխաւոր խօսքերը:

Ուստի մինչդեռ գայիրները Սրբասացութիւնն են երգում, քահանան և նոյն մտքով առ Հայր է աղօթում բաղկատարած և խորհրդաբար այսպէս.

«Սուզր, սուրբ, սուրբ ես ճշմարտապէս և ածենասուրբ. և ոք պահանձացի բովանդակել բանիւ գքո՞ի մեզ զանբաւ բարեգորովութեանդ զեղսունս: Որ և անդէն իսկ՞ի նախնունն զանկեալն ընդ մեզօք՝ զանազան եղանակօք՝ խնամեալ սփոփեցեր, մարգարիտաք, օրինացն տւչութեամբ, քահանայութեամբ: և ստուերակերպ երնջուցն մատուցմամբ:»

Իսկ ի վախճան աւուրցու այսոցիկ զբովանդակ իսկ զպարտեաց մերոց խզեալ զդատակնիք, ետուր մեզ զնրգետ քո Միածին պարտապան և պարտս, զենումն և օծեալ, գառն և երկնաւոր հայ, քահանայազետ և պատարագ:

Վասն զի ինքո՞ է բաշխող. և նոյն ինքո՞ բաշխի՞ մէջն մերում մեշտ անձախապէս: Վասն զի եղեալ հաւաստեալ և առանց ցնորից մարդ. և անշփոթ միաւորութեամբ մարմնացեալ յԱստուածածնէն և ի սուրբ կուսէն Մարիամայ՝ ճանապարհորդեաց ընդ ամենայն կիսու մարդկային կենցաղուս առանց մեղաց. և յաշխարհակեցուցն և յառիթն փրկութեան մերոյ եկեալ կամաւ ի խաչն, առեալ զհացն ի սուրբ յԱստուածային, յանմահ, յանաբառ և յարարչակործ ի ձեռուիւր՝ օրջնեաց, գոհացաւ, «երեկ և ետ իւրոց ընտրեալ սուրբ և քաջնեալ աշակերտացն ասելով:»

Սուզր, սուրբ, սուրբ ես ճշմարտիւ և ամենից սուրբը և ոք է կրարող խօսքով պատմելու գիտ մեր վերայ ունեցած անքայ և մատահման բարեգորութիւնը. վասն զի դեռ ևս ակրգաբառ մեղքիւ տակ եղած մարդկան զանազան միջոցներով խնամեցիր և միսիթարեցիր. Ցուիր նոցա մարբարէներ, օրէնքներ, քահանաներ և ասկամանեցիր երինչների զոհեքը՝ որոնք Յիսուսի ճշմարդիտ պատերազին ստուէրն էին և օրինակը: Իսկ վերջին մատահմակները մեր բոլոր բարտապարտութեամ պաթրուուց վճիռը պատուելով տաւիր մեզ աբու Միածին քրդին թէ իբրև պարտա-

պան և թէ իբրև պարտք, թէ իբրև զոհ և թէ իբրև օծեալ զոհագործ, իբրև զառն և երկնաւոր հայ, իբրև քահանայապէտ և պատարագ. որովհետև, զա ինքն է բաշխողը և նոյն ինքն է բաշխուում մեր մէջ միշտ և առանց սպառելու կամ հատնելու: Վասն զի դա ստուգապէս մարդ դառնալով և ոչ իբրև աչքի մի երևոյթ և անշփոթ միութեամբ մարմին առնելով Սուրբ Կոյս Մարիամ Աստուածածնից, անցկացաւ մարդկային կենաց ամենայն կրքերից և սակայն մեղքից ազատ մընաց, և յետոյ կամուլին գալով զոհ լինելու խաչի վերաց, որ աշխարհիս կեանք տուղն է և մեր փրկութեան պատճառը, առաւ հայր իւր սուրբ, Աստուածային, անմահ անարատ և արարչագործ ձեռքը՝ օրհնեց, գոհացաւ, մանրեց և տուեց իւր ընտրած սուրբ աշակերտներին, որ բագմած էին, ասելով:

Աստեղ Քահանան նշխարը առնելով ձեռքը բարձրացնում է՝ ի վեր և ասում է խորհրդուս էական խօսքը պատմական ձևով որ վերջաւորութիւնն է վերոյիշեալ աղօթքի:

«Առէք կերէք, այս է մարմին իմ, որ վասն ձեր և բազմաց բաշխի յի բաւութիւնն է ի թողովթիւնն մեղաց.»

Առէք և կերէք, սա իմ Մարմինս է, որ ձեր և շատերի համար է բաշխուում մեղքերի քաւութեան և թողութեան համար:

Սորան ի պատասխան ժողովուրդը ապում է.

«Ամեն:»

Որ կնշանակէ եղիցի, այսինքն խոստովանում եմ և հաւատում:

Մարկաւազը Քահանայի օրհնութիւնն է խնդրում ասելով. «Օրհնեա Տէր.»

Այս միջոցին Քահանան վերոյիշեալ աղօթքը դեռ ևս շարունակում է ի ծածուկ այսպէս:

«Նոյնակէս և զբաժակն առեալ, օրհնեաց, գոհացաւ, էարբ և ես իւրոց ընտրեալ սուրբ և բազմեալ աշակերտացն ասելով:»

Նոյնպէս առնելով բաժակը՝ օրհնեց, գոհացաւ, խմեց և տուաւ իւր ընտրած սուրբ աշակերտներին. որ բազմած էին. ասելով:

Սորանից յետոյ բարձրացնում է զինով Ավիհն և ասում է բարձրածախ.

«Աքք ՞ի սմանէ ամենեքեան, այս է արեւն իմ նորոյ ուխտի, որ յաղագս ճեր և բազմաց հեղանի նի քաւութիւն և նի թողութիւն մեղաց».

Խմեցէք սորանից ամենքդ, սա իմ Արխոնն է նոր ուխտի, որ ճեր և շատերի համար է թափում մեղքերի քաւութեան և թողութեան համար:

Այժմ ծանօթանանք Քահանակի վերոյիշեալ խորհրդաւոր աղօթքի իմաստին. Երբ դպիրները երգում են սրբասացութիւնը, Քահանան խորհրդաբար և բազկատարած աղօթում է առ չայր այս մտքով թէ՛ Տէլ չումք կարող մենք արարածներս Արարքիլ մեր վերայ ունեցած նախախնամութեան ճանապարհները կատարելապէս նկատելու. Ո՞վ արդեօք կհամարձակուի, կամ հանդէս կուզայ Քո ողորմութեան առատութիւնը ՚ի դիր արձանացնելու. արդարեւ ոչ ոք. ըստ այնմ թէ. «Ո՞ դիտաց զմիտո Տեառն, կամ ո՞ եղեւ նմա խորհրդակից». Ո՞վ հասկացաւ Աստուծոյ միտքը և կամ ո՞վ եղաւ նորա խորհրդակիցը. Այսուղ Քահանան մերձաւոր հարազատութեամբ խորհրդակցում է Աստուծոյ հետ և լիշում է ՚ի սկզբանէ անտի գանազան միջոցներով Աստուծոյ մարդկան ազգին արած բարերարութիւնները, ինչպէս՝ մարդարէներով, քահանաներով, ողջակիզի զոհերով՝ որոնք ապացուց էին ճշմարիտ պատարագին Քրիստով. Սակայն այդ միջոցները էին նախագտուշակութիւններ Յլտուսի մասին և ստուերներ՝ Նորա ճշմարիտ պատարագին. վասն որոյ նոցանից և ոչ մէկն ունէր զօրութիւն արդարացնելու և շնորհ բաշխելու, որովհետև օրէնքը ամենքին ևս անէծքի տակ էր

վակել և ամենքն ևս յանցաւոր էին օրինաց առաջին, այս խոկ պատճառաւ վերջին ժամանակները Քրիստոս Հօր կամքով և իւր պատարագով յայտնուեցաւ աշխարհի քաւիչ և մեղքի անարգադ. Սորանով գատապարտութեան պարտուց վճռոք լուծեց, քանզից և մարդկանցը արդարացրեց Հաւատով միայն; Սորանից յետոյ դարձեալ խորհրդածում է Քահանան Աստուծոյ հետ այսպէս՝ Տէր՝ Դու տեսար մեղ այսպիսի վտանգի մէջ և սակայն մեր մեղքի համար մեղ անտես չարիր, այլ տուփր մեղ վիրկիչ. Այդ վրկիչը ոչ պատգամաւոր էր, ոչ խոկ հրեշտակ. Դա Քո Միածին Որդիկ էր, որով մխիթարեցիր թշուառներիս, որովհետև նա եղաւ մեր վիխանակ Քո պարտապանը և պարտքը. մենք էինք Աղամայ գատապարտութեան տակ և սակայն նա արդարն և անմեղն պատարագուեցաւ ՚ի խաչին դիքը ընդ մեղ հաշտեցնելու համար: Եւ որ գլխաւորն է՝ ոչ թէ բաւականացաւ տակ Քեզ իւր մահը իրեւ նուէր ՚ի հաշտութիւն աշխարհի և յայտնել Քո առ մեղ ունեցած անձառ սիրոյդ խորհուրդը՝ այլ յայտնեց մեղ մինչև անդամ Քո սիրոյ գիտութիւնը ասելով այսպիսի մէր, որպիսին իմս է, ոչ ոք չէ կարող ունենալ, որ իմ անձո զոհեցի իմ բարեկամներս համար. և թէ քաջ հովիւր կդնէ իւր անձը իւր ոչխարների վերայ. այսպէս ահաւասիկ Տէր, Քո Միածինն է բաշխողը և բաշխողը. նա բաշխեց մեղ Քո Աստուծացին խորհրդոց գիտութիւնը և նա ինքը բաշխում է մեր մէջ միշտ և ամեն ժամանակ իրեւ հոգւոյ և մտաց պարարիչ անսպառ կերակուր. անսպառ՝ որովհետև կերին Առաքեալք և անմահացան, կերին վկայք, ճգնաւորք և ամենայն նահատակը և երկնալին անմահութիւն ժառանգեցին. և սակայն Որդիկ Միածին անծախելի և անսպառելի կերակուր է մնում աշխարհին ՚ի սնունդ հոգւոյ. այս ահաւասիկ Քեզ ենք պատարագում Աստուծած և չայր և ճաշակում ենք մենք, որովհետև Քո Որդիկ հաստա-

տապէս մեզ հաւասար մարդ երեխաւ և անշփոթ խառնմամբ մարդկային բնութիւնն ստացաւ։ Այժմ այս Քեզ նուէր ենք մատուցանում, որ այս սիրոյ լիշտակաւ մեզ հետ հաշտուետ Տէր, որովհետև Միածին Որդիք մեր բոլոր մարդկային կրքերը կրեց և սակայն բոլորովին ազատ մնաց մեղքից, այն ինչ մենք թշնամւոյ խարէութեամբ մեղքի տակ կորացանք Նայիր ուրեմն Տէր և դորա ճանապարհը և մերը, եթէ թշնամին մեզ չխարէր մենք ևս անմեղ կլինէինք, ինչպէս մեր Տէրը եղաւ։ ուրեմն յանցանաց պատիժը ոչ մեզ՝ այլ փորձող թշնամւոյն թող լինի. իսկ մեզ վերայ մեր Տիրօջ անմեղութիւնը թող տարածուի, որ մեր փրկութեան համար յանձն առաւ մահը և աշխարհակեցոց խաչի վերայ զինքը պատարագ ընծալեց Քեզ՝ ով Անտուած Հայր, մեր բոլորիս փոխանակ. իսկ Դու ընդուռնելով Քո անմեղ Որդւոյ մեռանիլը, նորանով միայն ազատեցիր մեզ դատապարտութեան անէծքից այնպէս ինչպէս և Աղամով միայն անիծաղբեցիր Աղամայն բոլոր սերունդները. Եւ այժմ նոյն Միածինդ սիրելի և մեր ամենեցուն փրկիչը իւր Միրոյ և Զարչարանաց լիշտակը յաւխտեան մեր մէջ անջնջելի պահելու համար՝ առաւ հացը, օրհնեց, իբրև մէկը մեղանից, գոհացաւ Քեզ Տէր կողմից, որ Դու Քո ինամօքդ և գթութեամբ տուիր նորան մեզ, մանրեց որով իւր մահը ցոյց տուաւ մեզ, որովհետև ինչպէս մանրեց հացը՝ նոյնպէս սպանեց և իւր մարմինը մեր կենդանութեան համար և այն հացը տուաւ իւր աշակերտաց իբրև իւր Մարմին, և առնելով բաժակը՝ նոյնպէս օրհնեց, գոհացաւ իմեց՝ ցոյց տալով որ կաժօք և յօժարութեամբ է ընդունում մահը մեր փոխանակ և մեզ փրկելու համար և տուաւ աշակերտաց իբրև իւր Արիւն։ Բայց ինչո՞ւ է ասում «Նոր ուխտի»։ որովհետև կին ուխտ ևս կար կին Խորայէլի մէջ ընդ մէջ Աստուծոյ և մարդկան, այն է օրէնքի կտակը, որ Մովսիսով հաստատուեցաւ և

սրբուեցաւ երինջների արիւնով, որ սրսկելով ամենքի վերայ ասում էր «Այս է արիւն կտակին զոր ետ ձեզ Աստուծու»։ Այս ուխտիւ անջինջ էր մնում Աստուծոյ՝ այն է Եկովայի և Խորայէլի մէջ եղած խաղաղութիւնը։ Սակայն որովհետև նոքա մարմնաւոր ժառանգութեան ակնկալութիւն ունէին վասն որոյ նոյց գաշինքը կամ ուխտը մարմնաւոր արեամբ էր կատարուում. ինկ Քիրստոս ընդ հակառակն, զմեղ մարմնաւոր աշխարհից անմարմին երկինքը հրաւիրեց, վասն որոյ և մեր ուխտը, հարկ էր, որ երկնային կամ անմարմին լինի. ուստի և ասաց «Այս է Արիւն իմ նորոյ ուխտի» այսինքն թէ ես որ երկնքից իջայ և դարձեալ այստեղ եմ բարձրանալու, տալիս եմ ձեզ իմ Արիւնս իբրև ուխտ և դրաւական հանդերձեալ կեանքի յուսոյ համար. իմ Արիւնո որ թափում եմ ձեզ ձեր յանցանքից սրբելու և մաքրելու համար է. սորանավ Տէրը մեզ Խրան գաշնակից արեց, որ մենք միշտ իւր Արեան ուխտին նայելով չմոււանանք ոչ իբեն և ոչ երկնից ժառանգութիւնը, որպէս և ինքը խոստացաւ չմոււանալ մեզ և ոչ էլ մեր թողութիւնը. ուստի և ասաց. «Զայս արարէք առ իմոյ լիշտակի»։ այսինքն այս հացը ճաշակելով իմ մարմնաւութեանս երախտիքը լիշեցէք և այս գինին ընպելով խաչի վերայ Արիւնո թափելով ձեզ համար մեռնելս նտաբերեցէք։

Հարկ է և արժան համառօտ տեսութեամբ ըստ կարի թափանցել խորհրդոյս զօրութեան մէջ. Հրէայք առ նախանձու պատրատուած էին սպանել մարգարէների ՚ի սկզբանէ անտի գուշակած Մեսիայն, կամաւ կուրանալով Նորան տեսնելու և գիտութեամբ տղիտանալով. նորան ճանաչելու. բայց որպէս զի թէ աշակերտները և թէ աշխարհը չկարծեն թէ իւր մահը պատսհական էր, վասն որոյ առաւ հացը իւր ձեռքը և օրհնելուց ու գոհանալուց յետոյ տուաւ աշակերտներին, յայտնելով նոցա իւր արածի խորհուրդը, թէ ինչպէս որ այս

Հայը իմ յատուկ կամքովս նուիրում եմ Հօր Աստուծոյ դոհանալով և բաշխում եմ ձեղ. սոնպէս և մահս իմ կամքով տալիս եմ պատարագ Հօր Աստուծոյ աշխարհի թողութեան փոխանակ և Նորա զայն ընդունելուց և ձեղ ողորմելուց յետոյ կրաշխեմ ձեղ, և ով որ այս խորհրդոյ դօրութիւնը կճաշակէ հաւատով և սիրով՝ մեղքից կրաբուի. Եւ օրհնելով իւր մարմնոյ նշանակները իւր զօրութեամբ և դոհանալով՝ տուեց Հօր Աստուծոյ՝ ինչպէս իւր անձը խաչի վերայ. յետոյ բաշխեց աշակերտներին, որովհետեւ մահուանից յետոյ նոյն խորհուրդը տուեց աշխարհին իբրև փրկանք: Սորա նման է ահաւասիլ և մեր խորհրդոյ կատարումը, որովհետեւ մենք սոսկ հայը դնում ենք սուրբ Սեղանոյ վերայ՝ իբրև Յիսուսի ձեռաց վերայ և օրհնում ենք այն Հայը Քրիստոսի մարմնոյ նմանութեամբ՝ խորհրդոյ պատմութիւնը ասելով. և յետոյ յառաջ ենք բերում գոհութեամբ և նուիրում ենք Աստուծոյ, որպէս Յիսուս ՚ի խաչն և ասում ենք. «Եւ արդ մեք Տէր, ըստ այսմ հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ», և յետոյ »Զքոյս ՚ի քոյսց՝ քեզ մատուցանեմք»: Սորանով դոհանում ենք Արարտից և փառաւորում ենք Նորան և ապա բաշխելով զայն մեր մէջ՝ ճաշակում ենք: Վական ինչ է արդեօք Հայի բեկանելոյ խորհուրդը. Գա բայցատրում է այսպէս՝ թէ ինչպէս Հայը ճշմարիտ և զգալի կերպով մանրում է սուրբ Սեղանոյ վերայ՝ նոյնպէս և Քրիստոս ճշմարտապէս մեռաւ խաչի վերայ մեզ Համար. և մենք մտաւորապէս պէտք է տեսնենք Քրիստոսի տնօրինութիւնը, որ զօրութեամբ միացած է նոյն Հայի հետ՝ համար ասում է «Առէք կերէք այս է մարմին իմ որ վասն ձեր և բազմաց բաշխի» այսինքն թէ՝ այդ Հայը որ ճաշակում էք՝ դորա հետ միտախն և զիտացէք և հաւատացէք որ զա իմ մարմինս է, և թէ ես ձեղ նման մարդ երևեցայ աշխարհի վերայ. ճաշակեցէք այդ Հայը և հաւատացէք որ Աստուած

մարդ դարձաւ և ձեզ համար մեռաւ. ճաշակեցէք այդ Հայը, դա իմ մարմինս է և աշխարհի կեանքը. ճաշակեցէք այդ Հայը, դա երկնքիցն է իջած աշխարհին կեանք տալու համար. ճաշակեցէք այդ Հայը, որ բաշխում է ձեր մէջ ձեր մեղքերի քաւութեան և թողութեան համար: Եւ սական ինչպէս բաշխուեցաւ մեր մէջ նոյն Հայը՝ այսինքն Քրիստոս. բաշխուեցաւ Նա ապտակով, թքով, եղեգով, նախատանօք, Զարքարանօք, Խաչով և մահով, սոքա էին Յիսուսի առ մարդիկ մարդասիրական ցոյցերը, որ բաշխեց մեզ. որպէս զի մենք այն ամենայն՝ մեր մտաց և յիշողութեան բերանով ճաշակենք և Նորա յիշատակը նուիրելով Հօր Աստուծոյ՝ նոյն յիշատակի յուսով ստանանք մեղաց թողութիւն. ուրեմն մեզ մնում է հոգւով ճաշակել և խորհրդուս զօրութեամբ՝ մեր հոգին պարարել, որովհետեւ. «Մարմնական նշանակք առանց հոգւոյն ինչ ոչ օգնէ» ասում է Տէրը, այսինքն մարմնական նշանակները՝ առանց հոգւով և հաւատով ընդունելու ոչինչ չի օգնի: Այս է քաւութեան կերպուր, որ բաշխեց մեզ Քրիստոս իւր մարմնից, որը նուիրում ենք Աստուծոյ և հաշտում ենք Նորա հետ, ճաշակում ենք մենք և միխթարւում:

Պարմնայ խորհուրդը յայտնելուց յետոյ, յայտնեց և իւր սուրբ Արեան խորհուրդը, որովհետեւ առնելով դինին՝ օրհնեց, զոհացաւ, խմեց և տուաւ իւր աշակերտներին ասելով՝ «Արքէք ՚ի սմանէ այս է արիւն իմ նորոյ ովստի». ինքը նախ խմեց օրհնութեամբ և գոհութեամբ, առել կամելով աշակերտներին թէ՝ այսպէս ախորժելով եմ ընդունում ձեր փրկութեան պատճառաւ ինձ համար պատրաստուած մահը. և յետոյ տուաւ նոցա, իբր ասելով և դուք խմեցէք իմ մահուան բաժակից, որ և դուք ինձ հետ կենզանանաք:

Սորանից պարզ երեւում է որ Յիսուսի սուրբ Մարմնոյ և Արեան ճաշակողը, պարտաւորում է յանձն առնել նախ Աս-

տուծոյ և ապա ընկերի համար այն ապտակը, թուքը, եղէքը, նախատինքը, Զարչարանքը, խաչը և մինչև անգամ մահը, որ յանձն առաւ կեանքի և մահու Տէրը՝ Ցիսուս, աշխարհի փրկութեան համար: Խոկ եթէ կդտանուին այնպիսի ճաշակողներ՝ որոնք կյանդնին մարմնական նշանակներ միայն տեսնել իրենց աչքի առաջ և կհամարձակուին մարմնաւրապէս միայն հաղորդուել այդ մեծ, սուրբ և փրկարար խորհրդին, առանց չարչարակից լինելու իրենց փրկութեան գերագոյն պատճառին, առանց յօժարուելու սիրով համբերելու ընկերի և թշնամւոյ ապտակներին, թուքին, եղէքին, նախատանքներին, չարչարանքներին ևալն, այնպիսի հազրդուղներին այս մեծ խորհուրդը օգուտ չի տալ, և ստրսափելի կինի տուած լինասը. Արեմն զգուշութիւն ցանկալով այնպիսիներին՝ կիշեցնեմ Առաքելոյ աղդարարութիւնը թէ: «Փորձեսի, մարդ նախ զանձն իւր և ապա ՚ի հացէ անտի կերիցէ և ՚ի բաժակէն արբէ»: Թող մարդ նախապէս փորձէ իրան, քննէ իւր դորձքերը, խորհրդակցէ ինքը իւր հետ թէ արդեօք սրբուած է մեղքից, և կարմղ է սուրբ չաղորդութեան բոլոր պահանջելի պայմանները կատարել և ապա թէ վստահի հաղորդ լինի սուրբ խորհրդին: Այս էր ահաւասիկ մեր հարեւանցի տեսութիւնը սոյն խորհրդոյ վերաբերութեամբ:

Ինչպէս տեսանք, երբ Քահանան ասաց «Արբէք ՚ի սմանէ» դպիրները ժողովրդեան կողմից սկսան երգել, իւրեանց աղօթքը առ Հալին Աստուած այսպէս.

«Հալի Երկնաւոր. որ զորդեգ քո ետուք ՚ի մահ վասն մեր պարտապան պարտեաց մերոց հեղմամք արեան նորա, աղաւեմք գքեզ ողորմեա քո բանաւոր հօտիդ».

Ով Երկնաւոր Հալի. որ Քո Որդիդ մեզ համար իրեւ մեր պարտուց պարտապան տուիր ՚ի մահ. Կորա թափած Արեան շնորհիւ ողորմիր Քո բանաւոր հօտիդ, աղաչում ենք Քեզ:

Ժողովուրդը լսելով Քահանայի խօսքերը և տեղեկանալով խորհրդի էական մատին և նորա տուած իրաւունքից քաջաղերուելով՝ զիմում է աղօթքով առ Հալին Աստուած թէ՝ ով Հալի մեր Երկնաւոր, անչափ սիրեցիր մեզ և սահման չունէր Քո սէրդ գէափ մեզ, մինչ զի Միածին Որդիդ, որ անմեղ էր բնաւին՝ մեր մեղաց համար ՚ի մահ մատնեցիր. մենք էինք Քեզ պարտական և սակայն Նա՝ անպարտը վճարեց Քեզ մեր պարտքը և պատառեց մեր պարտամուրհակը. Եւ այժմ աղաչում ենք Քեզ՝ լիշելով Միածին Որդուդ մահուան լիշատակը, ողորմիր մեզ՝ որ Քո բանաւոր ժողովուրդգ ենք:

Մինչդեռ գպիրները ժազովրդեան կողմից երգում են «Հալի Երկնաւոր» երգը, Քահանան ՚ի ծածուկ շարունակում է պատմական ձեռով առաջին աղօթքը այսպէս.

«Եւ զսոյն մեշտ իւր լիշատակ առնել պատուիրան աւանդեաց մեզ բարերար Որդիդ քո միածին. և իշեալ ՚ի ստորին վայրու մահու մարմնովն՝ զոր ՚ի մերմէս ընկալաւ յազգակցութենէ, և զնիքս դժոխոցն աղարտեալ հզօրեղապէս. զքեզ միայն ծանոց Ճշմարիտ Աստուած՝ զԱստուածդ կենդանեաց և մեռելոց»:

Եւ այս իբրև իւր լիշատակը կատարելու պատուիրան տուեց մեզ Քո բարերար Միածին Որդիդ և մեր մարդկացին բնութիւնից առած մարմնով իջնելով մահուան ստորին կողմերը և հզօր դօրութեամք դժոխքի նիփերը խորտակելով՝ Քեզ միայն ճանաչեցրեց ճշմարիտ Աստուած՝ որ կենդանիների և մեռելների Աստուածն ես:

Քահանան իւր այս աղօթքով արսպէս է խորհրդակցում Աստուծոյ հետ թէ՝ Տէր ոչ թէ մենք ինքներս վստահացանք այս զործին՝ այլ Քո Միածին Որդիդ տուաւ մեզ հրաման, պատուէր և իրաւունք՝ այս հացը և գինին դնել Քո առչւ և իւր Մարմնոյ և Արեան խորհուրդը օր ըստ օրէ լիշելով՝ իւր լիշատակը կենդանի պահել մեր մտաց մէջ, որովհետեւ ասաց՝ այս ձեր ձեռքն առնելով ինձ լիշեցէք և իմ տնօրէնութիւնս պատ-

մեցէք. որ ես մարմին առնելով՝ իբրև թէ հացով կերակրեցի ձեր տարակուսեալ հոգիքը և իմ արիւնս թափելով իբրև թէ զինով զուարճացրի ձեր սրտերը մեղքի քաւութեամբ և հանգերձեալ կեանքի յուսով։ Այսպէս սովորելով մեր երկնաւոր Ռւսուցից՝ լիշում ենք Քո բարերար Որդւոյ լիշտակը Քո առջեւ, ով Հայր։ Եւ նա իշնելով մահուան ստորին կողմերը, խորտակեց դժողքի նիգերը, ինչպէս սովորեցնում է մեզ Առաքեալն Պիետրոս։ «Որդւոցն որ ՚ի բանտին էին յետ չարչարանացն Քրիստոս ՚ի մահուան երթեալ քարոզեաց»։ այն հոգիքը որ բանտումն էին՝ չարչարանքից յետոյ մահուան ժամանակ գնաց Քրիստոս նոցա քարոզելու. սովորում ենք այս և Յիսուսի խորհրդական այս խօսքերից թէ. «Գայ իշխան աշխարհիս այսորիկ և լիս ինչ ոչ գտանէ լիւրոցն»։ Կուգայ աշխարհի իշխանը և իմ մէջ իրան պատկանեալ ոչինչ չի գտնի։ Կամելով ասել թէ՝ ոչ թէ մեռանում եմ ես իբրև պարտական Աղամայ դատակնքոյն կամ դատակուոյն, ոչ. որովհետև ես մեղք չունեի. այլ մեռանում եմ իմ Հօրս ինձ տուած պատուիրանի համեմատ։ «Եւ որպէս պատուիրեաց ինձ հայր՝ այնպէս առնեմ»։ Եւ երբ Քրիստոս խաչի վերայ ասելով՝ «Հայր, ՚ի ձեռս քո աւանդեմ զոգի իմ»։ աւանդեց հոգին և մարմնական հոգին Աստուածութեան հետ անճառապէս միաւորուած բարձրանում էր առ Հայր՝ աշխարհի կամ օդոյ իշխանը ըստ սովորութեան ընդ առաջ գնաց Յիսուսի մարմնական հոգւոյ պարտքը պահանջելու. և սակայն ոչինչ չգտնելով, ըստ Նախասաց հրամանին թէ. «Եւ լիս ինչ ոչ գտանէ»՝ զլիսակոր յետ դարձաւ։ Իսկ Հայրն Աստուած տեսնելով իւր Որդւոյ առ ինքն անշափ սէրը և խաչի վերայ մեռնելու Հնազանդութիւն փոխարէնը տուաւ Նորան իշխանութիւն թէ երկնքի մէջ և թէ երկրի վերայ. Այս տուած իրաւունքով և սատանային ամաչացնելուց յետոյ իջաւ մահուան ստորին կողմերը՝ այսինքն ՚ի դժոխս արդարոց կապեալ հոգւոց

մօտ, որոց քարոզեց Հօր Աստուածութիւնը և իւր շնորհքը և ազատելով իսպառ սատանալի իշխանութեան տակից՝ խորտակեց հոգեղապէս դժոխոց նիգերը և թողեց նոցա մնալու այնուհետև Աստուծոյ խնամոց ներքոյ մինչև ՚ի դատաստան վերջին. իսկ արդարներին՝ որոնք ոչ թէ իրենց մեղքի համար, այլ Աղամայ դատապարտութեան անիծից տակ լինելու պատճառաւ արդելեալ էին իբրև ՚ի բանտի՝ ասաց. «Օ՞ն, արիք, գնացուք աստի» այսինքն առ Հայր։ Այսպէս ահա ՚ի կենդանութեան՝ կենդանիներին և ՚ի մահուան մեռածներին քարոզելով մանաչեցրեց ամենքին Հօր Աստուածութիւնը, ինչպէս և ասւում է աղօթքի մէջ. «գՔեզ միայն ծանոց ճշմարիտ Աստուած, զԱստուածդ կենդանեաց և մեռելոց»։ կենդանիներին միշտ ուսուցանում էր, թէ ինքը ինչ որ անում է իրանից չէ անում, այլ Հայրն է գործում իւր մէջ և թէ ամենայն ինչ Հօր պատուիրանով և կամքովն է անում, ցոյց տալով իւր համակամութիւնը Հօր հետ. նոյնպէս և մեռածներին իջաւ և քարոզեց իւր բոլոր տնօրինութիւնը ըստ այսմ. «Այլ զի ծանիցէ աշխարհ եթէ սիրեմ զչայր և որպէս պատուիրեաց ինձ հայր՝ այնպէս առնեմ»։ բայց եթէ այս ամենը ես կատարում եմ, նորա համար է, որ աշխարհը ճանաչէ թէ ես սիրում եմ իմ Հօրը և ինչպէս ինձ պատուէր է տուել Հայրս՝ այնպէս եմ անում։

Այս ամենը ահա Քահանան զդալի պատարագի նշանակների հետ դիեց զդալի Սեղանի վերայ Աստուծոյ առաջ, իսկ մտքով, փափագով և հաւատով իմանալի պատարագն էր տեսնում Հօր Աստուծոյ առաջ. և այս բոլորը նա կատարեց իմացականապէս որովհետև ժողովրդից առնելով Քրիստոսի մարմնոյ նշանակները, իբրև համարձակ ծառայ, պատգամաւոր եղաւ ժողովրդի կողմից առ Աստուած և նուէրը դնելով Աստուծոյ առաջ՝ պատմեց կարգով իւր պատդամաւորութիւնը բոլորի

կողմից, այսինքն այն ամենայն երախտիքը, որ մարդիկ Յիսուսով ստացան Աստուծուց. Եւ երբ այս ամենը ասաց և բարձրացրեց Աստուծոյ սէրը և շնորհքը, մանաւանդ որ իրաւունք համարեց իրան Աստուծոյ ողորմութիւնը խնդրելու՝ ապա թէ այն նշանակները, որ մինչև այժմ իւր առաջն էր զրուած և համարձակ խօսում էր, այժմ չօր Աստուծոյ ձեռքն է տալիս ասելով Եւ արդ Տէր ժամանակ է որ Քո Միածնի մարմնոյ նշանակները Նորա հրամանաւ տամք ՚ի ձեռս Քո, որպէս զի շօշափելով քննես և ճանաչես թէ այդ և թէ դրա խորհուրդը. առ ձեռքի և որոնիլը. տես Քո Միածնի մեզ համար կրած չարչարանաց նշանները, այն է Ապտակը, Թուքը և Գլխի, Զեռքերի, Ոտքերի և Կողի խոցուածները և այլ պէս պէս չարչարանք՝ որ կրեց անմոռունչ խոնարհութեամբ, որպէս զի Դու Հայր, իմ ամրարտաւանութիւնը և իմ մեղաց հեշտութիւնը ներես, այդ իսկ պատճառաւ տուի այդ Քո ձեռքի Հայր, որ դրանով վրկուած ժողովուրդդ ընդունես և մեղքերով թշուառացած հաւատացեալներիդ ողորմած լինես:

Աւարտելով Քահանան այս աղօթքը՝ ընծայքն առնում է ձեռքը և փոքր ինչ յառաջ բերելով գարձեալ շարունակում է նախկին պատմական աղօթքը ասելով.

«Եւ արդ մեք Տէր, ըստ այսօն հրամանատրութեան յառաջ բերեալ զայս խորհուրդ վրկական մարմնոյ և արեան Միածնի քո, միշեմք զգորա որ վասն մեր զիրկագործ չարչարանսն, զիենսատու խաչելութիւնն, զերեքուինայ զիշաղումն, զերանելի յարութիւնն, զԱստուածակէս համբարձումն, զնստիլն ընդ աջմէ քո Հայր, զահաւոր և զիառաւորեալ զմիւսանգամ գալուստն խոստովանիմք և օրհնեմք»:

Ուրեմն Տէր, մեզ տուած այս հրամանին համեմատ, յառաջ բերելով Քո Միածնի Որդւոյ վրկական Մարմնոյ և Արեան խորհուրդը, լիշում ենք Դորա մեզ համար կրած վրկադրոծ չարչարանքը, կենսատու խաչելութիւնը, երեքուինայ թաղումը,

երանական յարութիւնը, Աստուածապէս համբարձումը, Քո աջ կողմդ նստելը ով Հայր և Նորա ահաւոր և միւսանգամ զալուստը խոստովանում ենք և օրհնում: Խորհուրդն ու տաճէ Այս աղօթքով Քահանան գարձեալ պատմական ձեռվ խորհրդակցում է Աստուծոյ հետ այսպէս թէ Տէր, Քո Միածնի Որդին, որ գիտեր Քո կամքի խորհուրդը, մեզ ևս յայտնեց իբրև սիրելի ծառաների, և մենք ահաւասիկ յառաջ ենք բերում և տալիս ենք Քո ձեռքը Միածնիդ վրկական մարմնաւորութեան խորհուրդը, այն է՝ Նորա չարչարանաց կրքերը որ լիշեցինք:

Աստեղ հարկաւոր է իմանալ թէ ինչո՞ւ է սա խորհուրդ կոչւում: Որովհետև այն բոլոր չարչարանքները՝ որ իբրև մարդկանցից մէկը կրում էր Քրիստոս մարդկան և զիւաց պարզապէս տեսանելի էր. սակայն ինքը ծածուկ և խորհրդական թաքնութեամբ այն բոլոր կրած չարչարանքները մէկ մէկ դնում էր իւր խորհրդակից չօր Աստուծոյ ձեռքը Եղամայ և նորա սելնոց պարտուց փոխանակ, որով լիրակ վրկուեցանք և զօրացանք և մասնակից եղանք Աստուծոյ իմաստուն խորհրդոց զիտութեան: Եւ Քրիստոսի այս բոլոր կրքերը ամենայն ժամանակ լիշատակով մարդկան վրկութիւնն է տնօրինում: Զէ կարելի ասել թէ Քրիստոսի չարչարանքները և կամ բարիք՝ միայն Քրիստոսի ժամանակներն լիշուեցան և նոյն ժամանակի մարդկան համար էին, այլ նոյն չարչարանք և փըրկագործութեան տնօրինութիւնք միշտ պէտք է լիշուն մինչեւ զի կատարած աշխարհի, որովհետև Քրիստոս միշտ կայ և միշտ է նոյնպէս Նորա վրկութիւնը ըստ Առաքելոյն. «Զի Յիսուս Քրիստոս երեկ և այսօր նոյն և յափտեան»: Բայց թէ ինչո՞ւ համար է մեր այսպիսի յաճախ լիշատակութիւնը. որպէս զի մեղքի մէջ ընկած ժամանակ՝ չուսահատուեմք թողութեան մասին, այլ շտապենք մեր վրկադրոծ միջնորդին գիմելու և

Նորա չարչաբանաց և մահուան լիշտառակը նուէր տալով Ապ-
տուծոյ ջօր՝ նորա ողորմութիւնը կրկին առ մեղ գրաւենք:
Յիսուս անմեղ լինելով՝ չարչաբանեց, որպէս զի մենք՝ որ մեղ-
քով ենք լրուած՝ Կորանով արդարանանք. Կորա խաչի վերայ
ստացած մարմնով մահը, մեղ՝ հոգւով մեռածներիս հոգւոր
կեանք բերեց և բերում է միշտ: Եւ եթէ Կա չարչաբուեցա,
խաչուեցաւ և թաղուեցաւ այդ ամենայն Կորա տնօրինաբար
խոնարհութիւնն էր, որ կրեց մեր պարտուց և մեր ամենեցուն
փոխանակ. իսկ յարութիւնը, համբարձումը, չօր Աստուծոյ ա-
ջակողմը նստելը և ապա ՚ի կատարածի աշխարհիս հրապա-
րական գատաստանը՝ որ պիտի առնէ, շնորհէ է և փառք,
որ հօրեցը ընդունեց. բայց ինչպէս որ չարչաբանքը ոչ թէ իւր
այլ մեղ համար ընդունեց, նոյնպէս և փառքը ոչ թէ իւր հա-
մար ստացաւ՝ որ ամենմեին կարօտ չէր, այլ նոյն փառաց մէջ
ինքը գրաւական երևեցաւ մեդ:

Երբ հասնում է Քահանան աղօթքի վերջին կտորին, այն ժամանակ փոքր ինչ բարձրացնելով ընծալքը՝ մատուցանում է առ Հայր, բարձրաձայն ասելով.

«Եւ զքուս՝ ի քոյսց քեզ մատուցանեմք ըստ ամենայնի և յաղագս ամենեցուն».

Այսինքն Քո մեղ արած բարիքը և պարզեց Քեզ ենք ընդ-ծառում ամենի փախանակ:

Ասել է կամենում թէ այդ նուշը՝ որ իբրև մեր մարմ-նակից և մեղանից ստացուած մարդ՝ տուի Քեզ ով Աստուած՝ Քո անձառաբար ճնունդն է և Որդին, և մենք՝ որ Քո ծառաներդ ենք, թէպէտ իբրև մերը և մեղանից ենք մատուցա-նում, ոակայն զդա չենք ճանաչում մեզ նման մէկը, այլ Քեզ հաւասար Աստուած ենք զաւանում, որ անօրինեց այս ամենը մեր բոլոր կարօտութեան համեմատ և մեր ամենիս փրկու-թեան համար. Եւ մենք այժմ Գորան՝ իբրև Քո Որդի և իբրև

Քեզանից մեզ տուած՝ դարձեալ մեզանից տալիս ենք Քեզ նուէր ամենքի փոխանակ և իբրև ընծայ բոլոր աշխարհի հաշտութեան՝ Քո ձեռքի ենք տալիս, ով Աստուած:

Սորանից յետով դպիրները երգում են

«Յամենայինի օրհնեալ ես Տէր. օրշնեմք գքեզ, գոլեմք զքեզ,
գոհանամք զքէն, աղաշեմք զՔեզ. Տէր Աստուած մեր».

Ամեն բանի մէջ օրհնեալ ես Տէր, օրհնում ենք Քեզ. գովում ենք Քեզ, զոհանում ենք Քեզանից և աղացում ենք Քեզ, մի Տէր Ասուած մեր:

Այստեղ ժողովուրդը գոհանում է, չօր Աստուծուց Քրիստոսին մեզ փրկանք տալու համար որովհետև իրանց պատգամաւոր հրեշտակը՝ աղսինքն Քահանան որ իրանց տուած ընծայից նուէրը տեսանելի նշանակօք և հաւատով մատուց առաջի Աստուծոյ չօր և բոլորի կողմից շնորհակալ եղաւ պէս պէս գոհութեամբ. Նա ընկալաւ և գրկեց սիրոյ ողջունիւ իր-ըւել իւր ծոցածին Որդին. տորա վերայ հիմնուելով Քահանան ասաց, տուի Գորան Քեզ ամեն բանի և ամենքի փոխանակի; Խոկ ժողովուրդը խորհրդագոյած լինելով և տեղեկանալով Սուրբ խորանի ներքին կողմը կատարուած այս ամենայն խորհրդին Սարկաւագի ազգաբարութեամբ, յայտնում է իւր շնորհակալութիւնը և օրհնում է Աստուծոյն իւր անչափ բարեսոց համար: Սակայն խորհրդածենք թէ ինչու Սարկաւագն է ծանուցանում ժողովրդին խորհրդի մատերը և ոչ ինքը Քահանան: Պատճառոր Քահանան կը ուժ է իւր մէջ Սերովեէլ կերպարանքը և խօսակցում է Աստուծոյ հետ անընդմիջաբար. Խոկ Սարկաւագը կազմում է պետութեան դատը կամ դատակարգութիւնը և իւր կարողութեան չափով տեղեկանալով խորհրդին, յայտնում է հրեշտակաց դատուն, որ են դպիրները. Քահանայի ձայնը լսելի չէ լինում ժողովրդին, որպէս Սերովեէլից չըթշտակներին. այս Քահանային իրեւ Սերովեէլ ձայնը լսում է Սարկաւագը և

նորանից իշնում է ժողովրդին. և այս ամենայն նորա համար՝ որպէս զի բարով պահուած լինի Եկեղեցոյ մէջ չըեշտակաւկան կարգաւորութեան համանմանութիւնը:

Մինչդեռ դպիրները. «Յամենախի օրհնեալ ես Տէր.» երգելով վերոիիշեալ մտքով զոհանում են՝ Քահանան բաղկատարած ժողովրդի գոհութեան մտքով ինքն ևս զոհանում է այսպէս.

«Զքեզ արդասե, Տէր Աստուած մեր, գովիմք, և զքէն գոհանամք հանապազ: Որ զանց արարեր զմերով անարժանութեամբս այսպիսի ահաւոր և անպատում խորհրդոյ կարգեցեր սպասաւոր: Ոչ յաղագս մերոց ինչ բարեգործութեանց, յորոց յոյժ թափուր եմք և միշտ ունայն գտանիմք հանապազ: Այլ ՚ի քո բազմազեղ ներողութիւնդ ցանգ ապաւինեալ համարձակիմք մերձենալ ՚ի սպասաւորութիւն մարմնոյ և արեան Սիածնի Քո Տեառն մերոյ և փեկին Յիսուսի Քրիստոսի, որում վայել է փառք, Եշանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ածեն».

Արդարեւ Քեզ ենք գովում և Քեղանից ենք շնորհակալ միշտ, ով Տէր Աստուած. որ առ ոչինչ համարելով մեր անարժանութիւնը՝ այսպիսի ահաւոր և անպատճելի խորհրդին ըսպասաւոր կարգեցիր. Եւ այս շնորհը որ մեզ արի՞ ոչ թէ մեր բարեգործութեանց պատճառաւ է որից շատ զիկուած ենք միշտ, այլ Քո անբաւ ներկամտութեանդ վերալ դնելով մեր լուսը, համարձակուում ենք մօտենալ սպասաւորելու Քո Միածնի և մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմնոյ և Արեան. Որին արժան է և վայել փառքը, Եշանութիւնը և պատիւ:

Այս աղօթքով Քահանան ոչ թէ պատարագում է, այլ զոհանում է, ինչու որ տեսաւ որ Աստուած սիրով ընդունեց իւր մատուցած պատարագը. որ իւր Որդուոյ լիշատակի խորհուրդն է և ողջունեց դժով և համակամութեամբ Նորա մեզ համար կատարած մարդկային բոլոր տնօրէնութիւնները:

Քահանան զոհանում է իրը թէ ասելով այս ժողովուրդը,

որ նախ իրաւունք էր համարում իրեն զոհանալու, այժմ Քո Միածնի պարզեց տեսնելով իրաւացի զոհացան. և արժան իսկ է մեզ ամենայն վայելութեամբ գոհանալ Քեզանից, ով Հայր, որ Քո սիրելի Որդուով տուիր մեզ անարժաններիս և մեղաւոր-ներիս այսքան փրկարծութեան տնօրէնութիւններ. որովհետեւ զիտեմք ամենայն իրօք՝ որ մեր մարդկան չար զործքերը շատ էին և են, իսկ Դու Աստուած՝ որ մեծ ես ողրմութեամբ, զանց առնելով մեր այդ բոլոր չարութեան զործքերը մինչդեռ մեղքի մէջ մեռած էինք՝ կենդանացրիր մեզ Քո Միածնի Որդուով. Նորա հետ և մեզ յարութիւն տուիր և Նորա հետ մեզ ևս նստացրիր երկնաւորների մէջ, բարձր քան զամենայն Իշխանութիւնն և Պետութիւնն, Զօրութիւնն և Տէրութիւնն, ինչու որ Միածնի այդ խնդրած էր Քեզանից առելով. «Զայր, կամի՞ զի ուր եսն եմ և սոքա ընդ իս իցեն»: Քահանան այս զոհութեան խորհրդածութեամբ, Աստուծոյ տուած պարզեց շատ առաւել է համարում քան իւր արժանաւորութիւնը, որովհետեւ մարդ գոլով միտում է միշտ ՚ի չարն. վասնորոյ խոստովաննելով իւր պարտաւորութիւնը Աստուծոյ առաջ խոնարհաբար աղացում է այսպէս Տէր, Քո ծայրագոյն և ամենամեծ պարզեացդ և շնորհաց. հետ կշռելով մեր բնութեան յետին և անարգ նուաստութիւնը և մեր ամենայն բարեգործութիւնից հեռու և թափուր լինելը՝ գտանում ենք որ Քո տուբքը՝ շնորհօք է և ոչ ըստ պարտեաց: Աղրմութիւնն և ոչ հատուցումն. որովհետեւ եթէ մեր մեղքերը քննես՝ ով արդեօք կարող է համարձակ կանգնել Քո առաջդ. ուրեմն մեզ համարձակութիւն է տալի միայն Քո անբաւ սէրդ, շնորհքդ և ողրմութիւնդ որ մինչդեռ մեր մեղքովը թշնամական յարաբերութեան մէջ էինք Քեզ հետ Դու Քո Միածնի Որդուով վերցրիր այդ թշնամութեան խորոցը և մեզ որդեգրեցիր Քեզ և ժառանգ արեցիր Քո արքայութեանը. Այժմ որ հաշտ ես մեզ

Հետ և մեր չալին ես՝ աւելի ևս իրաւունք եմ ունենում Քեզ դիմելու և Քեզանից բարիք և ողորմութիւն սպասելու. Այս է ահաւասիկ պատճառը, ովք Տէր Աստուած մեր, որ մտահանում ենք ՚ի Քեզ՝ մեր Տէր Յիսուսով, որով Քեզ Հետ հաշտուելու արժանաւորութիւնը դտանք; Եւ այս ամենայն շնորհացդ ապաստանելով միայն համարձակում ենք սպասաւոր լինելու Քո Միածնի Մարմնոյ և Արեան խորհրդին: Քահանան սպասաւոր է անուանում իրան. և իրաւամբ. որովհետեւ գՔրիստոս պատարագել Հօր Աստուծոյ ամենքի փոխանակ՝ պաշտաման և սպասաւորութեան գործ է, որ միջնորդ լինել կնշանակէ Աստուծոյ և մարդկան մէջ: Իսկ «Մարմնոյ և Արեան Միածնի Քո սպասաւորութիւն.» ատելը, նշանակում է՝ որ Քո Միածնի մարմնանալու խորհուրդը և փրկութեան գործը այժմ Քեզ նուիրեցի. և որովհետեւ Գու սիրավ ընդունեցիր՝ գոհանում են Քեզանից, որ ինձանից և իմ արժանաւորութիւնից շատ բարձր այս շնորհքով վայելելու արժանի արիր:

Այս աղօթքը աւարտելով՝ Քահանան՝ խաղաղութիւն է տալի ժողովրդին ասելով.

«Խաղաղութիւն ամենեցուն»,
Այսինքն թէ որովհետեւ Սուրբ Հոգին պիտի խնդրեմ մեզ վերայ և այս ընձալից վերայ, աստի տալիս եմ երկնային խաղաղութիւնը ձեր հոգւոց, սրտից, մտաց և խորհրդոց:

Փողովուրդը նոյն խաղաղութիւնը ցանկալով և Քահանային՝ ասում է.

«Եւ ընդ հոգուց քում»,
Որից յետոյ Սարկաւագը հրամայում է որ ամբողջ Եկեղեցին երկպատանէ Աստուծոյ ասելով.

«Աստուծոյ Երկրպատեսցուք»:
Եւ ժողովուրդը Սարկաւագի հրամանին համաձայն երկրպատութիւն է տալի Աստուծուն ասելով.

Դասդ «Արածի քո Տէր», ըստ և գնեցար և գնձմարացից»
Եւ սորան կից սիսում է երգել իւր աղօթքը առ Արդին
Աստուած այսպէս.
«Որդի Աստուծոյ, որ պատարագեալ Հօրոնի Հաշութեամբ,
Հաց կենաց բաշխեալ մեզ, հեղմամբ արեամ քո սուրբ. աղաչեմք
գքեզ ողովմեա արեամբ քով միուեալ հօտիս».

Ով Աստուծոյ Որդի, որ պատարագուելով Հօրդ ՚ի հաշտութիւն, բաշխում ես մեր մէջ իբրև կենաց Հաց, հեղլով
միւնոցն ժամանակ Քո առւրբ Արիւնը, աղաչում ենք Քեզ, որ
զորմիր Քո Արիւնով փրկուած հօտիս:

Այս աղօթական երգով ժողովուրդը լիշում է իւր Փրկչի
չարչարանքը, խաչը և մահը և բալթը էլ բնդունում է իբրև
ճշմարիտ միջոց Աստուծոյ հետաշտութեամ, նա կիմում է
իւր Փրկչին իրը թէ առելով Տէր Յիսուս հաւատում ենք որ
Գու ես Աստուծոյ Որդին, որ նախածնողայ վերայ Քո Հօր դր-
րած զատապարտութեան անէծքը վերցնելու և մեզ նորան
որդեգրելու համար՝ յանձն աւար. Քո սուրբ կամքով մեր մե-
ղաց պատճառաւ և մեր պարտուց փոխանակ զբեզ զոհ և պա-
տարագ նուիրելու Հօր Քա Աստուծոյ և Քո սուրբ պատարա-
գաւդ իբրև Հաց բաշխուեցար մեր մէջ որ մեզ կենդանացնես
մեռելութիւնից. Իսկ սուրբ Արիւնովդ մեզ վերստին մաքրեն:
Այս մենք չեինք արժանի Քո այսքան շնորհացդ սպական Քո
առ մեզ ունեցած Աէրդ դերագութեամբ մեր ամենայն շարիքն անտես առնելով հաճեցար մեզ փրկել և բարե-
րարել. Արեւմն վատահանալով Քո անչափ Արորդ՝ աղաչում
ենք Քեզ որ այդքան շնորհացդ լիշատակութեամբ ողորմես և
գթաս մեզ՝ ինչու որ Քո սուրբ Արիւնովդ ենք փրկուած:

Մինչդեռ դպիրները այս աղօթքն են երգում առ Արդին
Աստուած Քահանան համբուրելով Սուրբ Սեղանը, ինդրում է
Աստուծոց որ ուղարկէ Սուրբ Հոգին ընծալից, իւր և ժողո-
վողի վերայ ասելով,

«Երկրպագանեմք և աղաշեմք և խնդրեմք ՚ի քէն բարեբար Աստուած, առաքեա ՚ի մեզ և յառաջի եղեալ ընծայս այս, գմբշտնցենաւորակից քո և գէակից սուրբ Հոգեդ».

Երկրպագանում ենք, աղաչում ենք և խնդրում ենք Քեզանից, ով բարերար Աստուած, ուղարկիր մեզ և այս Քո առջևդ դրած ընծայլից վերայ մշտնջենաւորակից և էակից Սուրբ Հոգեդ:

Այս աղօթքից իետոյ ահիւ, դողութեամբ և հաւատով վերցնում է Սկհոյ քողը, և առնելով ձեռքը սուրբ Հացը մաղմայով ասում է.

«Որով զհացս օրհնեալ՝ Մարտին Ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի».

Որով այսինքն Սուրբ Հոգւով օրհնելով այս Հացը՝ վոխէ՝ ՚ի ճշմարիտ մարմին մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի:

Յետոյ առնում է բաժակը և ասում.

«Եւ պրաժակս օրհնեալ՝ Արիւն ստուգապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի».

Եւ այս բաժակը սուրբ Հոգւով օրհնելով իսկական Արիւն փոխէ մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի:

Եւ ապա մաղմայն դնելով Սկհոյ վերայ՝ դարձեալ ասում է.

«Որով զհացս և զգինիս օրհնեալ՝ Մարտին և Արիւն Ճշմարտապէս արասցես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի՝ փռեաթելով Հոգւովդ քով սրբով».

Որով այսինքն սուրբ Հոգւով օրհնելով այս Հացը և գիշին՝ ճշմարիտ Մարմին և Արիւն արա մեր Տէր և փրկիչ Յիսուսի Քրիստոսի, սուրբ Հոգւովդ փոխարկելով:

Այս օրհնութեան խօսքելից իւրաքանչիւրը երեք անդամ է ասում Քահանան և ամեն անդամին խաչակնքում է ընծայի վերայ, ուրեմն բոլորը ինն անդամ է ասում և ինն անդամ էլ խաչակնքում է. իսկ Սարկաւագը՝ որ կողքին է միշտ, այժմ

աւելի ևս մօտենում է, գլուխը կորացրած, ահիւ և դողութեամբ ասում է ցած ձայնով. «Ամեն. Օրհնեա Տէր» Քահանայի ամեն մի անդամ ասելուց և խաչակնքելուց յետոյ. Եւ եզր Քահանան աւարտում է այս օրհնութեան աղօթքը՝ դպիրներն ևս իրանց աղօթական երգն են աւարտում և Սարկաւագը հայում է Քահանայի օրհնութիւնը ասելով բարձրաձայն.

«Օրհնեա Տէր».

Իսկ Քահանան դարձեալ քօղը ծածկելով Սկհոյ վերայ ասում է վերոյիշեալ օրհնութեան աղօթքի շարունակութիւնը երբեւ վերջաբան։

«Որպէս զի եղեցի սա ամենեցուն մեզ մերձեցելոցս յանդատապարտութիւն, ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց».

Որպէս զի Սա լինի մեզ ամենիս որ մօտենում ենք սուրան, մեղքի քաւութիւն, թողութիւն և անդատապարտութիւն։

Այս միջոցին դպիրները երգում են. «Հոգի Աստուծոյ» աղօթական երգը:

Ցոլոր աղօթքները որ մինչև այժմ ասաց Քահանան մասմբ Յիսուսի շնորհաց պատմութիւնն ու լիշտակութիւնն էր, որ արեց Քահանան Հօր Աստուծոյ առաջ և մասմբ գոհաբանութիւն՝ որ մատուց Քահանան Աստուծոյ. Որովհետև՝ նախ և առաջ Քրիստոս մարդ և Աստուած երևեցաւ երկրի վերայ և զերկլաւորները կցորդեց երկնաւորներին՝ այս խորհուրդն ունէր Քահանայի առաջին աղօթքը. այս մտքով էր, որ Սարկաւագը հրամայեց Եկեղեցւոյն հրեշտակալին Սրբասացութիւնը երգել. նորանից յետոյ Քահանայի երկրորդ աղօթքն եղաւ Յիսուսի փրկարգործ չարչարանաց և խաչի տնօրէնութեան խորհրդածութիւնը՝ որ նուէր տուեց Քահանան Հօր Աստուծոյ, որի համար և ժողովուրդը Սարկաւագի աղօթարութեամբ գոհացաւ և օրհնեց զԱստուած. Եւ որովհետև խաչից Յարութիւնից յետոյ առաւ Յիսուս Սուրբ Հոգին Հօրից և բաշխեց

աշխարհին՝ սոյնպէս և Քահանան այս բոլոր խորհրդոց լիշտա-
տակը չօր Աստուծոյ նուէր տալուց լեռով, վասահանում է Սուրբ
Հոգւոյ շնորհքը ինդրել ասելով. «Առաքեա ՚ի մեղ և յառաջի
եղեալ ընծայու այս զմշտնչենաւորակից Քո և զէակից Սուրբ
Հոգիդ», ինչու. որպէս զի տապաւորուի Սորա մէջ, ինչպէս Յի-
սուսի վերայ ՚ի Յորդանան. և Սորան մերձեցաղ ժողովորդը
զգայական ճաշակմամբ՝ Սուրբ Հոգւոյն իմանալի զօրութիւնը
և շնորհքը տանան:

Այժմ խօսենք, թէ ինչո՞ւ Քահանան ասում է. «Որով ըգ-
հացս և զգինիս օրհնեալ. Մարմին և Արիւն ճշմարտապէս ա-
րացնես Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի». Միթէ
մինչեւ այժմ սոսկ հաց էր և զինի և Քրիստոսի Մարմին և
Արիւն փոխարիւտած չէր. որովհետև մինչեւ ցայժմ քահանայն
հացը և զինին իբրև նշանակներ ունէր Յիսուսի Մարմնոյ և
Արեան իւր ձեռքումը, որ Յիսուսի տնօրինութիւնները, լիշելով
արարողապէս կատարում ու լիշտակում էր այն, ինչ որ Քրիս-
տոս վերնատան մէջ վերջին ընթրիքի ժամանակ անում էր,
Աստուծոյ առաջ. իր այսպէս խորհրդակցելով. Տէր, Քո Միա-
ծին Որդին այս հացը առաւ իւր ձեռքը, օրհնեց և իւր մար-
մինը կատարեց. նոյնպէս և այս զինին սրբեց և իւր արիւն
փոխեց և նորանով մարդկան հետ նոր ուխտ հաստատեց. այ-
ժգը որ խնդրեց զհոգին սուրբ՝ աղաջում է որ իր սուրբ Հո-
գովը այս նշանակները օրինակիցը փոխէ ՚ի ճշմարտութիւն.
Հացից՝ ՚ի Մարմին և Թիմուց՝ Արիւն Միածնին, որով և կա-
տարում է: Սուրբ Հոգւոյ իջումն ՚ի հացն և ՚ի զինին և միաւո-
րութիւնը մեր մարմնաւոր աչաց չէ ենթարկուում. այլ հաւա-
տով պիտի ըմբռնենք:

Ինչպէս վերը ասացինք երբ որ Քահանան ասում է բարձ-
րաձայն. «Որպէս զի եղիցի սա ամենեցուն մեղ մերձելոց».

Դպիրները ժողովրդեան կողմից երգում են իրանց աղօթքը առ
Հոգին սուրբ արտիկուլատում ըստ Հոգի աղջակա-
չու Հոգի Աստուծոյ, որ դժբակալցիք քո զմորհութիւն, Եղեալ ՚ի
յերկնից կատարեն ՚ի ձեռու մեր Հեղմածք արեան սորա աղաչեմք
զքեզ, հանգն զհոգիս մեր ննջեցելոց».

Ով Հոգի Աստուծոյ, որ երկնքից իջար Քո փառակցի խոր-
հուրդը մեր ձեռքով կատարելու, աղաջում ենք Քեզ որ Սորա
Արեան հեղման շնորհիւ երկնալին հանգստին արժանացնես
մեր ննջեցեալների հոգիքը:

ԺԴ. ԲԱԺԻՆ

Այս ամենալավ պարզ ու արար անունն է Յիշատակութիւնը.
Ինչպէս Քահանան, նոյնպէս և ժողովրդը լիշում են կենդա-
նի և ննջեցեալ հաստացեալները և նոյա համար աղօթքում
են առ Աստուած սուրբ պատարագի միջնորդութեամբ. Այս
մտքով է, որ երբ դպիրները երգում են «Հոգի Աստուծոյ» երգը՝
Քահանան ՚ի ծածուկ լիշտակութեան աղօթքն է անում.
Սակայն պէտք է զիտենալ, որովհետև հացը և զինին ՚ի Մար-
մին և Արիւն Քրիստոսի փախարիւտած է. ուստի այսուհետև
Քահանան ձեռքերը քան զրնծամն չպէտք է բարձրացնէ, աչ-
քերը անթարթ սուրբ ընծայից վերայ պիտի ձգէ. և զլուխն
միշտ ՚ի խոնարհ ունելով լարդանօք և զողութեամբ պիտի
կանգնի Սուրբ քննծայից առաջ, որովհետև նոքա չեն այլ ևս
նշանակներ Մարմնոյ և Արեան Տեառն, այլ են իսկապէս Մար-
մին և Արիւն փրկչին:

Քահանափ լիշտակութեան աղօթքն է հետեւալը.

«Սովաւ շնորհեալ զսէր, զհաստառութիւն և զըդձալի զես-
տաղութիւն ամենայն աշխարհն, սրբոյ եկեղեցւոյ և ածենայն ուղ-

զափառ Եսիսկոպոսաց, քահանաւից, սարկաւագաց, թագաւորաց,
աշխարհե, իշխանաց, ժողովրդոց, ճանապարհորդելոց, նաւելոց,
վտանգելոց, աշխատելոց, և որք նի պատերազմունո բարբարոսաց:

Սովոր և օգօց շնորհեա գրաբեխառնութիւն, և անդոց
զաղարերութիւն, և ախտացելոց նի պէս պէս ցաւո փութապէս
առողջութիւն:

Սովոր հանգո զամենեսեան յառաջագոյն նի Քրիստոս ըգ-
ննչեցեալսն, զնախահարս, գհաւապետս, զմարդարէս, գոռա-
քեալս, գլիայեալս, գեավիսկոպոսունս, զերիցունս, գարկաւագունս
և զբնաւ ուխտ եկեղեցւոյ քում սրբոյ. և զամենեսեան որք յաշ-
խարհական կարգէ զարս և գլանայս հաւատով վախճանեալս:

Սորանով այսինքն այս Քո Միաձնի սուլբ Մարմնոյ և
Արեան խորհրդով և շնորհիւ, պարզելիր բոլոր աշխարհին Աէր,
հաստատութիւն և ցանկալի խաղաղութիւն. նոյնպէս և Սուրբ
Եկեղեցւոյն, ուղղափառ Եպիսկոպոսներին, քահանաներին,
սարկաւազներին, աշխարհի թագաւորներին, իշխաններին, ժո-
ղովուրդներին, ճանապարհորդներին, նաւորդներին, կապեալ-
ներին, վտանգի մէջ եղողներին, աշխատողներին և բարբա-
րոսաց դէմ պատերազմողներին:

Սորանով և օդին պարզելիր բարեխառնութիւն, դաշտերին
պտղաբերութիւն, զանազան ախտերով և ցաւերով հիւանդա-
ցածներին՝ վտաթով առողջութիւն:

Սորանով հանգնտացրու այն բոլոր ննջեցեալներին՝ որոնք
շատ առաջ ՚լ Քրիստոս են վախճանուած, ինչպէս նախահայ-
րերը, հայրապետները, մարգարէները, առւաքեալները, վկայքը,
եպիսկոպոսները, երիցունքը, սարկաւազները և Քո սուրբ Եկե-
ղեցւոյ բոլոր ուխտը և այն ամենայն աշխարհականները թէ
մարդիկ և թէ կանայք՝ որոնք հաւատով են վախճանուած:

Այս լիշատակութեան ազօթքի վերջին մասը բարձրաձայն
է ասում Քահանան, այսպէս.

«Ընդ որս և մեզ այց արացիս բարերար Աստուած, ա-
ղաշեմք».

Նոցա հետ և մեզ արա Քո այցելութիւնդ, ով բարերար
Աստուած, աղաչում ենք Քեզ:

Քահանան լիշեալ լիշատակութեան ազօթքով խնդրում է
որ Հալին Աստուած Քրիստոսի սուրբ Մարմնոյ և Արեան շնոր-
հիւ պարզելէ մէր և խաղաղութիւն աշխարհին: Այս մէրը՝ ոչ
թէ մարդկան առ միմեանս ունեցած խախուտ մէրն ու հաշ-
տութիւնն ենք հասկանալու, այլ Աստուծոյ հաստատուն և
յափստենական Սէրն ու խաղաղութիւնն որ խնդրանօք քահա-
նալին իջանում են ի մարդիկի:

Քահանան կարգավ մաղթում է և հայում Աստուծոյ այ-
ցելութիւնը բոլոր աշխարհի և Քրիստոնեալ ժողովրդոց համար.
ինդրում է և Եպիսկոպոսաց համար, որ իմաստութեամբ ա-
ռաջնորդեն իրենց տեսչութեան և ինամոց յանձնուած հօտը.
Քահանաների համար՝ որ արժանապէս հովուեն ժողովուրդը ա-
ռանց դայթակղեցնելու նոցա. Թագաւորների համար՝ որ պա-
տերազմների փոխանակ՝ խաղաղութիւն և հաշտութիւն տնօ-
րինեն. իշխանների համար՝ որ երկիւղ ունենան և ՚ի բարին
գործ զնեն իրենց իշխանական իրաւունքը. Ժողովրդոց համար՝
որ օրէնքին հնազանդուեն. Ճանապարհորդների համար՝ որ ա-
մենատեսակ վտանգից փրկուեն. Վտանգի մէջ եղողների հա-
մար՝ որ վտանգից ազատուեն. Աշխատողների համար՝ որ իրենց
արդար վաստակոց և աշխատանաց պտուղը քաղեն ու ճաշա-
կեն. Բարբարոսաց դէմ պատերազմողների համար՝ որ պատե-
րազմից խաղաղութեամբ և առանց վտանգի ազատուեն. Ողի
համար՝ որ բարեխառն լինի յօդուտ մարդկան. Անդաստանների
համար՝ որ պտղաբեր լինին. Պէս պէս ցաւերով վարակուած
հիւանդների համար, որ շուտով առողջանան:

Կենդանիքը լիշելուց յետոյ և կենդանի հաւատացելոց և
աշխարհի համար բարիք և ողորմութիւն հայցելուց յետոյ լի-

շում է և ննջեցեալները, առաքեալները,, նախահայրերը և ամեն արդարները:

Սակայն թէ ինչ խորհուրդ ունի մարգարեից, առաքելոց վկայից և ամենայն սրբոց լիշտակութիւնը, քանի որ նոքայի հաճուս կամաց Աստուծոյ կենցաղավարուելով, արժանացել են Կորա Ձնորհաց: Խորհուրդն այս է նախ՝ օրովհետեւ դիրխտոս և Կորա բոլոր փրկագործ տնօրինութիւնք լիշտակում ենք առաջի Հօր Աստուծոյ՝ որ զլուխն է եկեղեցւոյ, ուստի վայելուչ է, զի ուր է զլուխն, այնուեղ լինին և անդամք զըլխոյն, որ են սուրբերը, թէ կենդանիք և թէ ննջեցեալք. Ուր է թագաւորը, այնուեղ լինեն և զինուրք և զօրավարք: Երկրորդ՝ քահանան լիշելով Սուրբերը՝ սորանով այսինքն Քրիստոսով խնդրում է հանգիստ և ողորմութիւն նոցա համար. ողոնք թէպէտ և փառաւորուած և հանգստացած են. սակայն տակավին փառաց լրմանը և կատարելութեանը չեն հասած, այլ օր քան զօր կարօտում են վերստին Աստուծոյ Ալլոյն, Ձնորհաց և Ողորմութեան, ըստ որում Աստուծոյ փառքը մեծ է. Ոչ աչքը տեսանելով կյադենալ և ոչ ունին լսելով: Բայոր բանական զոյացութիւնք ևս կարօտ են Սուրբ խորհրդին, թէ սուրբք թէ մեղաւորք, թէ ննջեցեալները և թէ կենդանիք, որպէս զի նորոգուին Քրիստոսի շնորհքով: Երրորդ՝ սրբոց լիշտակութիւնը լինում է և նորա համար, որ մենք լիշելով Աստուծոյ առաջ նոցա սրբութեամբ անցրած կեանքը՝ խրնդրում ենք որ Աստուած նոյնպիսի կենցաղավարութիւն շնորհէ և մեզ, որպէս զի մեք ևս կարող լինեմք հետեւիլ նոցա սրբութեան օրինակին: Չորրորդ լիշտակում են սուրբերը և այս պատճառաւ, որ նոքա կազմում են երկնալին Յաղթանակող Եկեղեցին. Իսկ մենք երկրալին Զինորեալ Եկեղեցի. և որովհետեւ Յիսուսի անձաւ պատարագի խորհուրդն երկու եկեղեցեաց միութիւնն է կազմում. ուստի վայելուչ և պատռական է որ

Յաղթանակող և Զինորեալ Եկեղեցիքը միասին՝ որոց հետ և Անդրանկաց Եկեղեցին՝ այն է Հրեշտակական բոլոր գասակարգութիւնք՝ մի հաւաքուած բարեձև հպատակութեամբ սպասաւորակից լինեն Յիսուսի Մարմնոյ և Վրեան Սուրբ խորհրդին: Այս է ահա այն վիեմ և խորհրդաւոր պատճառները՝ ուրովք լիշում ենք հանգուցեալ Սուրբերը՝ ի ժամ սրբու պատրագին:

Երբ Քահանան ասում է, «Ընդ որս և մեզ այց արացես.» Սարկաւագները անցնում են Սեղանոյ աջակողմը և կանգնում են ձեռնամած սրբոց լիշտակութիւնը անելու. Ինչու աջակողմը՝ որովհետեւ սուրբերը արգէն արժանացել են աջակողմեան վերին դասուն և են լնդ Քրիստոսի, ուստի և նոցա լիշտակութիւնը լինում է Սեղանոյ աջակողմը:

Քահանան զիսաւոր սուրբերն է լիշտակում միայն. Իսկ միւս սուրբերն՝ Սարկաւագներն են լիշտակում. Քահանայի լիշտակութիւնն է այս.

«Աստուածածնին Սրբոյ կուսին Մարիամու և Յովհաննու մըկրտչին, Ստեփաննոսի նախակային և ամենայն սրբոց եղեցի լիշտակի նիւ սուրբ պատարագս աշաշեմք».

Փողովուրդը պատասխանում է.

«Ձիշեա Տէք և Ողորմեա».

Քահանան այս լիշտակութեան աղօթքով կամի առել թէ Տէք, այս սուրբ պատարագաւս և սորա հետ միասին լիշիք և սրբոց առաքինութիւնները և ընդունիք նոցա բարեխօսութիւնը մեզ համար և ինչպէս Միածին Որդովդդ հաշտուցար մեզ հետ և ողորմեցիք աշխարհին՝ նոյնպէս և նորա Անդրամներին՝ այն է սրբոց բարեխօսութեամբը ողորմիք մեզ, աղաջում ենք Քեզ:

Բայց թէ ինչու Սարկաւագն է լիշում սրբոց լիշտակը և ոչ Քահանան և թէ ինչու այժմ է լինում լիշտակութիւնը

և ոչ առաջ; Քրիստոսի լիշտակը ինքը Քահանան նուէր տալով Աստուծոյ Հօր՝ պատարագեց. իսկ սրբոց լիշտակը Սարկաւագն է լիշտում. Այս կարդաւորութիւնը որոշում է պատիւը թէ նա՛ որ թագաւորի լիշտակի պաշտօնեալն է և սպասաւորը, պարտաւոր չէ իւր ծառայակցաց լիշտակն ևս թագաւորի լիշտակի հետ կատարելու: Այն ծառայակցաց լիշտակը պաշտօն է և կատարում խոնարհ դասը, այսինքն Սարկաւագը; Յիսուսի նուէրն ու պատարագը նորա մեր Քրիւթեան համար կրած չարչանքների լիշտակն էր, որ կատարուեցաւ զգալի նշանակների տեսակաւ կամ հաստատութեամբ. Այսպէս ահաւասիկ և Սարկաւագը Սրբոց չարչանքն ու աշխատութիւնը նուիրում է իրեւ պատարագ և բարեխօս ժողովով համար խնկարկութեան տեսակաւ կամ հաստատութեամբ, որովհետև լիշտակութեան հետ միասին և խունկ է ծխում Սուրբ Սեղանի շուրջը, յատնելով թէ ինչպէս այս զգալի անշշահուսութիւնը շուրջ եմ բոլորում. Սուրբ Սեղանի չորս կողմը, որ աթոռ է Աստուածութեանդ, այսպէս և այդ սրբոց բազմապատիկ առաքինութիւնները, իմ բանական բերանոց բուրգառովը ծխում եմ Քեզ իերկինս իրեւ հաշտութեան բուրմունք: Եւ ինչպէս Սուրբ Սեղանոյ շուրջն եմ բուրում այս խունկը և ոչ նորա վերայ նոյնապէս և իմ սրբոց լիշտակելս Քրիստոսի պատարագի մօտ է և ոչ նորա հետ. Այսպէս և հաւատում ենք որ սուրբերը կարգուած են Աստուածութեանդ շուրջը և ոչ Միածնիդ հաւասար և նորա հետ միասին. Եւ մենք յօյս ունենք որ ինչպէս գլուխն մեր Քրիստոս իշխանական համարձակութեամբ մեր Քրիւթիւնն է քահանայագործում, նոյնապէս և սուրբերը, որոնք գորովով և աշխատութեամբ ցոյց տուին մեզ Աստուածպաշտութեան ճանապարհը, իւրաքանչյւրը իւր համարձակութեան համեմատ բարեխօսում է և աղօթում Եկեղեցւոյ հաստատութեան և պայ-

ծառութեան համար. Այս Սարկաւագի լիշտակութեան պատճառը: Այժմ տեսնենք սովոր լիշտակի այժմ կատարուելու պատճառը և ոչ առաջ. Որովհետև նախապէս Քրիստոսի չարչանքն ու մահը եղաւ մեր ընդ Աստուած հաշտութեան միջնորդ որին հետևեցան և սուրբերը իրենց առաքինական ճգնութեամբ հաստատութիւն տալով քրիստոնէական կրօնի ծամարտութեան, այս պատճառով նախ Քրիստոսի լիշտակն ենք կատարում և իտ նորա սրբոց լիշտակութիւնն ենք անում. ըստ որում նոցա նահատակութիւնը և բոլոր աշխատութիւնները Աստուած և ընդունեց Յիսուսի միջնորդութեամբ և Յիսուսով. Ուրեմն ակներև է, որ սրբոց լիշտակութիւնը ևս պէտք է լինի Յիսուսի Չարչանաց և Մահուան լիշտակութեանը կամ բուն պատարագին մէջ իրեւ չարչանքը Քրիստոսի և նորա փառացը հաղորդուածք:

Բայց թէ ինչու բարձրածայն է լիշտակում Սարկաւագը սրբոց լիշտակը և ոչ խորհրդաբար կամ ծածուկ ինչպէս Քահանան Միածնին Որդւոյ Չարչանաց և մահուան լիշտակը: Վասն զի սրբոց մահը չէր խորհրդու, այլ պարտք և գրաւական սիրոյ որ առ Քրիստոս, Որոյ Անուան և Սիրոյ համար մեռան. Այս պատճառով Սրբոց անունները բարձրածայն է լիշտակում Սարկաւագը ՚ի լուր ժողովրդեսն իրեւ օրինակ զընելով նոցա առաջ որ իմանան՝ թէ առ ժամանակեալ կենաց մէջ կրած աշխատութեան համար որպիսի շնորհաց արժմուացան նոքա, այս է Քրիստոսի հետ լինել կեանքով և նորա հետ լիշտակուել անունով: Գիտելի է և այս, որովհետև սուրբերը աղգակից և բնութենակից են ժողովրդեան և ժողովրդի վշտերին կցորդ են և մասնակից. վասն որոյ ժողովուրդը համարձակում է զիմել նոցա իրեւ իւր ընտանւոյ, աղգականի և մերձաւորի. Այդ պատճառաւ Սարկաւագը ՚ի լուր ժողովրդեան սրբոց առաքինութիւնները և կեանքը գլխովին իրեւ.

Հաճոյական պատարագ լիշելով՝ Քրիստոսի հետ նուիրում է չօր Աստուծոյ: Այս է նոցա լիշատակութեան պատճառը, ըստ ո-րում կարօտ են նոքա մեր լիշատակութեանը, իբրև եղբայրա-կիցք, կարօտ են և Սուրբ Խորհրդի շնորհին իբրև փրկեալք Քրիստոսի: Այդ խորհրդաւոր լիշատակութիւնը ինքը Քահա-նան արեց իւր լիշատակութեան աղօթքի մէջ ասելով. «Սովաւ հանգն զամենեսեան յառաջազոյն ՚ի Քրիստոս զննջեցեալսն, զնախահարս, զհայրապետս, զմարգարէս, զառաքեալս ևալին»: Իսկ այժմ ինչպէս կտեսնենք, Սարկաւագը կլիշատակէ նոյն սրբոց անունները կամ խումբ խումբ կամ ջոկ ջոկ, տուն առ տուն քարոզելով, որով պիտի լիմանանք լիշատակեալ սրբոց փառաց աստիճանները ու պատիւնները, որ ընդունած են Քրիս-տոսի չարչարանաց արդեամբը և իրենց առաքինութեանց փո-խարէն:

Երբ որ Քահանան աւարտում է սրբոց լիշատակութեան աղօթքը, այն ժամանակ Սարկաւագները՝ որ արդէն անցած են աջակողմը և կանգնած են ձեռնամած, սկսում են լիշա-տակել Սուրբերը այսպէս.

«Առաքելոց սրբոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց և ամենայն հայրապետաց սրբոց. Առաքելագործ եպիսկոպոսաց, երիցանց, ուղղափառ սարկաւագաց և ամենայն սրբոց եղիցի լի-շատակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք»:

Փռակութեալ. «Յիշեա Տէր և ողորմեա»:

Սարկութեալ. «Օքնեալ գովեալ և փառառընեալ հրաշալի և Աստուածազարդ Յարութեան Քրիստոսի երկրագանեմք».

Փռակութեալ. «Փառք Յարութեան քո Տէր»:

Իսկ Սրբոց տօներին փոխանակ. «Օքնեալ, գովեալ և փա-ռառընեալ» ասելու, ասում են.

«Սուրբ և Աստուածահանոյ մարգարէին, առաքելոյն, մար-տիրոսին, հայրապետին ևայլն (այս անուն), որոյ կամ որոց պյեշա-տակս կատարեցաք, եղիցի լիշատակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք»:

Փռակութեալ. «Յիշեա Տէր և ողորմեա»:

Սարկութեալ. «Առաջնորդացն մերոց և առաջին լուսաւոր-չացն Սրբոց Թաղէոսի և Բարդուղմէոսի առաքելոցն և Գրեգորի լուսաւորչին. Սրբստակիսի, Վրդանիսի, Յուսկանն, Գրեգորիսի, Ներ-սիսի, Սահակայ, Դանիէլ և Խաղայ, Մեսրովբայ վարդապետին և Գրեգորի Ներսիսի Կլայեցւոյն, Յովհաննու Որոտ-նեցւոյն և Գրեգորի և Մովսիսի Տաթևացեացն և Սրբոց Գրեգո-րիսեանց և Ներսիսեանց, Հովուաց և Հովուապետաց Հայաստա-նեայց եղիցի լիշատակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք»:

Փռակութեալ. «Յիշեա Տէր և ողորմեա»:

Սարկութեալ. «Միանձնացելոց սրբոց առաքինասէր և Աս-տուածուսոյց կրօնաւորացն Պօղոսի, Անտոնի, Պօղայ, Մակարայ, Ռոնիրիսոսի, Արքայ Մարկոսի, Սրաբիոնի, Ներոսի, Արսէնի, Եւա-գրի, Պարսամայ, Յովհաննիսեանց և Սիմէօննեանց, սրբոց Ռոկեանց և Սուրբեասեանց և ամենայն սրբոց հարց և աշակերտելոց նոցին ընդ-տիեզերս եղիցի լիշատակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք»:

Փռակութեալ. «Յիշեա Տէր և ողորմեա»:

Սարկութեալ. «Թագաւորաց հաւատացելոց սրբոց Արքարու, Կոստանտիանոսի, Տրդատայ և Թէոդոսից և ամենայն սուրբ և բարեպաշտ թագաւորաց և Աստուածասէր եշխանաց եղիցի լիշա-տակ ՚ի սուրբ պատարագս աղաչեմք»:

Փռակութեալ. Յիշեա Տէր և ողորմեա»

Սարկութեալ. մէջ տեղը գալով.

«Ընդհանուր ամենայն հաւատացելոց, արանց և կանանց ծերոց և տղայոց և ամենայն չափու հասակի հաւատով և սրբու-թեամբ ՚ի Քրիստոս ննջեցելոցն եղիցի լիշատակ ՚ի սուրբ պատա-րագս աղաչեմք»:

Փռակութեալ. «Յիշեա Տէր և ողորմեա»:

Սարկաւագի լիշատակութեան իւրաքանչիւր տունը աւար-տելուց յետոյ, ժողովուրդը գալիքների բերանով ձայնակից է լի-նում իւր դաստիարակ Սարկաւագին և դիմում է առ Տէր ասելով. «Յիշեա Տէր և ողորմեա». այսինքն թէ Տէր, մեր դաստիարակի լիշած Սրբոց առաքինութիւնները, քեզահանոյ

կենցաղավարութիւնը, նոցա Քո սիրոյ և կամքի համար կրած չարչարանքները, նահատակութիւնը և մահը լիշիր սիրով և քաղցրութեամբ. և նոցա մեզ համար արած բարեխօսութիւնը ընդունիր և մեզ ողոմմիր:

Մինչդեռ Սարկաւագը Սրբոց լիշատակութիւնն է անում, Քահանան՝ ՚ի ծածուկ աղօթում է առ Հայր արագիւ.

«Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա զսուրբ կաթուղիկէ և զառաքելական եկեղեցի Քո, զոր փրկեցեր պատուական Աքեածք Միածնի Քո. և ազատեցել խաչիւն սրբով. Շնորհեա սմա զանշարժ զխաղաղութիւն. Յիշեա Տէր և ողորմեա և օրհնեա զամենայն ուղղափառ Եպիսկոպոսունս, որք ուղիղ վարդապետութեամբ համառուտեն ՚ի մեզ զբանն ճշմարտութեան»:

Յիշիր Տէր և ողորմիր և օրհնիր Քո սուրբ, կաթուղիկէ և առաքելական Եկեղեցին, որը Քո Միածնի պատուական Արիւնովը փրկեցիր և Նորա սուրբ խաչովը ազատեցիր. Զնորհիր այս Եկեղեցուն անշարժ խաղաղութիւն. Յիշիր Տէր և ողորմիր և օրհնիր բոլոր ուղղափառ Եպիսկոպոսներին, որոնք ուղիղ վարդապետութեամբ ուսուցանում են ճշմարտութեան բանը:

Այս աղօթքին կցուած է մի մաս, իբրև վերջաբան, որ պատկանում է Հայաստանեալց Եկեղեցւոյ ընդհանրական կաթուղիկոսի կենաց բարեմաղթութեանը. Այդ մասը Քահանան ասում է բարձրաձայն ալսպէս.

«Եւս առաւել զԵպիսկոպոսապետն մեր և զսատուական հայրապետն ամենայն Հայոց գոտէը (այս անուն) շնորհես մեզ ընդերկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ».

Յիշիր նա մանաւանդ ՚ի սուրբ պատարագիս մեր Եպիսկոպոսապետին և ամենայն Հայոց պատուական Հայրապետին և շնորհիր նորան մեզ շատ օրերով և տարիներով, որ մեզ ու-

դիդ վարդապետութեամբ խնամէ իբրև մեր հոգւոյ Հայրը և այցելուն^ա)

Քահանան այստեղ որ ասում է «Յիշեա Տէր և ողորմեա» պէտք է խմանալ որ Քրիստոսի և սրբոց համար է ասում, որպէս զի լիշէ Հայրն Աստուած գՔրիստոս իւր գործքերովը, որ ինքը քիչ յառաջ լիշատակեց, լիշէ նոյնպէս և սուրբերը, որոց Սարկաւագը լիշատակեց իւր մօտ: Քանի որ Քրիստոս իւր առաջն էր, չէր ասում «լիշեա Տէր և ողորմեա». այլ Նորանով իբրև ամենակարար Տէրամբ և Նորա ձեռամբ խնդրում էր Հօրը իւր հայեցուածները կատարել, Յինչպէս որ ասում էր «Սովաւ շնորհեա»: Իսկ այժմ Քրիստոսի հետ կցորդում է և սուրբերը՝ իբրև Ամենասուրբ Գլխոյն պատկանող Սուրբ Անդամներ և կրկնում է իւր աղօթքը ասելով. «Յիշեա Տէր և ողորմեա». այսինքն թէ Քրիստոսի շնորհիւ սուրբերը լիշիր և Սրբոց շնորհիւն էլ մեզ լիշիր և ողորմիր. ինչու որ մենք դեռ յաշխարհի լինելով ամենայն մի քայլափոխում մեղքի և գայթակրութեան վտանգի մէջ եմք, իսկ սուրբերը արժանապէս վարելով իրենց կենցաղը՝ արդէն Քո շնորհացդ արժանացած են. ուստի նոյա արժանաւոր կեանքի և գործոց լիշատակութիւնը թող քաղցրացնէ Քո սիրտը գէպի մեզ, որպէս զի մեզ ողորմես, մինչև որ մենք ևս զգաստանալով և նոցա հետեւելով՝ հասնենք նոցա աստիճանին և սրբութեանը Քո Ամենաբարի կամքով և օգնականութեամբ:

Սորանից յետով Քահանան լիշում է Քրիստոնէից Եկեղե-

*) Ուսւաստանի մէջ այս միջոցին սովորութիւն է յիշատակել և Ուսւաստ կայսրը և նորա կայսերական ազգատօնմը, նոյնպէս և իւրաքանչիւր վեճակ կամ թէմ իւր փհանակաւոր առաջնորդին. Իսկ Տաճկաստանում յիշում են նախ ամենայն Հայոց կաթուղիկոսն Սուրբ Էջմիածնի և ապա Կոստանդնուպոլսոյ և Երևանաղէմալ պատրիարքները:

ցիքը այսինքն ժողովուրդները, որոնք Առաքելոց և Եկեղեցւոյ սուրբ Հարց աշխատութեամբ և քարոզութեամբ հաւատացին՝ Քրիստոս։ Այն ժամանակ՝ երբ քահանան լիշում է տիեզերքի մէջ եղած բոլոր Եկեղեցիքը, միւնոյն ժամուն և բոլոր Եկեղեցիք լիշում են իրան։ Այսպիսով միւնոյն ժամուն տիեզերքի բոլոր Քրիստոնէայ Եկեղեցիքը հաղորդակից և մասնակից են միմեանց ՚ի սպասաւորութիւն սուրբ խորհրդոյ պատարագի։ Ի՞նչ գեղեցիկ շաղկապ՝ որ միւնոյն ժամուն իրար հետ է միացնում ամբողջ տիեզերքի բոլոր Քրիստոնէայ ժողովրդոց զգացմունքը։ Ի՞նչ սքանչելի միաձայնութիւն որ նոյն բոլոր Քրիստոնէայ Եկեղեցիք մի աղօթքով, մի հաւատով, մի գրէթէ ծիսակատարութեամբ, մի խորհրդով կատարում են իրենց Արարչ, Փրկչ, Երկնալին Աւսուցչ, Եղբօր, Բարեկամի, Դատաւորի՝ Մարդեղութեան, Չարչարանաց, Խաչի, Մահուան և բոլոր փղոկաղործութեան լիշատակը և իրեւ պատարագ՝ նույիրում են Հօր Աստուծոյ, որպէս զի հաշտուի մեղքի և գայթակալզութեան մէջ թափառող մարդկալին ազգի հետ, և ողորմէ նորանց։ Եւ Ի՞նչ հիսոքանչ համաձայնութիւն Երկնի և Երկրի՝ այն է չըեշտակաց, Արբոյ և Մարդկան մէջ, որոց մասնակցութեան կամ գործակցութեան համար խնդրում է Աստուծուց, որպէս զի ՚ի փառս և ՚ի պատիւ Սուրբ խորհրդին՝ Երկնալին Անդրանկաց և Յաղթանակող Եկեղեցիքը Երկրալին Զինորեալ Եկեղեցւոյ հետ զուգընթաց համաձայնութեամբ սպասաւորակից լինեն ի սուրբ խորհրդու պատարագին Քրիստոսի։ Արդ՝ այս միւնոյն խընդուածը որ սոյն այս ժամին մատուցանում են Աստուծոյ բոլոր ազգաց Եկեղեցիք տիեզերքին՝ ապացուցանում է որ պատարագը խւկապէս է միաւորութիւն բոլոր Եկեղեցեաց Քրիստոնէից Երկրաւորաց և Երկնաւորաց, որոնք միաձայնութեամբ խնդրում են Քրիստոսի շնորհիւ սէր, խնդրութիւն և խաղաղութիւն Հոգոյն սրբոյ, ուրեմն պիտի հաւատանք, որ միւնոյն ժամուն

այսքան պատարագներ կատարուելով տիեզերքիս ամենայն մասերում կմեղմայնեն մեղ վերայ դիզուած ու բարդուած Աստուածալին պատուհասքը և բարկութիւնքը և կիշեցնեն մեղ վերայ նոյն Աստուծոյ Ճնորհքը, Սէրը և Ողորմութիւնը։ *)

Այս խորհրդով լիշում է Քահանան նա և Քրիստոնէայ բոլոր Եկեղեցիքը ասելով. «Յիշեա Տէր և ողորմեա. և օրհնեա զուրբ, կաթուղիկէ և զառաքելական Եկեղեցւ քո, զոր փրկեցիր պատուական արեամբ Միածնի քո և ազատեցիր խաչիւն սրբով։ Ճնորհեա սմա զանշարժ զիսաղաղութիւն»։ Այսինքն այս Եկեղեցիները կամ որ նոյն է Քրիստոնէայ ժողովուրդները, որոնք Քո Միածնիդ՝ խաչի վերայ թափած Արիւնովը և պատարագաւը փրկեցիր և ազատեցիր չարահնար սատանայի իշխանութիւնից և կրկին որդեգրելով Քեղ՝ Քո արքայութեանդ ժառանգ արիր. այս Եկեղեցիներն ահա, պահէիր անշարժ և անխախտ հաւատով և խաղաղութեամբ, որպէս զի սոցա հաւատը դէպի Քեղ ըլխախտուի. և Քո խաղաղութիւնը՝ որ պարդեեց սոցա Քո Միածնը, դարձեալ թշնամութեան չփոխուի. Չտիրէ մեղ մեղքը, այլ Քո մարդկասիրութիւնը և Միածնիդ անձմահ պատարագի լիշատակը յաղթէ մեղքին և Քրիստոսի սուրբ Եկեղեցին հաստատուն և անշարժ տևէ յափտեան։

Եկեղեցւոյ լիշատակութիւնից լիշտոյ լիշատակում է նոյն Եկեղեցւոյ չովիւներին, որք են նորա առաջնորդողը, վարողը, պայծառացնողը և անխախտ պահպանողները։ Զի թէ և նոյն

*) Ասկայն շատ ցաւալի է, գոնէ մեղ համար, որ ժողովրդի հասկացող դասը, այն է ուսումնական Երեսասարդութիւնը, նա մանաւանդ մեր ուսումնական Երեսարդութիւնը, միշտ բացակայ են այս հոգեոր հանդիսից, Մէթէ Երախտաւորի Երախտէքը միամին և մի զգացմամբ յեշելը այսպէս խօրթ պէտք է համըռուի մեր Երեսասարդութեանը։

Եկեղեցոյ Հիմնադիրն է Քրիստոս և սակայն նորա վարչութեան իրաւունքը տուեց իւր առաքեալներին և նորանցմով ընտրեալ և յԱստուծոյ կոչեցեալ հոգեոր Հովիւներին նոցա առաջնորդող և գործակից պարզելով զտուրը Հոգին ասելով. «Առէք Հոգի սուրբ. եթէ ումէք ժողուցուք զմեզ» ժողեալ լինեցի և եթէ զուրուք ունիցիք՝ կապեալ եղիցի». և թէ. «Գնացէք այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ուսուցէք նոցա պահել զամենայն որ ինչ պատուիրեցի ձեզ և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև ՚ի կատարած աշխարհի»: Ուրեմն եթէ Եկեղեցոյ Հիմնադիրը այսինքն Քրիստոս միշատակուեց՝ պէտք է միշատակուէր և նորա հիմնած Եկեղեցին. և եթէ Եկեղեցին ևս միշատակուեց, պէտք է միշատակուին ՚ի հարկէ և Եկեղեցոյ Հովիւք և առաջնորդք և կարի իրաւամբ. որովհետև դոքա են ՚ի Յիսուս և Յիսուսէ ՚ի դոսա. ըստ այնմ. «Ես ՚ի Հօր իմում և դուք յիս և ես ՚ի ձեզ». Եթէ այսպիսի շաղկապ կայ Գիլսոյ և անդամների մէջ, իրաւամբ ուրեմն պէտք է միշուին Քահանայապետք, այսինքն Եպիսկոպոսք և Եպիսկոպոսապետը որ է Կաթոլիկոսը:

Սացա միշատակութիւնը կարի հարկաւոր է, որովհետև նոքա են ժողովրդի այցելուքը, հովիւքը և առաջնորդները, որոնք ուղիղ ճանապարհով գնալով ժողովրդին ևս իրենց ուղիղ շաւզովն են առաջնորդում. բայց եթէ սոքա ծուռ ճանապարհով գնան՝ ժողովրդին ևս նոցա ծուռ շաւզովն ընթանալով երկոքեան ևս մոլորութեան խորխորատը կ'ընկնին, ըստ այնմ. «Կոյր կուրի յորժամ առաջնորդէ, և երկոքեան ՚ի խորխորատ անկանին». Այս է պատճառը՝ որ Եպիսկոպոսունք իրաւամբ միշատակում են այսպէս. «Յիշեալ Տէր և ողորմեա, և օրէնեա զամենայն ուղղափառ եպիսկոպոսուն», որք ուղիղ վարդապետութեան»:

Քահանայիք՝ Եպիսկոպոսաց՝ իրաւանց ներքոյ են, Աստուածացին և Եկեղեցուո օրէնքը, կանոնը և իրենց պարտականութիւնք նոքա սովորում են Եպիսկոպոսից, վասնորոյ և իրնդրում է լիշել Եպիսկոպոսներին, յայտնելով պատճառը. «որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ՚ի մեզ զբանն ճշմարտութեան». որք ուղիղ քարոզութեամբ սովորցնում են մեզ Աստուածային խօսքերի ճշմարտութիւնները:

Երբ Քահանան աւարտում է իւր բարձրաձայն լիշտակութիւնը կայսեր, Կաթոլիկոսի և Առաջնորդի համար, Սարկաւագը կրկին անցնելով Սեղանոյ ձախակողմը՝ գոհութեան քարոզով լիշում է կենդանի հաւատացեալներին: Ինչու ձախակողմն է գալի և լիշում կենդանի հաւատացեալներին և ոչ աջակողմը. որովհետև աջակողմը նշանակում է աջակողմեան դասը՝ այսինքն Սրբոց ժողովը, որք են յերկինս առ Աստուած. իսկ ձախակողմը նշանակում է կենդանի հաւատացելոց ժողովը, որք են յաշխարհի և տակաւին ՚ի մեղս, որոնք ցանկանում են արժանանալ Աջակողմեան դասուն:

Սարկաւագի գոհութեան լիշտակութիւնն է այս.

«Գոհութիւն և փառաբանութիւն մատուցանեմք Քեզ Տէր Աստուած մեր. վասն սուքը և անժահ պատարագիս որ ՚ի վերաս սրբոյ Սեղանոյս. զի զսա մեզ ՚ի սրբութիւն կենդանութեան սկարգեացնեա: Սովու շնորհեալ զսէր, զհաստատութիւն և զըզձալի ըգիազագութիւն ամենայն աշխարհի, սրբոյ Եկեղեցոյ և ամենայն ուղղափառ Եպիսկոպոսաց. Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական հայրապետին ամենայն Հայոց Տեառն (այս անուն) և մերոյ արհի Եպիսկոպոսին և երջանիկ սարունապետին Տեառն (այս անուն) և քահանայիս՝ որ զսատարագն մատուցանէ: Եւ վասն զօրութեանց և յաղթութեանց ժագաւորաց Քրիստոնէից և իշխանացն բարեպաշտից: Աղաչեսցուք և խնդրեսցուք և վասն հոգւոցն հանգուցելոց: Եւս առաւել վասն հանգուցեալ բարունապետացն մերոց և շինողաց սրբոյ Եկեղեցուոյ և որք ընդ հովանեաւ սորին են հանգուցեալ. Ազատութիւն եղբարց գերելոց և շնորհ առա-

զիկայ ժողովրդեանս։ Հանգիստ հաւատով և սըբութեամբ՝ ՚ի Քըիստոս կատարելոց։ Եղեցե լեշատակ՝ ՚ի սուըք պատարագս աղաչեմք։ Գոհութիւն և փառք ենք մատուցանում Քեզ, ով Տէր Աստուած մեր. այս սուըք Սեղանոյ վերայ մատուցուած սուըք և անմահ պատարագիս համար. որպէս զի այս սուըք պատարագը մեր կեանքի և սրբութեան առիթ պարզեցն մեզ։ Սորանով, Տէր, պարզեիր մեզ սէր, հաւատի հաստատութիւն և ցանկալի խաղաղութիւն բոլոր աշխարհին, սուըք Եկեղեցւոյն, բոլոր ուղղակառ Եպիսկոպոսներին ևս և մեր Եպիսկոպոսապետին և ամենայն չայոց պատուական չայրապետին և մեր արք Եպիսկոպոսին և երջանիկ րաբունապետին և քահանացիս՝ որ մատուցանում է այս սուըք և անմահ պատարագը։ Աղաչում ենք Քեզ Տէր և Քրիստոնէայ թագաւորների և բարեպաշտ իշխանների գօրութեան և յաղթութեան համար։ Աղաչում ենք և ինդրում և հանգուցեալ հոգիների համար մանաւանդ մեր հանգուցեալ վարդապետների և առաջնորդների, այս սուըք Եկեղեցւոյ շինողների և սորա հովանաւորութեան ներքոյ ննջեցեանների համար։ Ազատութիւն խնդրում ենք մեր գերեալ եղբայրներին, և շնորհք՝ այս առաջիկայ ժողովրդին։ Հանդիսանդրում ենք՝ ՚ի Քրիստոս հաւատով և սրբութեամբ ննջեցեաններին, և աղաչում ենք որ բոլորն ևս լիշուին այս սուըք պատարագիս մէջ։

Այս գոհութեան քարոզին ժողովուրդը պատախանում է։
«Բատ ամենայնի և յաղագս ամենեցուն»։

Մինչդեռ Սարկաւագը գոհութեան լիշատակութիւնն է անում, Քահանան նոյն մտքով դրէժէ աղօթում է առ չայրի ծածուկ իրեւ շարունակութիւն առաջին լիշատակութեան աղօթքի արագէս։

«Յէշեա Տէր և ողորմեա և օրհնեա զքո առաջի կացեալ ժողովուրդս և պատարագիս մատուցողս. և պարզեցն սոցա զավուոյն և զօգտակար այստեղ»։

տաւորս և զպողաբերէչս Եկեղեցւոյ քում սըբոյ. և որք յիշեն զաղքասս ողորմածութեամբ։ Եւ հատոն նոցա զպաստս նոցա ըստ ընդաբոյս առատութեան քում հարիւրապատիկ աստ և ՚ի հանգերձելումզ. Յէշեա Տէր և ողորմեա և գթա ՚ի հոգիս հանգուցելոցն. հանգն զնոսա և լուսաւորեա և դասաւորեա ընդ սուըքս քոյարքայութեանդ Երկնից և արժանի արա ողորմութեան քում։ Յէշեա Տէր և զհոգի ծառաւիս քո (այս անուն) *) և ողորմեա նմա ըստ մեծի ողորմութեան քում, և հանգն այցելութեամբ՝ ՚ի լոյս Երեսաց քոց։ Եւ թէ կենդանի է՝ **) փրկեա զնա յամենայն որոգայթից հոգւոյ և մարմնոյ։ Յէշեա Տէր և զանոսիկ՝ որք յանձնեցին մեզ լեշատակել յազօթս զկենդանիս և զհանգուցեալս և կառավարեա զկամս հայցմանց նոցա և գմերս, ընդ ուղղորդն և որ լին է փրկութեամբ։ Եւ վարձատրեա բոլորեցունց զանանց և զերանելի բարութիւնսդ.

Եւ զտեալ զեսոհուրդս մեր տաճարացն յընդունակութիւն Մարմնոյ և Արեան Միածնի քո Տեառն մերոյ և փրկին Յիսուսի Քրիստոսի. ընդ որում Քեզ Հօր ամենակալի հանդերձ կենդանարար և ազատիչ սուըք Հոգւովդ վայել է փառք, լիշտանութիւն և պատիւ այժմ և յաւիտեանս յաւիտենից. ամեն»։

Յիշիր Տէր և ողորմիր և օրհնիր Քո առաջդ կանդնած ժողովուրդը և պատարագիս մատուցողը. պարզեիր սոցա իրանց օգտակար պէտքելն ու կարիքները։

Յիշիր Տէր և ողորմիր և օրհնիր Քո սուըք Եկեղեցւոյ ուխտաւորներին և պտղատուններին և նոցա որոնք իրենց տուած ողորմութեամբ լիշում են աղքատներին։ Նոցա պարտքը Քո ընդարոյս առատութեանդ համեմատ հատոն հարիւրապատիկ թէ այստեղ և թէ հանդերձեալ կենաց մէջ։

Յիշիր Տէր և ողորմիր. և գթա հանգուցեալ հոգիներին.

*) Այստեղ Քահանան պէտք է յիշէ իւր և կամ իրան յանձնարարեալ անջեցւոց անունները.

**) Այստեղ Քահանան պէտք է յիշէ իւր և կամ իրան յանձնարարեալ կենդանիների անունները

հանգստացրու նոցա, լուսաւորիք և Քո Երկնալին Արքայութեանդ մէջ սրբոց հետ դասաւորիք և Քո ողորմութեանդ արժանացրու:

Յիշիր Տէր Քո ծառալին և ողորմիք նորան Քո մեծ ողորմութեամբ և ՚ի լոյս երեսացգ՝ Քո այցելութեամբդ Հանդրատացրու:

Եւ Եթէ կենդանի է փրկէ նորան հոգւոյ և մարմնոյ բոլոր որոգայթներից:

Յիշիր Տէր և նորանց, որոնք յանձնեցին մեզ յիշելու մեր աղօթքում իրանց կենդանիներին և ննջեցեալներին և Դու ինքդ վարէ նոցա և մեր Հայցմանց կամքը ուղղութեան և փրկութեան ճանապարհով. Եւ բոլորին ևս Քո անանց և երանելի բարութիւններով վարձատրիր:

Խոկ մեր խորհուրդները զտելով և մաքրելով, տաճար կազմիր ընդունելու Քո Միածնի և մեր Տէր և փրկիչ Յիսուս Քրիստոսի Մարմինը և Արիւնը:

Այս յիշատակութեան աղօթքով Քահանան Յպիսկոպոսներից յետոյ յիշում է առաջիկայ ժողովուրդը, որ սպասում է ստանալ Սուրբ պատարազի օրհնութիւնը, իւրաքանչիւրն ըստ չափու արժանաւորութեան: Խոկ պատարազի մատուցողք, որ յիշում է աղօթքի մէջ, են քահանայք, սարկաւագունք, կիսասարկաւագոնք, որոնցից իւրաքանչիւրը իւր կոչման Համեմատ պաշտօն է վարում ՚ի ժամ սուրբ խորհրդոյ պատարազի: Յիշում է Քահանան նաև պատարերիներին, ուխտաւորներին և աղքատաց ողորմութիւն տւողներին: Պտղաբերիներն են նոքա՝ որոնք իւրենց մարմնական գործոց և աշխատութեանց մէջ արդարութեամբ յառաջադիմելով՝ զանձում են իրանց վաստակը և արդիւնքը. և այդ վաստակից և արդիւնքից մասն են Հանում Յկեղեցւոյ պայծառութեան և Յկեղեցւոյ սպասաւորների կենսական պիտոյից Համար, տալով ոչ Քահանային,

այլ Աստուծոյ, որովհետև Աստուծոյ Անուան Համար են տալի, վասն որոյ և Քահանան իւր աղօթքում չէ ասում. «Ոիշեա և օրհնեա զպտղաբերիչս իմ»: այլ «Յկեղեցւոյ քում սրբոյ»: Սակայն մէտք է իմանալ, որ պտղաբերիչ խօսքը այստեղ չէ յիշում նոցա Համար՝ որոնք իրանց անարդար վաստակի կամ արդեանց մասն են Հանում յանուն Աստուծոյ. Որոնք զրկում են շատերին, յափշտակում են ալլոց մեպհականութիւնը և այլ այսպիսի դիւահնար միջոցներով հարստանում են և իրանց այդպիսի արեան զին վաստակից մասն են Հանում Աստուծոյ. Որին՝ այնպէս անընդունելի է այդ տուրքը՝ ինչպէս անընդունելի եղաւ Յուդայի գարձը, աւելացնելով տորա վերայ և այն որ Եթէ այդպիսի վաստակաւորը և պտղաբերիչը անդիդջ է մընում միշտ իւր այդ յափշտակողական բնաւորութեան մէջ: Ուխտաւորները նոքա են՝ որոնք իրանց փրկութեան Համար դաշն են կապում Աստուծոյ հետ և ընծայաբեր են լինում Աստուծոյ և կատարում են իրանց դաշամբք Հաստատած ուխտը ըստ այնմ. «Ուխտս զիք և կատարեցէք Տեառն Աստուծոյ մերոյ և մատուցէք պատարագ Ահաւորին». Այսպիսի մի ուխտ դրեց և կատարեց Զաքէսս մաքսաւորը իւր փրկութեան Համար, երբ ասաց իւր այցելու Տիրօջ թէ. «Տէր, ահա զիէս ընչից իմոց տաց աղքատաց, և Եթէ զոք զրկեցի՝ Հատուցից չորեքին»: և լսեց Տիրօջ փրկութեան աւետող ձայնը. «Ասոր եղեւ փրկութիւն տանս այսմիկ», Այսպիսի պտղաբերիչների և ուխտաւորների Համար է Քահանայի աղօթական խօսքերը: Յիշում է և նոցա՝ որոնք կարեկցելով աղքատաց դառն վիճակին՝ օգնում են նոցա իրենց ողորմութեան տուրքերով. Խընդրում է Քահանան Աստուծուց որ Հատուցանէ նոցա արած լաւութիւնը. թէ աստ և թէ ՚ի Հանդերձելումն. ըստ անսուտ խոստմանն Յիսուսի որ ասաց. «Որ արբուցէ ձեզ բաժակ մի ջուր ցուրտ յանուն իմ. ամեն ասեմ ձեզ, ոչ կորուցէ զվարձս իւր»:

Այս լիշատակութիւնից յետով, որ կենդանիների համար էր, անցնում է լիշել ննջեցեալները, աղաչելով զԱստուած, որ գթայ նոցա վերայ, ներէ նոցա կեանքի մէջ գործած մեղքերը և հանգստացնէ նոցա: Թէպէտ պատարազը կենդանի հաւատացեալների համար է դիմաւորապէս, սակայն և ննջեցելոց լիշատակութիւնը՝ ՚ի Սուրբ պատարազին ըստ մասին կարեոր է համարուած. Ըստ մասին ենք ստում, որովհետև այդ լիշատակութիւնը նոցա հոգւոյ կատարեայ փրկութեան համար չէ, այլ մի մասնաւոր թեթևութեան և օգնութեան համար: Որովհետև մարդը իւր կեանքի մէջ միայն կարող է արդարանալ և ոչ մահուանից յետով. Կեանքի մէջ կարող է ստանալ Աստուծոյ ջնորհքը և Ռորմութիւնը. Իսկ մահուանից յետոյ նա կստանայ իւր չար կամ բարի գործոց՝ չար կամ բարի հատուցումն. ինչպէս վկայում է Առաքեալը. «Իւրաքանչիւր ոք ժառանգէ գոր ինչ ՚ի կեանս իւրովն մարմնով գործեաց. եթէ բարի և եթէ չար»: Սորանից յետոյ լիշում է և նոցա որոնքի խնդրել են իրան իւրեանց կենդանիների և ննջեցեալների համար: Նոցա և իւր և բոլորի համար վերջը հայցում է՝ որ Աստուած ինքը վարէ նոցա ինդրուածքը և կամքը ուղղութեան և փրկութեան ճանապարհով. որովհետև շատ անգամ մարդը իւր աչքի առաջ եղած գործի ներկայ յաջողութիւնն միայն տեսնելով և ապագայ վնասը ամենեին չհեռատեսելով՝ խնդրում է Աստուծուն և կամենում է որ անպատճառ կատարուի այն գործը. Իսկ Աստուած՝ Որին յայտնի են Անցեալք, ներկայք և Ապագայք. Որը պարզ տեսնում է այն գործի ապագայ վնասը՝ ուստի այլ կերպ է տնօրինում ըստ իւր ամենիմաստ գիտութեան. այս մտքով է Քահանայի աղօթքի այս խօսքերը. «Եւ կառակարեա զկամս հայցմանց նոցա և զմերս ընդ ուղղորդն և որ լին է փրկութեամբ». այսինքն թէ՝ Տէր, մեր կամքի սահնձը Քո ձեռքին է. մենք շատ անգամ մեր վնասն ենք կամենում

առանց հասկանալու. Իսկ Դու՝ որ գիտես ամենայն ինչ՝ ըստ իմաստութեանդ ուզգիր մեր կամքը և կատարիր ՚ի բարին. Մենք շատ անգամ մեր վնասը՝ մեզ համար օգուտ ենք կարծում. որովհետև սկիզբը օդտակար ենք տեսնում. բայց Քեզ վերջն էլ է յայտնի. ուստի Դու Տէր՝ մեր կամքը համաձայնիք Քո ամենիմաստ Գիտութեան և Բարութեան և ամենքին ևս վարձատրէ Քո անանց և երանելի բարութիւնով. այսինքն նոքա՝ որոնք Քո Անուան համար միայն զանազան բարեգործութիւններ են անում, Դու Տէր, ամենքի լաւութիւնը վոխարինիր իրանց՝ արժանացնելով նոցա Քո յաւիտենական կեանքի վայելման; Եւ որովհետև կարելի է որ ՚ի փառս Աստուծոյ արած բարեգործութիւնք լինեն անարդար և անիրաւ աշխատանց վաստակից. կամ իրենց վարուց սրբութեան համար հրապարտանան և ողորմութիւնը մարդահամութեամբ անեն. կամ իրենց օգնութիւնն ու կարեկցութիւնը ՚ի փառս անձին և ՚ի գովեստ անուան կատարեն. կամ իրենց աղօթքն ու պատարազը առ հարկին միայն կատարեն և ոչ յԱնուան, ՚ի փառս և ՚ի սէր Քո և յօգուտ իւրեանց. Դու Տէր՝ փրկիր նոցա այդ չարից և նոցա այդ բոլոր աշխատանքն ու արդարութիւնը ՚ի Քո հաճոյս, և նոցա՝ ՚ի հատուցումն վարձատրութեան ընդունիր: Արդ պէտք է գիտենալ որ ինչ որ լիշուեցաւ, բոլորն ևս մարդոց պարտականութիւնն է որ անպատճառ պէտք է կատարեն առանց ակնկալութեան վարձուց, ինչպէս որ պատուիրած է Քրիստոս ամեն մարդոց, այս խօսքով. «Եթէ զամենայն հրամայեալսն ձեզ առնիցէք. ասասջիք եթէ ծառայք անպիտանք էաք, զոր պարտն էր առնել արարաք». ապա ուրեմն ինչու Քահանայն խնդրեց Աստուծուց որ վոխարինէ, —որովհետև ամենայն բարիք և բարեգործութիւնք որ գործում է մարդը երկու նպատակաւ է գործում. մինը՝ յատկապէս իւր անձնական շահուց և օգտի համար, սորա մէջ ենթադրելու է ընկերի զըր-

կանքն ու վճասը, սա լոկ մարմնական փծուն նպատակ է. և
միւսը Աստուծոյ անուան և իւր և ընկերի օդտի համար. Սորա
մէջն է ընկերի շահը, իւր անձնական օգուտը և իւր առ Աս-
տուած ունեցած երախտաղէտ զգացմանց ճշմարիս ապացուցը.
Սա հոգևոր է և նարմնաւոր. սորա մէջ հոգին առաւելութեամբ
է պատուած քան թէ մարմինը. Ուրեմն այս մտքով ինչդրեց
Քահանան, որ բարեգործութիւն անողները, զինի թէ իրանց
բարեգործութիւնը՝ չարի գրգմամբը՝ այտինքն սատանալի խաբ-
մամբ անձնական շահուց համար լոկ մարմնական նպատակաւ
միայն անեն, որ առանց հատուցման կմնալ Աստուծոյ կողմից,
ինչպէս և դաստիարակում է մեզ Յիսուս արդպիսի բարեգործ-
ների մասին. «Եւ եթէ տալցէք միայն ողջոյն բարեկամաց ձե-
րոց, զինչ աւելի առնէք, ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք
զնոյն զործեն». Կնշանակէ արդպիսի բարեգործները ստացան
արդէն իրանց վարձուց հատուցումը, որովհետեւ մէկը իւր գոր-
ծի շահն ստայաւ, ուրիշը՝ զովասանք, փառք, պատիւ. մի
երրարդը՝ անուն, սպարդեւ և այլն և փառաւորուեցան. Այս և
այսքան հատուցումից յետոյ, որ ստացան մարդկանցից, ՚ի
հարկէ չունեն իրաւունք Աստուծուց մի որ և իցէ վարձուց ա-
կնկալութիւն ունենալու, որովհետեւ գործեցին ՚ի շահ անձին,
՚ի փառս անուան. շահուեցան և փառաւորուեցան ՚ի մարդ-
կանէ և ստացան իրանց վարձը:

Իսկ նոքա՝ որոնք-կործեն բարին ոչ թէ մարդկանց ե-
րեսլու համար, այլ Աստուծոյ, և ոչ թէ իրանց անձնական
շահուց և փառաց համար, այլ ՚ի փառս Աստուծոյ, այնպիսի-
ներին ահա կըհատուցանէ Տէրը իւր արքայութեան մէջ յաւի-
տենական կեանքով:

Սորանից յետոյ Քահանան իւր և ժողովրդի խորհրդոց և
մտաց սրբութեան և մաքրութեան համար է ինչդրում, որով-
հետեւ շուտով աբժանանալու են ճաշակման շնորհին, ըոլպէս

զի արժանապէս ճաշակեն սուրբ խորհուրդը: Եթէ ճաշակումը
միայն մարմնաւոր կերակուր լինէր և մարմնոյն ծառայէր, Քա-
հանայն էլ մարմնոյ սրբութիւն միայն կիսնդրէր. բայց որով-
հետեւ նոյն ճաշակումը մարմնաւոր տեսակաւ հոգեւոր կերա-
կուր է, վասնորոյ Քահանան հոգեւոր մաքրութիւն և սրբու-
թիւն է խնդրում խորհրդոց. «Եւ զտեալ զխորհուրդս մեր»:
Հաւատալով՝ որ ինչպէս մարմինը զգալի հայս է ուտում և
զօրանում է և ալիւնը իւր մէջն է ընդունում զգալի զինին և
ուրախանում է. նոյնպէս և լմացող միտքը ճաշակելով նորա
հետ միասին և մարդկան քառութեան համար Յիսուսի մա-
հուան խորհուրդը՝ զօրանայ. և հոգին ըմպելով սուրբ Արեան
բաժակը՝ հրճուի և զուարճանայ:

Այս աղօթքից լետոյ Սարկաւագը հայցում է Քահանայի
օրհնութիւնը ասելով.

«Օքհնեա Տէր»:

Քահանան դառնալով և խաչակնքելով ժողովրդեան վե-
րայ՝ ասում է.

«Եւ եղեցի ողորմութիւն մեծիս Աստուծոյ և փրկչիս ձերոյ
Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ».

Ժողովուրդը պատասխանում է դպիրների բերանով.

«Ամեն և ընդ հոգւոյդ քում».

Այսինքն Յիսուսի՝ մեր Տէր և փրկչի ողորմութիւնը որ մեզ
պարզեցիք՝ լինի և քո հոգւոյդ, որ արժանաւոր լինես ճա-
շակման շնորհին:

ԺԵ. ԲԱԺԻՆ

ՃԱՇԱԿՈՒՄ

Յիշատակութեանը հետեւում է Սուրբ պատարագի ճաշակ-
ման մասը Սարկաւագի Քարոզով, որ ասում է տուն առ տուն

և որով լորդորում է ժողովրդին՝ որ լիշտակեալ սրբոց հետ
միասին և սուրբ պատարագի միջնորդութեամբը աղօթեն
զԱստուած Հոգւոյն Սրբոյ շնորհըն ու պարզեները ստանալու
համար:

Սարկաւագը քարոզում է այսպէս.

«Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք»:

Դ պ է բ ն է բ ը. «Տէր ողորմեա»:

Ս ս բ է մ մ է բ ը. «Ամենայն սրբովք զորս լիշտակեցաք ևս ա-
ռաւելապէս զՏէր աղաչեսցուք».

Մեր լիշտակած բոլոր սուրբերի հետ միասին առաւել
ևս խնդրենք վերին խաղաղութիւնը:

Դ պ է բ ն է բ ը. «Տէր ողորմեա».

Ս ս բ է մ մ է բ ը. Վասն մատուցեալ սուրբ և Աստուածային պա-
տարագիս որ նի վերայ սրբոյ Սեղանոյս զՏէր աղաչեսցուք»:

Այս սուրբ Սեղանի վերայ մատուցուած Սուրբ և Աստուա-
ծային պատարագի համար խնդրենք Աստուծուն:

Դ պ է բ ն է բ ը. «Տէր ողորմեա»:

Ս ս բ է մ մ է բ ը. «Ուսպէս զի Տէր Աստուած մեր, որ ընկալաւ
գոա նի սուրբ լերկնալին և լիմանալի իւր մատուցարանն, զփո-
խանակն առաքեսցէ առ մեզ զշնորհս և զպարգես Հոգւոյն Սրբոյ
զՏէր աղաչեսցուք».

Որովհետեւ մեր Տէր Աստուածը ընդունեց այս սուրբ պա-
տարագը իւր երկնալին և լիմանալի սուրբ մատուցարանը՝ ա-
ղաչեմք ուրեմն, որ սորա փոխանակ ուզարկէ մեզ իւր սուրբ
Հոգւոյ շնորհըն ու պարզեները:

Դ պ է բ ն է բ ը. «Տէր ողորմեա»:

Ս ս բ է մ մ է բ ը. «Բնկալ, կեցն և ողորմեա և պահեա զմեզ
Տէր քուին շնորհեւո».

Ընդունիր, կեցն, ողորմիր և մեզ Քո շնորհիւր պահ-
պանիր:

Դ պ է բ ն է բ ը. «Կեցն Տէր և ողորմեա»:

Ս ս բ է մ մ է բ ը. «Զամենասրբուհի զԱստուածածին զմիշտ կոյսն
Մարիամ հանդերձ ամենայն սրբովք լիշելով զՏէր աղաչեսցուք»:

Ամենասուրբ և միշտ կոյս Մարիամ Աստուածածինը բոլոր
սրբոց հետ լիշելով աղաչենք զԱստուած:

Դ պ է բ ն է բ ը. «Ցեղեան Տէր և ողորմեա».

Այսինքն լիշելով Տէր Քո պատուական սուրբերը և մեզ
ողորմիր:

Ս ս բ է մ մ է բ ը. «Եւ ևս միաբան վասն ճշմարիտ և սուրբ
հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք»:

Մանաւանդ աղաչենք զԱստուած մեր սուրբ և ճշմարիտ
հաւատի համար, որ հաստատուն և անխախտ տևի մինչեւ
յափեան:

Դ պ է բ ն է բ ը. «Տէր ողորմեա»:

Ս ս բ է մ մ է բ ը. «Զանձինս մեր և զմիմեանս Տէրառն Աստուծոյ
Ամենակալեն յանձն արասցուք»:

Մեզ ամենիս և մեր ըոլոր հոգոր Ամենակալ Աստուծուն
յանձնենք, որ նա տնօրինէ զարժանն:

Դ պ է բ ն է բ ը. «Քեզ Տեառնդ յանձն եղեցուք».

Քեզ ենք յանձնում մեր ամրող կեանքի տնօրինութիւնը
ով Տէր:

Ս ս բ է մ մ է բ ը. «Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի
ողորմութեան քում ասասցուք ամենեքեան միաբանութեամբ».

Ամենքս միաբան խնդրենք ու ասենք թէ Տէր Աստուած
ողորմիր մեզ Քո մեծ ողորմութեամբ:

Դպիրները երեք անգամ կրկնում են.

«Տէր ողորմեա».

Աւելի հաստատութիւն տալով իրանց խնդրուածոց:

Սարկաւագը իւր այս քարոզով ազդում է և յայտնում ժո-
ղովրդին, թէ պատարագի խորհուրդը աւարտեցաւ Քահանայի
պէս պէս խնդրուածքներով միասին: Եւ քանի որ պատարագի
խորհուրդը Տէր կատարուած՝ Սարկաւագը չունէր համարձա-
կութիւն յայտնելու ժողովրդին. ուստի և լուռ էր. բայց երբ
Քահանան դիքիստոս խորհրդապէս մատոյց Հօր և ստացաւ
նորանից Սուրբ Հոգին, զանազան ողորմութիւններ խնդրեց և

խորհուրդը լրիւ կատարեց՝ այն ժամանակ ահա Սարկաւագը աղդաբարեց ժողովրդին թէ ձեր նուէրը որ տուիք Քահանալին, տրուեցաւ Աստուծոյ և նա ընդունեց քաղցրութեամբ և հաշտուեցաւ ձեզ հետ. Ուրեմն պատրաստ եղէք ընդունելու այն շնորհքը՝ որ պէտք է իջնէ ձեր մէջ: Առ նշանակում է որ ժողովուրդը մինչև այժմ համարձակութիւն չունէր խօսելու հօր Աստուծոյ հետ, նորա աղօթքն էր առ Քրիստոս, այն ևս Սերովբէական երգով, օրհնութիւնով և գոհութիւնով. Այդ համարձակութիւնը ունէր միայն Քահանան. Ժողովուրդը չէ ստացել տակաւին Սուրբ Հոգին, այն ինչ Քահանան ստացաւ. Աւժը ժողովուրդն ևս պատրաստում է Տէրունական Մարմնոյ ճաշակմամբ ընդունել զսուրբ Հոգին. Որովհետև ինչպէս Քահանան դեռ Հօր Աստուծոյ հետ խօսեցաւ և իմույ միայն Քրիստոսի ձեռքով զսուրբ Հոգին Հայր Աստուծուց ընդունեց՝ նոյնպէս և ժողովուրդը այժմ Տէրունական աղօթքով այսինքն «Հայր մերով» կղիմէ առ Հայրն Աստուծած և ապա ճաշակելով Տէրունական Սուրբ Մարմինը՝ կստանայ սուրբ Հոգին: Այս կատարելուց առաջ Սարկաւագը՝ որ գատարակ է ժողովրդի, իւր վերոյթեալ քարոզով յախտնում է ժողովրդին լինելիքը և յորդորում է որ արժանապէս պատրաստուին ընդունելու Սուրբ Հոգին Յիսուսիւ Քրիստոսի:

Մինչեւ Սարկաւագը իւր ազդարարական քարոզով յորդորում է ժողովրդին պատրաստուել ընդունելու զսուրբ Հոգին, Քահանան ՚ի ծածուկ և խորհրդաբար ասում է առ Հայր Հետեալ աղօթքը՝ որ ըստ մասին յառաջաբանութիւն է համարում «Հայր մերին».

Աստուծած ճշմարտութեան և Հայր ողորմութէան՝ գոհանամք զքէն, որ ՚ի վեր քան գերանելի նահապետացն, զմեր պարտարելոցս առաւել մէծարեցեր զբնութիւն: Վասն զի նոցա Աստուծած կոչեցար, իսկ մեզ՝ Հայր հաճեցար անուանիւ գթարով: Եւ այժմ Տէր, աղաչեմք զքեզ, զայսպէսի առնի քէն զնորոգ և զպա-

տուական անուանագրութեանս շնորհ՝ օր ըստ օրէ պայծառացուցեալ ծաղկեցն ՚ի մէջ նկեղեցւոյ քում սրբոյ».

Ով ճշմարտութեան Աստուծած և ողորմութեան Հայր, շընորհակալ եմք Քեղանից. պատճառ որ մեր մեղաւորներիս բընութիւնը աւելի պատուեցիր՝ քան թէ երանելի նահապետներինը. Որովհետև նոքա Քեզ Աստուծած էին կանչում, իսկ մենք Քո գթութեանդ արժանանալով՝ Քեզ Հայր ենք անուանում. Եւ այժմ մեր աղաչանքն այս է Քեզ՝ որ Քո այս նոր և պատուական Հայր անուան շնորհքը օր քան զօր պայծառացնես և ծաղկեցնես Քո սուրբ Եկեղեցւոյ մէջ:

Այս աղօթքով Քահանան իրը թէ կամենում է՝ որ ժողովրդին ևս խօսակից լինի Աստուծուն. որովհետև մինչև այժմ ինքն էր միայն խօսում, իսկ այժմ որ պատարագաւ Հօր Հաշտութիւնը Հայցեց ժողովրդի համար՝ ցանկանում է որ ժողովրդին ևս արժանանայ այդ շնորհին: Սորան ապացոյց կարող է լինել մարդկան սովորութիւնը. այն է՝ երբ ատելութիւն և թշնամութիւն է տիրում ծառաների և տէրանց մէջ, ծառալք երենք դէմ յանդիման չեն վստահանում խօսել իրանց տէրանց հետ. այս նախ հաւատարիմ և զլիսաւոր ծառալք ձեռքով ընծալիւք պատարագ են ուղարկում իրենց տէրանց. և հաւատարիմ ծառան պատարագի ընծալիւք և իւր թախանձանօք երբ յաջողում է զրաւել տէրանց նախիլին ուրը, յայն զէպս միայն ծառաները վստահանում են խօսակցել իրենց տէրանց հետ. Սոյնպէս ահա և Քահանան արեց. Նախ և առաջ ինքը պատարագաւ մտաւ Աստուծոյ առաջ ժողովրդի համար. և երբ Աստուծած բարեհան կամքով ընդունեց Քահանալի ձեռքից ժողովրդի ուղարկած պատարագը և խաղաղութեան հաշտութիւն տուեց՝ այն ժամանակ և Քահանան իւր միջնորդական պաշտօնով սկսեց լինդրել զԱստուծած այս մտքով թէ՛ Տէր, Դու որ Քո ողորմութեամբ հաշտուեցար ժողովրդի հետ, տուր նո-

րան իրաւունք Քո բարերար կամքովկ, որ գայ Քեզ յանդիման լինելու և Քեզ հետ խօսակցելու. Այս է Քահանալի այժմեան աղօթքի պատճառը՝ որով թախանձում է զչար: Եւ խորհրդաբար խօսելով Աստուծոյ հետ, լիշում է Նորա ճշմարտութիւնը և ողորմութիւնը, արդարութիւնը և շնորհը ասելով Տէր, Դու մեր պարտաւորելոց բնութիւնը նահապետներից աւելի մեծարեցիր. Նոցա Աստուած կոչուեցար, իսկ մեղ՝ Քո մեծ ողորմութեամբ չար անուանեցար: Աբրահամ՝ որ Քո ծաւան էր և արարածը՝ հաւատաց Քեզ և Դու պատուեցիր նորա սպատոհմը, անուանեցիր Քո ժողովուրդդ և Աստուած կոչուեցար և նոցա՝ որոնք Աբրահամու հաւատովը ճոխացան. իսկ Քրիստոս՝ որ Քո բնութենակից Որդիիդ էր, իջաւ ՚ի ծոցոյ Հօրդ, առաւ մեր բնութիւնը և անշփոթ խաւնմամբ Աստուածային բնութեան հետ միաւորելով՝ իւր մարմնով Քո միակ Որդին դաւանեցաւ. և որոնք Նորան հաւատացին Քո որդիք կոչուեցան: Ուրեմն մենք ոչ թէ ՚ի զուր ենք վստահանում մեղ Քո որդիք անուանել ով Աստուած՝ այլ Նորա համար որ, միւնոյն մարմիննունիմք, ինչ որ ունէր Քո Միածինն Յիսուս. Այդ պատճառաւ զբեզ մեր չալրն ենք անուանում և մեր Քեզ որդիութեան գօրաւոր պատճառն ու միջնորդն է մեր Տէր Յիսուսի մահը: Ուրեմն ինչպէս որ Աբրահամը իւր հաւատով Քո Աստուածութեան անունը ժառանգեց իւր տոհմի վերակ, նոյնպէս և Յիսուս, ոչ միայն հաւատով՝ այլ և իւր մահուամբ արժանացրեց մեղ ամենայն համարձակութեամբ գբեզ մեղ չալր անուանել և մեղ՝ Քեզ որդիք կոչուիլ և արքայութեանդ ժառանգներ: Եւ ինչպէս որդիքը առաւել մտերիմ և հարազատ գտնուելով դէպի իրենց հալրը, քան թէ ծառալքն դէպի իրենց տէրը, կարող են ամենայն ինչ վստահաբար իննդել, ուստի և ես այս ամենայն լիշելով իննդրում եմ համարձակութիւն տաս իմ ժողովրդիս իրեւ նոցա հալր, դալու և վստահաբար Քեզ հետ խօ-

սելու իրեւ Քո որդիք: Այստեղ ահա Քահանան բարձրաձայն է ասում աղօթքի վերջին մասը այսպէս.

«Եւ տուր մեզ համարձակաձայն բարբառով բանալ զբերանս մեր՝ կարգաւ գբեզ երկնաւորդ Հայք երգել և ասելու:

Ուրեմն եթէ Դու չար և մենք Քո որդիք ենք՝ տուր մեզ ուրեմն իրաւունք որ համարձակ ձայնով և խօսքով դիմենք Քեզ՝ իրեւ մեր երկնաւոր Հօր, երգենք և ասենք:

Քահանայի այս առւած իրաւունքի վերայ վստահացած ժողովուրդը՝ դիմում է առ Աստուած որդիական համարձակութեամբ և ասում է Տէրունական աղօթքը:

«Հայս մեր որ յերկնս ևս սուրբ եղեցի անուն քո, Եկեսցէ արքայութիւն քո. եղեցին կամք քո. որպէս յերկնս և յերկը. զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ աւսօր և թող մեզ զպարտիս մեր՝ որպէս և մեք թողութք մերոց պարտապանաց. և մի տանիք զմեզ ՚և փորձութիւն. այլ փրկեա զմեզ ՚և չարէն».

Մեր Հալր որ երկնքումն ես՝ սուրբ լինի Քո անունը. Թոնդ գայ Քո թաղաւորութիւնը. Թոնդ լինի Քո կամքը երկրի վերայ այնպէս՝ ինչպէս կատարում է երկնքումը. Մեր հանապազորդեան կամ մշտական հացը տուր մեզ և ալոր. Թոնդ մեզ մեր պարտքը այնպէս՝ ինչպէս որ մենք ներում ենք մեր ընկերներին կամ թողնում ենք մեր պարտապանների պարտքերը. Մեզ փորձանքի մէջ մի ձգիր. Այլ աղատիր չարից:

Ժողովուրդը ամենայն իրաւամբ զԱստուած Հալր է անուանում. որովհետեւ ինչպէս տեսանք Աստուծոյ Միածին Որդին Յիսուս Քրիստոս՝ իւր խաչիւ և մահուամբ և բոլոր փրկարդութեամբ մարդկակին աղզը՝ որ ծառայ և արարած էր կոչում Աստուծոյ՝ կոչեց որդիք Աստուծոյ և զԱստուած Հալր ճանաչեցրեց նոցա: Արդ այս գիտենալով պիտի հաւատանք, որ եթէ իրեւ մարդ մեղանչենք, նա դարձեալ պատրաստ է մեր բազմագիմի յանցանք և մեղք ներել Հալրական դժութեամբ, եթէ անառակ որդւոյ նման ճշմարիտ զղմամբ առ նա դի-

մենք: Հայրական սիրոյ այս ընդարձակութիւնը ճանաչելով որդին, երբէք չէ յուսահատում իւր զանցառութեանց մէջ, այլ դարձեալ դիմում է զրաւել իւր չօր սէրը: Այս գժութիւնից և սիրուց զրկուած է ծառան. և չունի այն վստահութիւնը՝ որպիսին ունի որդին. Դառայի և տիրօջ մէջ չկայ սիրոյ այն հաստատուն կապը՝ որպիսին կայ հօր և որդույ մէջ. Եւ որովհետեւ Քրիստոսի եկեղեցին ոչ թէ Աստուծոյ ծառայութեան՝ այլ Որդէգրութեան մէջ է, վասնորոյ և իւրաքանչիւր անդամ նոյն սուրբ եկեղեցւոյ՝ ամենայն իրաւամբ դիմում է առ Աստուած՝ իբրև առ Հայր իւր. Ուստի իւրաքանչիւր անդամ Քրիստոսի սուրբ եկեղեցւոյ՝ իւր մեղաց յուսահատութեամբ ըրպէտք է հեռանայ և սառի Աստուծոյ Հայրական սիրուց և գժութիւնից, այլ ընդ Հակառակն իւր որդիական մտերմաթեամբ պիտի ջանայ վերստին զրաւել իւր չօր սէրը և գութը և ներողամտութիւնը:

Տէրունական աղօթքի այս երկու խօսքը, որ է «Հայր մեր որ յերկինս ես» են իբրև յառաջարան, իսկ հետեւեալ խօսքերն են պատշաճաւոր խնդրուածքներ, որ այժմ համարձակ վստահութեամբ կարգաւորապէս սկսում է առաջադրել Նորան իւր կենսական և հոգեկան պիտոյից վերաբերեալ խնդրուածքները և նախ այսպէս է սկսում «Սուրբ եղեցի անուն քո». Աստուծոյ անունը միշտ սուրբ է և կլինի սուրբ մինչեւ յաւէտ. իսկ եթէ մենք այսպէս ենք ասում, դա չէ նշանակում որ մենք խնդրում ենք թէ սրբէ Աստուած իւր անունը. այլ այս խօսքերով մենք կամենում ենք ասել թէ՝ ինչպէս Պու ինքդ Տէր, սուրբ ես բնաւին, սուրբ են քո գործքդ, կամքդ, պատուիրաններդ, խորհուրդներդ, նոյնապէս և սուրբ է Անունդ, ուրեմն տուր մեղ այնքան զօրութիւն և կարողութիւն՝ որ քո սուրբ Անունը սրբութեամբ պահենք մեր գործոց, մեր խօսքերի, մեր սրտի, մտքի, հոգւոյ և խորհուրդների մէջ. որովհետեւ սրբու-

թիւնն է վայել Քո Անուանդ և որպէս զի պարտաւոր չմնանք Քո առաջ:

Սորանից յետոյ, սպահելով խնդրուածոց կարգը, դիմում է դէպի աւելի մեծամեծ խնդրուածքները, ասելով «Ելեսցէ արքայութիւն Քո» այսինքն՝ որովհետեւ մեր վերայ սրբեցիր Քո անունը ուսուցանելով մեղ Քո կամքդ, այժմ տիրիր մեր վերայ ամեն ժամանակ: Աստուած Տէր է բոլորի վերայ. բայց թէ ինչու մենք ինքներա ենք խնդրում որ իբրև Տէր՝ տիրէ մեղ վերայ. Որովհետեւ մարդկանցից շատերը տղիստանում են Աստուծոյ Տէր լինելը ճանաչել. ուստի կամ ամենեին չեն անուանում Նորա սուրբ Անունը և կամ ուրանում են զայն գործով ճանաչել. ուստի խնդրում ենք որ ամեն ժամանակ զայ մեր ամենիս վերայ Նորա արքայութեան զօրութիւնը որ մեղ զգաստացնէ զիսել և ճանաչել Նորա թագաւորութեան ահաւորութիւնը և Նորա ինամոց և Սիրոյ առատութիւնը որ մեր մըտաց առջև՝ իբրև մարմնաւոր աչաց՝ միշտ ներկայ ունենամք Նորա իշխանութիւնը երկվաղիւ և սիրով. Եւ այս խնդրուածքը շատ կարևոր է. վասն զի Նորա ներկայութիւնը հոգւոյ կենդանութիւն է, յորմէ կսովկայ սատանան և կփախչի և մենք աղատ կլինեմք բանսարկուի որոգալիթը ընկնելուց:

Գեղեցիկ է այս խնդրուածոց կարգաւորութիւնը, որովհետեւ նախ Անուան սրբութիւնը հայցեց, յետոյ զնա իւր թագաւոր ճանաչեց և այժմ նորա կամքն է խնդրուածութիւնը որ կատարուի՝ ասելով «Եղեցին կամք քո, որպէս յերկինս և յերկին»: Մարդկային սովորութեամբ է այս խնդրուածոց կարգը, դոր օրինակ երբ որ մէկը տիրում է մէկին և իշխում ապա թէ ըստիպում է նորան իւր կամքը կատարել: Այսպէս և մենք, որ ճանաչեցինք և ընդունեցինք մեղ վերայ Աստուծոյ տէրութիւնը և թագաւորութիւնը՝ այժմ ահա հայցում ենք Նորա կամքի զիսութիւնը որ կատարենք, ինչպէս հրեշտակները երկնքում են կատարուած:

Տէրունական աղօթքի այս յօդուածը, որով խնդրում ենք որ Աստուծոյ կամքը կատարուի մեզ վերայ ինչպէս որ երկնքումը հրեշտակաց վերայ՝ մտադրութեան արժանի է, ինչու որ սրանով խնդրում ենք, որ մեր ամեն ցանկութիւնները իր կամաց համաձայն կատարէ, որին պատրաստենք ընդունել, հպատակի և կատարել. ինչպէս որ հրեշտակները պատրաստականութեամբ կատարում են Նորա կամքը: Այս վսեմ խնդրուածքը քրիստոնէական կոչման վիճակուած մարդկային ազգի վերայ մի անսահմանութեան իրաւունք են աւելացնում: Մարդիկ կրտսեր եղաբարք էին հրեշտակաց. իսկ երբ յանցանքն ու դատապարտութիւնը խտրոց թշնամութեան դրուեցաւ ընդ մէջ մարդկան և Աստուծոյ, մարդիկ զրկուեցան այդ բարձր կոչումից, այդ անսահման իրաւունքից և ընկան չարի գերութեան տակ. այն ժամանակ հրեշտակը միայն մնացին Աստուծոյ կամաց զիտողք և կատարողք, որպէս և փառացն սպասաւորք. Սակայն երբ Միածինն Աստուծոյ Յիսուս իւր փրկագործութեամբ ջնջեց կամ վերցրեց բոլորովին այդ թշնամութիւնը և երկիրը երկինք կերպարանափոխեց և երկրի ու երկնի մէջ եղած նախկին խաղաղութիւնը վերստին հաստատեց՝ այն ժամանակ մարդիկ ոչ միայն հրեշտակացան, այլ և զեր քան դնոսա բարձրացան, որովհետև որդիք Աստուծոյ կոչուեցան. վասնորոյ իրեւ հարազատ որդիք սուրբ աւագանի արգանդից հոգեպէս ծնուած խնդրում են տեղեկանալ չօր Աստուծոյ կամքը և կատարել «Եղիցին կամք քո» ասելով. Սակայն սորանով ևս չբաւականանալով, ձկտում են իրենց մարմնական դրութիւնից բարձրանալ, բոլորովին հոգիսնալ այսինքն հրեշտականալ և իրմւ ՚ի մարմնի հրեշտակը լինել, որ բարձր է հրեշտակական վիճակից, և այնպէս կատարել Աստուծոյ կամքը: Հրեշտակները հոգեղէն պարզ զոյացութիւնք լինելով, առաջ բոլորովին մարմնական թանձրութիւնից, ընական է որ

զԱստուած հոգեպէս պաշտելու կարողութիւն ունեն. այն ինչ մարդը հոգուց և մարմնից բաղադրուած մի զոյացութիւն լինելով կդժուարանալ հրեշտակաց պէս կամակատար լինել. սակայն շնորհիւ ամենափրկչին Յիսուսի կարող է, եթէ ջանաւ և կամի ՚ի մարմնի անմարմնանալ, այսինքն հոգիանալ և հրեշտականալ. և այնպէս պաշտել զԱստուած և կատարել Նորա կամքը: Այժմ մնում է մեզ քննել թէ արդեօք Աստուծոյ կամքը մեզ համար անպայման բարի է միշտ թէ ոչ: Ճատ խորամուխ չինելով այսպիսի մի քննութեան մէջ, կրաւականանամք պարզ և համառօտ տեսութիւն անել կեանքի օրինակներից վերցնելով այս խնդրոյ լուծումը. Ո՞ր ճշմարիտ ծնօղքի կամքը որդւոյ վերաբերութեամբ՝ կիխնի չար և վնասակար, քանի որ նոյն ծնօղքը ծնել է նորան, սնուցել է, հասակի է հասցրել, զարգացում է տուել և հոգացել է ծնօղաբար նորաբոլոր կենսական, մտաւոր և հոգեկան պէտքերն ու կարիքները. հաւատացած լինելով որ ինքը իւր որդւոյ պատասխանատուութեան տակ է առաջի Աստուծոյ, որովհետև և որդիքը իրենց իրեւ զրաւներ է տուել Աստուած մնուցանելու և զարգացնելու իւր կամքի համաձայն իւր արքայութեան ժառանդներ պատրաստելու համար:

Ո՞ր ճշմարիտ Քահանայի և Եպիսկոպոսի կամքը իրենց ժողովրոց վերաբերութեամբ՝ կիխնի չար և վնասակար, քանի որ նոյն Քահանան և կամ Եպիսկոպոսը ծնել են նորան սուրբ աւագանի Մկրտութեամբ՝ Որդեզրելով չօր Աստուծոյ և ազատելով սկզբնական մեղքից: Զօրացրել են նորան սուրբ չոգւոյ շնորհքով Պրոշմամբ՝ չոգեսոր քաջամարտիկ պատերազմող պատրաստելով չարի բոլոր որպայմից գէմ Զինուորեալ եկեղեցւոյ ասպարէզում: Մեռցրել են նորա մէջ մեղքը և արթնացրել են նորա թմրած խղճմտանքը Ապաշխարութեամբ՝ պատրաստելով Նորան հաղորդ լինել Աստուածային շնորհին: Թողել են նորա

բոլոր չարիքը, անօրէնութիւնները և ներգործական մեղքերը սուրբ չաղորդութեամբ՝ Սեղանակից առնելով նորան Յիսուսի սուրբ Մարմնոյ և Արեան մեղսաքաւիչ խորհրդին։ Հանել են նորան միայնակ, տիտոր և ամենայն քայլափոխում աշխարհակին հրապոլիների գայթակղեցուցիչ դրութիւնից Ամուսնութեամբ՝ տալով նորան ընկեր և կենակից ուրախութեան և վշտերի, յաջողութեան և տարաբազտութեան, հիւանդութեան և առողջութեան, աղքատութեան և չափաւորութեան, որդէծնութեան և որդիքը Աստուածային կամաց արդարութեամբ սնուցանելու և խղճի օրէնքի զիտութեամբ դաստիարակելու և զարգացնելու համար. Հանել է նորան մարմնական կամ աշխարհային ծառայութիւնից և կարդել է նորան Աստուածային, հոգեոր և երկնային պաշտօնի մէջ Զեռնադրութեամբ՝ տալով նորան իրաւունք և պարտք. Իրաւունք՝ թողնելու մեղքերը և վայելելու Աստուածային շնորհը սուրբ խորհուրդների մատակարարութեամբ. և Պարտք՝ հովուելու իւր ժողովուրդը ըստ կամաց և պատուիրանաց Աստուծոյ, յաձումն Եկեղեցւոյ Քրիստոսի և ոչ ՚ի քայլայտմն, ՚ի բազմապատկումն ժառանգաց և որդոց արքայութեան և ոչ ՚ի նուազումն, ՚ի փառու և ՚ի հաճոյս Աստուծոյ և ոչ ՚ի շահ անձին և ՚ի հաճոյս իւր։ Միթթարել են նորան կեանքի վերջին օրհասում կամ յուսահատ դրութեան մէջ՝ Վերջին Օծմամբ ցոյց տալով նորան մեր ամենիս հանգիստը, ուր պիտի հանգստանանք այս թշուառ կեանքի ծանրութիւններից ևալն. ևալն. կար՞դ էր չար լինել քահանայի կամ եպիսկոպոսի կամքը դէպի իրենց ժողովուրդը, քանի որ շատ լաւ զիտեն որ իրենք են նոյն ժողովորդի մեղքի և յանցանաց և ամենայն անօրէնութեանց պատասխանատուն. և թէ իրանցից պէտք է պահանջէ Աստուած նոցա արիւնը՝ եթէ չար են կամեցած իրենց հովութեան և դաստիարակութեան յանձնուած ժողովրդին, ըստ այնմ և զրում է «Որդի

մարդոյ դէտ կացուցի զքեղ տանդ Խրակէլի. լուիցես լինէն զպատգամն և սպառնացիս նոցա իբրև լինէն։ Յորժամ ասիցեմ ցանօրէնն, եթէ մահու մեռանցիլո. և դու ոչ զգուշացուցանիցես նմա. և ոչ խօսեցիս զգուշանալ անօրինին և դառնալ ՚ի ճանապարհաց իւրոց չարաց և կեալ. անօրէնն յանօրէնութեան իւրում մեռցի. և զարիւն նորա ՚ի ձեռաց քոց Կիրնդրեցից. իսկ եթէ զգուշացուցանիցես անօրինին և նա ոչ դարձցի յանօրէնութենէ իւրմէ, անօրէնն այն յանօրէնութեան իւրում մեռցի, և դու զանձն քո ապրեցուցանիցես»։ Ով մարդոյ որդի, ես քեզ տեսուչ կարգեցի իմ ժողովրդեան. կլսես իմ հրամաններս և կսպառնաս նոցա իմ կողմից. Երբ ես անօրինին կասեմ թէ պէտք է մեռնես մեղքիդ համար և դու նորան չես խրատի, չես զգուշացնի՝ որ իւր չար ճանապարհաց զառնայ և ապրի, անօրէնը իւր անօրէնութեան, իւր մեղքի մէջ կմեռնի և նորա արիւնը քեզանից կպահանջեմ. իսկ եթէ դու կզգուշացնես և կխրատես անօրինին, մեղաւորին և նա իւր անօրէնութիւնից չի դառնայ և մեղքը չի զղայ. նա իւր անօրէնութեան ու մեղքի մէջ կմեռնի և դու ազատ կլինես պատասխանատութիւնից։

Որ բարեխիղճ ուսուցչի կամքը չար և վնասակար կլինի դէպի իւր աշակերտները, քանի որ նոյն ուսուցիչը մտաւոր սնունդ, կերակուր, զարգացում է տուել իւր աշակերտներին. քանի որ ընդունել է նոցա իրեւ իւր եղբարներ ու քոյրեր և կամ որդիք և իւր իւրաքանչւր մի խօսքին ամենայն հարազատութեամբ և միամտութեամբ հաւատացող անմեղներ. քանի որ նա նոցա հոգեսոր, մտաւոր, և մարմնաւոր առողջապահական կրթութեան ու զարգացման համար տքնում է զիշեր ու ցերեկ, նոցա կրթութեան ձեւի, եղանակի և որպիսութեան վերայ է խորհրդածում և նոցա ապագայ վիճակի վերայ է մտածում ևալն ևալն։

Եւ վերջապէս ո՞ր ճշմարիտ և արդարասէր վաճառականը, արհեստաւորը և ամենայն գործաւոր մարդ չար և անխաջողութիւն կկամենալ իւր գործին, քանի որ նա անդադար մտածում է իւր գործի յաջողութեան մասին, իմանալով որ ինքն է իւր գործի պատասխանատուն և արդիւնք վայելողը. վրատահութեամբ կարող ենք ասել թէ ոչ ոք թէ և վայրենամիտ անդամ լինին այնպիսիք:

Արդ եթէ մարդկանց մէջ բնութիւնը այսպիսի պայման և օրէնք դրած է. ինչո՞ւ նոյնը և Աստուծոյ մէջ պիտի չհաւատանք, որ բոլորովիմբ բարութիւն է և ամենի բարին կամեցօղ:

Ինչպէս որ ուսուցանում է մեզ ինքը մեր Տէրը և փրկիչը. «Եթէ դուք՝ որ չարքու էք, գիտէք պարզես բարիս տալ որդոց ձերոց, որչափ ևս առաւել չալին ձեր երկնաւոր տացէ պարզես բարիս այնոցիկ՝ որ ինդրենն զնա»:

Ուրեմն պիտի հաւատանք որ Աստուծոյ կամքը բարի է. Կորա տուած մահը աւելի բարի է և խորհրդաւոր՝ քան մեր ցանկացած կեանքը. Կորա մեզ ուղարկած աղքատութիւնները, թշուառութիւնները, ձախորդութիւնները, վշտերը, հիւանդութիւնները, նեղութիւնները աւելի բարի, օգտակար և խորհրդաւոր են. քան մեր ցանկացած հարստութիւնը, յաջողութիւնը, ուրախութիւնը, առողջութիւնը ևայլն. և վերջապէս այն ամենայն ինչ որ Կախախնամութիւն՝ կուղարկէ մեզ վերայ՝ անպայման բարի է մեզ համար, որովհետեւ ինքն մեր Ստեղծողը լինելով և ինքն է և մեր ինսամողը, և կիսամէ որպէս և կկամենալ: Բայց թէ ինչ է Աստուծոյ կամքը՝ այդ իւրաքանչիւր խոհական անձն զիտէ ՚ի մասնաւորի, այն է՝ Սիրել զԱստուած՝ և սիրել զընկերն, որպէս Քրիստոս Տէրն մեր իւր աւետարանովը մեզ սորվեցրեց իրեւ աղբիւր երջանկութեան, փըրկութեան և անմահութեան:

Սորան հետեւում է չորրորդ ինդրուածքը, որ է այս «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր»:

Այս յօդուածով ինդրում ենք թէ մեր հոգեսր սնունդը և թէ մարմնաւորն. Հոգեսր սնունդն, որով մեր հոգիքը կպարին. և կգուարթանան՝ են Աստուածալին կամաց և օրինաց գիտութիւնը, Նորա պատուիրանաց պահպանութիւնն և այն գերազոյն Սէրը՝ որոնք միայն արժան է սիրել զԱստուած. ևս և լոյս մտաց, որով կարող ենք իմաստնանալ, Սուրբ զրոց հոգէ-բուղիս բովանդակութեանը հասու լինելու: Խոկ մարմնաւորը, որին դիտում է պարզաբար այս յօդուածիս միտքը, է մեր հանապազօրեայ մարմնաւոր սնունդը: Թէւ մենք աշխատութեամբ պէտք է ճարենք զայն, ինչպէս որ Աստուած վճռաբար սահմանեց գործել զերկիր և քրտամբ երեսաց ճարել մեր օրական հացը. բայց ոչ առանց Աստուածալին գործակցութեան, ինչու որ մեր ցանածները, ինչպէս որ Առաքեալը կասէ. Աստուած է որ ամեցուցանէ. տալով անձրեւ և ծագելով մեզ ամեն ժամանակ իւր արեգակն: Այս ամենը Քրիստոս Տէրն մեր դիտենալով՝ Աստուածաբար սովորցնում է որ մեր ամենօրեայ հացը՝ մարմնոյ սնունդը չօր Աստուծոյ աղօթքով դիմելով ինդրենք:

Չորրորդ ինդրուածքին հետեւում է պարտուց կամ մեղաց թողութեան ինդրուածքը. «Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց». այսինքն՝ ինչպէս որ մենք ներեցինք մեր ընկերի սխալմունքը, այնպէս և Դու ներեցի մեր մեղքերը. Այս ինդրուածքի յօդուածը այնպէս պայմանաւորած է Քրիստոս որ երբ մենք ներենք, Աստուած ևս կներէ. ուրեմն պէտք է լաւ մտածենք. նա՝ որ չէ ներում իւր ընկերի յանցանքը, թող ինքն էլ ակնկալութիւն չունենալ, որ Աստուած իւր յանցանքին, մեղքին թողութիւն կտալ:

Հետեւում է ապա վեցերորդ ինդրուածքը. «Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն». Այս ինդրուածքն ևս հոգեսր և մարմնաւոր պէտք է ընդունենք. Եւ նախ հոգեսրը տեսնենք. «Գործութիւն» բառը, ալստեղ նշանակում է չարի ներգործութիւնը,

որը մեզ հետ միշտ պատերազմի մէջ է. բայց պէտք է դիտենալ, որ սատանան մեր խորհուրդներից և կամքից է վերցնում իւր ներգործութեան կամ չարութեան նիւթը և ապա պատրաստում է մեզ համար փորձութեան որոգալիթը. ինչպէս և Յիսուսի ժամանակ, օգուտ քաղելով Յիսուսի քառասորեայ պահեցողութեան քաղցից՝ մօտենում է Նորան փորձելու. Յիսուսի քաղցը լինում է չարի փորձութեան նիւթը: Այսպէս զբում է և Յակոբոս Առաքեալը. «Իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ փորձի լիւրոցն ցանկութեանց ձգեալ և պատրեալ». Իւրաքանչիւրը ձեղանից իւր ցանկութիւններից խաբուելով է փորձում. Ուրիմն չարը իւր փորձութեան նիւթը մեզանից է առնում: Ուստի և խնդրում ենք՝ որ իւր կարող զօրութեամբը սանձահարելով մեր կիրքերը, չժողու, որ փորձութեան մէջ ընկնենք:

Մարմնաւոր փորձութիւնն ևս հասկանում ենք մարդկանց պատահած վնասները, այս է՝ հրկիզութիւնք, հիւանդութիւնք, վնասակար արկածք և պատահարք, սով, սրածութիւնք, պատերազմ ևայն. որոնք պատահում են մեզ մեր անզգուշութիւնից, անխոհեմութիւնից, անհեռատեսութիւնից, և նախապէս չխորհած և չմտածած գործողութիւնից, որոց հետեւում է մեր մարմնաւոր փորձութիւնը շատ անդամ բոլորովին անսպասելի կերպով յանկարծակի վրայ հասնելով: Մենք աղօթքիս այս մասովը, յանձնելով մեզ Աստուծոյ Ամենիմաստ գիտութեանը, խնդրում ենք որ նա տնօրինէ մեր հարկաւորը. նա հեռացնէ մեզանից մեզ վերայ գալիք փորձանքները՝ որ չվասպուինք:

Սորան հետեւում է եօթներորդ խնդրուածքը, որ ըստ մասին սորա շարունակութիւնն է և վերջաւորութիւնը այսպէս «Այլ փրկեա զմեզ ի չարէն». չարը իմանում ենք սատանայն՝ որ փորձութիւնն է մեր կեանքի և գալիթակիզութիւն՝ իւր խորամանկ հնարքներովը. և այս մասին աղաջում ենք. թէպէտ մենք շատ անդամ թէ կամօք և թէ ակամայ. թէ դիտու-

թեամբ և թէ անդիտութեամբ հետևելով չարին ենթարկում ենք փորձութեան, սակայն Տէր, Դու զմեզ այն չարիցը աղատիր, որ է մեր հոգեւոր և մարմնաւոր վնասատուն:

Տէրունական աղօթքի վերջաբանը որ՝ Աստուծոյ փառատրութիւն է, որ է այս. «Զի քո է արքայութիւն և զօրութիւն և վառք յաւիտեանս. ամեն». ասում է Քահանան և ոչ ժողովուրդը. Որովհետև նախ ինքը խնդրեց իրաւունք որ ժողովուրդը համարձակաձայն բարբառով երգէ Տէրունական սղօթքը և ասէ. իսկ այժմ որ Աստուծածային գիտութեան արժանանալով ժողովուրդը, միաձայն համարձակ բարբառով դիմեց առ Աստուծած իբրև առ իւր չայր և ինդրեց իւր հոգեւոր և մարմնաւոր հարկաւորելիքները՝ Քահանան իրեն վերապահելով Աստուծոյ փառատրութիւնը՝ ինքն ասում է բարձրաձայն աղօթքի վերջաբանը:

Նախ քան «Հայր մերի» վերջաբան ասելը, մինչո՞ւ ժողովուրդը Տէրունական աղօթքն է երգում, Քահանան նոյն իմաստով ինքն ևս առանձնապէս է աղօթում առ Հայր այսպէս.

«Տէր տէրանց, Աստուծած աստուծոց. Ժագաւոր յաւիտենական, արարեէ ամենայն արարածոց, Հայր Տեառն-Շերոյ. Յիսուսի Քրիստոսի, մի տար զմեզ ՚ի փորձութիւն, այլ Քրիեա ՚ի չարէ և առքեցն ՚ի փորձութենէ».

Դու հիվ տէրանց Տէր, աստուծոց Աստուծած, Յաւիտենական ժագաւոր, բոլոր արարածների Արարիչ և Հայր մեր Տէր Յիսուսի Քրիստոսի. մի տանիր մեզ դէպի փորձութիւնը, աղատիր մեզ չարիցը և փորձանքներից մեզ ապրեցրու:

Եւ երբ գալիրները աւարտում են Տէրունական սղօթքը, զոյգ ընդ նոսին աւարտում է և Քահանան իւր աղօթքը, այն ժամանակ Սարկաւագը հայցում է Քահանայի օրհնութիւնը ասելով.

«Օրհնեա Տէր».

Եւ Քահանան բարձրաձայն ասում է «Հայր մերի». վերջաբանը այսպէս.

«Զի՞ քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամեն»:

Տէրունական աղօթքի վերջաբանը ասելուց յետոյ Քահանան դառնալով դէպի ժողովուրդը՝ խաչակնքում է նոցա ասելով:

«Խաղաղութիւն ամենեցուն»,

Որին դպիրները պատասխանում են.

«Եւ ընդ հոգւոյդ քում».

Սարկաւագը ազդարարում է.

«Ասածւծոյ երկրպագեսցուք».

Դպիրները ասելով «Առաջի քո Տէր» չոքում են, նոցա հետ և բոլոր ժողովուրդը:

Սարկաւագի ազդարարութեան և դպիրների պատասխաների միջոցին, Քահանան պարապ չէ, այլ աղօթում է առ Հոգին սուրբ այսպէս:

«Որ աղբիւսդ ես կենաց և բշխումն ողորմութեան Հոգեդ սուրբ, ողորմեան ժողովրդեան» որ խոնարհեալ երկրպագանեն Աստուածութեանդ քում. Պահեա զսոսա ամբողջս. տպաւորեա յոգուն սոցա զձե մարմնոյ ցուցակի, առ ՚ի ժառանգութիւն և ՚ի վիճակ հանդերձելոցդ բարեաց».

Դու՛ ով սուրբ Հոգի, որ կեանքի աղբիւրն ես և ողորմութեան բղխումը, ողորմիր այս ժողովրդին, որ խոնարհաբար երկրպագանում են քո Աստուածութեանը. Ամբողջ պահիր սոցա, տպաւորիր սոցա Հոգիների մէջ այն խոնարհ երկրպագութեան ձեր. որ մարմնոյ երկրպագութեամբ ցոյց տուին, որպէս զի ժառանգեն քո հանդերձեալ բարիքը:

Քահանան աւարտելով իւր առ Հայր աղօթելլ, դիմում է առ Հոգին սուրբ, որովհետեւ Յիսուս իւր պարգևները երկրի վերայ սուրբ Հոգւոյ տնօրինութեամբ է կատարում: Այս սուրբ Հոգին Քահանակի մատուցած նշանակները ՚ի Մարմին և յԱրիւն Քրիստոսի կատարեց. Այժմ խոնարհուելով Քահանան, ա-

զօթում է, անուանելով զնա «Աղբիւր կենաց». ըստ որում նա է աղբիւր զանազան շնորհաց և տիրապէս պարզեւում է մեզ զանազան շնորհք, իւրաքանչյւրին ըստ կոչման և պաշտաման: Իսկ «ձե մարմնոյ ցուցակի» ասելով՝ Քահանան երկրպագութեան ձեի համար է յայտնում, որ Աստուած հոգեոր երկրպագութիւն է խնդրում մարմնաւոր երկրպագութեան տեսակաւ, ըստ որում. «Հոգի է Աստուած և երկրպագուաց նորա պարտ է հոգւով և ճշմարտութեամբ երկրպագանել». Ուստի պարանոցի կորացնելը՝ հոգւոյ ներքին ներգործութեան արտաքին բացայատողը պէտք է իմասնանք:

Այս աղօթքից յետոյ Սարկաւագը դիմում է առ Քահանան ասելով.

«Օքնեա Տէր».

Եւ Քահանան բարձրաձայն ասում է նախընթաց աղօթքի շարունակութիւնն ու վերջաւորութիւնն այսպէս.

«Քրիստոսի Յիսուսի Տէրամբ մերով, ընդ որում Քեզ, Հոգւոյդ սրբոյ և Հօր Ամենակալի վայել է փառք, եշտանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն».

Մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որի հետ վեց ճշմարիտ Հոգւոյդ և Ամենակալ Յօրը, վայել է փառքը, իշխանութիւնը և պատիւ այժմ և յաւիտեան. այսինքն հանդերձեալ բարիքը ժառանգելու իրաւոնքը մենք ունենք Յիսուսով Քրիստոսով:

Այսպէս յետոյ Սարկաւագը բարձրաձայն ազդարարում է այսպէս:

«Պռօսխումէ».

Որովհէսթև ժողովուրդը տակաւին խոնարհուած սպասում է որ Քահանան ցոյց տայ իրենց Տէրունական սուրբ Մարմինը, և այժմ Սարկաւագը տեղեկանալով որ արդէն հասաւ խորհրդի ցուցման ժամը վասն որոյ ասում է «Պռօսխումէ». այսինքն ով եղբարք, սիրելի որդեակաք հաւատով կացէք և զգուշութեամբ. բարձրացրէք ձեր պարանոցները, նաևցէք և տեսէք,

գոհացէք և փառք տուէք: Քահանան բարձրացնելով սուրբ Մարմինը, ասում է բարձր բարբառով.
«Ի սրբութիւն սրբոց».

Ասինքն թէ՝ դուք որ ցանկանում էիք տեսնել ձեր Աստուածը՝ ի մարմնի, ահաւասիկ ձեր առաջև փայլեցնում եմ. տեսէք ձեր փախաղելիքը և ցնացէք: Դուք՝ ինձ իբրև խաղաղութեան հրեշտակ ուղարկեցիք առ Տէր, և ահաւասիկ նոյն խաղաղարար Տէրը ցոյց եմ տալի ձեզ. դուք կամեցաք Աստուածոյ սէրը ճանաչել, ահաւասիկ սիրելի Որդին Հօրից զրաւական առնելով ձեզ եմ բերում. դուք իմ ձեռքով մեղաց թողութիւն խնդրեցիք, և ահա ես Սրբոց և Սրբութեանց Սուրբը ձեզ եմ բաշխում. նաև այս սրբոց Սրբութիւնը դուք՝ որ արժանի համարուեցաք հաղորդակից լինել Սորան. Սա սուրբ է բնութեամբ, բայց ամենքի համար չէ Սա Սրբարար, այլ նոցա համար՝ որոնք Սորան հաւատով են տեսնում և ընդունում. Սուրբ է Սա, բայց ոչ ամենքի համար, այլ իւր անդամների համար է ուղարկուած իբրև Սրբութիւն. Սուրբ է Սա և սուրբ է առնում, սակայն ոչ թէ օտարներին կամ արտաքիններին, այլ ձեզ՝ որ արդէն իսկ սուրբ էք իւր բանիւ:

Ժողովուրդը հիմնալով այսքան մեծ շնորհաց համար, սքանչացեալ պատասխանում է.

«Միայն սուրբ, միայն Տէր Յիսուս Քրիստոս ՚ի փառս Աստուածոյ Հօր».

Ասինքն թէ՝ ով տէր մեր Քահանայ, մեզ հողածիններիս նրտեղից կլինի սրբութիւն, մենք ինչպէս կարող ենք սուրբ համարուել, քանի որ վիճակուած ենք զանազան ախտից և մեղաց. մեզ՝ մեր մարմնով թանձրութեան մէջ, դժուարին է սուրբ լինել ըստ ամենալին: Բայց ահաւասիկ ճշմարտապէս Դա միայն է սուրբ, Դա միայն է մաքուր. մեր մարմնաւորների մէջ Դա միայն է անախտ մարմնով. Դա միայն է մեր պար-

ծանքը և Դա միայն վերացաւ երկինք, Որին ձեռքիդ վերայ բազմեցրած ես. Որին մենք կարօտով ենք նախում, ցնծում ու մխիթարում. Որին նայելով միայն սրբուեցանք և որին աչքերս յառելով չենք կշտանում. Միայն սուրբ՝ Դա է ահա մարմնով. սուրբը, որ է միայն մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս մեր Աստուածն և վիրկիչը՝ որ Հօր Աստուածոյ փառքի մէջ է միշտ:

Իսկ Քահանան որ մինչև այժմ առանց ժողովրդի և նորանից մեկուսացած խորհրդար էր խօսում Աստուածոյ հետ՝ այժմ որ ինքը ցոյց տուեց ժողովրդին սուրբ խորհրդը, որ մինչև այժմ ծածուկ էր նոցանից, հարկաւոր է համարում որ իւր գոհութիւնը և օրհնութիւնը ոչ թէ առանձնապէս, ինչպէս անում էր մինչև այժմ, այլ յայտնապէս մատուցանէ առնենասուրբ Երրորդութեանը, ուստի և ասում է բարձրածան:

Ք ա հ ա ն ա ն. «Օրհնեալ Հայր սուրբ Աստուած Ճշմարիտ».

Դ ո ւ է ր ն է ր ը. «Ա.մեն».

Ս ո ւ է ր ն է ր է. «Օրհնեալ Տէր».

Ք ա հ ա ն ա ն. «Օրհնեալ Որդիք սուրբ Աստուած Ճշմարիտ».

Դ ո ւ է ր ն է ր ը. «Ա.մեն».

Ս ո ւ է ր ն է ր է. «Օրհնեալ Տէր».

Ք ա հ ա ն ա ն. «Օրհնեալ Հոգիդ սուրբ Աստուած Ճշմարիտ».

Դ ո ւ է ր ն է ր ը. «Ա.մեն».

Ս ո ւ է ր ն է ր է. «Օրհնեալ Տէր».

Ք ա հ ա ն ա ն. «Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյ Սրբոյ այժմ և միշտ և յաւիտեան յաւիտենից ամեն»:

Քահանայի այս խօսքերի արտայալութիւնն այս է՝ Օրհնեալ է Հայրն՝ որ հաշտութեամբ ընդունեց այս սուրբ պատարացը. Օրհնեալ է Որդին՝ որ մեր փոխանակ պատարագուեցաւ. Օրհնեալ է Սուրբ Հոգին՝ որ պատարագիս փոխանակ խոնարհուելով մեզ հատուցում շնորհեցաւ. Իսկ ժողովուրդը «Ամեն» ասելով, կամենում է ատել Քահանային իբր թէ մենք հաւատում ենք որ Կո ասածներդ ճշմարիտ էն:

Քահանայի այս գոհացողական օրհնութիւնից յիտոյ դպիր-ները ժողովրդի կողմից երգում են».

«Ամեն Հայք սուրբ, Որդիք սուրբ, Հոգիք սուրբ. Օրհնութիւն Հօր և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն այժմ և Ֆիշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն».

Քահանան այս միջոցին աղօթում է առ Քրիստոս խրնդ-րելով շնորհք թէ իւր և թէ ժողովրդի համար, որ արժանա-պէս հազորդուեն նորա սուրբ Մարմնոյն և պատուական Ա-րեանը, այսպէս.

«Նայեաց Տէր մեր Յիսուս Քրիստոս յերկնից ՚ի սրբութենէ քումմէ և յաթուոյ փառաց թագաւորութեան քո. Ե՛կ ՚ի սրբել և ՚ի կեցուցանել զժեզ, որ ընդ Հօր նստիւ և աստ պատարագիս: Արժանի արա տալ մեզ յանարատ մարմնոյ քումմէ և ՚ի պատուա-կան արենէ, և ՚ի ձեռու մեր ամենայն ժողովրդեանս».

Նայի՞ր Տէր մեր Յիսուս Քրիստոս երկնքից Քո սրբութիւ-նից և Քո թագաւորութեան փառաց աթուից. Ե՛կ սրբելու և կեցուցանելու մեզ, որ Հօր հետ նստած ես և այստեղ պատա-րագւում ես: Արժանացրու մեզ, որ մենք Քո անապական Մարմնից և պատուական Արիւնից մեր ձեռքով ժողովրդին ևս տանք:

Երբ վերջացնում է այս աղօթքը, ապա համբուրում է Սեղանը և ձեռքն աւնելով Սուրբ Մարմննը ամբողջապէս ըն-կղմում է Անապական Արեան մէջ, ՚ի նշան Քրիստոսի Մարմ-նոյն ՚ի խաչին Արեամբ ներկաւելուն, առելով առ Հայրն Ա-տուած.

Տէր Աստուած՝ մեր որ կոչեցեր զժեզ յանուն Միաձնի Որ-դւոյ քո քրիստոնէայս, և շնորհեցեր մեզ մկրտութիւն Հոգեռը աւագանաւն ՚ի թողութիւն մեղաց և արժանի արարեց զժեզ Հա-տորքել Սուրբ մարմնոյ և արեան Միաձնի քո: Եւ այժմ աղաւչմք զքեզ Տէր, արա զժեզ արժանի ընդունել գսուրբ խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութիւն. և գոհութեամբ փառաւորել զքեզ ընդ

Որդւոյ և ընդ սրբոյ Հոգւոյդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւի-տենից ամեն»:

Տէր Աստուած մեր՝ որ Քո Միաձնի անունով մեզ Քրիս-տոնէայ անուանեցիր և մեզ հոգեռը աւագանովն Մկրտութիւն շնորհեցիր մեր մեղաց թողութեան համար և արժանացրիր մեզ հաղորդուելու Քո Միաձնի Սուրբ Մարմնոյ և Արեանը. այժմ աղաւչում ենք Քեզ Տէր, արժանացրու մեզ ընդունելու այս սուրբ խորհուրդը մեր մեղաց թողութեան համար. և գոհու-թեամբ փառաւորել Քեզ Որդւոյդ և սուրբ Հոգւոյդ հետ միասին:

Քահանայի առ Քրիստոս մատուցած նախկին աղօթքի իմաստն է թէ՝ Տէր, մենք մեր զորձքերով չունենք համար-ձակութիւն Քեզ մերձենալու: Գու տուր մեզ այդ համարձա-կութիւնը, որ Քո աղաւ և անմեզ մարդկային Մարմնոյդ բնու-թեամբը ընդունեցիր այդ շնորհը Քո Հօրից, առնելով Մարմ-նոյդ մէջ Քո անչափ Հոգիդ և Սուրբ Մարմնոյդ և Արեան միջնորդութեամբ նոյնը ՚ի մեզ ես անցուցանում մեր իւրա-քանչիւրի արժանաւորութեան համեմատ. Ուստի աղաւչում ենք որ նոյն Հոգին անընդիջաբար տաս մեզ և մեր ձեռքով բոլոր ժողովրդին, որպէս զի մենք ամենքս իբրև անդամներ միակ Գլխոյդ՝ հաղորդ լինենք Քեզանից իշած շնորհին իրեւ գլխից առ անդամս:

Իսէ առ Հայր մատուցած այս վերջին աղօթքով Քահա-նան լիշտում է Աստուծոյ մեծ բարիքը, այն է՝ որ իւր Միաձնի անուամբ մեզ Քրիստոնէայ անուան շնորհին արժանացրեց, սուրբ Աւագանի Մկրտութեամբ՝ Աղամալին մեղքի դատապար-տութիւնից աղաւեց և սուրբ Հաղորդութեան խորհրդոյ շնոր-հիւը ներգործական մեղքից աղաւ կացուցանելով իրաւունք համարձակութեամբ փառաւորել սուրբ Եր-տուեց որդիական համարձակութեամբ փառաւորել սուրբ Եր-րորդութիւնը:

Երբ աւարտում է Քահանան իւր առ չալր՝ խորհրդական աղօթքը՝ երկիւղած պարկեշտութեամբ համբուրում է Սուրբ Սեղանը. Այս համբոյը երրորդ անգամն է. Առաջին անգամ համբուրեց Սուրբ Սեղանը՝ երբ նոր էր սկսում աղօթքը. Երկրորդ անգամ համբուրեց՝ երբ Սուրբ չողին ընդունեց առաջադրեալ նուէրների մէջ. Երրորդ անգամ ահա համբուրում է Պատարագը իւր մէջ ընդունելու խնդրուածքից յետոյ. Զոր օրինակ ինչպէս թագաւորին ներկայացող պատզամաւորը նախ երկրագանում է թագաւորին և յետոյ է անում պատզամաւորութիւնք. նոյնպէս և Քահանան՝ որ ժողովրդի կողմից առ Աստուած պատզամաւոր է գնացել, նախ երկրագանում է, այսինքն համբուրում է նորա փառաց տեղը որ է Սուրբ Սեղանը և յետոյ միայն սկսում է մատուցանել նորան ժողովրդի աղօթքն ու զանազան հայցուածները. Եւ ինչպէս թագաւորին ներկայացող պատզամաւորը, թագաւորից իւր պատզամաւորութեան գործին արժանաւոր վճիռ լսելուց յետոյ՝ շնորհակալութեան երկրագութիւն է տալիս, նոյնպէս և երկնային թագաւորի երկրաւոր պատզամաւորը՝ այն է Քահանան, յետ ստանալոյ զսուրբ չողին ՚ի պատարագն՝ երկրագանելով համբուրում է Սուրբ Սեղանը և շնորհակալ է լինում այդ շնորհի համար և այսուհետեւ սկսում է Սուրբ չողով խնդրել Աստուծուց իւր զանազան հայցուածները. Երբ և այդ աւարտուեցաւ, այն ժամանակ աղօթում է որ նոյն բաշխողն պարզեների ընդունէ իւր մէջ և իրանով ևս ժողովրդի մէջ անցուցանէ, որ արժանացել է այդ շնորհին, վասնորոյ և երրորդ անգամն է համբուրում Սուրբ Սեղանը իրեւ առ Աստուած վերջին գոհութիւն ակնունելի շնորհաց ընդունելու համար:

Այս աղօթքից յետոյ Քահանան բարձրացնում է Տէրունական Մարմինը և Արխունը Սկիհով միասին և դառնալով դէպի ժողովուրդը՝ ասում է բարձրացայն.

«Ի Սուրբ ՚ի Սուրբ պատուական մարմնոյ և յարենէ Տեառն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի հաշակեսցուք սրբութեամբ, որ եջեալ ՚ի յերկնից՝ բաշխել մէջն մերում: Սա է կեանք, յոյս, յարութիւն, քաւութիւն և թողութիւն մեզաց: Սաղմոս ասացէք Տեառն Աստուծոյ մերոյ. Սաղմոս ասացէք երկնաւոր թագաւորին մերում անմաշի, որ նստի ՚ի կառա քերովբէականս».

Այս խօսքերը ասելով Քահանան Տէրունի Սարմնով և Արեամը խաչակինքում է ժողովրդին և դարձեալ յետ դառնալով Սրբութիւնը դնում է Սեղանի վերայ, որից յետ վարագոյը ծածկում են և զպիները երգում են «Տէր ողորմեա» աղէրսը ծնկաչոք դրութեամբ ՚ի հարկէ:

Քահանայի աղօթքն է մեր Տէր և փրկչի Յիսուս Քրիստոսի սուրբ և պատուական Մարմինը և Արխունը որբութեամբ ճաշակենք, որ իջնելով երկնից՝ բաշխում է մեր մէջ. Սա Կեանք է, Յոյս է, Յարութիւն է և մեզաց համար քաւութիւն է և թողութիւն. Սաղմոս ասացէք մեր Տէր Աստուծուն. Սաղմոս ասացէք մեր երկնաւոր անմաշ թագաւորին, որ քերովբէական աթոռի վերայ է նստած:

Քահանայի բարձրացնելը Տէրունական Սուրբ Մարմինը ՚ի տես ժողովրդեան այս խորհուրդն ունի, որ ժողովուրդը աստիճան առ աստիճան սկսաւ բարձրանալ կամ հասնել Աստուծուց զիսութեանը և շնորհաց. որովհետեւ նախ առ Քրիստոս էր աղօթում, և ապա «Հալր մերով» որդէգրութեան շնորհին էր աղօթում, և ապա «Հալր մերով» որդէգրութեան շնորհին զինքն արժանացած համարելով առ Հալր զիմեց. ամենից յետոյ այն խորհրդաբար շնորհքը՝ որ միայն Քահանային էր հասանելի, ժողովուրդն ևս արժանացաւ ակն յանդիման տեսնել Քահանայի ձեռքում. Այժմ որ ժողովուրդը տեսաւ այս պարգևը, Քահանան ևս խնդրեց Քրիստոսից իւր աղօթքով, որ այդ պարգևը բաշխէ և տայ ՚ի ճաշակումն թէ իրան և թէ ժողովրդին:

Այդ պատճառով կրկին բարձրացնում է Սուրբ խորհուրդը

՚ի տես ժողովրդեան, ասելով իբր թէ՛ դուք՝ որ հեռուից միայն տեսաք այս Սրբութիւնը և զուարձացաք, իմացէ՛ք որ Աստուծոյ առատ ողորմութեան շնորհիւ արժանացաք ճաշակելու այս Սրբութիւնը և սրբուել ձեր մեղքերից: Եկէ՛ք ուրեմն, սիրով վայելեցէ՛ք այս սրբութիւնը. Հաւատով ճաշակեցէ՛ք այս ճաքը րութիւնը. Երկիւզով կերէ՛ք այս կեանքը. Դուք՝ որ թերահաւատութեամբ էք տատանւում՝ Սա է Յոյսը, Սրբանով գորացէ՛ք և հաստատուեցէ՛ք. Դուք՝ որ մեռած էիք՝ կերէ՛ք այս յարութեան նպատակը. Սա Կեանք է, ոչ ճարմնոյ, այլ հոգւոյ. Սա Յոյս է, ոչ ապականացու և անցաւոր վառքի, այլ անապական և անսանց վառաց. Սա քաւութիւն է ձեր մեղաց, որի մէջ թաթախուած էք չարին դրդմամբ. Եկ ուրեմն ով Եկեղեցի՝ որ Սորա սեպհականութիւնն ես, եկ, միացիր քո զլիխոյդ հետ և Սորա սիրովը եղի՞ր կենդանի, Մի ծուզանար ճաշակելու այս Հացը՝ որ երկնքիցն է իջած հոգւոյդ սնունդ՝ և մեղացդ թողութիւն տալու. և ճաշակիր այս Երիւնը որ հոգւոյդ աղտեղութեանց լուացումն է և կենդանութիւն է քեզ. Եթէ մեղք չունես, շուտով մերձեցիր այս Սրբոց Սուրբին. և եթէ մեղք ունես, այս ճաքուը և սուրբ Երիւնը քեզ կորբէ քո աղտերիցդ ու մեղքից. Միայն հաւատած այս Սրբութեանը, սիրով եկ դէպի Սա՝ որին բաղձացիր:

Քահանայի այս խօսքերը վստահութիւն և համարձակութիւն են տալի ժողովրդին, որ կամենում է արժանասորապէս մերձենալ Սուրբ Խորհրդոյ Ճաշակմանը: Այս խօսքերին ժողովուրդը ոչինչ այլ ևս չէ պատաժիանում, ինչպէս առաջ սովոր էր անել. որովհետև այն ողորմութիւնը՝ որ խնդրում էին՝ հաւատիկ առատապէս բաշխուեցաւ իրենց, այն շնորհէ՛ք՝ որին սպասում էին, այժմ տարածուեցաւ իրենց մէջ. Հանապաղորդեան Հացը՝ բաշխուեցաւ. պարտեաց թողութիւնը՝ տրուեցաւ. Միայն սուրբն՝ Յիսուս Քրիստոս՝ իբրև Սրբութիւն շնորհեցաւ իրանց բոլորին:

Երբ որ դպիրները աւարտում են «Տէր ողորմեա» աղէրսը, Սարկաւագի սաղմուելու հրաման է տալի ժաղսվուին այսպէս.

«Սաղմոս ասացէ՛ք Տէսառն Աստուծոյ մերոյ, դպիրք, ձայնիւ քաղցրութեամբ զերդս հոգեորս: Զի սմա վայել են սաղմոսք և օրհնութիւնք, ալէլուք և եսգք հոգեորք: Պաշտօնեայք, հանդերձ երգով սաղմոս ասացէ՛ք, և զծէր յերկինս օրհնեցէ՛ք»:

Ով դպիրք, քաղցրաձայն հոգեոր երգերով սաղմոս ասացէ՛ք մեր Տէր Աստուծուն. որովհետև Սորան են վայել սաղմոսներն ու օրհնութիւնները, ալէլուք և հոգեոր երգերը. և զուք, պաշտօնեայք, հոգեոր երգերով սաղմոսեցէ՛ք և երկնից Տէրը օրհնեցէ՛ք:

Սարկաւագի հրամանին համաձայն դպիրները սաղմոսում են այսպէս.

«Քրիստոս պատարագեալ՝ բաշխի ՚ի միջի մերում. ալէլուեա»:

Այսինքն թէ՛ ով Եկեղեցի, գիտացիր սոսկալի խորհուրդը, այն Քրիստոսը՝ որ մեր միջից քերտվեապէս տանելով տուինք Քահանալի ճեռքը, որ մեր ամենիս փոխանակ պատարագ մատուցանէ Հօր Աստուծոյ, Նա ինքը ահա մտնելով երկինքը՝ Աստուծոյ և մարդկան մէջ հաշտութիւն ձգեց. այժմ դարձեալ դալիս է մեր մէջ իբրև Հօր Աստուծուց մեզ պարզեւ և մեր մեղաց՝ դեղ առողջութեան է բաշխուում:

«Զմարմին իւը տայ մեզ կերպակուր և սուրբ գարեւն իւը ցողէ ՚ի մեզ. ալէլուեա»:

Իւր Մարմինը տալիս է մեզ իբրև հոգւոյ անծախելի կերպակուր և ոչ ճարմնոյ և Որին հոգեոր պատրաստութեամբ պէտք է մերձենամք. Իսկ Սուրբ Երիւնը ցօղում է մեր մէջ, մեր մեռելուի դորձքերը լուսնալու համար:

«Մատիք առ Տէր և առէք զլոյս. ալէլուեա»:

Մօտեցէ՛ք Քահանայի կանչելուն համաձայն, որովհետև Քահանան այդ իրաւունքը առաջուց տուաւ մեզ. մօտեցէ՛ք և լոյսը ստացէ՛ք Տիրօջից. լոյս է իրաւամբ հաւատացողաց Հա-

մար. որովհետև լուսաւորում է ընդունողների սիրտն ու հոգին Աստուածային գիտութեամբ, որից յառաջանում է մեղաց թողութեան արդիւնքը:

«Ճաշակեցէք և աեսէք զի քաղցը է Տէր. ալէլուեա».

Ի՞նչ պէտք է ճաշակենք և Տիրօջ քաղցրութիւնը իմանանք. լոյսը պէտք է ճաշակենք. որովհետև եթէ Աստուածային շնորհաց և դիտութեան լոյսը զզալի հայի հետ մտաւորապէս չճաշակենք՝ չենք կարող Աստուծոյ քաղցրութիւնը իմանալ. Այդ լոյսն է մեր ճանաչողութիւնը և հաւատը ՚ի մահն Քրիստոսի վասն մեր. և նոյն մահով չօր Աստուծոյ հաշտութիւնն ընդ մեզ և Սուրբ Հոգուոյ մեր մէջ անցանելլ Քրիստոսի Մարմնով: Եւ որովհետև առ այսքան քարերարութիւն Աստուծոյ՝ մենք մարդիկս տկար ենք հատուցանող լինել, վասն որոյ երկնային հրեշտակաց դասավետութիւնն են կանչում կցորդ լինելու իրանց գոհաբանութեանը:

«Օրհնեցէք զՏէր յեկինս. ալէլուեա».

Մենք ինչպէս կարող ենք երկնաւոր շնորհին՝ երկրաւոր լինելով հատուցանող լինել. Թո՛ւք օրհնեցէք Տիրօջը, դո՛ւք հատուցէք նորան մշտնջենաւոր փառատրութիւն իրըև փոխարինութիւնն մեր կողմից:

«Օրհնեցէք զնա ՚ի բարձանց. ալէլուեա».

Այս խօսքերով հրաւիրում են հրեշտակներին կցորդ լինելու իրենց գոհաբանութեանը, որովհետև նոքա սովոր են առ հասարակ օրհնելու զԱստուած՝ մեզ իւր շնորհքը պարզեցելու համար, ինչպէս որ օրհնեցին զԱստուած «Փառք ՚ի բարձունս» օրհներդութեամբ՝ երբ ծնաւ փրկիչն Յիսուս, մարդկան ազդի փրկութեան դործը կատարելու:

«Օրհնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. ալէլուեա»:

«Օրհնեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա. ալէլուեա»:

Հրեշտակք և զօրութիւնք կազմում են երկնային դասավետութիւնք, որ Աստուծոյ շնորհքը ստանալով տալիս են

միմեանց և հասցնում են մեզ. ինչպէս նախընթաց գլուխներում ցոյց ենք տուած. Եւ այժմ տեսնելով որ Եկեղեցին երկինք է եղած. ուստի հրեշտակաց և զօրութեանց օրհնաբանութիւնն ևս են հայցում, որովհետև ինչպէս տեսանք, դեռ Սուրբ Պատարագի սկզբներում Քահանան հայցեց Աստուծուց նոցա սպասաւորակցութիւնը և պաշտօնակցութիւնը և այժմ Եկեղեցին նոյն օրհնաբանութիւնն է հայցում վերոիշեալ սազմուերգութեամբ, որի իւրաքանչիւր տունը վերջանում է «ոչ-շուկ» երրայեցւոց բառով; որ ամենայն ազգաց լեզուվ գործ է ածւում և նշանակում է «Օրհնեցէք զՏէր».

Մինչդեռ դպիրները երգում են «Տէր ողորմեա» աղէրսը և «Քրիստոս պատարագեալ» օրհնաբանական սաղմոսերգութիւնը՝ Քահանան՝ որի ձեռքին է Սուրբ Մարմինը՝ համբուրում է շերմեռանդութեամբ և լի երախտագէտ զդացմանը և արում է.

«Զնը օրհնութիւն կամ զնը գոհութիւն ՚ի վերայ հացիս և բաժակիս ասասցուք. Այլ Յիսուս, զքեզ միայն օրհնեմք, հանդերձ Հարրդ և ամենասուրբ Հոգուովդ. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն».

Սորան կցում է և այս դաւանութիւնը.

«Խոստովանիմ և հաւատամ, զի գու ևս Քրիստոս Որդի Աստուծոյ՝ որ բարձեր զմեզս աշխարհի»:

Այսինքն որպիսի օրհնաբանական և գոհացողական խօսքեր է հարկաւոր ասել այս Հացի և Բաժակի վերայ մեր տրկարներիս բերանով, քանի որ Աստուածութեանդ անձառելի օրհնութիւնն է արդէն սոցա վերայ. Այլ բնչ է մնում մեզ, եթէ ոչ զՔեզ միայն օրհնել ովք Քրիստոս Աստուած մեր, Հօրդ և ամենասուրբ Հոգուոյդ հետ միասին անսահման ժամանակաւ, Որքո մեզ արած անբաւ շնորհաց և ողորմութեանդ համար: Սորա հետ միասին և խոստովանում եմ անսասան հաւանով, որ դու ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին, որ աշխարհի մեղքը վերցրիր:

Սորանից յետով բեկանում է Հայր և դնում է բաժակի մէջ ասելով.

«Երումն Հոգւոյն Սրբոյ».

Յետով չորս մասից մի մասը առնելով ձեռքը՝ արտասուօք և զոհութեամբ աղօթում է նախ առ Հայր և ապա առ Որդին, այսպէս.

«Հայր սուրբ՝ որ անուանեցեր զմեզ անուանակցութեամբ Միաձնի քո՝ և լուսառեցեր մկրտութեամբ Հոգեւոր աւագանին՝ արժանի արա ընդունել զսուրբ խորհուրդս զայս մեզ ՚ի մեղաց թողութիւն։ Տպաւորեամ ՚ի մեզ զշնորհս Հոգւոյդ Սրբոյ, որպէս ՚ի սուրբ առաքեալսն՝ որք ճաշակեցին և եղին մաքրեչք ամենայն աշխարհի։ Եւ արգ՝ Տէր Հայր բարերար. զհազորդութիւնս զայս մասնառեա ճաշակման երեկոյին աշակերտացն, բառնալով զխաւար մեղաց. մի Հայեր յանարժանութիւնս իմ և մի արգելցես զշնորհս Հոգւոյդ Սրբոյ. այլ ըստ անբաւ մարդասիրութեան քում. պարգեեա զստ քաւեչ մեղաց, լուծիչ յանցանաց. Որպէս խոստացաւ և ասաց Տէրն մեր Յիսուս Քրիստոս թէ ամենայն որ ուտէ զմարժին իմ և ըմպէ զարիւն իմ կեցցէ ՚ի յաւիտեան։

«Արգ՝ արա զստ մեզ ՚ի քաւութիւն, զի որք կերեցին և արբեն ՚ի սմանէ, Հանցեն գորհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն։

Ո՞վ Հայր սուրբ, Դու՛ որ մեզ Քո Միաձնիդ անունով անուանեցիր. Եւ լուսառեցիր մեզ սուրբ աւագանի մկրտութիւնով՝ արժանացրած մեզ որ ընդունենք այս սուրբ խորհուրդը մեր մեղաց թողութեան համար. Տպաւորիր մեր մէջ Քո սուրբ Հոգւոյ շնորհքը, ինչպէս տպաւորեցիր սուրբ Առաքելոց մէջ, որոնք ճաշակեցին և եղան աշխարհի մեղքի սրբողները, մաքրողները։ Եւ ուրեմն ով Տէր և Հայր բարերար, այս հաղորդութիւնը մասն արա այն ճաշակմանը, որ խորհրդաւոր ընթրեաց երեկոյին ճաշակեցին աշակերտները, վերցնելով մեղքի խաւարը։ Իմ անարժանութեանս մի նայիր և մի արգելի սուրբ Հոգւոյդ շնորհքը, այլ Քո անբաւ մարդասիրութեանդ համեմատ՝ պար-

գեիր Սորան մեզ իբրև մեր մեղքերը քաւով և մեր յանցանքները լուծող. ինչպէս որ խոստացաւ և ասաց մեր Տէր Յիսուս Քրիստոսը թէ իմ Մարմինը ճաշակողը և իմ Արիւնը ըմպողը յաւիտեան կապիր. Ուրեմն զստ մեզ ՚ի քաւութիւն պարզեիր. որպէս զի սորանից ճաշակողները և ըմպողները օրհնութիւն և փառք առաքեն Քո ՚ի Հայր և Որդի և Սուրբ Հոգի։

Սորանից յետով խաղաղութիւն տալով՝ զիմում է առ Քրիստոս գոհացողական երկու աղօթքներով, որոնցից առաջինն է.

«Գոհանամ զՔէն Քրիստոս թագաւոր, որ արժանի արարեր գանարժանս հաղորդել Սուրբ Մարմնոյ և Արեան քո. Եւ այժմ աղաշեմ զքեզ մի լիցե սա ինձ ՚ի գատապարտութիւն, այլ ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց, առողջութիւն Հոգւոյ և մարմնոյ և ՚ի կատարումն ամենայն գործոց առաքինութեան, որպէս զի սրբեսցէ սա զշունչս իմ և զհոգի և զմարժին իմ. և արասցէ զիս տաճար և բնակարան ամենասուրբ երբեգութեանդ, զի ընդ սուրբս քո արժանի եղէց փառաւորել զքեզ ընդ Հօր և զի ընդ սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն։ Ընդ սուրբ Հոգւոյդ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամեն։

Ճնորհակալ եմ Քիեզանից, ով Քրիստոս թագաւոր, որ ինձ անարժանիս արժանացրիր հաղորդ լինելու Քո Սուրբ Մարմնոյ և Արեանը։ Խոկ այժմ աղաչում եմ Քո, ըլինի թէ այս սուրբ Հաղորդութիւնը գատապարտութիւն լինի ինձ համար, ոչ Տէր. այլ մեղքերին՝ քաւութիւն և թողութիւն, Հոգւոյս և մարժանութիւն և բոլոր առաքինի գործքերին՝ կատարումն. որպէս զի սրբէ Սա իմ շունչը, իմ հոգին և իմ մարմինը. և ինձ որպէս զի սրբէ Սա իմ շունչը, իմ հոգին և իմ մարմինը. և ինձ տաճար և բնակարան կազմէ ամենասուրբ Երրորդութեանդ տաճար, որ և ես Քո սրբոցդ հետ միասին արժանի լինեմ փառաւորելու Քեզ՝ Հօրդ և Սուրբ Հոգւոյդ հետ։

Սորան հետեւում է ապա երկրորդ գոհացողական աղօթքը Յովհան Պոկեբերանի.

«Գոհանամ և մեծացուցանեմ և գատաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացրեց յաւուր յայսմեկ Հաղորդակեց լինել Աստուածային և սոսկալի խորհրդոյ քում անաղորդակեց լինել»

ըատ մարմնոյդ և պատուական արեանդ. վասն այսորիկ գսոսա ՚ի բարեխօսութիւն ունելով՝ աղաչեմ յամենայն աւուրս և ՚ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան քո պահեա զիս. որպէս զի յելելով զբարեկթութիւնս քո՝ կենդանի եղէց ընդ քեզ, որ վասն մեր չարչարեցար և մեռար և յարեար. մի մերձեսցէ Տէր իմ և Աստուած՝ խորտակելոն, կեքելով անձին իմոյ պատուական արեամբդ քով: Ամենակարնդ, մաքրեա զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ: Ամրացն զկեանս իմ, Տէր, յամենայն փորձութենէ և զպատերազմողն իմ՝ դարձն յինչն յետո պատկառեալ և ամաչեցեալ որչափ յառնէ ՚ի վերայ իմ: Ամրացն զգնացս մտաց և լեզուի իմոյ և զամենայն ճանապարհումանոյ իմու. լեր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց թէ՝ որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարին իմ, նա յիս բնակեսցի և ես ՚ի նմա: Դու ասացեր, մարդասէր. կացն զբանս Աստուածալին անլուծանելի հսամանաց քոց: Քանզի դու ես Աստուած ոզորմութեան և գթութեան և մարդասիրութետն և պարգևիչ ամենայն բարեաց. և քեզ վայել է փառք հանդերձ Հարդ և ամենասուրբ Հոգւովդ. այժմ և մեշտ և յաւետեանս յաւետենից ամեն»:

Գոհանում եմ, մեծացուցանում եմ և փառաւորում եմ քեզ Տէր Աստուածալին և սոսկալի խորհրդին, այսինքն անարատ Մարմնոյդ և պատուական Արեանդ. Ուրեմն Քո Սուրբ Մարմինն ու Արիւնը բարեխօս ունելով՝ աղաչում եմ, որ իմ բոլոր կեանքիս մէջ, ինձ Քո սրբութեան մէջ պահես. որպէս զի Քո բարեկթութիւնը յիշելով՝ կենդանի լինեմ քեզ հետ, որ մեզ համար չարչարուեցար, մեռար և յարութիւն առար: Տէր իմ և Աստուած, խորտակիչը թող չմերձենայ ինձ՝ որ կնքուած եմ Քո պատուական Արիւնով: Ո՞վ Ամենակարող, որ միայն անմեղ ես, Քո սուրբ Մարմնով և Արիւնով մաքրիր ինձ իմ բոլոր մեռելոտի գործքերից: Ո՞վ Տէր, իմ կեանքը ամուր և հաստատուն պահիր փորձութեանց դէմ և ինձ հետ պատերազմող

թշնամին քանիցս ևս որ վեր կենալ իմ դէմ, Դու յետ մզիր նորան ինձանից ամաչած և պատկառած: Տէր, ամուր և հաստատուն պահիր իմ մտքի և լեզուի գնացքը և մարմնոյս բոլոր ճանապարհները: Եղիր միշտ ինձ հետ, Քո անսուտ խոստմանդ համեմատ՝ թէ ով որ կճաշակէ իմ Մարմինս և կըմպէ իմ Արիւնը՝ նա իմ մէջ կբնակուի և ես նորա մէջ. Դու ասացիր այս խօսքերը, Մարդասէր Աստուած, ուրեմն Քո այս հրամանի Աստուածալին խօսքերը անլուծանելի պահիր. Որովհետև Դու ես Ոզորմութեան, Գթութեան և Մարդասիրութեան Աստուածը և բոլոր բարեկթների պարզեռողը և Քեզ է վայել փառք Հոգի և Սուրբ Հոգւոյդ հետ միասին ամեն ժամանակի: Քը Հոգի և Սուրբ Հոգւոյդ հետ միասին ամեն ժամանակի:

Այս աղօթքները աւարտելուց յետոյ Քահանան խաչակն քում է երեսը և զանազան խնդրուածքներ է հայում Աստուածուց թէ իւր անձի համար, թէ ժողովրդի համար, թէ աշխարհի համար. թողութիւն և ներումն է խնդրում իւր յանցաւորների, ատելիների և թշնամիների համար և երբ աւարտում է իւր այս խնդրուածքները, ապա երկիւղիւ, յարգանոք և հաւատով ճաշակում է Սուրբ Մարմինը և ըմպում է սուրբ Արիւնը, *) ասելով այս դաւանական աղօթքը.

«Հաւատով հաւատամ յԱմենասուրբ Երսորդութիւնդ ՚ի Հայք և Ուրդի և ՚ի Հոգիդ Սուրբ»:

«Հաւատով ճաշակեմ զսուրբ, զկենդանաբար և զփեկագործ Մարմինս Քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս ՚ի թողութիւն մեղաց իմոց:»

«Հաւատով ըմպէմ զսրբարար և զմաքրիչ Արիւնս Քո Քրիստոս Աստուած իմ Յիսուս ՚ի թողութիւն մեղաց իմոց:»

*) Ոյստեղ պատարազիչը ճաշակում է սուրբ հացի չորս մասից մի մասը միայն, որովհետև նախ՝ որ հազորդւողներ կարող են լինել. և երկորդ՝ որ մնացած երեք մասերից իւրաքանչիւրի համար կայ առանձին գոհութեն առ Հայը և Ուրդի և Սուրբ Հոգին:

«Մարմին քո անապական լեցե ինձ ՚ի կեանս. և սուբբ Ա-
ռեւն քո ՚ի քաւութիւն և ՚ի թողութիւն մեղաց»

Հաւատով հաւատում եմ Ամենասուրբ Երրորդութեանդ՝
չօր և Արդւոյ և Սուրբ Հոգւոյդ:

Հաւատով եմ ճաշակում քո սուրբ, կենդանարար և փը-
կագործ Մարմինը, ով Քրիստոս Աստուած իմ Յիսուս, իմ մե-
ղաց թողութեան համար:

Հաւատով եմ ըմպում քո սրբարար և մաքրիչ Արիւնը, ով
Քրիստոս Աստուած իմ Յիսուս, իմ մեղաց թողութեան համար:

Քո անապական Մարմինը թող կեանք լինի ինձ և քա-
սուրբ Արիւն՝ իմ մեղացս քաւութիւն և թողութիւն:

Այս աղօթքից յետոյ ճաշակում է Քահանան, հաղոր-
դում են և Սարկաւագները, եթէ պատրաստուած են սուրբ
հաղորդութիւն ընդունելու, որից յետոյ վարագոյրը բացում է
և Սարկաւադը հրաւիրում է ժողովրդին երկիւղիւ և հաւատով
յառաջ գալու, և սրբութեամբ հաղորդուելու, այսպէս.

«Երկիւղիւ և հաւատով յառաջ մատիք և սրբութեամբ հա-
զորդեցաբուք:»

Դպիրները ժողովրդի կողմից Սարկաւագի յորդորական հրա-
մանին պատասխանում են Սաղմոսի հետևեալ խօսքով.

«Աստուած մեր և Տէր մեր երեւեցաւ մեզ. օրհնեալ՝ եկեան
անուամբ Տեառն».

Մեր Աստուածը և մեր Տէրը մեզ երեւեցաւ, օրհնուած է
Աստուծոյ անունով եկողը:

Եթէ արժանաւոր պատրաստողներ կան, այս միջոցին
յառաջ են գալիս և սրբութեամբ հաղորդում են, իսկ դպիր-
ները երգում են Սուրբ խորհրդին պատշաճաւոր մի շարական
կամ «Այսօր անճառ» երգը:

Ժողովրդի ճաշակման այս հոգեւոր հանդէսը երբ աւար-
դում է, այս ժամանակ Քահանան խաչակնքում է ժողովրդին
սուրբ ընծայիւքը ասելով.

«Կեցն Տէր զժողովուրդս քո և օրհնեալ զժառանգութիւնս
քո, հովուեալ և բարձրացն զսոս յայսմ հետէ մինչեւ յաւիտեան».

Տէր, պահպանիր Քո ժողովուրդը և օրհնիր Քո ժառան-
գութիւնը, հովուիր և բարձրացրու սոցա այսուհետեւ մինչեւ
յաւիտեան:

Վարագոյրը կրկին քարշում են. դպիրները երգում են.
«Լցաք ՚ի բարութեանց քոց Տէր». Իսկ Քահանան նոյն միջո-
ցին ճաշակում է մնացած սուրբ մասերը մատուցանելով Ամե-
նասուրբ Երրորդութեան խր գոհութիւնը:

Ի՞նչ է խորհարդը Սարկաւագի երկիւղիւ և հաւատով յա-
ռաջ կանչելուն: Ինչպէս տեսանք Սարկաւագը մկրից մինչև
այժմ միշտ զգուշութիւն էր քարոզում ժողովրդին, հետզհետէ
միայն ծանօթացնելով նացա սուրբ խորհրդին. և այժմ որ ժա-
մանակը արդէն հասել է արժանաւոր հաղորդութեան, հրաւի-
րում է նոցա հաղորդակից լինելու սուրբ խորհրդին, երկիւղիւ՝
որովհետեւ սովորական հաց չէ որ պիտի ճաշակեն, և ոչ սո-
վորական գինի որ պիտի ըմպեն, այլ հուր ծախիչ է անար-
ժանների համար. հաւատով արովհետեւ սուրբ խորհրդին մեր-
ձենալու պատրաստողները պէտք է անպայման հաւատան որ
Մարմին և Արիւն է Տեառն, ըստ որում ինքն ասաց «Առէք,
կերէք այս է մարմին իմ. Արբէք ՚ի սմանէ, այս է արիւն իմ.»
և սրբութեամբ՝ որավիշետեւ այս սուրբ Մարմնոյ և Արեան ճա-
շակումը պահանջում է սրբութիւն և մաքրութիւն սրտի, մըտ-
քի, հոգւոյ և խորհուրդների. որպէս զի օգուտ լինի ընդունո-
ղին և գեղ մեղաց և ոչ դատապարտութիւն և ծանր անտու-
թելի հատուցումն, որպէս Յուդաի Խոկարիսկացւու:

ԺԶ ԲԱԺԻՆ

ԳՈՀՈՒԹԻՒՆ

Խաշակմանը հետևում է գոհութիւնը, որպէս պատարագիչ Քահանայի՝ նոյնական բոլոր Եկեղեցւոյ կողմից, իրեւ վերջաւորութիւն Սուրբ պատարագի հոգեոր հանդիսին:

Ինչպէս վերը լիշեցինք վարագործը քարշելուց յետոյ դըպիրները երգում են.

«Լցաք՝ ի բարութեանց քոց Տէր, Ճաշակելով զմարմին քո և զարեւն. փառք՝ ի բարձունս կերակրողիդ զմեզ. Որ հանապազ կերակրես զմեզ, առաքեա ՚ի մեզ զհոգեռը քո զօրհնութիւնդ, փառք՝ ի բարձունս կերակրողիդ զմեզ»:

Լցուեցանք Քո բարութիւններով, ով Տէր, ճաշակելով Քո սուրբ Մարմինը և Արեւնը. փառք ենք վեր առաքում Քեզ ՚ի բարձունս, որ մեր կերակրողն ես: Դու՛ որ միշտ կերակրում ես մեզ, պարզեիր մեզ Քո հոգեոր օրհնութիւնը. փառք Քեզ ՚ի բարձունս, որ մեր կերակրողն ես:

Սորանից յետոյ Սարկաւագը քարոզում է այսպէս.

«Եւ ևս խաղաղութեան զՏէր աղաւեսցուք. Եւ ևս հաւատով ընկալեալք յԱստուածային սուրբ, յԵրկնային, յանմահ, յանարատ և յանապական խորհսուս զՏեառնէ գոհացարուք»:

Աղաչենք զՏէր երկնային մեծ խաղաղութիւնը մեզ պարգևելու համար. Գոհանանք Աստուծուց՝ որ հաւատով ընդունեցինք Աստուածային, սուրբ, երկնային, անմահ, անարատ և անապական խորհութիւնը:

Սարկաւագի այս պատուերին համաձայն ժողովուրդը դըպիրների բերանով մատուցանում է Աստուծոյ իւր գոհութիւնը այսպէս.

«Գոհանանք զՔէն Տէր, որ կերակրեցիր զմեզ յանմահական

սեղանոյ քոյ, բաշխելով զարմինդ և զարեւնդ ՚ի փրկութիւն աշխարհի և կեանք անձանց մերոց».

Ճնորհակալ ենք Քեղանից ով Տէր, որ մեզ կերակրեցիր Քո անմահական Սեղանից. բաշխելով Քո Մարմինը և Արեւնը աշխարհի փրկութեան և մեր կենդանութեան համար:

Այս գոհացողական երգից յետոյ դպիրները երգում են խորհրդագաւոր մի տաղ, որպէս զի պատարագիչ Քահանան զոյդ ընդնուխն աւարտէ իւր ճաշակումը և գոհութիւնները:

Մինչդեռ Սարկաւագը պատուիրում է ժողովրդին գոհանալ և ժողովուրդը գոհանում է դպիրների բերանով նոյն միջոցին Քահանան մատուցանելով Ամենասուրբ Երրորդութեան իւր գոհացողական մաղթանքները՝ սկսում է ճաշակել մնացած մասերը:

Քահանայի գոհութիւնն է նախ առ Հայրն Աստուած.

«Գոհանանք զՔէն Հայր ամենակալ, որ պատրաստեցիր մեզ նաւահանգիստ սուրբ զեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի անուն սուրբ Երրորդութեանդ. ալէլուեա:»

Ճնորհակալ ենք Քեղանից ով Ամենակալ Հայր, որ սուրբ եկեղեցին մեզ համար նաւահանգիստ և սրբութեան տաճար պատրաստեցիր, ուր փառաբանում է սուրբ Երրորդութեանդ անունը:

Երկրորդ գոհութիւն առ Որդին Աստուած.

«Գոհանանք զՔէն Քրիստոս թագաւոր, որ պարզեցեցիր մեզ կենդանութիւն կենարար մարմնով և արեամբ քով սրբով. շնորհեալ զքաւութիւն և զմեծ ժողործութիւն. ալէլուեա:»

Ճնորհակալ ենք Քեղանից ով Քրիստոս թագաւոր, որ Քո կենդանարար Մարմնով և սուրբ Արեամբ մեզ կենդանացրեր. Ճնորհիր մեզ քաւութիւն և մեծ ողորմութիւն:

Երրորդ գոհութիւն առ Սուրբ Հոգին Աստուած.

«Գոհանանք զՔէն Հոգի Ճշմարիտ, որ նորոգեցեր սուրբ զեկեղեցի, անարատ պահեա հաւատով Երրորդութեանդ յայսմհետէ մինչև յաւիտեան. ալէլուեա:»

Ճնորհակալ ենք Քեզանից ով Հոգիդ ճշմարիտ, որ սուրբ
Եկեղեցին նորոգեցիր. սուրբ Երրորդութեանդ հաւատով և այ-
սուհետև անարատ պահիր մինչև յաւիտեան:

Այստեղ Քահանան աւարտելով իւր ճաշակումը, իբրև
վերջին գոհութիւն աղօթում է առ Քրիստոս արտպէս.

«Գոհանամք գքէն Քրիստոս Աստուած մեր, որ գայսալիսի Ճա-
շակումն բարութեան շնորհեցեք մեզ ՚ի սրբութիւն կենդանու-
թեան. Սովորմբ պահեա գմեզ սուրբս և անարատս, բնակեալ
գմեօք քո Աստուածային խնամօքդ. Հովուեմ գմեզ յանդաստանի
կամաց քոց սրբոց և բարեսիրաց. Որով ամրացեալք յամենալն
բանսարկուին ընդեմութեանց քում և եթ արժանի եղեցուք լսել
ձայնի և քեզ միայնոյ քաջայաղթ և Ճշմարիտ Հովուեղ հետեւի
և առ ՚ի քէն ընդունել զպատրաստեալ տեղի յարքայութեանդ
երկնից. Աստուած մեր և Տէր մեր և փրկիչ Յիսուս Քրիստոս, որ
ես օրհնեալ ընդ Հօր և սուրբ Հոգւորդ. այժմ և միշտ և յաւիտ-
եանս յաւիտենից ամեն»:

Խաղաղութիւն ամենեցուն:

«Անքննին, անհաս, երբեակ ինքնութեանդ, հաստիչ ընդու-
նող և անբաժանելի միասնական սուրբ Երրորդութեանդ վայել է
փառք, կշանութիւն և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամեն».

Ճնորհակալ ենք Քեզանից ով Քրիստոս Աստուած մեր, որ
պարզեցիր մեզ այսպիսի բարի ճաշակումն մեր կեանքի սրբ-
ութեան համար: Սորանով սուրբ և անարատ պահիր մեզ,
որ բոլորենք մեր շուրջը Քո Աստուածային խնամքը: Հովուիր
մեղ Քո սուրբ և բարեսէր կամքի անդաստանի մէջ, որով
բանսարկութշնամութեանցը ամուր և հաստատուն
դիմադրութեամբ՝ կարողանամք Քո ձայնը լսելու արժանանալ,
և Քեզ միայն հետեւի, որ մեր քաջայաղթ և ճշմարիտ հո-
վիւն ես. և Քեզանից ընդունել երկնակին արքայութեան մէջ
պատրաստուած տեղը. ով մեր Աստուած, մեր Տէր և փրկիչ
Յիսուս Քրիստոս, որ օրհնեալ ես Հօր և Սուրբ Հոգւորդ հետ
միասին յաւիտեան ժամանակաւ:

Այստեղ ծածուկ խաղաղութիւն տալով՝ հետեացնում է
գոհացողական աղօթքի վերջաբանը՝ Անքննելի, անհասանելի,
երրեակ ինքնութեանդ, ստեղծող, ընդունող և անբաժանելի
միասնական Սուրբ Երրորդութեանդ վայել է փառքը իշխա-
նութիւնը պատիւը այժմ և միշտ:

Այստեղ աւարտում է գոհութիւնը, որից յետոյ մաքրում
է Սկիհն, դնում է նորա վերայ մաղմայն, ծածկում է քօղով
և յանձնում է վերաբերիչ Արքաւազին՝ որը տանում է և դը-
նում ընծալարանում. իսկ ինքը պատարագիչը Սեղանի յետեւը
շինուած աւազանի մէջ ձեռքերը լուանալուց և սրբելուց յե-
տոյ, գալիս է Սեղանի առաջ, ծածկում է Սաղաւարտը. ձեռքն
է առնում Սուրբ Աւետարանը և բաց են անում վարագոլը,
որից յետոյ ձայնում է Սարկաւագը.

«Օրհնեա Տէր».

Քահանան համբուրելով Սեղանը սկսում է ցած իջնել ա-
սելով պատարագի վերջին հանդիսաւոր աղօթքը:

Բայց ինչո՞ւ այժմ պատարագիչը իւր նախկին փառաւո-
րութեան զգեստով է իջնում բէմից և այնպէս է ասում վեր-
ջին հանդիսաւոր աղօթքը:

Մենք տեսանք որ պատարագիչը սկզբում կրում էր իւր
մէջ Քրիստոսի պատկերը և խօսակից էր Քրիստոսին: Բայց յե-
տոյ երբ պէտք է մատուցանէր Հօր Աստուծոյ Յիսուսի Մարմ-
ուս և Արեան նշանակները և Սուրբ Հոգւոյ շնորհիւ նոյն նը-
նոյ և Արեան նշանակները պատրաստուած ՚ի ճշմարիտ Մարմին և Արիւն փրկին
շանակները փոխուած ՚ի ճշմարիտ Մարմին և Արիւն փրկին
պատահար Հօրից՝ ուստի նա մերկացաւ իրանից իւր փա-
պիտի ստանար Հօրից՝ ուստի նա մերկացաւ իրանից իւր փա-
պիտի ստանար կամ որ նոյն է Քրիստոսի պատկերը և զգեցաւ
սպասաւորի կերպարան, որովհետեւ պէտք է սպասաւորէր Սուրբ
Սեղանոյ առաջ Սուրբ Մարմնոյ և Արեան փրկչին՝ խորհրդաբար
աղօթելով առ Հայրն Աստուած: Իսկ այժմ կատարելով իւր
սպասաւորութեան գործը կամ որ նոյն է ժողովրդի և Աստո-
միասին յաւիտեան ժամանակաւ:

ծոյ մէջ իւր բարեխօս միջնորդութիւնը, ստացաւ չայր Աստուծուցուց Սուրբ Հոգին և տուաւ Եկեղեցուն ըստ չափու և արժանաւորութեան. այժմ դարձեալ նախկին փառաց կերպարանքով ինչպէս բարձրացաւ բէմը, նոյնպէս և իջնում է բէմից, որովհետև Քրիստոսի օրինակն է կրում իւր մէջ, որ ինչպէս Քրիստոս աշխարհից բարձրացաւ երկինք, նոյն մարմնով և երկնքից իջնելու է հատուցանել մարդկան աղջին ըստ զործոց: Այսպէս ահա և Քահանան բարձրաձայն աղօթքով իջնում է ժողովրդի մէջ, բաշխելու նոցա բարիք իւրաքանչիւրի աղօթքին համեմատ. բարձրաձայն է աղօթում որովհետև Աստուծուց ստացել է իրաւունք և օրհնութիւն և տալիս է այն ժողովրդին ամենայն համարձակութեամբ. այն ինչ երբ իրը պատգամաւոր էր մտնում Աստուծու առաջ ժողովրդի կողմից, այն ժամանակ խոնարհ ձայնիւ էր աղօթում:

Այս իրաւունքով է ահա, որ իջնելով ժողովրդի մէջ ասում է բարձրաձայն համարձակութեամբ վերջին հանդիսաւոր աղօթքը այսպէս.

«Որ օրհնես գայնոսիկ՝ որք օրհնեն գքեզ Տէր, և սուրբ առնես զուսացեալս ՚ի քեզ. կեցն զժողովուրդս քո և օրհնեա զժառանգութիւնս քո. զյրումն Եկեղեցւոյ քո պահեա: Սրբեա զոսսա որք ողջունեցին սիօնի զվայելութիւն տան քո: Դու զժեզ փառաւորեա Աստուածային զօրութեամբ քով և մի թողուր զյուսացեալս ՚ի քեզ: Զիսազազութիւն քո պարզեան ամենայն աշխարհի, Եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէց, և զինուրեաւ մանկանց նոցա և ամենայն ժողովրդեանս: Զի ամենայն տուրք բարիք և ամենայն պարզեք կատարեալք ՚ի վերուստ են իջեալ առ ՚ի քէն, որ ես Հայր լուսոյ. և քեզ վայել է փառք, Եղանութիւն և պատիւ. այժմ և միշտ և յաւիտեանս ամեն.»

Դու Տէր, որ օրհնում ես Քեզ օրհնողներին և սուրբ ես անում նորանց, որոնք իրենց յոյսը Քեզ վերայ են դրած. Փըրկիր Քո ժողովուրդը և օրհնիր Քո ժառանգութիւնը և Քո

Եկեղեցւոյ ամբողջութիւնը անսասան պահէիր: Սրբիր այս ժողովուրդը, որ սիրով ողջունեցին Քո տան վայելչութիւնը: Դու ինքդ Տէր Քո Աստուածային զօրութիւնովդ փառաւորիր մեղ և անյոյս մի թողուր, որ Քեզ վերայ ենք դըել մեր յամբ: Քո Խաղաղութիւնը պարզեալը բոլոր աշխարհին, Եկեղեցիներին, քահանաներին. Քրիստոնէալ Ժագաւորներին, նոցա զինուրներին և այս ներկայ բոլոր ժողովրդին: Որովհետև ամենայն բարի տուրքերը և կատարեալ պարզեաները վերեւիցն են իջնում մեղ, այսինքն Քեղանից ով լուսոյ չայր և Քեզ է վայել փառքը, իշխանութիւնը և պատիւր այժմ և միշտ:

Դպիրներն ևս այստեղ վերջացնում են իրենց փառաբանութիւնը երեք անգամ կրկնելով սաղմոսի այս տունը.

«Նշեցի անուն Տեառն օրհնեալ յախսմէնետէ մինչև յաւիտեան:»

Յետոյ Քահանան դառնալով դէպի ժողովուրդը ասում է առ Քրիստոս Հետեւեալ խօսքերը, երբեկ կնիք Սուրբ Պատարագի խորհրդին.

«Կատարումն օրինաց և մարգարէց դու ես Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն հալրակամ տնօրէնութիւնս քո. լից և զմբեզ Հոգւովդ քով սրբով:»

Օրէնքները և մարգարէութիւնները ՚ի Քեզ կատարուեցան, լրացն, ով Քրիստոս Աստուած մեր և փրկիչ. որ կատարեցիր Հօրդ կամքով եղած Քո բոլոր տնօրէնութիւնները. արդ և մեղ լցրու Քո սուրբ Հոգւովդ շնորհքովը, որպէս զի արժանապէս մատուցած լինեմք Սուրբ Պատարագը:

Յետոյ պատարագիչը կարգում է Սուրբ Աւետարանը, որ թէպէտ անմիջական կապակցութիւն չունի սուրբ պատարագի Հետ, սակայն կարդացում է նախ այն պատճառաւ՝ որ մեր Հետ, Աստուածալպաշտութիւնք գրէթէ սուրբ Աւետարանի ընբոլոր Աստուածալպաշտութիւնք պահանջնը, որպէս զի կենդանի թերցումով են ստանում իրենց վախճանը, որպէս զի պահանի պահուին ժողովրդի յիշողութեան մէջ Յիսուսի Քրիստոսի ուսպահուին ժողովրդի յիշողութեան մէջ Յիսուսի Քրիստոսի ուս-

չափու և արժանաւորութեան, նոյնպէս և այժմ մարմնաւորապէս կամ զգալապէս է մասնակցում, առնելով օրհնեալ հացի մասը: Այս սովորութիւնը Առաքելական ժամանակներիցն է, և կատարում էր այսպէս՝ Սուրբ Պատարազի համար ժողովուրդը բերում էր հաց և գինի, որից Սարկաւագը ջոկում էր այնքան՝ որքան բաւական էր նոյն աւուր հաղորդւողների համար և տալիս էր Պատարազին. իսկ միւս մնացած նուէրները օրհնում էր միայն Քահանան և պահում էր Սարկաւագը: Սուրբ Պատարազի վերջին չհաղորդւող ժողովուրդը ուտում էին աւելացած հացը և խմում էին մնացած գինին և ապա գնում էին իրեանց տները: Ավակայն ինչ ինչ պատճառներով այդ սովորութիւնը խախտուեց և մնաց մեր մէջ նորա հետքը միայն, որ կատարում է նշխար բաժանելով, որը բարեպաշտ ժողովորի համար շատ յարդի է և ընդունում են այն նշխարը անօթի պատրաստութեամբ:

۴۶۱۲

«Տէր սղործեա» աղէրս.

՚ի ՚ԾՆՈւՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ.

Անժամանակ չօրըն ծընունդ
Եւ սուրբ Հոգուցն միշտ համագոյ
Բան անմարմին. այսօր յայրին
՚Ի սուրբ կրտսէն առնուս մարմին
՚Ի հրեշտակաց Տէր քարողեալ.
Բան հրեշտակաց ՚ի դասս հովուաց՝
Հովիւքն ՚ի յայրըդ փութային.
Եւ աստղն մոգուցն աւետաւոր՝
Երկրպագուք ՚ի Քեզ ելին
Ուկի, կրնդրուկ, զըմուռ բերեալ:

'Ի Պկրտութիւնն Քրիստոսի.

Վգուանս սիրոյ սուրբ ծընօղիդ
Սիշտ վայելեալ Յիսուս Որդի.
Առեր հասակ երեսնամի,
Առ Յովհաննէսըն ամլորդի
Դի Յորդանան փութով ելեալ.
Դու ՚ի ջուրսըն մըկրտէիր
Հոգւովըն Տէր քարոզէիր.
Եւ Հօր Քո ձախն՝ ըզքեզ Որդի
Խւր սիրելի ՚ի լուր ձախնէր,
Երրորդութեան խորհուրդ յախոնեալ:

՚ի Սուրբ Ասրդիս գօրավարն.

Երկնից զինւոր Սուրբը Ասրդիս
Յերկրի ետուր զմարտըն յաղթող,
Հուր կռապաշտիցըն սառուցեր
Բագինս կրուց կործանեցել
ԶՅիսուսն՝ Աստուած մեծ քարոզեալ.
Զաէր Յիսուսին մեծ քան զաշխարհ
Համարեցել քաջ գօրավար. Յափառչեց
Ուստի պըսակ սուրբ քո կենաց
Քեզ իբր ՚ի վարձ Տէրն պարզեեաց,
Փութա մեզ յօդն արագ հասեալ.

՚ի Սուրբ Ղևոնդեանց քահանաւոն.

Էին էիք սուրբ քահանաւոք
Արիսիրտ քաջ Ղևոնդեանք,
Էզրիստոսին Եկեղեցի
՚ի պայծառ փայլ միշտ պահէիք
Ճնորհօք չոգւոյն միշտ գօրացեալ.
Ընկերաբար և միաբան
Ելիք ՚ի մարտ կրօնական.
Խաչն Յիսուսի, Աւետարան
Էին ձեր զէնք ուզմական.
Էզմոզախումբն նոքօք հարեալ:

՚ի Սուրբ Վարդանանց գօրավարն.

Թագաւորին Երկնաւորի
Հանդիսացայք քաջ գօրականք
Վկայք Տեառն Սուրբ վարդանանք.
Ընդդէմ գէնին զրադաշտական
Գըրօշ Խաչին յաղթող պարզեալ.
Ժառանգ Երկնից սուրբ Տէրութեան
Համարեցայք մեծ իրաւամբ.
ՅԱրտազ ետուք ուզմ յաղթական
Զագգ և զաշխարհ և ըզեզու
Զեկեղեցի չայոց փրկեալ:

՚ի սուրբ ժողովն Կոստանդնուպոլսոյ ՚ի հարիւր յիսուն հայ-
ըապետուն.

՚ի Սուրբ ժողովն Կոստանդնուպոլսոյ
Գումարեցայք սուրբ Հայրապետք.
՚ի Հոգէմարտըն Մակեդոն
Նովից վրճիր հատիք արժան.
ԶՀոգին՝ Աստուած մեզ քարոզեալ.
Լրութիւն Խըմբի Հարցըդ սրբոց
Մեզ բարեխօս հայցեմք ընդ միշտ,
Զի սուրբ Հոգւոյն շնորհօք բարի
Եկեղեցին պահպանեացի
՚ի սուրբ հաւատն միշտ գօրացեալ

՚ի Մեծի Պահոց Կիւրակէսն.

Խաւար մեղաց մարդկան ազգի
Անցեալ քան զշափին սահմանի՝
Խոնարհեցար յերկնից առ մեզ
Կինել փրկիչ խոնարհ և հեզ
՚ի խաւարէն մեղաց փրկեալ.
Ծանըր եղան առաջի Քո
Խաչ, չարչարանք, թուք և ապտակ.
Զայս ամենայն սիրով տարար.
Զի փրկեսցես զմեզ ՚ի մեղաց
՚ի խաչին՝ չօր պատարգեալ:

՚ի Տեառնընդառաջն.

Կամօքըն չօր՝ քառասինօրեայ
Մանուկ անրիծ և անարատ,
Սիրով եկիր ՚ի սուրբ Տաճարն
Դրկեալ ծնօղիդ գիրկ սրբասուն
Զօրինացըն ձև կատարեալ.
Հանդէպ ելեալ Քեզ ծերունին
Սուրբ Սիմէօնն Աստուածընկալ՝
Գրկէր, օրհնէր. ՚ի կապանացն
Արձակել զինքն ՚ի Քէն հայցէր.
Ըզքեզ չոգւովն Տէր ճանաչեալ:

՚ի Սուրբ Լուսաւորիչն՝ մուտն ՚ի վերապն.

Զայն Արարչին ըզքեզ կարգեաց
Լուսաւորիչ տանըս Հայոց.
՚ի փրշաբերըն արմատոյ
Վարդ կարմրերփեան մեզ ծաղկեցար.
Կռապաշտութեան լուծըն մերժեալ.
Ղամբար հոգւոյդ միշտ էր պայծառ
Քրիստոսական լուսով փայլեալ.
Ըզծրդատայն հրաման մերժեալ.
Զարչարանօքն նէ սոսկացեր.
՚ի խոր վիրապն գահավիժեալ:

՚ի Փաղկաղարդն.

Ճանաչեցար իմմանուէլ,
Քարոզեցար Մեսեա արդար.
Այսօր ուրախ յԵրուսաղէմ
Փութաս Յիսուս Տէր բարերար.
Զմարգարէից տառս լցուցեալ.
Մանկունք և ծերք, արք և կանայք
Արմաւենեաց ոստոս ՚ի ձեռին
Քեզ ընդ առաջ ելեալ ուրախ
Օրհներգութիւն միշտ երգէին
Ովսաննայ ՚ի բարձունս օրհնեալ

Յաւագ Հինդշաբաթն.

Յաւուրս այս մեծ հրաշալի
Նոր Ռւխտ կտակի մեզ սրբարար
Հացիւ, գինեաւ հաստատեցեր
ՅԱռաքեալսրն՝ ի վերնատան
Հին ուխտ կտակին վերջառիեալ.
Նոր լիշտակ յաւէտ Սիրոյ
Աշակերտացդ ետուր փրկիչ
«Առէք կերէք այս՝ իմ Մարմին,
Արբէք Արիւնս» ասացեր Տէր
«Առքօք մեղք ձեր լինին թողեալ:»

՚Ի Զատիկն՝ Յարութիւնն Քրիստոսի.

Ճնորհօք Հօր Քո և սուրբ Հոգւոյն
ԶԱստուածութիւնդ այսօր ցուցեալ
Ըստ կանխասաց բանիդ օրհնեալ
«Թէ յետ երից աւուրց յառնեմ»
Ահա ՚ի Քեզ այժմ կատարեսւ.
Ոչ կնիք գօրեաց քահանալից,
Ոչ պահպանացն հսկողութիւն.
Դու հրաշափառ, Աստուածաբար բայ բայ
Գերեզմանէն այսօր յարեար
Անմահ կենացն մեզ գրաւ եղեալ:

՚Ի Մեռելոցն Նաւակատեաց.

Զարին կապանս՝ գօրեղաբար
Լուծեր այսօր Տէր բարերար,
Մահուն կընիք փշրեալ, ջաղխեալ,
Արձակեցեր գհոգիսն կապեալ՝
Յերկնից հանդիստըն հրաւիրեալ:
Պարզեատու ամենեցուն
Կեանս անվախճան, անմահական
Պարզեցեր մեզ Տիրաբար.
Այսօր գհոգիս նընջեցելոցն
Հանդն՝ ՚ի Քեզ փառօքդ լցեալ:

՚Ի Յինանց Կիւրակէսն.

Զանք սիրելոյ Փրկչիդ, ով Տէր.
Եւ զոյդ նըմին խնամք մարդասէր,
՚Ի քառասնօրդդ յարութեան
Առաքելոցդ սիրով ցուցեր
Զմիտըն նոցին ՚ի լոյս բացեալ.
Ուարբի ըզքեզ քարոզէիր,
Զիառասդ Աստուածեան ցուցանէիր.
Մարմնով նոցա միշտ երևեալ՝
՚Ի հաւատսըն հաստատէիր
Զմիտըն նոցին մըխիթարեալ:

՚ի Յարութեան կիւրակէսն.

Սառն ցրտութիւն մարդկան բարուց
 Հըրով Սիրով չերմացուցեր,
 Անհաւատ սիրտքն ՚ի կեանս անմահ
 Հաւատացին աւուրս շնորհիւ
 Ասօր տեսնեալ գՔնդ յարուցեալ.
 Վարձահատուց Ցիսուս Փըրկիչ
 Եւ զմեզ յարն ՚ի կեանս անմահ.
 ՚ի մեզ կենացն յաւխտենից
 Հաւատն ու յոյն կանգուն պահեա
 ԶՔնդ տեսանել ՚ի փառսդ յաւտնեալ:

՚ի Ցիշատակ գլխատման Ցովհաննու Մկրտչի.

Տեառն Ցիսուսի ով Կարապետ
 Եւ Մըկըրտիչ ՚ի Ցորդանան.
 Ասօր կամօք Հերովդէի
 Նատիս ՚ի բանդ պատուհասի
 ԸգՏէրդ Ցիսուս օրհնաբանեալ.
 Բախճարանին Հերովդէի
 Դստերն կաքաւ հաւան թըւի,
 Որոյ ՚ի վարձ գլուխըդ խնդըի
 Արեամբն յագեալ կնօջըն չարի
 Ըգմեծ Արուսեակըդ շիջուցեալ:

ՑԱւետումն Սուրբ Աստուածածնի.

Ցընծառիթ ձախն աւետաւոր,
 Հրեշտակապետըն Գարբիէլ
 Քեզ ՚ի Տաճարն այսօր, ով կոյս,
 Ցերկնից բերէ նոր Խրախոյս՝
 Ֆնանել զՄեսեան մեզ խոստացեալ.
 Իիւսապըսակ կոյս Մարիամ,
 «Զալը ոչ գիտեմ» ասես խոնարհ.
 Այլ Գարբիէլ «Հոգւով Սըրբով»
 Ասէ «Ֆընցիս որդի անուամբ
 Լիցի Ցիսուս վերաձայնետլ:»

ՑԵրեւումն Խաչի.

Փայլիս այսօր ՚ի Պաղեստին
 Լուսածաճանչ Խաչ փրկչական.
 Գողգոթալէն մինչ Զիթենեան
 Լեաւըն սրբուեալ արփիական.
 Լուսովդ զտեսօղս յապուշ հարեալ.
 Քրիստոսական սիրով լրցեալ
 Սուրբըն Կիւրեղ, ըգիւեզ տեսնեալ՝
 Թողդժ առ կոստանդ Քրիստոսապսակ
 Արքայ լըղէր հըրճողաբար
 Զանցս Երևմանդ ճշտիւ ճառեալ

՚ի Համբարձումն Քրիստոսի.

Ճնորհօքդ լրցեալ դաս պերճական
Առաքելոցըդ սրբազն,
Այսօր ՚ի լեաւըն Զիթենեան
Ելին տեսնել գիտաւոր Աստուածեան.
Միախորհուրդ գումար առեալ.
Նայեցեր Տէր վերջին նըւագ
՚ի սիրելի սուրբ աշակերտուոր.
Եւ Համբարձեալ փառօք առ Հայր՝
Յաջմէ Նորին յաղթող նըստար.
Զսուրբ աշակերտուոր սիրով օրհնեալ:

՚ի Հոգէգալուստն.

Որ ըստ խոստմանդ ՚ի Համբարձման
Աշակերտացըդ մետասան
՚ի սուրբ Հօրէն առեալ զհոգին
Առաքեցեր ՚ի վերնատունն
Հրեղէն լեզոք հըրափայլեալ.
Բամեալք ՚ի մի ՚ի վերնատան
Սուրբ Առաքեալքն երկուսասան,
Եւ աշակերտքն եօթընտասան
Առին զհոգին հրալեզուեան
Պէս պէս լեզոք պերճաբանեալ:

՚ի Սուրբ Հոգիփսիմեան կուսանսն.

Հըուիփսիմէ խորհըրդաւոր
Եւ ցանկալի անուն օրհնեալ.
՚ի գեղ կուսիդ լիմարեցաւ
Արքայ փառօք միշտ յաղթական.
Յամօթ հարաւ ՚ի քէն պարտեալ
Օրինակ մեծ կուսան դրստերց
Եղեր, ով կոյս, պայծառ վարուքդ.
Մերժեցեր սին փառս աշխարհի,
Պերճ թագ և գահ հզօր արքաի.
Զքեղ՝ Քրիստոսի հարսնացուցեալ:

՚ի Սուրբ Գալիխանեան կուսանսն.

Քըրիստոսի փեսալութեան
Արժանաւոր եղեալ հարսունք՝
Փոլին անբիծ և սուրբ վարուց,
Ով Գալիխանէ կոյս մեծ գովեալ,
Եղեն կուսանքն աշակերտեալ.
Յիսուսին Սէր փեսալութեան
Քան զաշխարհին մեծ գըրեցեալ
Խնամօքդ ճարտար, ով կուսապետ,
Մահուամբ ՚ի Տէր՝ սուրբ կնքեցան
Զաշխարհի փառս տարամերժեալ:

՚ի կաթուղիկէ Եկեղեցին Սրբոյ իջմիածնի.

՚ի քեզ ալսօր, ով սուրբ Տաճար,
Մայր Տաճարաց ազգիս Հայոց, պատմած մի
Ամենասուրբ Երրորդութեան բնութ ընթ մ.
Փառքըն ծագեաց լուսաշողշող
Քաղաքամէջն դըղորդ տրւեալ. առ հօնան
Սիրովդ տենչան որդիք Հայոց մասութ ճն խռովից
Լուսաւորչին սուրբ ձեռակերտով ին դժբ
՚ի սուրբ գըրկէդ միշտ ելանեն դժբեցմ
Օրէնք վարողք զմեզ անսասան բա ի ազգի
Լրութիւն ազգիս ամբողջ պահեալ:

՚ի Սուրբ Լուսաւորիչն՝ յելն ՚ի վիրապէն.

Որ ՚ի վիրապն, ով Հայրապետ,
Հընդետասան ամօք կացեալ՝ որ ուսունել
Քաւեցեր զմեզս Հայ աշխարհին. միան
Ալսօր ելեալ բըժըշկեցեր միան միան
Հզհայաստանն պատուհասեալ.
Իիւսեցաւ քեզ, Տէր սուրբ Գրիգոր,
Պլսակ յերկնից արժանաւոր.
Զլոյս և ուսմունս Քրիստոս փրկչին.
Յամենուրէք զնշան Խաչին,
Տարածեցեր միշտ հաստատեալ:

՚ի Սուրբ Ներսէս մեծ Հայրապետն.

Սիրով Փրկչին ծընար ով Հայր
Սիրով ազգիդ մնար բարերար, ուշին բժիշ
Սէրն էր սրտիդ յատուկ պլսակ մարտուն
Լուսաւորչին ով սուրբ ժառանգ մասուն
Սուրբ Հայրապետ Մեծորդ Ներսէս.
Փափագդ էր միշտ ՚ի Հայաստան
Խաղաղութեան կանգնել նըշան.
Աքսոր, տագնապ ՚ի քեզ սակայն
Եւ մահաթուն, ըզքո սուրբ կեան
՚ի Ցիսուս Տէրդ նահատակեալ:

՚ի գիւտն նշխարաց սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի.

Բաբուն հոգւոց ազգիս Հայոց ազգա նոր մ քառորդ
Տէր սուրբ Գրիգոր Պարթևական. և սորոյ
Ալսօր նշխարք սուրբ քո մասանց մարտուն
՚ի լոյս յայտնեալ ՚ի Հայաստան մարտուն
Բըժըշկութեան դեղ ծանուցեալ.
Կամք միշտ առ Տէր աղօթարար
Վասրն ազգիս Հայոց թրշուառ.
Եւ դու առ Տէր լեր բարեխօս
Կանգուն պահել զաղցս Հայոց
Միշտ անսասան յարատեեալ:

՚ի Սուրբ Ծարգմանիչսն՝ Սահմակ և Մեսրով.

Չարիք ազգիդ նախարարաց իո քանց միջնի խոյն
 Զքեղ միշտ յուզէր Մեծրդ Սահմակ։ Խոյնի
 Խաղաղութեան էիր հրեշտակ. ոյս ոչ մոնի
 Լուսաւորչի մեծ սուրբ տոհմի միջոր առուի
 Դու շառաւիդ վերջին յայտնեալ. ոչ ոչու
 Խոկ դու Մեսրով մաշտոց մեր հալրի ոչ բրախով
 Սուրբ աղօթիւքը անդադար մատուցաւուի
 Զնշանս գըրոց լեզուին չայոց բառ որոց
 Էնըն տեսլեամբ քեղ ցուցանէր Յանձնուի
 Աչն Անեղին մէկին գրիեալ։ ոչ ոտուի մ

՚ի Սուրբ Տրդատ Ծափաւորն.

Նըստար ՚ի գահ արքայական որրա ըուրած մայրաց
 Հօրդ ժառանգ հըսկայական, ո ոյտ ոչ
 Չարչարեցեր ըզսուրբ Գրիգորն.
 Ըսպանեցեր ըզսուրբ կուսանսն.
 Դու յԱստուծոյ պատուհանեալ.
 Ելեր ապա առ սուրբ Գրիգոր.
 Ծանեար ըզնա Սուրբ գօրաւոր.
 Բըժըշկեցար յախտոյ ցաւոյդ.
 Եղեր պաշտպան սուրբ կըրօնին
 ՚ի չայաստան դայն տարածեալ:

՚ի Սուրբ Երկուտասան Առաքեալսն Քրիստոսի.

Իիւսեալ զձեր միտս չոգւոյն շնորհօք
 Երկուտասան սուրբ Առաքեալք.
 Ելիք յաշնարհը աշխարհաց ոչու ովհ
 Բանին կենաց լինել քարոզք.
 ԶՔրիստոսն՝ Աստուած մեծ քարոզքեալ.
 ՚ի շէնս, քաղաքս, ՚ի խուզս, պալատս միջ խոյն
 Միշտ համարձակ մըտանէլք.
 Կուապաշտութեան խաւարն մերժեալ
 Զլոյս Քրիստոսեան դուք սրփոէիք
 ԶԵկեղեցին սուրբ հաստատեալ:

՚ի Վարդավառն՝ Պայծառակերպութիւնն Քրիստոսի.

Փրկի՛չ Յիսուս՝ որ ՚ի Թաքօր
 Դու յայլակերպս պայծառացար
 Մովսէս, Եղեա յամպն երկեալ,
 Երրորդութեան խորհուրդ յայտնեալ,
 Աստուածութեանդ վառս անդ ցուցեալ.
 Այօր և մեք հաւատացեալքս
 Ընդ Պետքոսի առ Քեզ ձայնեմք
 Արասցուք Քեզ սուրբ տաղավար
 ԸԶսիրտս, Հոգիս. Տէր բարերար,
 Է՛ջ ՚ի նոսին շնորհօքդ փայլեալ:

՚ի Սուրբ Նախահարսն.

Ուահահորդք մեր հարազատք
Հաւուց մերոց սուրբ նախահարք.
Ձեր սուրբ վարուք, կենօք պայծառ
՚ի սիրտ իին գըտիք հանդէս,
Մեզ օրինակ բարի եղեալ.
Սիրով իին սընալք, ովք Հարք.
Օրինաց Տեառն միշտ հրատակ.
Զկինն Խրայէլ՝ Եհովային
Վարէիք միշտ ՚ի կամս արդար.
Քաջ առաջնորդք դուք հոչակեալ:

՚ի Սուրբ Մարգարէսն.

Առ ապագայ Սուրբ Մեսիա
Նախագուշակ հանդիսացալք.
Գործս փրկութեան Յիսուս Փրկին,
Ո՞վ Աստուծոյ արք սիրեցեալք,
Միշտ բացորոշ նախասացեալ.
Սէր Արարչն ձեզ ցանկալի.
Արդարութեամբ նորին զինեալք
Ուղղէք էիք թագաւորաց,
Վարիչք աղղին Խրայէլեան.
Հեռուստ զՄեսեան միշտ քարոզեալ:

՚ի Սուրբ Ժողովն Եփեսսոսի, Եերկու հարիւր հայրապետան.

Տաճար Հոգւոյն սիրտք ձեր կազմեալ,
Պէս պէս շնորհօք ընդ միշտ լրցեալ,
՚ի Եփեսսոս այսօր գումար
Առիք Հոգւով սուրբ Հայրապետք.
Զնեստորըն անդ նզովիւք շանթեալ.
Որ ՚ի Յիսուս գերկու բնութիւն
Զատ տեսանէր. և ըզսուրբ կոյսն
Քրիստոսածին վարդապետէր.
Աստուածածին ոչ դաւանէր.
ԶԵկեղեցին յուղէր խովիեալ:

՚ի Վերափոխումն Սուրբ Աստուածածնի.

Իիւսեալ պըսակ քեզ՝ Միածնիդ
Յաւուրս փոխման քո ՚ի յերկին,
Տայ քեզ ովք սուրբ Աստուածածին
Զհոգիդ չքնաղ լինքն զրաւեալ,
Մարմնով յերկինս վերափոխեալ.
Ծանու նըմա զհոգս աշխարհի
Սուրբ Մայրապետ մարդկան ազգի.
Հայցեա բարիս, խաղաղութիւն.
Եւ մեր մեղաց ըզթողութիւն.
Կուտակ չարեացն ՚ի մէնջ բարձեալ:

՚ի Սուրբ Յովակիլմ և Աննաց ծնօղսն սուրբ Աստուածածնի և
՚ի կանայն իւղաբերս.

Որ ուխտաւոր Եղէք առ Տէր, զորին մշտրաչ դահան
Ո՞վ Յովակիլմ և սուրբ Աննաց ուն սձն
Եթէ զաւակ ձեզ ՚ի Տեառնէ՝ ստուժիւ մէ
՚ի կուսութիւն Տեառն ընծայել.
Նոր արշալոյս ձեզ արդ ծագեալ.
Յիսուս Փրկչին սուրբ Յարութեան
Գրեցայք վրկայք սուրբ իւղաբերք.
Կենաց բանին միշտ ունկնդիր
Եղէք յաւէտ դուք անձանձիր.
Այսօր ՚ի փառս Նորին հրճուեալ:

՚ի Սուրբ Ժողովն նիկիոյ, յելեք Հարիւր տասն և ութ հայ-
րապետուն.

Այսօր ժողով ՚ի նիկիա գումարեցաւ իւղա յանուան
Գումարեցայք սուրբ Հայրապետք.
Եւ զԱրիստ գատապարտեալ՝ ին իւց յան
Զիսուս Ծընունդ Հօր Միածին
Անժամանակ մեզ քարոզեալ.
Ղամբար հոգւոցդ միշտ մառ պահեալ
Հարք սուրբք՝ Հոգւովն բարգաւաճեալ.
Լերուք առ Տէր մեզ բարեխօս անօրու
Փըրկել ըգմեզ ՚ի յաղանդոց ուրմէ զն այ
Սուրբ Հաւատով զօրացուցեալ:

՚ի Ծնունդն Սուրբ Աստուածածնի.

Եին էիր դու ուխտաւոր զախայոր ջաց զըրծ մէջ
Սուրբ Մարիամ կոյս գովելի. ուածնքայ
Որ ըստ ուխտին ծնօղիդ բարի և Խորան
Ծնանիս այսօր ՚ի մօրդ գրըկի. ըսրացայ
Յերկնից դու մեզ լոյս մեծ ծագեալ.
Բամից Սըրբոց միշտ պաշտելի.
Մահկանացուացըս տօնելի,
Լեր բարեխօս առ Քո Որդի
Թողուլ ըգմեզս անթըրւելի.
՚ի սէր խնամոցն զմեզ պահպանեալ:

՚ի Խաչվերացն.

Սաւառնաթե Խաչ Փրկչական
Մեր վրկութեան գըրաւական.
Այսօր Հերակլ յաղթող կայսեր
Զեռամբ փոխեալ յԵրուսաղէմ
՚ի Սուրբ Սեղանն բազմիս փայլեալ.
Տէրունական նվ Սուրբ Նըշան,
Միջնորդ առ Տէր լեր հաշտութեան
Մեզ տըրկարացս տալ զօրութիւն
Յուս մեր բառնալ գիեզ անխափան
Փրկանս հոգւոց Քեւ դըրաւեալ:

՚ի Սուրբ Գէորգ զօրավարն.

Եին եղեր քաջ զօրավար
Արագահաս սուրբըդ Գէորգ,
Անապաւէն դու տըլկարաց
Պաշտպան կացեր հզօրեղաբար.
Սիրով վրկչին միշտ զարգացեալ
Բոտինքս ըզքեղ միշտ աղաչեմք
Եւ մեղ փութալ ՚ի յօդնութիւն,
Սուրբ աղօթիւքըդ բարեխօս
՚ի մեղ հայցեա Տեառն զօրութիւն՝
Քեզ հետևող արժան եղեալ:

՚ի Վարագայ Սուրբ Խաչն.

Ողորմութեան Տեառն Յիսուսի
Եղեր արժան Սուրբ Հուխսիմէ.
Զմասըն Խաչին զպարանոցաւգ
Արկեալ իջեր ՚ի Հայաստան՝
՚ի լեառն Վարագ զայն թագուցեալ.
Ղամբարափայլ երկոտասան
Լուսեղէն մեամբք ՚ի լեառն Վարագ
Դու յայտնեցար այսօր, Սուրբ Խաչ,
Եւ բազմեցար ՚ի սուրբ Տաճարն
Յուրախութիւն մեղ պարգևեալ:

՚ի Սուրբ Եօթանասուն երկու աշակերտուն Քրիստոսի.

Որ ՚ի Փրկչին անձառելի
Սէրն զօրացայք սուրբ աշակերտք.
Այսօր ըզմեղ Եկեղեցի
Յիշատակէ տօնախըմբեալ՝
Զկեանս և զգործըս ձեր գովեալ.
Բամք սիրելեաց Յիսուս Փրկչին,
Լերուք առ Տէր միշտ բարեխօս.
Ըզմեղ փրկել ՚ի փորձանաց
Եւ ՚ի չարին ներգործութեանց
Զմիտս ՚ի յերկինըս վերուղղեալ:

՚ի Սուրբ Աւետարանիչսն.

Մեծաբարբառ վրկալաբանք օնն ուժիք ուսուք
Փրկչին կենաց և սուրբ գործոց,
Որ Սուրբ Հոգեոյն շնորհօք լրցեալ՝
Պսակ հիւսեցիք յաւերֆական
ԶԱւետարանն մեղ աւանդեալ.
՚ի ձեզ՝ փրկչին աւետեաց ճառք
Սուրբ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս
Եւ Յովհաննէսըդ սիրելի,
Դիմեմք, յարգեալ զձեր յիշատակ
՚ի բարեխօսսդ ապափնեալ:

Յամենային Սուրբսն՝ Կի Հինս և Կի Նորս, Կի Յայտնիս և Յանլայտսն.

Այսօր հրաշխէք լերուսաղէմ մանակնաւ, միջնիք ու պի
Գրտանիս խաչը, փրկչական,
Սուրբ Հեղինէ մեծ թագուհւոյ
Զեռամբ փրկիս Կի Հըրէեց,
Պէս պէս հիւանդըս բժշկեալ.
Յաւէտ Կի մէնչ յարգիս արժան
Սուրբ պաշտամամբք մեծարական.
Զի Քւ Քրիստոս ըզմեղ փրկեաց,
Արքայութեան ժառանդ գըրեաց,
Կի Քեղ վասն մեր Պատարագեալ:

Կի Սուրբ Հրեշտակապետսն և յամենայն երկնալին զօրսն.

Կի դասս երկնից մեծ Տէրութեանց, ուսպանածնի
Խշանութեանց և զօրութեանց, միջնիք
Եւ Աթոռոց և Պետութեանց, զուս ուն
Ո՞վ Գաբրիէլ և Մէքայէլ՝
Հրեշտակապետ անուտեմբ պարծեալ.
Յաւոց, վըշտաց և հեծութեանց միջնիք թմէ ու
Լերուք բըժիշկ և ըսփոփիչ, պատասխան զուս
Կի խաւարին որոգայթէն բըս ճամանիս ու
Հըզօր փրկիչ և ազատիչ, գնմանը
Յուղին երկնից առաջնորդեալ:

Յամենայն Սուրբսն՝ Կի Հինս և Կի Նորս, Կի Յայտնիս և Յանլայտսն.

առ մեջ բայց առ և առ էրան ու քանձ

Յաշխարհ համայն սերմունք սրբուեալք,
Սերմանցի բողբոջք հասունացեալք,
Յանդաստանին Քըրիստոսի
Ետուք ատոք պտուղս արժանի՝
Սիրով Փրկչին միշտ ուռճացեալ,
Արդ աղաչեմք զձեր՝ Սուրբք յերկինս,
Որ յախնապէս նահատակեալք,
Եւ կամ առ միշտ անյայտ կացեալք,
Հին և Կոր խումբ գաս պերճական՝
Զմեղ սընուցէք լինամով տածեալ:

Յընծայումն Սուրբ Աստուածածնի Կի Տաճարն.

Բախճան կուսից սրբբակեցաց
Գրեցար յաւետ, կոյս Մարիամ,
Խինդ և հրձուան քրութ ծընօղաց
Եղեր զաւակ անզուգական
Ուխտաւոր դու յերկնից տըւեալ.
Սիրովն իին և ըստ ուխտին
Ընծայեցար սուրբ Տաճարին.
Կոյս գու սընար, կոյս կնքեցար.
Դու կուսութեամբ զԱստուած ծընար
Ճնորհոք Հոգւոյն միշտ զօրացեալ:

՚ի Սուրբ Առաքեալսն և յառաջին լուսաւորիչսն Հայաստանեաց՝ ՚ի Թաղէոս և ՚ի Բարդուղիմէոս.

Էին կամօք, սուրբ Առաքեալք
Բարդուղիմէ և Թաղէոս,
Լուսաւորիչք Հայաստանեաց
Յօժար սիրով հանդիսացաւք,
Զաշխարհն համան լուսաւորեալ.
Նոր Կըրօնին լոյս փրկական
՚ի պալատանց արքայական
Ճող արձակեաց ՚ի խորշս երկրին
Մեր Հայաստան մեծ աշխարհին
Տեառն լուսով աշխարհն փրկեալ:

՚ի Սուրբ Յակովը Մծբնալ հայրապետն.

Քրիստոսանուէր և ճրգնական
Կենօքդ պայծառ, տէր սուրբ Յակովը,
Յերկինս գըտեր սիրոյդ հանդէս.
Յերկրի ՚ի կեանսոդ մարմնական
Հրեշտակքըն քեզ սպասաւորեալ.
Արդարութեամբ միշտ պերճացեալ,
Եւ սըրբութեամբ արժան տեսեալ՝
Տէրն ըզհայցուածորդ կատարեաց,
Հրեշտակն յերկնից յերկիր իշեալ
Զմասն տապանին առ քեզ բերեալ:

՚ի Սուրբն Աբգար՝ նախավկալ և անդրանիկ թագաւորն մեր.

Հարուած ցաւոցի ըզքեզ նեղեալ
Աբգարին մեծ թագաւոր.
Լուսու գհրաշից Յիսուս փրկչին,
Խնդրարկս առ նա ՚ի Պաղեստին
Առաքեցեր առ քեզ փութալ.
Առեր ապա Յիսուս փրկչին
Սուրբ Դաստառակն Աստուածալին.
Նորին հրաշիւք ցաւդ մեղմացեալ.
՚ի Թաղդէէն դու բըժըշկեալ՝
Եղեր ՚ի Տէր հաւատացեալ:

՚ի Սուրբ Գաւիթ մարդարէն և Յակովը առաքեալն.

Նըստար յաթոռ արքայական
Եհովալին ժողովը ըրդեան.
Սաղմոսերգու անգուգական.
Կանուխ զուշակ ՚ի Մեսիան.
Յիսուս փրկչին հայր գըրեցեալ.
Այլ դու Յակովը Տեառն եղբայր.
Որ Քրիստոսի փրկչին մերոյ
Սուրբ աշակերտ եղեր ընտրեալ՝
Լեր բարեխօս վասն մեր առ Տէր
Մեզ՝ ըզհաւատըդ պարգեեալ:

՚ի Սուրբ Ստէփաննոս նախավկայն և յառաջին մարտիրոսն.

Յիսուսին ով մեծ հետևող ուզար յառաջ Յունաց
 Սուրբ Ստէփաննոտ ալը լի շնորհօք.
 Որ զքարկոծումըն յանձն առեր
 ՚ի սէր Փոկչիդ անգուգական
 Դու անդրանիկ վըկայ եղեալ.
 Բացաւ երկինք, քեզ հրաշավառ
 Երևեցաւ Տէրն Միածին.
 Որ ՚ի պատիւ մեծ վկայիդ՝
 Յոտի կանդնեալ պատուէր զհանդէսդ,
 Պսակ անթառամ քեզ պատրաստեալ:

՚ի Սուրբ Որդիսն որոտման յառաքեալն Յակովը և յաւետարա-
 նիչն Յովհաննէս.

Առեք դպատիւ ՚ի Քրիստոսէ
 Դուք՝ որոտման որդիք ձայնեալ.
 Նստիլ յաջմէ և յահեկէ
 Յիսուս Փրկչին դուք հաճեցալք.
 Անչափ սիրոյ ցոյց մեծ գովեալ.
 Կանձին անմահ Երկնաւորի
 Գրտողք եղէք սուրբ Առաքեալք.
 Դու Յովհաննէս սուրբ քո սրտիւ
 Փրկչին զրեցար մեծ սիրեցեալ,
 Հոգւովդ Սիրոյն միշտ նըւիրեալ:

՚ի Սուրբ Հայրապետոսն.

Թարունոյն սուրբ և ճշշմարտի մասնաւոն բանաւոն
 Հետևեցալք սուրբ Հայրապետոք.
 Անըստերիւր դուք ընթացեալ
 Առաքելոցն շաւղօք արդար առանձնաւ զէն
 Եղէք ճրադունք լուսափալեալ.
 Արդ ձեօք պարծի եկեղեցի առ սկզբից զ արացնեալ
 Կանոնադիր սուրբ Հայրապետոք ուշին զի
 Ֆիսօք, կարգօք վայելքաբար այս բարոյ
 Յառաջ վարի բարեզարդեալ զ ամերու զի
 Զձեր լիշտակս տօնախմբեալ:

՚ի Սուրբ Վարդապետոսն.

Տեառըն բանին քարոզք եղեալ
 Ուսումնապերն սուրբ վարդապետոք՝ առանձ
 Ուսուցիք մեզ զկամքս վերին,
 Ըզպատուիրանըս ճշմարտին,
 Մեզ ուսուցիչք արդեամք եղեալ.
 Ուստի և մեք ձեր աշակերտոք, անցնեալ զ արացնեալ
 Զձեզ աղաչեմք սուրբ վարդապետոք. Ձեռն
 Հայցեցէք մեզ ՚ի Քրիստոսէ
 Զշնորհս Սուրբ Հոգուոն. զի հետևող այս
 Լիցուք մեք ձեզ, շնորհարդեալ:

Յուխտի մանկունսն Եկեղեցւոյ.

Իիուսեալ պլսակ ՚ի ձեր ճակատ
Ուխտի մանկունք գուք հարադատ.
Պլսակ Փրկչին Սիրոյն հիւսուած
Ձեր անթառամ վարձն է փառաց.
Որով յաւետ պսակաւորեալ.
Նայեցարուք յերկնից առ մեզ
Որ միշտ կարդամք աստի առ ձեզ,
Կըցորդ լերուք մերոց վշտաց
Որ արդիւնք են անթիւ մեղաց.
Ձեռն օդնական մեզ կարկառեալ:

՚ի Ճգնաւորսն և Միանձունսն.

Իիւծեալ ՚ի կեանս ձեր մարմնաւոր
Կեանս ընտրեցիք ձեզ հոգւոր,
Մերժեալ զաստեացս վայելս և փառա՝
Նըւիրեցայք հոգւով ՚ի Տէր.
Մարմնով յերկրի միշտ չարչարեալ.
Որոշեցայք յերկրէս բընաւ,
Թողիք ըզտուն և ըդտեղի,
Ըղհայր, ըզմայր, ըզկին, դորդի,
Ելիք լերանց յալրս և փապարս.
Տեառն միայն դուք տենչացեալ:

՚ի Սուրբ Մարտիրոսսն և Վկալսն

Յանուն Փրկչին, ՚ի սէր Նորին
Զըւարթացեալք եռանդադին՝
Բանդ և կապանք, աքսոր, տանջանք
Ձեզ թըւեցան առ միշտ չընչին՝
Սուրբ Մարտիրոսք վրկայեցեալ.
Էիք ՚ի Տէր սպառազինեալ
Մահուան սոսկում ձեզ ոչ ազդեալ,
Դուք քաջաբար, հըսկայաբար
Վրկայեցայք ՚ի Տէր արեամբ.
Յօղ ձեր արեան ՚ի մեզ հեղեալ:

՚ի Սուրբ Կուսանսն.

Երջանիկ խումբ սուրբ կուսանաց.
Ըզգաստ արթուն ձեր սուրբ վարուք
Երկնաւորին սուրբ վիեսալի
Արժան զրեցայք ըզգաստ հարսունք.
Սիրով փրկչին բարգաւաճեալ.
Թախճարանին երկնաւորի
Էք դուք այսօր հանդիսականք.
Սուրբ աղօթիւքը արժանի
Հայցեցէք մեզ ըզշնորհս Փրկչի.
Արթուն, ըզգաստ կենօք կեցեալ:

՚Ի Առլը Թագաւորսն,

Գաւազանաւ արքայական Եւ պերճ թագիւ փառաւորեալ.
Դուք մերժեցիք զպատիւն սին.
Ոչ հպարտացեալ զօրու բազկին
Ազ ՚ի խոնարհ զձեզ միշտ պահեալ.
Երկնաւոր Մեծ Թագաւորին
Կրէիք պատկեր ՚ի ձեր անձին.
Ուստի արժան դուք զըրեցալք
Արքայութեան լինել ժառանգ.
Ընդ Քիստոսի թագաւորեալ:

Առ Հոգեորդն պատերազմ
՚Ի զէն յաղթող սպառազինեալ՝
Նըշան Խաչին՝ գըրօշ փայլեալ՝
Հարիք ուժգին ըզթշնամին.
Անուամբ Փրկչին միշտ պանծացեալ.

Լեռուք առ Տէր միշտ բարեխօս սամփեծ միմարածիս
Զինիլ և մեզ ՚ի Քըրիստոս. զօսա զար զայ
Ըգդրօշ Խաչին՝ միշտ յաղթական դրամ
Յառաջաւոր տանել նըշան. ըմբ զ եցելու
Ըզթշնամին գերեվարեալ:

3 0 3 u

Իմ կատարեալ մխիթարութիւնը կլինի այն յոյսը՝ որ պատճառ եղաւ ինձ այսպիսի մի երկասիրութեան ձեռնամուխ լինելու: Այն Յոյսը՝ որ ես վատահանում եմ տեսնել Զեր մէջ, ով ընթեցող չայեր, է տեսնել Զեզ մօտեցած Զեր չալքենական Եկեղեցւոյն, որից, ցաւելով եմ ասում, շատ հեռու է շրջում Զեղանից ամեն մէկը. տեսնել Զեզ ընդգրկած այդ չալքենական Եկեղեցին՝ որի մէջ է չայ ազդի լրութեան շունչը: Գրկեցէք այդ Եկեղեցին, դա է այն Յաջող Նաւը, որ շատ փոթորիկների է դիմագրել և շատ կատաղի ալիքների վերայ է սահել, շատ որոտումներից և կայծակներից չէ սոսկացել և Զեզ մինչեւ այսօր անվնաս է հասցրել: Մտէք այդ Յաղթական Նաւի մէջ. Դա միայն կարող է տանել Զեզ դէպի յոյս. դէպի կըթութիւն և վերջապէս դէպի փրկութիւն, որ միակ ցանկութիւնն է և նպատակը ամենայն Փրկարտոնէի:

• Գորա համար միշտ առ Աստուած աղերսող

U. S. G. S., Prof. C. W. Mendenhall, Prof. G. K. Gilbert, Prof. F. V. Coville:



ՅԱՆԿ ԲԱԺԿԻՑ

Պատճառ Երկասիրութեանս.	5
Ա. ԲԱԺԻՆ.	
Հաստատութիւն, Նպատակ և Խորհուրդ սուրբ Պատարագի.	
Բաժանմունք նորին և Յորջորջմունք	7
Բ. ԲԱԺԻՆ.	
Աւուրք, Փամ և Տեղի սուրբ Պատարագի.	10
Գ. ԲԱԺԻՆ.	
Սրբազն անօթ սուրբ Պատարագի և պատրաստութիւն Պատարագչի կամ ժամարարի.	12
Դ. ԲԱԺԻՆ.	
Զգեստաւորութիւն Պատարագչի.	14
Ե. ԲԱԺԻՆ.	
Լուացումն ձեռաց և Խոստովանութիւն Պատարագչի.	28
Զ. ԲԱԺԻՆ.	
Սպաս դնել, Խնկարկութիւն և Աշխարհալոց	38
Է. ԲԱԺԻՆ.	
Ժամամուտ կամ սկզբնաւորութիւն Պատարագի.	56
Ը. ԲԱԺԻՆ.	
Երեքսրբեան փառաբանութիւն	64

Թ. ԲԱԺԻՆ.	
Քարոզ Սարկաւագի, Ընթերցուածք. Աւետարան և Հաւատամք	68
Ժ. ԲԱԺԻՆ.	
Վերաբերումն	89
ԺԱ. ԲԱԺԻՆ.	
Ողջոյն	102
ԺԲ. ԲԱԺԻՆ.	
Սրբագործութիւն	117
ԺԳ. ԲԱԺԻՆ.	
Փոխարկութիւն կամ կանոն Պատարագի.	131
ԺԴ. ԲԱԺԻՆ.	
Յիշատակութիւն	155
ԺԵ. ԲԱԺԻՆ.	
Շաշակումն	177
ԺԶ. ԲԱԺԻՆ.	
Գոհութիւն	212
«Տէր ոշորեա» աղէրս:	221

us

772

773

0027366

773

ՀՀ Ազգային գրադարան



NL0027366

